




836

L. III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7 — 8 1893

ՅՈՒՂԻՍ — ՕԴՈՍՏՈՍ

1893 № 7 — 8

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	Երես	
1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ. . .	1051	Ողջուն խրիմեան Հայրիկին,
2 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . .	1053	Օր. Մ. Վ. ին (բանաստեղծութ.),
3 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱՂԵՔՍԱՆԴԻՐ . .	1055	Երկրի մշակներ (բանաստեղծ.),
4 ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ . . .	1057	Իմ կեանքի գլխաւոր զէպերը.
5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴԻՐ . .	1084	Սէր (բանաստեղծութիւն),
6 ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ	1087	Առանց Կաւանանքի:
7 ԱՏՐՊԵՏ, Ս.	1143	Սոփթալութիւնը:
8 ԱՆԱԳՉԵԱՆ, ՅԱԿՈԲ.	1160	Մեր առետուրը և գործարանները Ս.
9 ԶԱՐԱՐԵԱՆՅ, ԹԱԳԷՈՍ	1173	Մարդկային սերճատութիւնը:
10 ԱՐՂՈՒԹԵԱՆ, ՍՈՖԻԱ	1196	Ընտանիքը և զպրոցը, Լ.
11 ՖԵԼԻՔՍ	1211	Նատուրալիստը և Զոլան (չար.),
12 Ս. Թ.	1226	«Հեղինէ»:
13 Գ. Վ.	1236	«Zola»
14 ԼՈՒՍԻՆԻ	1241	Հայոց թատրոն:
15 ԱՆԱԳՉԵԱՆ, ՅԱԿՈԲ.	1244	Յիշողութիւն խրիմեանից:
16 Ս. Թ.	1248	Ռուսաստանից:
17 Ֆ.	1254	Արտասահմանեան Քրոնիկ:
18 ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆՅ. ՄԻ. . . .	1269	Գիտական Քրոնիկ:
19 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐ.	1276	Երաժշտական Քրոնիկ:
20 Շ.	1280	Քաղաքական տետրութիւն:
21 ԽՄԲ.	1287	Զանազան լուրեր:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротиниана, Гол. пр., д №41.

1893



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 7—8 1893

ՅՈՒՆԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

1893 № 7—8

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1893

Дозволено цензурою. Тифлисъ, 19 Іюля, 1893 г.

ՈՂՋՈՅՆ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հայ ազգը հրճւանքի մէջ է: Նա, որին Ազգը միահամուռ խորհրդով միաձայն կոչել էր ս. Լուսաւորչի Գահը բարձրանալու համար, Նա ինքն է, որին Ռուսաց Օգոստափառ կայսրը հաստատեց իբր Կաթողիկոս Ամենայն Հայոց: Եւ Ազգի Հայրապետը այսօր մեր մէջն է, Նա որ, Հայրապետ լինելուց առաջ, արդէն փաղուց Հայ Ազգի Հայրն էր: Անսահման է հայութեան ուրախութիւնը, տեսնելով մի այդքան արժանաւոր անձն իբր պետ Հայաստանեայց Եկեղեցու, այն Եկեղեցու, որը այնքան և այնքան սերտ կապերով իրան կապւած է ուղում տեսնել Հայ Ազգի վիճակի հետ: Եկեղեցու սերտ կապը ազգութեան հետ—նորան ազգային է դարձրել, ժողովրդական հիմքերի վրայ կառուցւած լինելը—նորան դարձրել է ժողովրդական: Եւ ցնծում է այսօր այն ամենը, ինչ ազգայնութիւն է ներկայացնում, և մեծ մխիթարութիւնն այն է, որ դուրս հետ միասին ժողովուրդն է ցնծում, ցնծում է բաց և անկեղծ սրտով: Ժողովուրդը այսօր ողջունում է իւր այն հոգեւոր պետին, որի անձի մէջ մարմնացած են զերազոյն առաքիւնութիւնները, որոնց ընդունակ է հայի խելքն ու սիրտը: Խրիմեանը 19-րդ դարի մի հանձար է, և, իբր այդպիսին, նա մէկն է իւր ժամանակի մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչներից: Պարծանք հայութեան—նա պարծանք է և համայն մարդկութեան:

Խրիմեանը զաղափարի մարդ է: Եւ ինչպէս բոլոր զաղափարական մարդիկ, նա կրող է մտքերի, որոնք ժամանակով են հասունանում և ընդհանրութիւնից ճանաչուում: Այսօրուայ Հայոց Կաթողիկոսը իբր անձն և ուղղութիւն նկատւած է ոչ երեկանից, այլ աւելի քան երեսուն տարի առաջ: Այդ ուղղութիւնը շկոյւ է ստեղծել և աշակերտներ է հասունացրել. այդ ուղղութիւնը շփեւ

է այլ շկողաների հետ, մրցութեան մէջ մտնելով. և իւր ոյժով նա իւր համար ճանապարհ է հարթել ու թափանցել աղբի բոլոր խաւերի մէջ: Իսկ հերոսը — այժմ եօթանասունը անց ծերունի — ողջ առողջ կանգնած է մեր մէջ նոյնքան կենդանի ոգով ու մոքով, որքան առաջ:

Խրիմեանները գալիս են ոգի տալու, ոգի ներշնչելու համար: Նոցա միակ գործը չէ այս ու այն բանը կարգադրել. այդ նոցա գործն է իբր պաշտօնեաների, բայց պաշտօնեայից դուրս Խրիմեաններին մէջ յատուկ անձնաւորութիւններ կան, որոնք իրանց ժամանակը կապում են նաև հեռաւոր ապագայի հետ: Այդ է որ ներկայ Խրիմեանին դարձնում է մեծ մարդ, պատմական անձնաւորութիւն:

Մտքեր և զգացմունքներ կան, որոնք թւում են ընդհանրութեանը որպէս միայն երևակայութեան մէջ գոյութիւն ունեցող, որպէս ուտոպիաներ: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Խրիմեանը այն անձնաւորութիւններիցն է, որոնք գալիս են ժողովրդի առաջ կանգնում՝ հաւատ ներշնչելու համար զէպի ուտոպիական երևացող գաղափարների գոյութիւնը և իրականանալու հնարաւորութիւնը: Այդպիսի մարդկանցով է ընդհանրութեան ոգեկան մակերևոյթը բարձրանում: Խրիմեանների գոյութիւնով մարդկութիւնը ազնւանում է և զրդւած է զգում զէպի վսեմը, զէպի գաղափարականը, զէպի ընդհանուր մարդկայինը, զէպի մաքրութիւնը, զէպի պարզութիւնը: Նա թանկ է մեզ համար որպէս ուսուցիչ, դաստիարակ, քարոզիչ: Երբէք այդպիսիները չեն անցնում առանց մեծ հետք թողնելու իրանց ետեւից: Եւ այսօր, հազարաւոր ամբօխը ոչ միայն ողջունում է նորան, այլ և առանց այդ զգալու՝ նորա հետ շփւելով՝ կրթւում է, դաստիարակւում է և իղէպներ է ստանում:

Եւ մենք, ու մեզ հետ մեր խմբագրութեան բոլոր գործակիցները, միախառնւելով ժողովրդի այդ անկեղծ ձայների հետ գոչում ենք՝ Կեցցէ Խրիմեան, կեցցէ Հայրիկ, կեցցէ Կաթողիկոս!

Օր. Մ. Վ.-ին

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Երբոր բացւելիս է եղել արփին,
Սարերի լանջում կամ թէ քարափին,
Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել.
Առաջին շողը դեռ ինձ է դիպել.
Եւ ես ծանօթ եմ այն հրաշալի
Գոյն ու ձևերին արեւագալի,
Որ այնքան շքեղ մեզ ցոյց են տալիս
Երկինք ու երկիր քնից արթնելիս:

Բայց քեզ տեսնելուց օրեր անցկացած
Երբոր վերստին տեսայ լուսաբաց
Հասկացայ զաղտնի կապերը բնութեան, —
Բացւում էր պայծառ առաւօտն ամրան,
Եւ ցոլանալով շաղախւում էին
Վաղ արշալուսի շողերն առաջին
Ջինջ կապուտակին անամուկ երկնքի,
Որ զիշերային քողը իւր դէմքի —
Թեթև մշուշը դեռ արեւմուտքում
Իսպառ վայր ձգել չէր համարձակում,
Մինչ առաւօտեան լոյսի երերուն
Ժապաւէնները խայտալով սիրուն

Երկնային ծովի կապուտակ ծոցում
 Հեռու և հեռու էին տարածւում:
 Եւ մի կեանք, ասես, նուրբ ու սիրազեղ
 Մանօթ ակնարկով խաղում էր այնտեղ.
 Մանօթ էր թւում կապոյտն երկնքի
 Եւ ծիծղուն շողը անտես արեգի...:

Եւ ես յիշեցի սրտի թնդիւնով
 Աչքերըդ կապոյտ, նոյնպիսի գոյնով,
 Նրանց ժպիտը զւարթ, կուսական,
 Որ արշալուսին նման է այնքան.
 Տեսայ երկունն էլ, մի բան են պատմում,
 Երկունն էլ տեսայ՝ արեւ են բերում,
 Մէկը լոյսի,
 Միւսը յոյսի:

ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Օ՛, դառն հոգսերի խղճով զառակներ,
Որքան համբերող, քան է ձեր հոգին,
Տանջւում էք անվերջ—օրեր, տարիներ.
Կարծես տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք իսկ էք տալիս հայրենի երկրին:

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զւարթ,
Դուք մշակում էք անմշակ դաշտեր.
Ինչպէս տանջանքում անլաց, անվհատ
Դուք երգ էք երգում—վաստակի երգեր:

Տեսել եմ, ինչպէս ամառւայ շողին,
Երբ արևն, ասես, կըրակ է թափում,
Քրտնակալ եղած, մանգաղը ձեռքին,
Դուք բան էք անում ոսկէշող արտում:

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,

Այնտեղ թողում էք, դանձերի նման,
Ոսկի հատիկներ ոսկի յոյսերով:

Տեսել եմ, դարնան սիրուն օրերին
Պաշտառ արեւը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծովի արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած ջերմ աղօթելիս...

Տեսել եմ, ինչպէս ե՛ր ցուրտ, տաղտկալի
Ձմրան գիշերներ նստած խրճիթում,
Յոգնած ձեռքերիդ զաղար չէք տալի—
Խօփն էք նորոգում, մանգաղը սըրում...

Եւ այդպէս ազնիւ գործին անձնէր՝
Ապրում, տանջւում էք անբաւ հոգսերում.
Եւ ձեր տանջանքում, հերոս-մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում...

Օ՛, հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին.
Ձեզնով է միայն կանգնուն հայրենիք—
Համբոյց ու օրհնանք ձեր սուրբ վաստակին:

8 սեպտեմբերի 1892 թ.

Մոսկւա:

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԻՈՐ ԴԵՊՔԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Այդ օրը երկուսս էլ քաղցած էինք: Միքայէլս ասաց, որ ինքը հաց է կերել սայլապանների հետ. ես էլ ասացի, որ Նազարեանցի մօտ նախաճաշիկ արի, իսկ էմինի մօտ՝ ճաշ. և լռեցինք, առանց մէկմէկու հաւատալու: Մեր մէջ մի տեսակ սրտակցութիւն կար, և միմեանց դէմքի նայելով՝ հասկանում էինք իրար միտք: Ուրախանալով՝ որ միւս օրը և՛ փող կունենանք, և՛ զործ, մոռացանք մեր քաղցածութիւնը և անուշ քնով քնեցինք խոհանոցի փռնի գլխին...

Իսկապէս տասն օր էր՝ ինչ որ մենք քաղցած էինք, այնքան նւազ էր մեր սնունդը: Խարկովից հեռանալիս Միքայէլը մի պարկ լցրել էր սև հացով ու բողկով: Ես ծիծաղեցի վրան. այդ ի՞նչ է, ասացի, որ առել ես, ով պիտի ուտի այդ անպիտան հացը:

Միքայէլը «հը՛մ» արաւ և ոչինչ պատասխան չըտւաւ:

Վերջը բանն այնպէս պատահեց, որ այդ սև հացն ու բողկը շաքարի ու մեղրահացի տեղ բռնեցին, այնպէս ախորժակով էինք ուտում, ուրիշ ոչինչ չունենալով: Անցեալ օրը վերջին կտորտանքն էինք կերել, իսկ այսօր և ոչ մի կտոր: Ն[թ]է ես էլ Միքայէլի պէս սակաւապէս լինէի, մենք այս օրը չէինք ընկնիլ: «Յի այսօր մի մարդավարի ճաշ ուտենք», ասում էի շատ անգամ. և նա [թ]էպէտ դի-

¹⁾ Տես «Մուրճ» № 4, 5, և 6:

տէր, որ մարդավարի ճաշը մեզ վրայ թանգ կը նստի, յետոյ չմարդավարի ճաշ էլ չենք ունենալ, բայց խաթրըս չէր կոտորում: Նա չէր ծխում, իսկ ես ծխում էի, և երբ տեսնում էր, որ ես խնայողութիւն անելու համար էթանագին պապիրոս եմ առել և ծխում եմ զղւելով, նա առանց ինձ հարցնելու՝ լաւ պապիրոս էր առնում ինձ համար: Իրան համար խնայող էր, իսկ ինձ համար շռայլ:

Միւս առաւօտը մի թուղթ գրեցի մագիստրոս Մսերեանցի վրայ՝ մէկ այն նպատակով, որ եթէ տանը չըլինին, թուղթս թողնեմ այնտեղ, մէկ էլ որ՝ ցոյց տամ նոյն իսկ գրածովս, որ ես մի անգրագէտ գրաշար չեմ, այլ աւելի լաւ գրող, քան թէ շատ գրողի տարածներ, մանաւանդ որ արդէն տպւած բանաստեղծութիւն ունէի, թէև «Մեղի» մէջ:

Մսերեանները տանը չէին և ես ուրախ եղայ, որ թուղթս կը կարդան և ըստ այնմ կընդունեն ինձ: Մառան ասաց, թէ որ ժամին կարող եմ գնալ պատասխանն իմանալու: Նոյն ժամին գնացի և հայր ու որդի սիրով ընդունեցին ինձ. նստեցրին իրանց մօտ, և միմեանց ասած հաստատելով՝ հաւատացրին ինձ, որ եթէ գրաշարի կարօտ էլ չըլինէին, մեզ դարձեալ կօգնէին իբրև արհեստասէր և ուսումնասէր հայ երիտասարդների: Այդ մարդկանց ասածը գուցէ և ուղիղ էր, բայց ես չէի կարող հաւատալ: Նազարեանց և էմին իմ հաւատը կորցրին: Մէկ օրւայ մէջ ես շրջահայեաց և կենցաղագէտ դարձայ. մէկ օրւայ մէջ ես զգացի, թէ ուրեմն այսուհետև ինչ տեսակ մարդկանց հետ պէտք է գործ ունենամ:

Ստացայ փրկարար տասը մանէթը և մի շնչում վազեցի ընկերոջս մօտ, որ նրան ազատեմ գերութիւնից, որ թափեմ իմ կենդանի գրաւս սոցլապանների ձեռից:

IX

Մենք տեղափոխեցինք տպարանի բանւորների բնակարանը: Լուսաւորեալ անւանւած քաղաքները այնպիսի խաւար ու մութ անկիւններ ունին, որ Ասիայի ոչ մի խաւար քաղաք չունի: Այն բնակարանները, որոնց մէջ կենում էին Մոսկւայի բանւորները, շատ և շատ ստոր էին մեր ամենայեւորին գիւղի ակոռից և հաւաքոյնից: Այն մեռնիւղը, որ նրանք էին ստանում, տամնապատիկ վատ

էր, քան թէ մեր շների լակն ու լափը: Մեր բնակարանը մի սենեակ էր, որի մէջ կային երեք լայն թառեր, մէկը միւսից բարձր: Քառասունի չափ բանւորներ և աշակերտներ գիշերում էին այդ թառերի վրայ իրանց սովորական կուտն ուտելուց յետոյ: Վերի թառը առաստաղից ցած էր միայն երեք քառորդ արշին. այնտեղ պառկողները պէտք է սանդուղքով բարձրանային և ներս խցիւէին օձի պէս սողալով: Ես և ընկերս տեղափոխուեցինք այդ սողունի բնումը ուրիշ շատերի հետ: Ռսի հոտից փախչող հայերս ամենահոտաւէտ տեղն էինք ընկել: Ի՞նչ անէինք, ուրիշ ճար չունէինք: «Միթէ սրանք էլ մեզ պէս մարդիկ չեն, ասում էինք մենք,—ինչպէս սրանք, մենք էլ սրանց հետ: Զաշն ու ընթրիքը նախաճաշով արժէր երեք մանէթ ամիսը ամեն մի հոգու համար: Այս գնիցը կարելի էր եզրակացնել արդէն, թէ այդ ինչ սնունդ պիտի լինի: Այսպէս որ չըլինի, ի՞նչպէս պէտք է ապրէ ամսական երկու, երեք, և չորս մանէթ ռոճիկ աւնողը: Ռուսները կարողանում են այսպիսի սննդով ապրել: Մի ահագին չուգունէ կաթսայի մէջ լցնում են խոզի ճարպ, կաղամբ, մի կտոր տաւարի միս: Ուտելիս միսը հանում են, մանր կտրատում, ածում մի մեծ փայտէ չանի մէջ, խաշուն էլ վրան ածում, չանը լցնում զնում սեղանի մէջտեղը և չորս կողմը շարելով՝ ընկնում են դրա ջանին, կծոտելով սև հացը: Շատ անգամ հասարակ կլաս են խրաշտում և այլ անմարս բաներ, բայց ռուսները մարսում են և պարծենում էլ են դրանով, ասելով. «ինչ որ առողջութիւն է տալիս ռուսին, նոյնը մահ է տալիս գերմանացուն»:

Լսել էի, որ ցուրտ երկրի մարդիկն առհասարակ շատ են ուտում, կլիման այդպէս է պահանջում: Այդ շատակերութեան օրինակը ես աչքով տեսայ սալլապանների մէջ: Գւօրներում նրանց կերակրում էին ամեն մի հոգուց երեսուն կոպէկ առնելով՝ բայց այն պայմանով, որ տեղից դուրս գնացողը կրկին նստելու իրաւունք չունենայ: Նախ և առաջ սալիս են կլաս միայն, բայց ահագին չան լիքը: Գրանից յետոյ բերում են բորշ. դրանից յետոյ մի ամբողջ ուխար խորոված: Ինչ որ դրում է սեղանի վրայ ու մի մնացորդ չի թողնում: Այդ տապակածից յետոյ բերում են կաշա, նոյնպէս ահագին չանի մէջ: Սրանից յետոյ մեղր և սպիտակ հաց: Մէկ ան-

զամ ուտողները եօթը հոգի էին: Դրանք իմ նկատմունքով, որքան կարող էի աչքով չափել կերակուրի քանակութիւնը, այնքան կերան, որքան կարող էին ուտել մեր երկրում երեսուն մշակ: Ես և Միքայէլը մնացել էինք զարմացած և շատ անգամ ասում էինք՝ «սրանք օշափ են, մեզ էլ կուտեն»: Շատակերութիւնը ուռսին չաղացնում է չափից դուրս. ով որ չաղ չէ, կընշանակէ ուտելիքը քիչ է, որ ասել է աղքատ է. և այս պատճառով չաղութիւնը յայտնի ցոյց է տալիս ճանկերութիւն. չաղ մութին անպատճառ և հարուստ է, իսկ նիհար՝ աղքատ:

Քաղաքի բանւորներին և՛ սակաւ են ուտեցնում և՛ վատ: Ես շատ էի ցանկանում, որ իմ գլխի մէջ մաս-մաս արած մտքի մի կտոր ընկնի, բայց այդ այնպէս էր յաջողում, ինչպէս դետից ձուկ հանելը: Բառիսի բան էր, մէկ անգամ յաջողում էր, միւս անգամ ոչ: Հացն ուտելու բան չէր, այնքան վատ էր. խոզի իւղով կաշն աւելի վատ: Ախր եթէ կերակուրը վատ էր, մեր տւած դինն էլ մի բան չէր. ինչ կարող էիր պահանջել: Այս կեանքը ես քաշեցի մէկ ամիս միայն: Շուտով ճամպի ծախք վաստակեցինք, և ես Միքայէլին թողնելով Մոսկւայում, ինքս ճանապարհ ընկալ դէպի Պետերբուրգ: Այդ դժով արդէն երկաթուղի կար և վեց մանէթ արժէր երրորդ կարգով հնալը: Հասալ Պետերբուրգ և ընդունւեցի Գիտութեանց ձեմարանի տպարանումը իբրև գրաշար արևելեան լեզուների:

Կեանքումս առաջին անգամ աչստեղ տեսալ կատարեալ և հոյակապ մի տպարան, ուր և պտըտում էին բաղմաթիւ շոգեշարժ արագատիպ մեքենաներ և տպագրում զանազան գիտական գրւածներ մինչև յիսուն երեք լեզուով: Արքան օտար և անծանօթ էր մի լեզու, այնքան խանգ էր նրա շարելը: Ընդունակ գրաշարների համար դժւար չէր անծանօթ լեզւի գրերը միայն սովորել. դրա համար տպած ձեռնարկներ կային իրանց տառարկղիկների պատկերներով: Մանեղուս պէս՝ ինձ յանձնեցին մի վրացերէն ձեռագիր, և նշանակեցին երեսուն կուպէկ տառավարձ հազարի վրայ, որ էր ուսեւրէնի կրկնապատիկը: Այս գնով լաւ գրաշարը կարող էր ամսական մինչև հարիւր և հարիւր յիսուն մանէթ վաստակել:

Ես ինձ ապահովացրի: Մնում էր Միքայէլիս հոգսը քաշել և Մոսկւայի զոտիւքից ազատել: Նրա ցանկութիւնն էր ձուլարան

մանել և այդ արևեստն օրինաւոր կերպով կատարելագործել: Պետեր-բուրգում այդ ժամանակ ամենալաւ ձուլարանը Գերմանացի Լեմանինն էր, որին և ղիմեցի ես: Սա չէր յօժարում ընդունել, առարկելով՝ թէ այդ բոլորը, ինչ որ ուզում էք որ ձեր եղբայրը սովորի, զրանցից շատերը մենք զաղտնի ենք պահում: Բացի սրանից՝ մեր զործարանում զործը բաժանւած է շատ մասերի, և մէկին վարժեցնել բոլոր մասերի վրայ էլ՝ մեզ ձեռնտու չէ:

—Գիտէք ի՞նչ կա, ասացի. մենք չորս հազար վերստ տարածութիւն անցնելով, և այն էլ համարեա սոքով, չենք եկել այստեղ ձեր հացը կտրելու, այլ որ այդ շնորհքը տանենք ձեզանից շատ և շատ հեռու մի մութ աշխարհ: Իմ եղբայրս այդ զործից խամ չէ և այնքան էլ ընդունակ է, որ ինչ զործի վրայ էլ կանգնեցնէք, նա չի փչացնիլ: Նրան պէտք է բոլոր մասերը գիտենալ, սկսած հասարակ ձուլածքից մինչև մայրերի յղումն ու յարդարումը: Մենք չէինք կարծում որ լուսաւորեալ և քրիստոնեայ Եւրոպան լուսաթաքոյց կը լինի և որ և է բան կը ծածկի խաւար Ասիայի համար: Հիմա ի՞նչ պիտի անենք մենք այսպիսի յուսախաբութիւնից յետոյ. գուցէ հարկաւոր է, որ մեծ մարդիկ միջնորդեն մեզ համար, բացցն ասարախոտաբար մենք պանդուխտ ենք, ոչ ոքի չենք ճանաչում, կամ ով բանի տեղ կը դնի մեզ պէս հասարակ արհեստաւորներին: Եթէ եղել էք երբ և իցէ մեր վիճակում, կարող էք երևակայել, թէ որքան թշուառ պիտի լինինք մենք:

Այս խօսքերն ասելիս աչքերիցս արտասուք էին թափուում... Լեմանը յուզւեց: Բանից երևաց, որ նա էլ է մեր վիճակում եղել մի ժամանակ:—Լա, լա, ասաց, մի յուսահատուիք, գրեցէք եղբորդ, թող գայ: Այս ասելով վեր կացաւ տեղիցը և ինձ զահէի հրաւիրեց վերև իր տանը:

Երբ որ մտանք իր սեղանատունը, ուր ձոխ նախաճաշիկ էր պատրաստւած, կանչեց երեսներին, որ ծանօթացնէ մի հեռաւոր երկրացու հետ: Զը գիտեմ ինչ ասեց գերմաներէն, երեսէքը մի առանձին ուրախութիւն զգացին և քաղցր ժպիտով հրեշտակների պէս թրթռալով՝ եկան ձեռքս բռնեցին և կարծես արդէն վաղածանօթ՝ մի առանձին փայփայանք ցոյց տւին: Կեանքիս մէջ չեմ կարող մոռանալ այն տաւալորութիւնը, որ ես ստացայ այս երկ-

նային հրեշտակներից: Այստեղ երևակայեցի մեր ընտանեկան խա-
ւար ու բարբարոս պատկերը, նրա վայրենի վիճակը, և այն տարբե-
րութիւնը գտայ, ինչ որ կայ դրախտի և դժոխքի մէջ:

Պարոն Լեմանը այսօրւանից դարձաւ իմ ամենամեծահոգի
բարեկամս: Սիրով ընդունեց Միքայէլին, շատ հաւանեց: Ես ասել էի,
որ կարող է ռոճիկ չը տալ, բայց նա ռոճիկ էլ տաւ, տեսնելով,
որ իմ վաստակածը երկուսիս բաւականութիւն չի տալ: Միքայէլն
այստեղ աւարտեց իր արհեստի կատարելագործութիւնը և ստացաւ
փառաւոր վկայական:

X

1863 թւականի սկզբներում նկարիչ Յ. Պատկանեանը Պետեր-
բուրգում բաւական ապահով դիրք էր առացել: Նրա ձեռքին էր
Ամիգիի ծխախոտի գործարանը և մագաղինը և ծխախոտի մատա-
կարարն էր (поставщикъ) Նորին Կայսերական Մեծութեան:

Նրա մօտ էր բնակում և Ռափայէլը, որ այդ ժամանակ ոչ մի
գործի չէր: Յովհաննէսն ուզենալով Կալուզայից մայրաքաղաք տե-
ղափոխել իր հօրը, և եղբօրն էլ մի պարագմունք տալ, մի մամուլ
էր ձեռք բերել հայերէն տառերով: Սրանց մի հայազէտ զրաշար
էր պէտք, ինձ հրաւիրեցին:—Քան թէ ուռուսի տպարանն էք
կնու՞մ, ասաց Յովհաննէսը, լաւ չէ հայի տպարանումը իլէք. մենք
պէտմա մեր Լուսաւորչի հաւատին հաստատ իլենք...

Որովհետեւ նոր էի եկել Հայաստանից, պարոնն աշխատում էր
իր զիտցած գաւառալեզւով խօսել հետո, այլ և կրօնական գա-
ղափարով, որ վրաս խօր ազդեցութիւն անէ և զրաւէ: Բայց երբ
ես սկսեցի խօսել մաքուր գրական լեզւով, նա զգաց, որ անտեղի
էր իր փարիսեցութիւնը: Ես ընդունեցի դրանց առաջարկութիւնը:

Մեծ պասի վերջին շաբաթներին էր: Պիտի տպէր Մեծին
Պետրոսի պատմութիւնը և Զատիկի տօներին նւիրաբերւէր մի շատ
բարձրաստիճան անձի, նրա ողորմածութիւնը հայցելու համար:
Դրանից կախումն ունէր իրանց հօրը մայրաքաղաք բերելու հրա-
ման ստանալը: Ժամանակը կարճ էր. պէտք է աշխատէի գիշեր-ցե-
րեկ: Տառերը քիչ էին և կոտրատւած, պէտք էր ջոկջոկել մամուլը
ձեռքի էր, ուշ էր հասցնում ապագրութիւնը: Օրուայ մէջ երկու

Ժամհազիւ էի քնում. մի զիշեր էլ ամենեւին չքնեցի և միւս օրը առաւօտուայ տասը ժամին աչքերս արիւնով լցւեցին, էլ ոչինչ չըտեսայ և վայր ընկայ թուլացած: Ռափայէլը եկաւ, տեսաւ իմ վիճակը և բացականչեց.

—Ափսոս, գործն ուշացաւ:

Այս խօսքը գնդակի պէս դիպաւ սրտիս, բայց ոչ մի պատասխան չըտուի: Մտքումս միայն ասացի, թէ որքան փչացւած է այս մարդը, որ իմ աչքերի համար ոչ մի ցաւ չի զգում: Այդ բոպէից նա ամբարն վատացաւ իմ աչքում, որ էլ ոչ մի բանով չէր կարող լաւանալ:

Սառը ջրով թաց արած քաթան դրի աչքերիս և պառկեցի տեղումս՝ քունս կշտացնելու. համար: Միւս օրը բաւական լաւ էի և գործն էլ հասցրի իր ժամանակին:

Այս աշխատութիւնը մի բառացի թարգմանութիւն էր ռուսերէնից, մանուկների համար շինած մի պատմութեան. բայց այս հանգամանքը ծածկեց թարգմանիչը և ճակատին տպագրեց «աշխատասիրութիւն»:

Ուրիշի գաղտնիքն իմանալը շատ անգամ փորձանք է բերում իմացողի պիսին: Մարդասպանը հարկադրւած է սպանել և նրանց, որոնք կարող էին մերկացնել նրա եղեռնագործութիւնը: Խորհուրդ եմ տալիս այն մարդկանց, որոնք որ և իցէ չարագործութեան պատահմամբ ականատես են եղել, զգոյշ կենալ, չասեն թէ ազատ կը մնան իրանց զաղտնապահութեամբը: Գաղտնապահութիւնն անհնարին է. դու կասես քո մտերմին, նա էլ՝ իր, և այսպէսով ամբողջ աշխարհք կը տարածւի: Ինձ վատաբանել և հալածել են այնպիսի մարդիկ, որոնց մազի չափ մի փնաս չեմ տւած: Այս առաջ է եկել նրանից, որ տարաբախտութիւն եմ ունեցել անգիտակցաբար, անմեղութեամբ և պատահմամբ միայն նրանց զազրելի արարքները տեսնելու: Զազրագործի ամենամեծ թշնամին իր զազրագործութեան վկան է, և լինելով զազրագործ, ոչինչ չարժէ նրա համար մի զազրութիւն ևս դործել, բարոյապէս կամ Փիղիքապէս սպանելով իր մութ գործերի վկային: Քանի քանի անմեղներ ու արդարներ զոհ են գնացել այսպիսի եղեռնագործութիւնների: Մէկ անգամ Ռափայէլը տեսաւ իմ ձեռքում յիշեալ

պատմութեան բնագիրը կարգալիս: Այս դէպքից յետոյ իմ տատը թեքեց նրա աչքումը: Բայց ես բանի տեղ չըզրի այս հանգամանքը: Նա ինձ չէր պահել, բայց արդէն սկսել էր «Հիւսիս» շաբաթաթերթը, ճարահատեալ պիտի պահէր, և պահում էր սիրաշահելով, որքան որ կարող էր սիրաշահել օրւայ մէջ 24 գոյն ցոյց տուող մի մարդ: Շուտով եկաւ հացը, և երբ որ նրան ծանօթացայ, Ռափայէլը դարձաւ իմ աչքումն մի անմեղ, միամիտ և բարի հրեշտակ այս մարդու համեմատութեամբ: Սրանց մօտ մնացի մի աւարու չափ, առանց տարին լրացնելու և լաւ ծանօթացայ ամենի էլ կեանքի բնորոշ զծերին, բայց ես չեմ ուզում գրել, որովհետեւ իմ նպատակս չէ ուրիշների կենսագրութիւնն անել, մանաւանդ որ զրանց կենսագրութիւնները զուրկ են բարոյակրթական կողմերից: Ես չըհեռացայ զրանցից, այլ փախայ, գործը երեսի վրայ ձգելով, որից յետոյ այլ ևս ոչ մի յարաբերութիւն չուղեցայ ունենալ զրանց հետ: Սրա պատճառը ի միջի այլոց և այս էր. ես մի յայտարարութիւն դրեցի և տւի տէրտէրին, որ տեսնէ և թոյլ տայ տպելու «Հիւսիսումը»: Նա կարդաց, և՛ շատ լաւ է, ասաց, տար շարէ, բայց թերթը չըլցնես, պէտք է մի բան էլ ես գրեմ: Իմ յայտարարարութեան բովանդակութիւնն այս էր թէ՛ «այս ինչ երիտասարդներս, որ Թիֆլիսից հեռացանք այս ինչ նպատակով, այժմ Պետերբուրգումն ենք և շուտով կըհասնենք մեր նպատակին, ուստի և առաջարկում ենք մեր ծառայութիւնը մեր ազգային տպարաններին—Եջմիածնի, Ղարաբաղի և Ներսիսեան դպրոցների տպարաններին»: Սրանով ես ուղեցայ նաեւ ուրախացնել իմ հեռաւոր ծանօթներին և բարեկամներին: Այս յայտարարութիւնը շարեցի, սրբագրեցի և սպասեցի, որ տէրտէրն էլ իր գրածը բերի: Նա բերաւ տաւ ինձ և սուս ու փուս դուրս գնաց: Ես կարդացի, և ինչ եմ տեսնում. մի առակ և շատ խաչտառակ. եթէ տպւի իմ յողածից յետոյ, բոլոր կարգացողներն այն եզրակացութեանը պիտի դան որ վերը դրած յայտարարարութիւնը գլխովին սուտ է: Ես չըշարեցի այդ չիմար բանը, այլ միայն իմն դրի, և հրամայեցի տպել: Տէրտէրը եկաւ տեսաւ իր ոտանաւորը դէն եմ ձգել, շատ կարմրեց. չըզիտում ամօթից թէ բարկութիւնից. երևի երկուսն էլ միասին կըլինէին. բայց ոչինչ չըխօսեց: Այդ բանը ես պատմեցի Միքայէլիս

և նա այնպէս վրդովեց, որ չնայած իր պաշարիւնութեանը, ասաց կտրական. «Ել մի գնար այդ տպարանը, ես չեմ ուզում: Ղու աւելի իմ խաթրու ես գերի դառել դրանց, բայց ես հիմա արդէն ապահով եմ: Լեմանն ուժիկս աւելացրեց. այժմ քսանըհինգ մանէթ է շինել ամսականու»:

Պէտք է խոստովանիմ սակայն, որ ես Պատկանեանցի տանը շատ և շատ բան սովորեցի: Այդ տեղ միայն հասկացայ, որ ջոկ բան է ուսումը, տաղանդը, և ջոկ՝ բարոյական զարգացումը. և թէ՛ մէկը միւսին կատարելագործում է՝ լաւին դէպի լաւն է տանում, վատին դէպի վատը: Եթէ, օրինակ, մի դիրք պարունակում է իր մէջ լաւ և վատ տիպեր, լաւի հակումով ընթերցողը ասում է վատերին և սիրում լաւերին. իսկ վատ հակումն ունեցողը՝ դրա հակառակ՝ ծիծաղում է լաւի վրայ և աշխատում է նմանիլ վատերին: Ներկայումս էլ ես այդպէս եմ համոզւած: Եթէ մէկը չունի ազնիւ բնավորութիւն կամ ժառանգապէս և կամ՝ ինքնուրոյն, մտաւոր զարգացումը նրան չի ազնւացնիլ, այլ աւելի ևս կանազնւացնի: Սրա հակառակ ազնիւ բնավորութիւն ունեցողը օրքան շատ զարգանայ մտաւորապէս, այնքան շատ կազնւանայ և կը հասնի մինչև ալլասիրութեան աստիճանին, որ ծայրն է բարոյական զարգացման: Բարոյական յատկութիւնները նոյնքան ժառանգական են, ինչքան և ֆիզիքականն ու մտաւորը: Չար ծառը բարի պտուղ տալ կարող է: Ուսումնասիրեցէք մէկի ծնողաց անհատական յատկութիւնները, նրանցով կարող էք և նրանց ծնունդների մասին մոտաւոր դադափար կազմել:

XI

Պատկանեաններից որ հեռացայ, ես կրկին դիմեցի ակադէմիայի տպարանը, բայց այս անգամ ինձ չընդունեցին: «Մէկ անգամ այստեղից դուրս եկողը կրկին այստեղ մտնելու իրաւունք չունի», ասացին: Յիրաւի այս կարգը պահւում էր այստեղ: Ռոճիկներից էլ մի յայտնի տոկոս պահւում էր խնայողական արկղում, որից կենսաթոշակ էին տալիս յետոյ՝ ծերացած և անկարող աշխատաւորներին:

Գնացի Լեմանի մօտ, նա ինձ մի նաւակ տուաւ մի տոյս արանատիրոջ վրայ և նա ինձ ընդունեց մեծ սիրով: Գործս լաւ էր գնում,

բայց ուսումն կաղիկաղ. քիչ ժամանակ ունէի ինքնակրթութեանս համար, դատարկ ումաններ էի կարդում և այն էլ պատահաբար և անխտիր: Այս միջոցին մի կիրակի օր Միքայէլս գնաց ժամ և այնտեղից մի լուր բերաւ, թէ Նազարեանցն ուզում է շարունակել «Հիւսիսափայլի» տպագրութիւնը, որ քանի ամիս էր դադարած էր, բայց զբաշար չունի: «Հիւսիսից» լսելով՝ որ մենք այստեղ ենք, գրել է Մարտիրոս Սիմոնեանցին, որ մեզանից մէկնումէկին ուղարկէ: Նա խօսեց ինձ հետ, ես չեմ կարող, ասացի, բայց կըհամոզեմ Ղազարոսին, որ երթայ:

—Հիմա ի՞նչ կասես, ասաց Միքայէլս, ես խորհուրդ եմ տալիս, որ գնաս. հոգ չէ, որ ես մենակ կըմնամ:

—Շատ լաւ, բայց ես ինչպէս գնամ այն մարդու մօտ, որ ինձ հետ խօսել անգամ չուզեց:

—Դու էն վախտն ուրիշ մարդ էիր, իսկ հիմա ուրիշ: Ի՞նչ տեղից պիտի գիտենայ, որ դու նոյն մարդն ես, և եթէ իմանայ, ինքը պիտի ամաչի և ոչ դու: Պայմանն էլ շատ ձեռնտու է: Հազարին 20 կոպէկ, և երկու էլ աշակերտ պիտի տան: Դու նրանց շուտ կըսովրեցնես, նրանք կըշարեն, իսկ դու քո ուսումը կըշարունակես:

Արդարեւ իմ ինքնակրթութեանս համար այս շատ ձեռնտու պայման էր: Վճուեցինք գնալ, և ես իսկոյն ճանապարհ ընկայ դէպի Մոսկւա: Գնացի Նազարեանցի մօտ իբրեւ նոր և նրան անծանօթ մի մարդ: Եւ չիրաւի, ես այլ ևս այն չէի, ինչ որ առաջ: Հիմա հագնւած եմ վայելուչ ձեռով և մինչև անգամ աւելի ճոխ, քան թէ պէտք էր, ուրեմն այլ ևս չէի խրտնեցնիլ այն մարդկանցը, որոնց խելքն աչքումն է և ոչ գլխումը:

Լաւ հազուստին նշանակութիւն չըուող մարդիկը մի առաժ ունին, թէ «Հագուստի համեմատ կընդունեն, իսկ խելքի համեմատ ճանապարհ կըղենեն»: Ի հարկէ այդպէս է, բայց որ շատ անգամ էլ միայն հազուստին նայելով՝ ուղղակի ճանապարհ են ձգում, առանց խելքի մասին մի դադափար կազմելու, սրա դէմ ի՞նչ ունիք ասելու: Եթէ ես մէկ լաւ հագնւած մարդ լինէի, կարելի բան է, որ Նազարեանցն այնպէս վարէր ինձ հետ, ինչպէս վարեց: Ո՛վ է բացառութեան վրայ ուշադրութիւն դարձնում, մանաւանդ մեծ

քաղաքներում, ուր հազար տեսակ թափառաշրջիկ բախտախնդիրներ կան:

Այս անգամ հազարեանցն ինձ շատ պատուով ընդունեց, մօտը նստեցրեց, երկար խօսեց, բողոքեց հայերի դէմ, որ իրան չեն հասկանում, չեն գնահատում: Խօսակցի վրայ այն տպաւորութիւնն էր գործում, որ այդ մարդը մէկ հատ է, իրանով յափշտակած, ընդդիմախօսել կարելի չէր, և հէնց շատերին էլ, որոնք ուղեցել են մի բան էլ իրանք ասել, մի կարծիք յայտնել, հազարեանցը աջադիմի նկատողութիւն է արել:—«Ասեցէք, եղբայր սիրելի, լսեցէք, լսելն անգամ շատ է ձեզ համար...»—Սրա պատճառն այն էր, որ իր ժամանակ հայերիս մէջ չըկար նրա չափ և նրա նման աշխատասէր մի մատենադիր: Այդ մարդը հիմք դրաւ գրական լեզւի նոր ուղղութեան և նոր գրական դպրոց ստեղծեց, որով սարսափելի հարւած տուաւ ընդարմացած և թմրած ուղեղներին: հազարիանցի այս մեծ գործը դեռ ևս ըստ արժանւոյն գնահատւած չէ հայ հասարակութեան և նորագոյն գրագէտների կողմից, որոնք շատ թեթեւաչքով են նայում նրա աշխատութեան և ուղղութեան վրայ: հազարեանցի և Սբոյեանցի նմանը դեռ ևս չի ծնւել մեր մէջ: Առաքեալներ շատ ունինք, բայց հիմնադիրներ՝ և ոչ մէկը:

Մոսկւայում մնացի ես 63 թւականի վերջերից մինչև 64-ի վերջերը և այդ փոքր ժամանակամիջոցը կարելի է համարել իմ մոտաւոր զարգացման ոսկեդարը: Ինձ յանձնած աշակերտներին շատ շուտ սովորեցրի հայերէն կարդալ և շարել, թէև ուսաներ էին: Սրանց վարձը տպարանն էր տալիս, բայց շարում էին ինձ համար: Ես ժամանակ ունեցայ իմ ինքնակրթութիւնս մի սխտեմի տակ ձգել, պարսպել որոշ ծրագրով, գիտութիւնների տարերք ուսանելով: Այս միջոցին մի վարմանալի օգնութիւն էլ, կարծես երկնից, հրաշքի նման ինքն իրան եկաւ և ուղղակի իջաւ գլխիս վրայ, հեքիաթների «դովլաթ-դուշի» ասւած թուշուի նման, որ ում գլխին իջնում է, նրան են թաղաւոր շինում: Մոսկւայի համալսարանից մի խումբ ուռու ուսանողներ ձրի դասատուութիւն էին անում զանազան գործարաններում եղած աշակերտներին և վարպետներին: Ուսանողները իրանք վարձ էին ստանում ուրիշ տեղից: Սակայն ամեն գործարանատէր այդ բան իրան ձեռնառու չէր համարում և թոյլ չէր տա-

լիս: Բայց մեր տպարանի տէրը, որ Մամոնտովն էր, ինքն ուսեալ մի երկտասարդ էր, յայտնի հարուստի որդի, ամենայն ուրախութեամբ թոյլ տուաւ: Դասագրքերն ևս ուսանողներն էին բերում և ձրի բաժանում: Մեզ մօտ գալիս էին չորս հոգի, ամեն մէկն առանձին առարկայի համար: Սկզբումը սովորողներս մինչև քսան հոգի էինք, որոնց մէջ ամենից հասակաւորը ևս էի: Բայց հետզհետէ կամեցողների թիւը նւազեց և ևս մնացի մեն մենակ:

Ուսանողները ինձ վրայ առանձին ուշադրութիւն էին դարձնում, և զարմացած էին մնացել, որ քսանըչորս տարեկան մի երկտասարդ, որ նոր է սկսում սովորել, այսչափ գիւրաթեք, ձկուն ու դիւրըմբռնող միտք ունի: Նրանք ծանօթ չէին իմ անցեալի հետ և ես էլ չէի պատմում, ուզում էի, որ ամեն ինչ այբուբենից սովորեմ թէ դասը և թէ դաս տալու եղանակը, որ ինձ համար նոյնպէս նոր էր: Այս ուսանողները հմուտ էին ժամանակակից մանկավարժական զրականութեանը, որ նոր էր զարգանում, հետևում էին նորագոյն մեթոդներին, ունէին և դաստուութեան շնորհք: Նրբոր մենակ մնացի, այլ ևս տպարան չեկան, այլ ուղղակի իմ սենեակս: Իրանք աղքատ էին և իրանց ստացած նպաստի փոխարէնն էր, որ դաս էին տալիս ձրի: Բայց գրանցից մէկը ամենից աղքատ էր, ստացած օգնութիւնն իրան չէր բաւականացնում, վարձով դաս գտնելու էլ շնորհք չունէր: Բացի մաթեմատիկայից ուրիշ առարկայ չէր սիրում և մինչև անգամ սովորածն էլ մոռացել էր. միակողմանի էր բոլորովին: Լեհացի էր և աղղասէր: Այսքանը բաւական էր, որ մենք սերտ սիրով կապէինք միմեանց հետ: Ես առաջարկեցի, որ իմ սենեակումս բնակի և ինձ հետ ճաշի: Մերժել չէր կարող, այնքան սրտանց էր իմ առաջարկութիւնը:

Այս ձևով իմ ուսումնառութիւնս տեւց միայն մէկ տարի, որից յետոյ ես Մոսկւայից հեռացայ, կամ աւելի ուղիղն ասեմ, փախայ Պետերբուրգ: Սրա պատճառը հետևեալ հանգամանքներն էին.

Զանազան տպարանների յառաջագէմ գրաշարներից և ուսանողներից մի ընկերական խումբ էինք կազմել: Հաւաքւում էինք մէկտեղ և զանազան նախագիծեր կազմում, վիճում, զատում մեր խելքից շատ վեր բաների վրայ: Այս ոչինչ, սա մինչև անգամ օգտակար էր մեզ համար և զարգացուցիչ, բայց մեր ժողովներից չե-

տոյ խենթութիւն շատ էինք անում: Միքայէլը մօտս չէր, որ ինձ զսպէր, դժութեան մէջ չէի ուզում ոչ մէկից յետ մնալ, այլ եթէ կարելի է, դերազանցել բոլորին: Ուր որ գնում էինք խմբովին, մեր աւաջին գործն էր լինում անկարգութիւն անել: Տակն ու վրայ էինք անում շատ պանդոկներ և կանանոցներ մի որ և է առիթով, իսկ առիթներ աչդպիսի տեղեր միշտ լինում էին և այն էլ շատ առատ: Ստար մէկը վիրաւորում էր մեզանից մէկին, այդ արդէն բաւական էր, որ վրայ թափւէինք և աթոռ ու սեղան կոտորէինք և ջարդէինք մեր հակառակորդների քիթ ու պուռնկը: Այդ ժամանակ այժմեան խտուրթիւնը չկար և մեծ նշանակութիւն չէին տալիս ոչ մեր ժողովներին և ոչ նոյն իսկ մեր անկարգութիւններին: Եթէ երբեմն տանում էին և ոստիկանատուն, այնտեղ մի թեթեւ նկատողութիւն էին անում և արձակում: Բայց ես զգում էի, որ լաւ բան չէ մեր արածը, մանաւանդ որ մտադրւել էինք ծեծել մի քանի գերմանացի Ֆակտորների, որոնք շատ բարբարոսաբար էին վարւում ուսւս դրաշարների հետ և նախապատուութիւն, մեծ ուճիկ և օգտակար գործերը յանձնում էին իրանց ազգակիցներին: Ռուսաստանի բոլոր գործարաններում ուսւս աւարը սոստիկ ճնշւած էր գերմանացոց ձեռքում, և միայն ուսաներն էին, որ կարողանում էին տանել այդ անտեսական ճնշումը, իրանց վրէժը արաղի մէջ թափելով:

Մոսկւայից հեռանալու համար ունէի և մի աւելի կարեւոր առիթ: Այդտեղ ծանօթացայ մի աղջկայ հետ: Այդ պատահեց իմ նոր բարեկամ Յաշայեցն տանը: Աղջիկը դրանց մօտաւոր ազգականն էր, շատ դեղեցիկ, քնքոյշ, լաւ ուսում առած և շատ կարգացած և զարգացած: Ինքը մէն մենակ, ոչ հայր, ոչ մայր, բայց ապահովւած էր նիւթապէս: Այդ աղջիկը սիրահարւեց ինձ վրայ, սպասում էր, որ այսօր է թէ վաղը ես կը յայտնեմ իրան իմ փոխադարձ սէրը: Խեղճը չէր իմանում, որ այդ խօսքն իմ բերանից դուրս գալուն պէս՝ հողիս էլ հետը պէտք է դուրս գայ: Սիրահարւած էի և ես, մինչև անգամ հիւսցած և յափշտակւած, բայց իդէալական սիրով, պաշտելու չափ: Նստ անգամ աւրոջը գիշերներ էինք լուսացնում: Ժամանակի ընթացքը մեզ համար զգալի չէր, մեր խօսակցութեան նիւթն անհատնելի էր: Նա պատմում էր իր կարգացած վէպերի բովանդա-

կութիւնը, և այլ տեղից սկսում էինք մարդկային հոգու զանազան յատկութիւնների մասին ճառել, զօռ տալով մեր երևակայութեանը, որ անասնն կերպով թռչում էր առանց մեր կամքի: Հոգեկցութիւն, նախազգացմունք, համակրութիւն և գլուխ ամենայնի՝ սէր՝ իր բոլոր աստիճաններով և տեսակներով մեր բացատրութեանն էին ենթարկում, և բացատրում էինք միակերպ և միանման, լրացնելով իրար սրահս թողածը: Խօսում էինք և բանաստեղծութիւնների մասին, թէ որի մէջ աւելի հանճար, աւելի տաղանդ կայ, կամ ինչ տարբերութիւն կայ հանճարի և տաղանդի մէջ: Երկուսս էլ Վերմոնտովին բարձր էինք դասում Պուշկինից: Մէկ օր նա այսպիսի մի բան ասաց. «Վերմոնտովը չըգտաւ մի հոգի, որ կարողանար բաւականութիւն տալ նրա բարձրասլաց սիրոյն. եթէ ես նրա ժամանակ եղած լինէի և նրան ծանօթ, նա անպատճառ իմ մէջ կը զըռնէր իր որոնածը»: Այս ասաց նա ոչ թէ ինձ բան հասկացնելու կամ զրուելու զիտաւորութեամբ, այլ անմեղ հաւատով և պարզ մտութեամբ:

Մէկ զիշեր էլ շատ ոգևորեց Վարվարա Պետրովնան, (այսպէս էր անունը): Նախ կարդաց իր գրած բանաստեղծութիւնները, որոնց մէջ նկարագրում էր իր տաճած սէրը դէպի մի երիտասարդ, նկարագրելով նրա ներքին և արտաքին գեղեցկութիւնները. բայց նա փախչում է իրանից, որովհետեւ նրան դէպի իրան է քաշում իր տառապեալ հայրենիքը, և այստեղ բացականչում է. «չէր իմանում խեղճը, որ հէնց դրա համար էլ ես սիրում էի իրան, բայց փափագում էի, որ ինքն էլ ինձ սիրէր»:

Ես ֆնացի լուռ, չիմացայ ինչ պատասխան տամ: Նա ուզեց նիւթը փոխել. մօտս նստեց գիւանի վրայ և սկսեց Պուշկինի «Վովկասի գերին» ամբողջապէս բերան ասել: Երբոր վերջացրեց, կուռը գցեց վզով և ճակատիցս համբուրեց, կարծես կարօտելով՝ որ մէկն էլ իրան համբուրէր նոյնքան վառ սիրով:

Մենք շատ էինք խօսել սիրոյ մասին, շատ էինք արծարծել Տուրգենևի На кануна վէպի բովանդակութիւնը և կողմնակի կերպով հասկացրել էի, որ ես օտար աղջիկ, մանաւանդ ռուս աղջիկ, որքան էլ որ սիրելիս լինիմ, ինձ կին չեմ առնիլ. ասել էի, թէ ինչ պատճառով: Այժմ էս բացեցի ջերմ համբուրի ազդեցու-

թեան տակ և ասացի. — Վարվարա Պետրոսի, գիտէ՞ք, ես որքան շնորհակալ եմ ձեզանից: Կեանքումս դուք առաջին աղջիկն էք, որ ձեր անկեղծ սիրով ահագին ազդեցութիւն էք գործել իմ բարոյական և մտաւոր զարգացման վրայ: Դուք ձեր զարգացումը անձրևի պէս տեղացրել էք իմ հոգուս մէջ: Ձեր սիրով կենդանութիւն եմ ստացել. ձեր սիրով մեղմել, քնքուշացրել եմ իմ շատ կոպիտ բնաւորութիւնս: Միով բանիւ՝ դուք, առանց ձեր զխտութեան, շարձել էք իմ ոգևորող մուսան: Ես յուսով եմ, որ մեր այս յարաբերութիւնը այսպէս էլ կը շարունակւի, առանց այլ կերպ սրանք առնելու. ես կը լինիմ ձեր սիրելի եղբայրը, իսկ դուք իմ ամենասիրելի քոյրս...

— Այո՛... բացականչեց Վարինկան և թաշկինակն աչքերին դնելով՝ սկսեց հեկեկալ: Ես համբուրեցի նրա ձեռները և սկսեցի ծառել իդէալական սիրոյ վեհութիւնն ու վսեմութիւնը, իսկ ուշալական սիրոյ ոչնչութիւնը: — Ռէալական սէրը հանգցնում է, ասացի, հոգեկան սիրոյ կրակը, բաժանում, անջատում է հոգեկցութիւնը, դադարեցնում է երևակացութեան թռիչքը, ցածրացնում է ճշմարիտ սիրոյ բարձրութիւնը, շնորհազուրկ է անում, մերկացնում. հոգեկան յափշտակութիւնից յետոյ հիասթափութիւն է յառաջ բերում: Ես չեմ կարող իմ պաշտած աստուածունհուն զրկել իր երկնային զօրութիւնից, քանի որ այդ զօրութիւնն ինձ վրայ է տարածում. ես այդ կը համարեմ մի սրբապղծութիւնս...

Ահա այս բանից ես մտածեցի անպատճառ հեռանալ, վախենալով՝ որ մի գուցէ կրակի հետ խաղալով՝ ընկնէի մէջը ճրագի չորս կողմով թրթռող թիթեռնիկի նման:

Իմ սիրոյ այս վերջին արկածը պատմեցի ես իմ ուսանող վարժապետին՝ Սոկուլսկուն, որ շատ էր ցանկանում ծանօթանալ այդ տարօրինակ աղջկայ հետ: Նա ասաց. — Լսիր, հոգեակա, թող այդ աղջիկը իմ իսկական կինս լինի, իսկ քո իդէալական սիրունին:

— Այ, պատասխանեցի, իմ իդէալական սիրունին պէտք է իմ աչքումն անարատ լինի, ինչպէս հրեշտակ, մի ամենափոքր բիծը նրան աստանայ կը շինէ իմ աչքումս:

Պետերբուրգ գնալիս ես «մնաս բարեւ» չգնացի. մի նամակ գրեցի տւի Սոկուլսկուն և Լիւջիսի Ֆիզիոլոգիան, որ Վարինկան

աւել էր ինձ կարգաւու, և աւագի՝ տար իրան տուր և ծանօթացիր: Վերջը Սովուլսկին ամուսնացաւ Վարինկայի հետ, բայց տարի չքաշեց, ծնունդի վրայ մեռաւ խեղճը:

Երբոր մաքիս մէջ ծագում է մի բան անելու, էլ չեմ կարողանում համբերել, սպասել, աշխարհքը մթնում է գլխիս, էլ ոչ մի բան աչքիս չի երևում, ոչ մի բանի ձեռքս չի կաշում: Մտադրւել եմ գնալ Պետերբուրգ, բայց գործը կարող էր կիսատ մնալ, իսկ այդ անագնւութիւն կը լինէր իմ կողմից, եթէ մի իրաւացի տեղիք չունենայի: Այդ տեղիքը տւաւ ինքը Նազարեանցը: Շարեւու նիւթը ուշացնում էր: Աշխատակից շունէր. ամեն ինչ ինքն էր դրում, ինքն էր թարգմանում, շատ անգամ ոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով: Մի յօդաւժ միայն, որ կրում է «Ազգային թշւառութիւն» վերնագիր, Նալբանդեանցի գրածն էր, թէ և Նազարեանցի իսկական անունն է ստորագրւած: Բոլոր շարեւիքը ձգում էր ամսի վերջերին և շապտեցնում, որ ամսի վերջին դուրս գայ: Ես հասցնում էի դարձեալ, բայց այդ օրերում զրկւում էի դասերիցս, որոնք ինձ համար աւելի թանգ արժէին, քան թէ «Հիւսիսափայլի» ամսավերջին դուրս գալը: Մէկ օր էլ երբ այդպէս բերել թափել էր յօդաւժները, և շապտեցնում էր, ես այլ ևս ուշադրութիւն չը դարձրի, դասերս բաց չըթողեցի: Նազարեանցը գալիս է տղարան, տեսնում է որ ես չը կամ, հարցնում է թէ ուր եմ: Նրան ասում են, որ ես դաս եմ առնում մի խումբ ուսանողներից: Սա բարկանում է սաստիկ և ասում.—«Այդ ասիացի ախմախը ահագին կենդանի է դառել, նոր ուզում է ուսմւ՜ առնել. գնացէք շուտ, կանչեցէք»: Եկան ինձ ասացին նրա բարկութիւնը: Ես իսկոյն գնացի ոչ թէ նրա հրամանը կատարելու, այլ իր հայհոյանքի փոխարէնը յետ դարձնելու բոլորի առջև, որ տեսնեն թէ ես Նազարեանցին թոյլ չեմ տալ ինձ անպատեւ անպատիժ կերպով: Գնացի, և կանգնեցի տառարկղիս առջև՝ բիզը ձեռիս: Նա դուրս եկաւ գրասենեակից և սկսեց իր յանդիմանութիւնը կոպիտ խօսքերով. ես պատասխանեցի իրանից աւելի կոպիտ կերպով: Նա աչքերը խփեց, ինչպէս սովորութիւն ունէր, և սկսեց ձեռքերը շարժել ինչպէս մի դերասան բեմի վրայ, որ ասածն աւելի ազդու դուրս գայ, բայց այս անգամ նրա մի ձեռքը դիպաւ իմ ձեռքի բիզի ծայրին, որ անգիտու-

Թեամբ մեկնեցի դէպի իրան՝ ուզենալով պատասխանա իր ձեռովը տալ: Նազարեանցը վիրաւորելով Թէ իմ խօսքերից և Թէ իմ խթանից, երեսը շրջեց ու հայհոյելով հեռացաւ, իր հետ տանելով և իմ հայհոյանքը, որ անխնայ իր ետեւից Թափեցի գլխին:

Նազարեանցը հայերիս ասում էր կոպիտ ասիացի, բայց չէր զգում, որ ասիական կոպտութիւնը իր մէջ գերանալով էր: Մէկ անգամ Էմինի ու Նազարեանցի մէջ ես դարձայ մի յալիշտակութեան առարկայ. այդտեղ տեսայ այդ երկու մեծ մարդկանց փոխադարձ հակադասական ատելութիւնը: Էմինը մի գիրք էր շարել տալիս ռուսերէն հայոց հեթանոսական կրօնի մասին: Այդ գրքում տեղ-տեղ հայերէններ կային, և ինձ խնդրեց, որ ես շարեմ: Այս բանը, որ մի շնչին բան էր, Նազարեանցին կատաղեցրեց:—«Ես իմ գրաշարիս Թոյլ չեմ տալ, ասաց, որ նրա համար բան շարի»: Եկաւ արգելեց ինձ և ասաց.—«Եղբայր սիրելի, նա մարդ չէ, այլ խոզ է, խոզ. քո տեսած խոզերից չէ, դա վատթար տեսակից է»... Ռուս գրաշարները Էմինին յայտնեցին Նազարեանցի արարմունքը: Նա էլ եկաւ ինձ մօտ և ասաց.—«Դուք դրան ինչո՞ւ էք լսում, դա խելագար է, զուրկ մարդավարութիւնից. դա որտեղ էր դեռ, որ ես ձեզ համար այստեղ հոգացի, որ տեղ տան»...

Մտքումս ասացի՝ շատ հոգացիր, շատ... երկուսիդ էլ երեք նահլաթ, ամեն մէկիդ հինգ: Հայոց ազգի աչքը լոյս, որ ձեզ պէս գիտնականներ ունի. իբր Թէ մէկդ Մովսէս Խորենացին էք, միւսդ Վաւիթ անյաղթը:

Էմինին միամտացրի ես, որ կը շարեմ, որպէս զի «երախտահատոց» լինիմ:

Նազարեանցի հետ ունեցած կռից յետոյ ես ալ ևս չէի կարող նրա հետ որ և է յարաբերութիւն ունենալ: Այդ տարին ես շարեցի Շահաղիդի Անոնի վիշտը, և միայն այդ մարդուն սիրեցի ես Մոսկւայի հայերից:

Մեր կռիւը շատ յարմար Ժամանակ պատահեց «Հիւսիսափայլ»-ի համար: Այդ Ժամանակ Միքայէլը մօտս էր: Զուլարանումը հի. անդացել էր, նոր եկել էր ինձ մօտ, որ փոքր ինչ կազդուրւի:—Դու դնա՛, ասաց, ես մի կերպ եօլա կը տանեմ, կը շարեմ «Հիւսիսափայլ»-ը քո պատրաստած աշակերտներն հետ:

XII

1864 թվականի վերջերում, ես կրկին Պետերբուրգումն էի, լաւ պատրաստուած ինքնակրթութիւնս ազատ կերպով շարունակելու համար: Գրաշարութիւնից աղատելու միտքը, որ առաջ ինձ համար մի ցնորք էր համարուում, քանի գնում էր՝ մօտենում էր իրականութեան: Այժմ ես թափ էի տւել մտաւորապէս, ինչպէս մի ժամանակ Ֆիլիքսապէս: Այժմ իմ մէջ զգում էի մի մտաւոր անզուսպ ուժ: «Միթէ ես պակաս կը գրեմ, քան թէ Ռափայէլ Պատկանեանը, քան թէ Նազարեանցը», մտածում էի ես և երեւակայում էի, որ նրանցից էլ լաւ կը գրեմ: Առաջ այսպիսի միտք չէր կարող պտուտել գլխումս: Ներքին շրջումս էլ որ չլինէր, արտաքինը բաւական էր, որ ես ձգտէի ինձանից թօթափել բանւորի ստրկական շղթան: Մենակ մեր խմբագիրներին տմարդի վարմունքը բաւական էր, որ մի ազատասէր սրտի մէջ կրակ վաւեր, յառաջ մղէր և այդ կախարդական շրջանից դուրս մղէր: «Դ՛նչ հայեր են այստեղի հայերը, ասում էի ես. ինչպէս կան ռսի նեմեցներ, ռսի ջնուդներ, նոյնպէս կան և ռսի հայեր. դրանց բոլորին միմեանցից զանազանել չես կարող բարոյական կողմից: Մէկ հայ որ չաշխատի իրանով իր ազգի անունը բարձրացնել, նրա պատիւը պահել, պաշտպանել, նա ի՞նչ հայ է»: Այս զգացումն ինձ մինչև դոնքիշտութեան էր հասցնում. շատ բան անում էի միայն նրա համար, որ ինձանով իմ ազգի պատիւը չստորացնեմ, չստել տամ, թէ Աղայեանցը սովորական անպիտան հայերից մէկն է, այլ եթէ հնար է, շակեմ օտարների այդ ծուռ դադափարը բնիկ հայերի մասին: Այս զգացումն ու հաւատը ինձ ազատում էր շատ զայթակղական և անբարոյական դէպքերից: Օտարների շրջանի մէջ, ընկերներին և ծանօթներին մէջ, ազատ կանանց և օրիորդների մէջ ես յայտնի էի, իբրև բարոյապէս անբիժ և ազնիւ մարդ: Շատ ուրախ էի, որ գնահատուում է իմ ներքին արժանաւորութիւնը՝ դոնէ օտարների կողմից: Շատ շատերից եմ ստացել նոյն իսկ կանանցից և օրիորդներից իրանց լուսանկարը՝ քամակին գրած «Նւիրում եմ Ա. Աղայեանցին եղակի շիտակ մարդուն» (единственному честному человеку): Այսպէս՝ նախ քան ինձ «Հնորհալի» և «տաղանդաւոր» տիտղոսներ տալը, տւել են «ազնիւ և շիտակ մարդու» տիտղոս, որով քիչ չեն խրախուսել և մխի-

Թարեւ ինձ և աւելի ևս զարկ տւել իմ բարոյական զարգացմանը և շիտակութիւնը շինել ինձ համար արիւն և մարմին:

Մի պակասութիւն, որ այդ ժամանակ ես ունէի, այդ այն էր, որ ես իմ յարաբերութիւնը իսպառ կտրեցի տեղական հայերից. եկեղեցի էլ չէի զնուժ, որ նրանց երեսը չըտեսնեմ: Մէկ երկուսի հետ մօտ ծանօթանալով՝ և մի քանիսին էլ միայն հեռուից դիտելով՝ բոլորի մասին կազմել էի մի այսպիսի ծայրայեղ և մոլար դադար: Մոսկւացում իմ յարաբերութիւնը ոռուս և լեհացի ուսանողների հետ էր. հայ ուսանողներին ճանաչում էի միայն հեռուից. տեսնելով նրանց թղթամոլութիւնը և բուլւարներում քարշ զալը անանուն աղջկերանց հետ, ես տածում էի դէպի դրանց խորին արհամարհանք: Զուր տեղ վատնում էին իրանց հայրերի և բարերարների փողերը, առանց հոգ տանելու իրանց բարոյական և մտաւոր զարգացման վրայ: Այսպէս չէին Պետերբուրգի ուսանողները, բայց դրանց հետ դեռ ես ծանօթ չէի: Իմ ծանօթութիւնս այդ ժամանակ լեհացոց հետ էր: Ապրելով Սոկոլսկու հետ՝ իմ ուսանող վարժապետի, որ ծայրայեղ ազգասէր էր, այնպիսի սրտածմլիկ պատմութիւններ էի լսել նրա աղբի վերջին պատմութիւնից, որ լաց էի եղել հետը միասին: Ես ինքս էլ իմ աչքովս քիչ աղեկաւոր բաներ չըտեսայ: Այս հանգամանքն ահա ինձ մօտեցրեց լեհացիներին:

Պետերբուրգ. որ հասաց, իմ սենեակս մի լեհացու բնակարանում վարձեցի ամեն ծախքով: Ընկեր դրաշարներս նոյնպէս լեհացիք էին: Իմ և սրանց մէջ այնքան սէր ու մտերմութիւն կար, որ հասնում էր մինչև հոգեկցութեան: Մէկ անգամ սրանց մէկի ամուսնու հետ ծանօթացաց դուրսը, առանց նախածանօթ լինելու: Սա մի շատ զարմանալի դէպք էր, թէև շատ բնական: Մի ջահէլ տիկին երկու անգամ ճանաչին պատահելով՝ այնպիսի հայեացք էր ձգում վրաս, ինչպէս մօտաւոր ազգականուհի: Սա ինձ ճանաչում է, ասացի մշտքումս, բայց ո՞վ կարող է լինել, երևի Պանսկելիչի կինն է. մարդն ինձ նկարագրած կը լինի, սա էլ ճանաչում է ինձ: Երբորդ անգամ որ դէմ առ դէմ եկանք, մտքումս ասացի. եկ փորձեմ, տեսնեմ նա՞մ է: Ես գլխարկս վերցրի և ուղղակի հարցրի.—Դուք տիկին Պանսկելիչը չէ՞ք արդեօք:—Այո, իսկ դուք պարոն Աղայեանցն էք, իմ ամուսնու բն-

կերը:—Այն:—Ես ձեզ ճանաչեցի, ասաց, որովհետև Պետերբուրգում չկայ մի այլ ոք ձեր տարագրով և դէմքով, դուք աչքի էք ընկնում հազարների մէջ, բայց ինքներդ ինչպէս ճանաչեցիք ինձ:

—Ձեր հայեացքն ինձ թելադրեց ենթադրելու, որ դուք իմ սըրտակից բարեկամի սրտակիցն էք, և ես, ինչպէս տեսնում էք, չըստաւեցի:

—Մենք ամենքս, նոյն իսկ երեսէքս, ձեզ սիրում ենք առանց ձեզ տեսնելու, բայց շատ նեղացած ենք ձեզանից, որ մեզ չէք այցելում. ամուսինս զանդատաւոր է ձեզանից. ասում է՝ շատ անգամ եմ խնդրել, չի զալիս: Ինչու չէք զալիս: Ես կը խնդրեմ, որ կիրակի օրը անպատճառ գաք մեզ մօտ ճաշի: Ես կը պատրաստեմ հայկական կերակուրներ...

Ամբողջ կեանքումս չեմ կարող մոռանալ այդ ճաշը, ուր լաց ու խնդում իրար խառնւած տեղեց վեց ժամ: Ինչ ճառեր, ինչ կենացներ: Ես իմ ճառի մէջ ասացի՝ Լացը կեանքի նշան է. նորածին երեխան երբ լաց է լինում իսկոյն, ամենքն էլ ուրախանում են, տեսնում են, որ կենդանի է: Մենք հայերս դեռ չենք արժանացել այդ բախտին...

Տասներկու հոգի էինք. ամենքն էլ լեհացի էին, միայն ես էի օտար: Բայց այդ տեղ օտար չէի զգում ինձ, այնքան սրտանց էր տացած համբոյրներս: Կարելի բան չէ, որ աջապիսի սիրոյ և աննախապաշար պատուի արժանանայի ես որ և է հայկական շրջանում: Հայերը չէին սիրում միմեանց, փոխադարձ ատելութեամբ էին վարակւած, մինչդեռ լեհացիք... բայց թողնենք այս. ինչ համեմատութիւն, և որտեղից սրտեղ:

Պետերբուրգ որ զնացի, զիմեցի Լեմանին, ասացի՝ եղբայրս շուտով կառողջանայ և կը գայ, բայց ես տեղ չունիմ: Իսկոյն մի նամակ տւաւ և ուղարկեց մի զեղարեւոտական տպարան: Տպարանատէրը (Գոլովինը) ինձ մի առանձին սիրով ընդունեց. պատկերասէր մարդ էր. նա, ինչպէս ես զգացի՝ սիրահարեց իմ պատկերի վրայ, համարելով կլասիկական օխպ, ցոյց տւաւ նաեւ իր կնոջը, որ նշնպէս յափշտակեց ինձանով: (Հիմա այդ պատկերի սուերագիծն է միայն մնացել վրաս): Այդ տեղ ինձ՝ շինեցին զխառն գրաշար, այսինքն այնպիսի գրաշար, որ իր ձեռքի տակ ունենում է սոսկ

շարողներ, իսկ երեսներն ինքն է շինում ճաշակաւոր: Այսպիսիներին ասում են մետրանպաժ, և անհամեմատ աւելի վարձ է ստանում, քան սոսկ շարողը: Այստեղ ես լաւ էի վարձատրւում, բայց գործը շատ աշխատանք էր պահանջում, իսկ ես ժամանակ չէի ունենում ինքնակրթութիւնս շարունակելու: Կրկին անգամ գնացի Ակադեմիայի տպարանը, դիմեցի գլխաւոր կառավարչին:—Թէպէտ, ասացի, ես եղել եմ այստեղ և դուրս եկել, որի համար ինձ այլ ևս չեն ընդունում, բայց խնդրում եմ, որ ինձ բացառութիւն համարէք, որովհետեւ ես իսկապէս զրաշար չեմ, այլ ուսանող, պատրաստւում եմ քննութիւն տալու, բայց ոչ մի նիւթական հնար չունենալով, դրաշարութեամբ եմ պահում ինքս ինձ: Նս խնդրում եմ, որ ինձ ընդունէք իբրեւ ազատ զրաշար, ընդհանուր կանոնից դուրս, և թոյլ տաք մինչև անգամ, որ ես միայն մինչև կէսօր պարապեմ, իսկ կէսօրից յետոյ զբաղւեմ իմ դասերովս: Այս մարդը թէպէտ դարձեալ գերմանացի էր, բայց այս անգամ գերմանացու անդթութիւն ցոյց չըտաւ և ինձ ընդունեց կրկին անգամ իմ ուղած պայմանով:

Քիչ աշխատելով՝ քիչ էլ վարձ էի ստանում: Մախքս չափաւորելու համար, դուրս եկայ սենեակիցս և այնուհետեւ անկիւններ էի վարձում ում և իցէ բնակարանում: Որքան վիպական նիւթերի տպաւորութիւններ եմ ստացել ես այդ հռչակաւոր անկիւններից:

Մէկ ձմեռ այդպիսի մի անկիւնում մրսեցի և հիւանդացաց: Կարծելով որ տիֆ կը լինի կամ տիֆ կը դառնայ և ինձ կը տանէ ղէպի յաւիտենականութիւն, գլուխս տաքացած ժամանակ երեւակայութիւնս էլ տաքացաւ, սկսեցի մի շատ երկար ոտանաւորով գլխովս անցածը նկարագրել, որ չիշատակ մնաց: Հիւանդութիւնս սաստկացաւ, ինձ տարան հիւանդանոց: Այստեղ երկու շաբաթ մնալով՝ առողջացայ: Արձակելիս ինձանից փող ուղեցին, ասացի՝ չունիմ, և ինձ ազատ թողին, վերցրին միայն իմ անցագրի հասցէն: Գրել էին մեր դաւառապետին և նա էլ մեր տանից պահանջել էր 15 մանէթ, թէ ձեր տղան Պետրբուրգում հիւանդանոցումն է եղել, նրա վարձը պէտք է տաք: Խեղճ ծնողքս կարծել էին, թէ ես հիւանդանոցում մեռել եմ, ընկել էին սուգի մէջ:

Հիւանդանոցից որ դնացի անկիւնս, էլ ոտանաւորս չգտայ:

Հրէուհի տանտիկինս՝ անպէտք բան համարելով՝ ձգել էր հնոցը—
ես չգիտէի, որ դուք գրող էք և այն էլ բանաստեղծ—արդարա-
ցրեց իրան պարզմտութեամբ և ան անելով,—ձեզ կը վարձա-
տրէին անշուշտ նրա համար, և դուք էլ կը վճարէիք մեր ճաշի և
անկիւնի վարձը, ափսոս, ափսոս...

Յիրաւի այդ ժամանակ նիւթական նեղ վիճակի մէջ էի, բայց
Միքայէլս անյապաղ օղնութեան հասաւ: Ես փորձեցի նորից գրել
նախկին պօզէմաս՝ շատ բան էր միտս, թէ ինչպէս էի գրել, իսկ
նիւթն արդէն ծանօթ էր: Մինչև երեկոյ գրեցի, իսկ երեկոյին
դնացի ինձ վաղածանօթ մի հայ ուսանողի մօտ, որ հիւանդ էր
թոքախտով և պառկած: Սա էր Յովսէփ Անանեանը, մի շատ ըն-
դունակ երիտասարդ, համալսարանի մաթեմատիկական բաժնում:
Ձուրկ լինելով նիւթական օղնութիւնից, նեղութիւն շատ քաշեց և
վերջը թոքախտ ստանալով՝ աչտեղ էլ մեռաւ:

Յովսէփը պառկած էր, իսկ ես մօտը նստած խօսում էի: Այս
միջոցին ներս եկաւ կից սենեակից մի երիտասարդ, գլխին մեր թիւ-
րաքեամաների մօթալ փափախներից մէկը ծածկած, նախշուն և վար-
վառն աչքերով: Յովսէփը ծանօթացրեց, ասելով՝ նազ ձայնով.—
Ռուբէն Զալալեանց և Ղազարոս Աղայեանց:

Ռուբէնը ձեռքս բռնեց և մօտս նստեց լուռ ու մօռնջ. ես նրան
ուսանողի տեղ չբրի: Յովսէփին արդելած էր խօսելը. ես շարու-
նակեցի իմ խօսակցութիւնը, որ մի տեսակ բողոք էր հայերի դէմ՝
Նազարեանցի մեթոդով:

Վերջը Ռուբէնն սկսեց խօսել, որից երևաց, որ մօթալ փա-
փախի մէջ պարսպարած է մի հրաշալի զրուխ:

—Դուք շատ սխալուում էք, ասաց, աչտեղ կան և շատ լաւ
հայեր, որոնք ձեզանից աւելի են աւոււմ ձեր առած մարդկանցը:
Որպէս զի ապացուցանեմ ձեզ, որ դուք սխալել էք, հէնց այս
երեկոյիս ես ձեզ կը տանեմ լաւ մարդկանց մի շրջան:

—Շնորհակալ եմ, ասացի, եթէ կան, կը հանդիպիմ մէկ անգամ:

—Ո՛չ, հէնց այս երեկոյին. ես այս բոպէիս կը հագնեմ և
միասին սահնակ կը նստենք կերթանք:

Ռուբէնը դնաց հագնուելու, իսկ Յովսէփը յայտնեց ինձ, թէ
այս երեկոյին գրական ժողով ունին ուսանողները պ. Նզեանցի

տանը, աշտուղ է ուղում տանել քեզ: Գնա՛, վստահ եղիր, մի վախենար: Ռուբենին հաւատան, շատ ազնիւ տղայ է և մոլեռանդ հայրենասէր...

Ռուբէնն ինձ տարաւ պ. Եղեանցի տունը, ուր հետզհետէ հաւաքւեցին շատ ուսանողներ: Գրանցից ոմանք իմ պատանեկութեան ընկերներն էին և շատ ուրախացան ինձ տեսնելով: Ռուբէնն ինձ ծանօթացրեց ամենքի հետ էլ և ամենքն էլ սիրալիք ընդունեցութիւն ցոյց տւին: Պարոն Եղեանցը, երեւի Ռուբէնից տեղեկութիւն քաղելուց յետոյ, ինձ վրայ առանձին ուշադրութիւն դարձրեց: Մէկուսացրից մի այլ սենեակ, խօսեց, խօսեցրեց, և երևի մի որ և իցէ դադափար կազմեց իմ մասին, զոնէ կը նկատէր, թէ ես ինչպէս եմ խօսում հայերէն, որ այդ ժամանակ նշանակութիւն ունէր: Կարդաց և կարդացրեց Ալիշանի ոտանաւորներից, իբր թէ նրա համար, որ տեսնեմ թէ ի՞նչ հրաշալի բանաստեղծութիւն է: Այս մարդու վարմունքը ինձ հետ պարզ չէր:

Թէ՛ բաժանեցին շամպանի բակալների նման բաժալներով, սկսեց ընթերցանութիւնը: Այդ երեկոյին կարդացին երեք հոգի: Նախ կարդաց Եւանդուկեանցը իր աշակերտական յիշողութիւնները, որ յետոյ տալեց «Մեղէի» մէջ: Նրանից յետոյ կարդաց Ա. Բաբայեանցը մի թարգմանութիւն Հէյնէյի բանաստեղծութիւններից: Սա այն ժամանակ համալսարանի լիզւաբանական բաժնումն էր: Բաբայեանից յետոյ կարդաց Ս. Արծրունին:

Ընթերցմունքն ընդհատուում էր ընդմիջումներով: Ընդմիջումներում անց ու դարձ էինք անում ընդարձակ սենեակներում: մօտ էին բերում մրդեղէն, լաւ տանձ ու խնձոր: Անդրէաս Արծրունին ածում էր դաշնամուրի վրայ:

Ամեն մի յօգւած կարդալուց յետոյ քննադատում էին նոյն գրւածը մանաւանդ լեզւի կողմից, որ զլիւսւոր նպատակն էր ժողովների: Այդ կարծիքներն արձանագրւում էին: Արձանագրողի կամ քարտուղարի սրաշունչ վարում էր Ռուբէն Զալալեանցը: Արձանագրութիւնը կարդացւում էր հէնց նոյն երեկոյին ժողովի վերջանալուց յետոյ:

Պ. Եղեանցը ինձ մէկուսացրել էր մի ուրիշ սենեակում, երբ զանգը տւին և նիստի հրաւիրեցին անդամներին:

—Գնանք, ասաց պ. Նզեանցը, արձանագրութիւնը պիտի կարդան, լսենք, տեսնենք ինչ են գրել:

Ռուբէնը կարդաց արձանագրութիւնը կարդացած յօդածների մասին: Վերջումն էլ կարդաց մի աջապիսի բան. «Այս երեկոյին անգամների միաձայն հաւանութեամբ պ. Ղազարոս Աղայեանցը ընդունեց ուսանողական ժողովի անդամ»:

Արձանագրութեան այս կտորը ընդունեց բուն ծափահարութեամբ: «Պ. Նզեանցը ձեռքս սեղմեց, շնորհաւորեց և ասաց. «Յուսով եմ, որ եկող ժողովին դուք էլ մի բան կը բերէք կարգալու...»

XIII

Ուսանողական ժողովի անդամ ընդունելու այնքան անակընկալ էր ինձ համար և յանկարծական, որ երբ լսեցի արձանագրութիւնը, քիչ մնաց ուշաթափւելի խնդն և վայր կընկնէի, եթէ չբռնէի աթոռի մէջքից:

Շատ յետոյ ես յանդիմանեցի Ռուբէնին, որ շատ անզգոյշ վարւեց:—Մենք ամենքս էլ նկատեցինք, ասաց Ռուբէնը, որ դու շատ զգածւեցար, բայց չէինք կարող իմանալ դրա չափը:

Ժողովից յետոյ ես և Ռուբէնը միասին գնացինք տուն: Ամբողջ ճանապարհին ես լուռ էի, էլ այս աշխարհումս չէի և չէի իմանում, ինչ էր խօսում Ռուբէնը: Հէնց որ հասայ հռչակաւոր անկիւնիս սենեակը, ուր գիշերը ես մենակ էի լինում, որովհետեւ տանտիրոջս արհեստանոցն էր և ոչ ննջարանը, ես բերանքսիվայր ընկալ մահճակալիս վրայ և մի կուշտ լաց էլայ: Այսպէս թեթեւացնելով լցած սիրտս, վեր թռայ տեղիցս և բացականչեցի.

—Ես պէտք է գրեմ, այո՛, պէտք է գրեմ... այս ի՜նչ բան է, որ գրել եմ: Վերցրի գրած ոտանաւորս և կտոր-կտոր արի:—Ես հիմա էլ այն չեմ, ինչ որ քեզ գրելիս. հանաք մասխարութիւն է, ի՜նչ է՝ լինել ուսանողական ժողովի անդամ...

Եւ սկսեցի գրել իմ «Արութիւն և Մանուէլ», որի մէջ ուղեցի դուրս բերել ինձ, չմոռնալով և իմ Միքայէլին, որին և շինեցի Մանուէլ: Զը գրեցի «Յարութիւն», սյլ «Արութիւն» իբր արիութիւն, այրութիւն, քաջութիւն, այդ յատկութիւնները գտնելով հերոսիս մէջ:

Այս վէպը գրելիս՝ շարունակ յուզւած վիճակի մէջ էի։ Գործող անձինքներին լացի հետ լաց էի լինում, ծիծաղի հետ ծիծաղում, բարկացողի հետ բարկանում բնական կերպով։ Այս զգացմունքով եթէ բեմի վրայ մի դերի մէջ լինէի, ում որ ուզում էի սպանել, փոխանակ սպանել ձեռացնելու, ուղղակի կըսականէի։ Նկատում էի սակայն, որ անկիւնիս տէրերը՝ մարդ ու կնիկ ապշած էին մնացել իմ տարօրինակ վարմունքի վրայ և երևի կարծում էին, թէ ուր որ է, ես պիտի դժուիմ և հիւանդանոց տանելու դառնամ։ Սակայն ես այնքան յափշտակւած էի իմ գործովս, որ դրանց վրայ ուշադրութիւն դարձնել չէի կարող. ազատ էի ամեն տեսակ կաշկանդող կապանքներից։ Այս վիճակում մնացի շարունակ եօթն օր, և հէնց այդքան օրում՝ էլ վերջացրի գրելիքս։ Գրիչս չէր կարողանում հասցնել թղթին զգացմունքներին բուռն և արագ հոսանքը։ «Նրանի քառասուն ձեռք ունենացի այս բոպէիս», ասում էի ես։ Վիպագրողների և բանաստեղծների մէջ այս երևոյթը արժանի է խորին ուսումնասիրութեան հոգեբանների կողմից։ Սա խեղացնորութիւն է արդեօք, ինչպէս շատերը կարծում են, թէ ներշնչութիւն կամ ոգևորութիւն,—այդ չէ գլխաւորը, այլ ինչ հանգամանքից է յառաջ գալիս և ինչո՞ւ միշտ էլ չի կրկնում։ Այս վիճակի մէջ ես միայն մէկ անգամ եմ եղել, բայց ոգևորւելով շատ անգամ եմ ոգևորւել։ Այս բանը ես այսպէս եմ բացատրում։ Նրբ տպաւորութիւնները չափից դուրս շատանում են, նրանք արտաբղխում են չափից դուրս զօրեղ հոսանքով։ Այս օրինակը նկատում ենք հոգու և բնութեան միւս երևոյթների մէջ էլ։ Մի տեղից աղբիւր է բղխում ջանկարծ, հեղեղ է լինում, զանազան երկրային վիժմունքներ են լինում։ Դրանց բոլորի ուժը կախւած է այն առատութիւնից, որ ունին նրանց ամբարները՝ փակւած աւազանները, պահպանող ամբարտակները։ Մնունդը, ինչպէս և բղխումը, պէտք է դուրս գայ մի որ և է կեղևից, իր ուժով բանալով այդ կեղևը, ինչպէս ձագուկը ձուն կամ արգանդը։ Մէկ օրւայ կարօտն այն ուժը չունի, ինչ որ տասն օրւանը, իսկ տասը տարւանն աւելի ահաւոր է։ Մի օրական երեխայի մահը այն կսկիծը չի պատճառում, ինչ որ մի տարեկանինը, իսկ քսան տարեկանին աւելի ևս։ Այդպէս են բոլոր հոգեկան զգացումները։ Ժամանակի ընթացքում դրանց հա-

ւաքելիլը ահագին ուժի է հասնում և արտայայտելիս քարուքանդ անում իր բնի շորս կողմը: Կարող է պատահել, որ այսպիսի ծնունդը առաջինը և վերջինը լինի, ինչպէս Աբովեանցի «Վերք Հայաստանին»:

Երբ դրածս պատրաստ էր և արտագրելու էլ կարտութիւն չունէր, ես հոգւով հանդարտեցայ, բայց շատ յոգնած էի և ջարդւած, ինչպէս մի հիւանդադարձ, կամ ինչպէս իր անդրանիկ ծնունդից նոր ազատւած մի մայր: Վեր առայ ծնունդս և տարայ տւի Ռուբէնին, որ նա մկրտի: Ախր բանը ցաւով ծնելը չէ, այլ ծնածն է: Թզուկը կարող չէ հսկայ ծնել, իսկ հսկան երբեմն թզուկ է ծնում:

—Ահա մի բան եմ գրել, ասացի, առաջ դուք կարդացէք, եթէ կը տեսնէք, որ արժանաւոր բան չէ, դուրս չը բերեմ ժողովի մէջ և չըխաչտառակւիմ:—Կարդացէք, ասաց, ես կը լսեմ: Ես կարդացի մի գլուխ: Ռուբէնը յափշտակեց, և որքան առաջ գնացինք, այնքան սաստկացաւ նրա յափշտակութիւնը, և վերջումը բացականչեց:

—Դու մի այնպիսի բան ես գրել, որի գինը ինքդ չես կարող իմանալ: Ես չափից դուրս ուրախ եմ. դա մի կարգէ դուրս բան է, մեր զրականութեան մէջ նմանը չկայ:

Ի հարկէ ուրախ կը լինէր Ռուբէնը, որովհետեւ ես իր արած գիտն էի, բայց ես էլ պակաս ուրախ չէի իմ գտնւելուս համար: Ռուբէնի հաւանութիւնը ինձ սիրտ ու վտառհուծիւն տաւ, որ աւելի լաւ կարգամ:

Առաջիկայ ժողովը շատ բազմամարդ էր: Ասել էին որ մի նոր բան պիտի կարդացուի, եկել էին և կողմնակի ինտելիգենտ մարդիկ յատկապէս ինձ տեսնելու և լսելու: Սկսեցի կարդալ և նմանը չլսեանքւած ընդունելութիւն գտաւ: Մի գլուխ ծափահարում էին և զանազան բացականչութիւններ անում: Գլխաւորն այն էր, որ այդ բոլորն անկեղծ էր, բղիտում էր ազնիւ սրտերից: Այդպէս կարող են լինել միայն ուսանողները իրանց իդէալական աշխարհում եղած ժամանակ: Վերջումն ամենքն էլ ձեռքս սլոմեցին և շնորհակալութիւն յայտնեցին:

Պարոն Նզեանը շնորհաւորելով ինձ, յայտնեց և այսպիսի բան. —Պարոն Սանասարեանցին դուք շատ զուր եկաք և նա ասաց ինձ,

որ կը հոգայ ձեր ուսման ծախքը, որ դուք բոլորովին նւիրւիք ուսման, պատրաստւիք քննութիւն տալու և մոնէք համալսարան:

—Ես չեմ կարող, ասացի, այդ պայմանը չանձա առնել, մի գուցէ չըկարողանամ կատարել և ձեզ մօտ սկերես մնամ: Ես մի բան կը ինդրեմ ձեզանից. առաջարկեցէք, որ եկեղեցումը ինձ երգելու պաշտօն տան, և մի թեթիւ ռոճիկ դրա համար, ինչպէս այդ անում են շատ ուսանողների, որոնք երգել էլ չըգիտեն, իսկ ես լաւ գիտեմ:

—Շատ լաւ, ասաց. ես այդ մասին կը խօսիմ Սուլթան շահին (ղեներալ), նա աւելի մօտիկ է Վազարեանին. բացց դուք մէկ ծանօթացրէք ձեզ, գնացէք մէկ անգամ երգեցէք:

Այս անցքից յետոյ ինձ և Մարտիրոս Սիմէօնեանցին ընտրեցին «լեզու մշակող». մենք պիտի սրբագրէինք միւսների դրածներն ու թարգմանածները:

(Կը շարունակւի)

Ս Է Ր

(Ն Լ Է Ր ***-ին)

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Սիրում եմ ես քեզ, մանուկ գեղեցիկ,
Բայց ոչ տղայական այն անմիտ սիրով,
Որով սիրեցին քեզ շատ պատանիք,
Լոկ գեղեցկութեանդ երկրպագելով:
Գլբաւիչ էիր դու նոցա համար
Իբրեւ մի խօսուն, պճնազարդ տիկնիկ,
Որ ունէր միայն աչեր բոցավառ,
Վարդագոյն շրթունք, սիրուն խոպույիք,
Որի գեղատես, նազելի կրճքին
Ծաղկում էր փարթամ եղեմ փափկութեան,
Եւ որի համբոյրն ամենքի աչքին
Հեշտալից կրքի վայելք էր միայն...
Եւ նոքա քո շուրջ միշտ վխտում էին,
Որպէս խաղալիկ սիրող մանուկներ,
Եւ քո ականջին շրշընջում էին
Փքուն գովասանք, սիրահաճ խօսքեր...

Սիրում եմ ես քեզ, բայց ոչ այդ սիրով,
Ով իմ թանկագին, մտերիմ ընկեր,
Սիրում եմ ես քեզ այլ զգացմունքով,
Մի վեհ զգացմունք, որ զով, կենսաբեր

Ինչպէս գարնան ցօղ թառամած ծաղիլին,
 Յօղում է լքեալ սրտին թարմութիւն.
 Ար ինչպէս զեփիւռ հրատապ շողին,
 Բերում է այրած կրճքին զովութիւն.
 Մի ջերմ զգացմունք, որ պայծառ լուսով
 Փայլում է միայն անկեղծ սրտերում,
 Ար վառ ըզձերով, ոսկեշող յուսով
 Մեզ կեանք է տալիս և ոգևորում:
 Դու սիրելի ես, փափկասուն էակ,
 Արպէս անսպառ աղբիւր նրգերիս,
 Արպէս իմ բարի, սիրովիչ հրեշտակ,
 Արպէս արձագանք լաց ու ծիծաղիս:

Սիրում եմ ես քեզ, սիրում ջերմազին,
 Ինչպէս անդրանիկ մի ծաղիկ դարնան,
 Ար աւետում ես իմ տխուր կեանքին
 Նորից ծաղկավառ օրեր խնդութեան.
 Ար իբրև շքեղ, պալար մի օազ,
 Ժպտում ես դու իմ անսպառ կեանքում,
 Ար իբրև թուլիչ, գողտրիկ մի երազ,
 Յնորքի հուր ես վառում իմ կրճքում:
 Սիրում եմ ես քեզ, քո քնքոյշ հողին,
 Եւ այն կանացի գորովն ու դլանք,
 Ար գանձի նման, ջերմ կրճքիդ տակին,
 Պահւած են իբրև հոգոյդ զարդարանք.
 Ար լցւած խնամքի բուռն զգացմունքով՝
 Պատրաստ ես դու միշտ խղճուկ, անսպաշտպան
 Թշուառի համար անկեղծ արցունքով
 Ե՛ւ լալ, և՛ սիրով փայփայել նորան...

Սիրում եմ ես քեզ, ո՛վ հոգոյս հատոր,
 Անհուն, անսահման, ճշմարիտ սիրով.
 Մի՞ սէր, որ չէ միշտ անհոգ, բախտաւոր,
 Ար միշտ չէ յուզւում այրող կրքերով...

Սէր, որ սիրողին անոյշ վարդի հետ
 Բերում է և՛ փուշ ծանրը հոգսերի,
 Սէր, որ չը գիտէ կեանք երանաւետ՝
 Առանց տանջանքի, առանց վշտերի.
 Եւ այդ բազմահոգ, վշտառատ կեանքում
 Միշտ քնջ, անվհատ տանջւելու համար
 Սիրում եմ ես քեզ. կեանքի փոթորկում
 Սէրն է եռանդի աղբիւր անսպառ:
 Սիրում եմ ես քեզ, չքնաղ արարած,
 Սիրաւառ սրտով խաչչա կրելու.
 Սիրում եմ ես քեզ—միշտ ողևորւած՝
 Կեանքում ապրելու, կեանքը օրհնելու...

Մոսկւա, 13 յունւարի 1893 թ.

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

(Շարունակութիւն ¹⁾)

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գաշտէն, 23 չուլիսի.

Արդէն մի շաբաթ է, ինչ Գաշտէնումն ենք ամբողջ տնով, այսինքն՝ Անեկան, հօրաքոյրս, պանի Յեկինան, ես ու Կրոմիցկին։ Մի առժամանակ ընդհատեցի գրելս, ոչ թէ նրա համար, որ կարէք չէի գգում, այլ որովհետեւ իմ կրածս ոչ մի կերպ չէր կարելի խօսքով արտայայտել։ Երբ մարդ կուռում է իրան ճնշող ոյժի դէմ, նա ոչ գլուխ է ունենում, ոչ էլ ժամանակ պարապելու ուրիշ որ և է բանով։ Սանսօնը պատմում է իւր յիշատակարանում, թէ ինչպէս մի դատաւարանալի կաշին քերթում էին և քերթելուց յառաջացած վէրքերի մէջ հալած անաղ էին լցնում, իսկ նա այնպիսի նեարդային գրգռման էր հասել, որ շարունակ գոռում էր՝ «encore! encore!» (էլի, էլի) այնքան, մինչև որ ուշաթափ ընկաւ։ Ես էլ այդ տեսակ զրութեան մէջ էի։ Ես արդէն ուշաթափւել եմ, այսինքն ուժասպառ եմ եղել և բոլորովին ընկճել։

Իմ վրայ ծանրանում է մի ահագին ձեռք և ճնշում է ինձ, ինչպէս այն սարերը, որոնց մէջ մենք ապրում ենք այժմ։

¹⁾ Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1893 թ. № 1, 2:

Բայց ինչ կարող եմ անել: Հօ չեմ կարող զիմադրել, — թող ուրեմն ճնշի ինձ: Ես չգիտէի, որ մարդ կարող է գտնել եթէ ոչ փոփանք, գոնէ մի տեսակ հանդատութիւն իւր անդօրութեան զգացմունքի և ողորմելիութեան գիտակցութեան մէջ:

Երանի նորից չսկսէի զիմադրել, երանի այս զրութիւնս որքան կարելի է երկար տւէր: Այն ժամանակ կը կարողանայի զրի անցնել իմ գլխին եկածը այնպէս, ինչպէս եթէ մի ուրիշ, կողմնակի մարդ լինէի: Բայց փորձով գիտեմ, ինչպէս մէկ օրը նման չի լինում միւս օրւան, և վախենում եմ այն բանից, ինչ որ վաղւան օրը կարող է բերել:

24 Յունիսի.

Վարչաւացից դուրս գալուց քիչ առաջ յիշատակարանումս դրել եմ, թէ «ուրիշի կնոջը սիրելը լրբութիւն է, եթէ սէրը առ երես է, և մեծ անբախտութիւն, եթէ սէրը ճշմարիտ է»: Այդ դրել էի Կրոմիցկու գալուց առաջ, երբ դեռ պարզ զաղափար չուէի այդ անբախտութեան բոլոր բաղադրեալ տարրերի մասին:

Այդ անբախտութիւնը աւելի ազնիւ բան էի կարծում, քան է իսկապէս: Միայն այժմ եմ տեսնում, որ նրա մէջ, բացի սաստիկ ցաւից, կայ և փոքր ինչ ստորացումն, և գիտակցութիւն, որ ինքդ անպէտք ու ծիծաղելի մարդ ես, և՛ ատելու անհրաժեշտութիւն, և՛ հարկաւորութիւն կատարելու հաղար ու մի ստոր վարմունքներ ու գիմելու հաղար ու մի անմարդկայն զգուշութիւնների, — լաւ փունջ է, չէ: Իրաւ, մարդ այդ ծաղիկների հոտից կարող է խեղդւել:

Տեսնում է Ասուած, թէ ինչ զւարճութեամբ կը բռնէի Կրոմիցկու կոկորդից, հուպ կը տայի նրան պատին և ուղղակի կասէի երեսին՝ «քո կնոջը սիրում եմ, մինչդեռ այժմ պէտք է աշխատեմ, որ նրա մոքովն անգամ անց չկենայ, թէ Անելկան ինձ դուր է դալիս: Ինչ հիանալի դեր է այդ Անելկայի վերաբերմամբ: Ի՞նչ կարող է մոտձել նա իմ մասին: Այդ դեռ փնջի մի ծաղիկն է:

25 Յունիսի.

Քանի կենդանի եմ չեմ մոռանալ այն օրը, երբ Կրոմիցկին եկաւ: Նա շնորհ բերեց ուղղակի ինձ մօտ՝ տունս, Վարչաւա: Գիշերը ուշ, երբ տուն վերադարձայ, նախասենեակում տեսայ ինչ որ

չեմոդաններ: Զգիտեմ ինչու, անմիջապէս գլխի ընկալ, թէ այդ Կրոմիցիու իրերը կը լինեն: Յանկարծ հէնց ինքը երեաց կողքի սենեակից, և մոնոկլը աչքից վայր ձգելով, զրկաբաց վրայ պրծաւ իւր նոր բարեկամին ողջունելու: Նս կարծես երազի մէջ՝ տեսնում եմ նրա գլուխը, որ նման էր մեռելի դանդի, նրա փայլուն աչքերն ու թուխ մազերը: Մի բոսկից յետոյ ինձ զգացի ինչպէս մի փայտէ մանրքէնի զրկում: Հեշտ էր նախատեսնել, որ Կրոմիցիին կը դաշ, բայց էլի ինձ այնպէս զգացի, ինչպէս թէ մահս տեսնէի: Կարծես սարսափելի երազ լինէի տեսնում ու երազիս մէջը լսում՝ «Լաւ ես, Լէօն» խօսքերը—ամենաֆանտաստիկական, ամենահաւանական խօսքեր, որ ես կարող էի լսել: Յանկարծ այնպէս կատաղութիւնս եկաւ, այնպիսի զգւանք ու վրդովմունք զգացի, որ ինչքան կամք ունէի պէտք է լարէի, որպէս զի չյարձակեմ այդ մարդու վրայ, նրան գետնովը շտամ ու գլուխը չջախջախեմ: Առաջ էլ կատաղութիւն ու զգւանք եմ զգացել, բայց առանց վրդովմունքի: Այդ նոր ու անհասկանալի բան էր ինձ համար. իմ զգացածը երկիւղ չէր կենդանի մարդուց, այլ մի տեսակ զարգանդ՝ մեռածից: Երկար ժամանակ չէի կարողանում ոչ մի խօսք խօսել: Բարեբախտաբար Կրոմիցիին կարծեց, թէ ես իրան չճանաչեցի, և զարմացել եմ, որ նա, բոլորովին անծանօթ մարդ լինելով, ինձ հետ վարուում է ինչպէս մօտ մարդու հետ ու ինձ «դու» ասում... մինչև հիմա էլ այդ բանը ինձ սաստիկ կատաղեցնում է:

Նս աշխատեցի ուշքս գլուխս ժողովել, իսկ նա մոնոկլը դրեց աչքին, և նորից թափ տալով ձեռքս, սկսեց հարց ու փորձ անել:

—Ի՞նչպէս ես, լաւ ես: Անեկան ինչպէս է: Մայրիկն ինչպէս է: Ելի հիւանդ է, հա: Իսկ հօրաքոյրը:

Նորից ապշութիւն եկաւ վրաս ու սիրտս քիչ էր փնտում կատաղութիւնից ձաքի, որ այդ մարդը ինձ մօտ ու սիրելի կանանց այնպէս էր անւանում, կարծես իրան էլ նոյնքան մօտ լինէին նրանք: Աշխարհային մարդը, ինչպէս որ ես եմ, շատ բան կը տանի ու ամենեին ցոյց չի տալ—այդ բանին նրանց երեխայութիւնից են վարժեցնում,—բայց ես զգում էի, որ չեմ գիմանալ: Պատուիրեցի թէյ տան, որ ուշքս գլուխս ժողովեմ և միտքս ուրիշ բանով զբաղեցնեմ: Կրոմիցիուն իմ լռութիւնը անհանգստացրեց, նա էլի

մոնոկլլը աչքից վայր դցեց ու շտապով հարցրեց.

—Ձինի մի բան է պատահել: Ինչո՞ւ ոչինչ չես խօսում:

—Ամենքը առողջ են,—պատասխանեցի ես:

Յանկարծ միտք արեցի, որ այդպէս յուզւելով, ես այդ անտանելի մարդուն առաւելութիւն եմ տալիս ինձ վրայ, և ինձ զսպեցի: Նրան տարայ ճաշարան, նստացրեցի սեղանի մօտ ու սկսեցի հարց ու փորձ անել.

—Ի՞նչ նոր լուրեր ես բերել, երկար ժամանակով ես եկել:

—Ինքս էլ չգիտեմ: Անեկաչին կարօտել եմ. կարծում եմ նա էլ ինձ կարօտած կը լինի: Մենք երկու ամիս էլ իրար հետ կարգին չապրեցինք: Ջահ էլ ամուսինների համար այդ կարծեմ շատ քիչ է, չէ:

Եւ նա չոր ու ցամաք ծիծաղեց:

—Ի վերջոյ ես այստեղ էլ գործեր ունեմ: Գործեր, գործեր ու միշտ գործեր:

Նա սկսեց իւր գործերի մասին երկար ու բարակ պատմել, բայց ես ականջ չէի դնում և ասածիցը ոչ մի խօսք չհասկացայ: Ամեն խօսքի տակին ու գլխին լսում էի միայն «forsa» (Ֆանդ) խօսքը և տեսնում էի մոնոկլլի շարժումը: Չարմանալի բան է, որ ամենածանր վշտի րոպէներին շատ դատարկ բաներ մարդի զայրացնում են: Ձգիտեմ ամեն մարդ է այդպէս լինում, թէ չէ միայն ես եմ այդպէս, բայց այդ անիծւած «forsa» խօսքը ու ոչ պակաս անիծւած մոնոկլլը ինձ բոլորովին համբերութիւնից հանեցին: Կրօմիցիու հետ տեսնւելուս առաջին րոպէներին ուշքս համարեա վրաս չէր, բայց էլի կարողացայ համարել, քանի անգամ նա մոնոկլլը դրեց աչքին ու քանի անգամ վերցրեց աչքի վրայից: Այդպէս է լինում միշտ, այժմ էլ այդպէս եղաւ:

Թէյից յետոյ Կրօմիցիուն տարայ նրա համար որոշւած սենեակը: Առանց իւր դատարկաբանութիւններին վերջ տալու, նա չեմոզանները բաց էր անում և ինձ ցոյց տալիս Արևելքից բերած զանազան իրեր: Ի վերջոյ պէզի մէջից հանեց երկու փոքր գորգեր և ասաց.

—Բաթումումն եմ գնել: Լաւն են, չէ: Փռել կը տամ մեր մահճակալների առաջ:

Նրանում էլ ոյժ չմնաց, նստեց բազկաթուռի վրայ ու շարունակեց պատմել իւր գործերի մասին՝ Արևելքում, և իւր յոյսերի մասին, բայց ես մտածում էի բոլորովին ուրիշ բանի մասին: Մեծ բախտաւորութիւն է, երբ մարդ անկարող լինելով կուել իւր ամբողջ զժբախտութեան դէմ, զէթ կռիւ է մղում նրա մի առանձին մասի դէմ: Այժմ ինձ ամենից շատ հետաքրքրում էր՝ արդեօք Կրոմիցկին կը գնայ Գաշտէյն թէ չէ, ուստի հարցրի.

—Ես քեզ մինչև այժմ լաւ չէի ճանաչում, բայց հիմա տեսնում եմ, որ դու մեծ կարողութիւն կը դիզես: Քո մէջ թեթեամտութիւն ասած բանը ամենևին չկայ, և ի հարկէ, յիմար սենտիմենտալութեան համար պործերդ չես զոհի:

Կրոմիցկին տաք-տաք ձեռքս սեղմեց:

—Կը հաւատամ ինձ, — ասաց նա, — ինչքան թանգ է ինձ համար, որ դու ինձ վրայ միշտ այդպէս հաւատ ունենաս:

Սկզբում ես ուշ չդարձրի, թէ նրա այդ խօսքերը ինչ էին նշանակում: Ինձ այն միտքն էր զբաղեցնում, որ ես Կրոմիցկու հետ անաղնիւ ու կեղծաւոր եմ վարւում. անաղնիւ՝ որովհետեւ ամենեւին չեմ հաւատում նրա ընդունակութիւններին, և կեղծաւոր՝ որովհետեւ շողոքորթում եմ նրան, մինչդեռ ուրախութեամբ նրա արիւնը կը խմէի: Բայց ես ուզում էի, ինչ էլ լինի, չթողնեմ, որ նա մեզ հետ Գաշտէյն գալ, ուստի շարունակում էի առաջ գնալ իմ կեղտոտ ճանապարհով:

—Ալներեւ է, որ մերոնց Գաշտէյն գնալը քեզ ձեռնտու չէ, — ասացի ես:

Նա սկսեց պախարակել սլանի Յելինայի հիւանդութիւնը, ինչպէս շատ սովորական եսական մարդ, որ աշխարհքի մէջ ամեն բան միայն այնքան է հասկանում, որքան իրան է վերաբերում:

—Պարզ բան է Գաշտէյն գնալը ինձ սկի ձեռնտու չի: Խօսքը մեր մէջ մնայ, կարծում եմ, առանց Գաշտէյն գնալու էլ բանը եօլա կերթար: Ամեն բան պէտք է մի սահման ունենայ, թէկուզ հէնց աղջկայ սէրը դէպի իւր մայրը: Ամեն ամուսնացած կին պէտք է հասկանայ, որ իւր առաջին ու գլխաւոր պարտաւորութիւնները իւր մարդուն են վերաբերում: Մէկ էլ, երբ մայրը միշտ աչքի առաջ ցցւած է լինում, կաշկանդում է ամուսինների ազատու.

թիւնը, խանդարում է նրանց միմեանց մօտենալուն ու հոգով սրտով միմեանց նւիրելուն: Խօսք չունեմ, որդու սէրը դէպի իւր ծնողը զովելի բան է, բայց երբ ծայրայեղութեան է հասնում, այն ժամանակ միւսների օրը օր չի լինում:

Նրկար ու բարակ խօսելով այդ նիւթի մասին, նա յայտնեց շատ այլալիսի ճշմարտութիւններ և զարմանալի տալիս ու ծամ-ծամած մտքեր, որոնք իմ կատաղութիւնը աւելի էին բերում, որովհետեւ նրա ասածի մէջ մի քիչ ճշմարտութիւն կար:

—Բայց էլ ճար չկայ: Ես վաճառական մարդ եմ, դիտէի ինչ պայման եմ կապում, և այժմ պատրաստ եմ կատարելու իմ բոլոր պարտաւորութիւնները:

—Ուրեմն դու գնում ես Գաշտէյն:

—Ամենից առաջ այդ պահանջում է իմ անձնական շահը: Ինձ համար անհրաժեշտ է, որ մենք ու հօրաքոյրը աւելի մօտ ճանաչենք միմեանց և դուք ինձ աւելի հաւատաք: Մենք չեւոյ էլ դրա մասին կը խօսենք: Ես մէկ կամ մէկ ու կէս ամիս ազատ ժամանակ ունեմ: Արեւելքում թողել եմ իմ տեղ Լիւցիան Խաւստովսկուն: Նա, ինչպէս անգլիացիք ասում են, «a salid man»: Բացի այդ, գիտես էլի, ինչքան լաւ կը լինի Անելկայի պէս կնոջ հետ մի շաբաթ էլ աւելի ապրել, —լաւ կը լինի չէ:

Նա բաց արեց դեղին, փառած առամները, քրքջաց ու ծնկիս խփեց: Ուղեղս սառուց կտրեց: Զգում էի, որ զոյնս զցում եմ, և երեսս դարձնելով ճրագի լոյսից, որ Կրոմիցկին չնկատի իմ գուհառելը, քաջութիւն ունեցայ հարցնել.

—Ե՞րբ ես գնում Պլոշով:

—Վաղը, վաղը:

—Բարի գիշեր:

—Քեզ լոյս բարի, —պատասխանեց Կրոմիցկին մոնոկլը աչքից վայր թողնելով:

Եւ ձեռները դէպի ինձ մեկնելով աւելացրեց.

—Շատ ուրախ եմ, որ մենք կարող կը լինենք միմեանց մօտենալ. ես դէպի քեզ միշտ առանձին համակրանքով եմ վերաբերւել. Նրաշխաւոր կը լինեմ, որ մենք միմեանց շատ լաւ կը հասկանանք:

Կը հասկանանք միմեանց: Ինչքան նա չիմար է ու անմիտ: Բայց

նա որքան աւելի յիմար է, այնքան աւելի սարսափով եմ մտածում, որ Անեղկան նրա սեփականութիւնն է, նրա՝ ուղղակի առարկան է: Այդ գիշեր սկի մտքովս էլ չանցաւ շորերս հանել: Երբէք այնքան պարզ չէի զգացել, որ կայ զրուծիւն, երբ վերջանում են թէ խօսքերը, թէ դժբախտութիւնը հասկանալու և զգալու ընդունակութիւնը, բայց ինքը դժբախտութիւնը չի վերջանում: Բաւական կը լինի ասեմ, որ իմ առաջնայ կեանքը, երբ Անեղկան ոտնակոխ էր անում իմ բոլոր զգացմունքները, այն կեանքը, որից աւելի դժբախտը ես չէի երեւակայում,—այժմ ինձ ամենաբարձր ու առասպելական երջանկութիւն էր երևում: Եթէ այժմ սաստանան դար ու ինձ ասէր, թէ ամեն բան առաջւանդ կը մնայ, Անեղկան միշտ կանարգի իմ սէրը, բայց Կրոմիցկին յաւիտեան չի գայ, եթէ դրա փոխարէն հոգիս իրան տամ,—ես ուրախութեամբ կը տայի հոգիս և առանց վարանելու պայմանը կը ստորագրէի: Երբ կինը մերժում է տղամարդին, տղամարդի մէջ այն համոզումն է կազմւում, թէ իր սիրած կինը կանգնած է մի այնպիսի բարձր գոթական աշտարակի գլխին, մի այնպիսի անմատչելի բարձրութեան վրայ, ուր աչքերը վեր բարձրացնել անգամ մարդ չի համարձակի: Ես էլ ակամայից այդպէս էի մտածում Անեղկայի մասին, երբ յանկարծ լոյս աշխարհ ընկաւ մի ինչ որ պան Կրոմիցկի Բաթումից բերած իւր երկու գորգերով, և այդ անողոր ու անյողդող կնոջը, այդ քրմուհուն, առանց այլեայլութեան բարձրութիւնից ցած իջեցրեց ուղիղ այդ գորգերի վրայ: Մարդի սարսափ դալիս է, երբ մտածում է, որ այդ մարդը սրտի ուղածի մասին կարող է մտածել, երեւակայել—և այն էլ ինչ մարդ, զգուշի չափ տափակ ու ողորմելի մի մարդ: Ինչքան որ ինձանից թէօրիաներ հնարեմ, ինչքան որ ուղեղ փչացնեմ՝ ապացուցանելու համար, թէ սէրը ամուսնական կապերից աւելի զօրեղ է, թէ ես իրաւունք ունեմ սիրելու Անեղկային և Անեղկան՝ ինձ, վերջ ի վերջոյ ես կը մնամ իմ թէօրիաների հետ, իսկ Կրոմիցկին կապրի Անեղկայի հետ:

Մարդ կարող է միայն որոշ չափով ծանրութիւն կրել, իսկ եթէ չափից աւելի բարձր են, նա վայր կընկնի: Իմ անասման դժբախտութեան, ինչպէս և իմ անչափ յիմարութեան ու

ստորանայուած հետ միասին ես գգում էի, որ Կրոմիցկու զալու բո-
պէից Անեկլային սկսել եմ արհամարհել: Ինչո՞ւ: Ես չէի կարող ոչ
մի մարդավարի պատճառ բերել այդ արդարացնելու համար: Կինը
պէտք է մարդին պատկանի: Ես այդ ճշմարտութիւնը անգիր գի-
տեմ, ինչպէս գիտի և ամեն յիմար մարդ, բայց իմ զգացմունքիս
առաջ այդ ստորացնում է Անեկլային: Վերջապէս ինչ գործ ու-
նեմ արամաքանութեան ու դատողութեան հետ: Գիտեմ, որ նրան
արհամարհում եմ, և որ դրան զիմանալ չեմ կարող: Զգում էի,
որ այսպիսի պայմաններում իմ գոյութիւնը միանգամայն անհետար
կը լինի և անկասկած շուտով այնպիսի վճռական փոփոխութիւններ
կը լինեն, որ ամեն բան, ինչ որ առաջ կար, տակն ու վրայ կը լինի:

Բայց ինչ փոփոխութիւններ: Եթէ արհամարհանքը խեղդէր
իմ սէրը, ինչպէս գայլը խեղդում է ոչխարին,—լաւ բան կը լինէր:
Բայց սիրտս վկայում է, որ գլխիս մի ուրիշ բան է գալու: Եթէ
ես չը սիրէի Անեկլային, չէի էլ արհամարհի, իսկ եթէ արհամար-
հում եմ,—կը նշանակի սիրում եմ, և միայն վզիս շղթայի վրայ
մի աւելորդ օղակ եմ աւելացնում: Շատ լաւ գիտէի, որ ինձ Կրո-
միցկուց ու նրանց փոխադարձ չարաբերութիւններից, ուրիշ ոչինչ
չի հեռաքրքրում,— ոչ լոյս, ոչ խաւար, ոչ պատերազմ, ոչ խաղա-
ղութիւն և ոչ մի ուրիշ բան: Իմ կեանքի միակ *raison d'être*-ը
Անեկլան է, կամ աւելի ճիշտը Անեկլան ու իւր մարդը և իմ մի-
ջամոտիլը նրանց կեանքում: Իսկ եթէ հէնց այդ *raison d'être*-ի
շնորհիւ ես անկարող եմ ապրել, ինչ պէտք է լինի իմ վերջը:
Եւ յանկարծ սաստիկ զարմացքս եկաւ, որ դրա միակ ու ամենա-
հասարակ ճարը, ինչպէս մահն է, մինչև այժմ միտքս չի եկել:
Ի՞նչ մեծ ոյժ կա՞ մարդու ձեռքում՝ ուղած ժամանակ կեանքի
թելը կտրել: Այժմ, ո՞վ իմ կեանքի չար հրեշտակ, սպասում եմ
քեզ ու ասում. «այնքան ժամանակ միայն կարող ես բեռը դարսել
իմ վզին, որքան ես ուզեմ: Երբոր բեռիս ծանրութիւնը չափից
դուրս կը լինի, ես քեզ էլ, քո ծանրութիւնն էլ վրայիցս դնեմ
կը շարտեմ... «E poi eterna silenzia»... (Եւ այնուհետեւ յաւիտե-
ական լռութիւն)»... Նիրւաննա, Յիւլների չորրորդ չափաւոր...
վերջապէս ես ինչ գիտեմ էլ ինչ: Միայն այն միտքը՝ թէ ամեն
բան վերջ է վերջոյ ինձնից է կախած, ահադին թեթևութիւն

պատճառեց ինձ... Մի ժամի չափ բազմոցի վրայ պառկած մտածում էի, թէ երբ և ինչպէս իրագործեմ միտքս,—և հէնց միայն այն, որ Կրոմիցկին, նրա գալուստը և իմ նախանձը զէպի նա մտքիցս դուրս չեկան, ինձ մեծ թեթեւութիւն պատճառեց: Անձնասպանութեան պէս գործն էլ իւր նիւթական հոգսերն ունի, որ մարդու ակամայից մտածել են տալիս բացի իւր անբախտութիւնից և ուրիշ բաների մասին: Իսկոյն միտս եկաւ, որ իմ ձանապարհի բեւոյժները ամենափոքր տեսակիցն է, տեղիցս վեր կացայ, որ նայեմ, և վճռեցի նորը գնել: Գլուխ էի ճաքացնում այն բանի վրայ, թէ ինչպէս անեմ, որ բոլորը կարծեն թէ այդ պատահմունքից է եղել... Ասեմք այդ բոլորը լոկ թէօրիաներ էին, որ իմ զլխի մէջ դեռ որոշ դիտաւորութեան ձև չէին ընդունել: Ինչ որ իմ մէջ կատարուում էր, աւելի շուտ կարելի էր անւանել մի տեսակ գիտակցութիւն անձնասպանութեան հնարաւորութեան մասին, քան թէ իսկապէս կեանքիս վերջ դնելու վճիռ: Բացի այդ համոզւած էի, որ այդ շուտով չի լինի: Որովհետեւ մտածում էի ինձ ու ինձ, եթէ ինձ յայտնի է այն դուռը, որով երբ ուզենամ, դուրս կը գամ արձակ դաշտը, մի փոքր էլ կը մնամ տեսնելու համար, թէ չարիքը մինչև որ աստիճան կը լարի իւր ոյժերը, և ինձ համար էլի ինչ տանջանքներ են պատրաստւած: Ես այրւում էի հիւանդոտ ու անդիմադրելի հետաքրքրութիւնից, թէ ինչ կը լինի վերջը, ինչպէս այդ մարդիկը կապրեն միասին և Անեկան ինչ երեսով պէտք է նայի ինձ... Վերջապէս ոյժից բոլորովին ընկալ և այդպէս առանց հանւելու քնեցի ծանր ու երազախառն քնով: Շատ խառնափնթոր երազներ տեսայ,—տեսնում էի Կրոմիցկու մոնոկլը, բեւոյժները, զանազան մարդիկ ու առարկաներ, բոլորը անկարգ կերպով միմեանց խառնւած: Զարթնեցի ուշ: Կրոմիցկին արդէն գնացել էր Պոշով: Առաջին միտքը, որ զլխումս ծագեց, այն էր, որ նրա յետևիցը գնամ, տեսնեմ նրանց միասին, բայց կառք նստելուց յետոյ յանկարծ զգացի, որ այդ չեմ կարողանայ տանել, որ այդ իմ ոյժիցը վեր կը լինի, հասկացայ, որ այդ չափից դուրս կարագացնի իմ ելքը բաց դռնից զէպի անյայտ տարածութիւնը,—և հրամայեցի ինձ ուրիշ տեղ տանել:

Ամեն մարդ, թէկուզ ամենամեծ պեսսիմիստը լինի նա, բնազդ-

մամբ խորշում է չարիքից ու բոլոր ուժով կռոււմ նրա դէմ: Դրա համար մարդ պինդ բռնում է ամեն մի յոյսից և ամեն փոփոխութիւնից բարեփոխութիւն սպասում: Ես էլ յանկարծ այնպիսի փափազ զգացի Գաշտէյն գնալու, որ կարծես իմ փոփոխութիւնը դրանից էր կախւած: Այժմ ուշ ու միտքս այն էր միայն, որ նրանց Պլոշովից դուրս տանեմ: Այդ միտքը ինձ հանգիստ չէր տալիս և այնպէս էր գրաւել ինձ, որ այդ ամբողջ օրը միայն նրա իրագործելու յետեւիցն էի ընկել:

Գա ինձ համար դժար չէր: Տիկինները համարեա պատրաստ էին: Կրօմիցկին իւր գալու մասին իմաց չէր տւել, երևի կամեցել էր իւր կնոջը մի լաւ սիւրպրիզ անել, այնպէս որ մենք պէտք է մէկ-երկու օրից յետոյ ճանապարհ ընկնէինք: Այժմ ի հարկէ պէտք էր թողնել, որ նա հանգստանայ և հարցնել, թէ Լէրբ կարող է գնալ, բայց ես դիտմամբ նրան մարդատեղ չըդրեցի ու այնպէս վարւեցի, որպէս թէ նա սկի գոյութիւն չունենար:

Գնացի երկաթուղու կայարանը, պատուիրեցի միւս օրւան համար սահնին ննջարան—վազոն մինչև Վիէննա ու յետոյ զրեցի հօրաքրոջս, թէ տոմսակները վերցրած պատրաստ են, և որովհետև բոլոր վագոնները մինչև շաբթւայ վերջը բռնւած են, այդ պատճառով վաղը պէտք է ճանապարհ ընկնենք:

26 Յունիսի.

Էլի վերադառնում եմ դէպի մեր՝ Վարշաւայում անցրած վերջին օրերը: Նրանց յիշատակը այնպէս խոր է տպաւորւել իմ մտքում, որ չեմ կարող լռութեամբ անցնել: Տարօրինակ բան էի զգում Կրօմիցկու գալու միւս օրը: Ինձ թւում էր, թէ Անելկային այլ ևս չեմ սիրում, և մի և նոյն ժամանակ չեմ կարող առանց նրան ապրել: Կեանքումս առաջին անգամն էի զգում այդպիսի, այսպէս ասած, բարոյական երկատուութիւն: Առաջ, երբ իմ զգացմունքը կանոնաւոր էր ընթանում, ես ասում էի ինձ ու ինձ՝ սիրում եմ նրան, ուրեմն տենչում եմ տիրանալ նրան, բոլորովին նման այն տրամաբանութեանը, ինչ տրամաբանութեամբ Ղեկարտն էր ասում՝ «մտածում եմ, ուրեմն կամ»: Այժմ ամեն բան փոխւել է, այժմ «ես չեմ սիրում, բայց տենչում եմ տիրանալ նրան», և

այս երկու առանձին մասերը իմ մէջը կան այնպէս, ինչպէս երկու առանձին կտոր քարերի վրայ փորագրւած արձանագրութիւններ, և երկուսն էլ ինձ այնպէս էին տանջում, որ խօսք չեմ գտնում արտայայտելու: Ետևում չը համոզեցի, որ այդ «չեմ սիրում»-ը մոլորութիւն է: Ես սիրում եմ ինչպէս ասած, բայց այնպիսի վշտախառն ու դառը սիրով, որ այդ սիրոյ ու բախտաւորութեան մէջ ընդհանուր ոչինչ չը կայ:

Մէկ-մէկ միտք եմ անում, որ եթէ այժմ մինչև անգամ լսէի Անելկայի խոստովանութիւնը, եթէ նրան մարդից բաժանէի, եթէ նա այրիանար ու իմն դառնար, այն ժամանակ էլ ինձ դժար թէ բախտաւոր զգայի: Այդպիսի մի բոլորէի համար ամբողջ կեանքս կը տայի, բայց հաստատ չը գիտեմ, կը կարողանայի արդեօք այդ բոլորէի դարձնել բախտաւորութեան բոլորէի: Ո՞վ է իմանում, այն նեարկերը, որով մարդիկ բախտաւորութիւն են զգում, արդեօք ընդ միշտ չեն բթացել իմ մէջ: Եստ կարելի է: Իսկ այն ժամանակ էլ ինչիս պէտքն է այդպիսի կեանքը:

Ճանապարհ ընկնելու նախընթաց օրը գնացել էի զինավաճառանոց: Ինչ տարօրինակ մարդ էր ինձ բեռուէր ծախողը: Եթէ նա զինավաճառ չը լինէր, կարող էր հոգեբանութեան պրոֆեսոր դառնալ: Խանութը որ մտայ, իսկոյն յայտնեցի, որ ինձ մեծ տեսակի մի լաւ բեռուէր է հարկաւոր, իսկ թէ ինչ սխառմի՜ Յոլտի, Սմիտ Ուէսսէնի թէ մի ուրիշի, — այդ ինձ համար մի և նոյնն է: Մեր զինագործը մի բեռուէր ջոկեց ու հարցրեց.

— Երևի դուք փամփուշտներ էլ կուզենաք:

— Այո, խնդրեմ:

Զինագործը ուշի ուշով նայեց երեսիս:

— Պատեան էլ:

— Ի հարկէ, պատեան էլ:

— Լաւ: Որ այդպէս է, ձեզ յարմար փամփուշտներ կը տամ:

Ես ակամայից յայտնեցի զարմանքս, իսկ զինագործը շարունակեց.

— Քառասուն տարի է այս գործոյն եմ պարապում և քչից շատից մի բան սովորել եմ: Յաճախ ինձնից զէնք են գնել այնպիսի մարդիկ, որոնք յետոյ դատարկել են իրանց ճակատին: Եւ ի՞նչ էք

կարծում: Երբէք չի եղել, որ դրանցից մէկը պատեան էլ գնէր: Դա միշտ այսպէս է լինում. տեսնում ես մէկը խանութ է մտնում ու ասում՝ «Մի բեռուէր տւէք»:—Պատեան էլ:—«Ձէ, պատեան հարկաւոր չի»: Դա շատ տարօրինակ երևոյթ է. ով վճռել է իրան սպանել, էլ ինչո՞ւ պէտք է մի բուբլի խնայի: Բայց այդպէս է մարդկային բնաւորութիւնը... Կարելի է դրանցից ամեն մէկն ասում լինի ինքն իրան. «Ի՞նչ եմ անում պատեանը, հօ գլխովս չեմ տալու»: Բայց նայելով թէ ով ինչպէս է բեռուէր գնում, ես հասկանում եմ, անձնասպանութիւն գործելու համար է թէ ուրիշ բանի համար:

—Դուք ինձ շատ հետաքրքիր բաներ էք ասում, —ասացի ես:

Յիրաւի, այդ գիտողութիւնը ինձ շատ բնորոշ երևաց: Զինագործը շարունակեց.

—Երբոր ես այդ գլխի ընկալ, սկսեցի հետևեալ միջոցը գործածել. երբ մէկը բեռուէր է գնում առանց պատեանի, այն ժամանակ ես որպէս թէ սխալմամբ մի համարով աւելի փամփուշտներ եմ տալիս: Բեռուէրը ճակատին դատարկելը հեշտ բան չի: Դրա համար հարկաւոր է սարսափելի կենդրոնացումն ու անվահերութիւն: Ինչ մարդ պէտք է լինի, որ սառը քրտինքը վրայից չըկաթի... Վերջապէս մարդ վճռում է ու բեռուէրը վերցնում: Հէնց այդ ժամանակ սատանայի պէս փամփուշտները չեն մտնում... Ինչ արած, ճար չըկայ, գլուխը որ քարոյն էլ տայ, պէտք է մինչև միւս օրը սպասի... Իսկ ինչ էք կարծում, հեշտ բան է երկրորդ անգամ սիրտ անել: Ոչ մի մարդ, որ միանգամից կեանքին վերջ կը դնէր, մի անգամ մահի երեսը աեսնելուց յետոյ, միւս անգամ էլ սիրտ չի անիլ: Եղել են այնպիսիները, որ միւս օրը եկել՝ պատեան են գնել... Իսկ ի՞նչ ծիծաղս էր միայն գալիս: «Ա՛ռ պատեան և ողջ ու առողջ ապրիր»:

Այս խօսակցութիւնը նրա համար եմ դրում, որ ամեն բան, ինչ որ վերաբերում է անձնասպանութեան, այժմ ինձ սաստիկ հետաքրքրում է, իսկ ծերունի զինագործի ասածները ինձ երևաց որպէս այս գործին վերաբերեալ հետաքրքիր մարդկային դոկումէններ:

27 տւնիսի.

Մէկ-մէկ միտս եմ բերում, որ Անեկան ինձ սիրում էր, որ ես կարող էի նրա հետ պտակել ու վայելել վերին աստիճանն պայծառ ու բախտաւոր կեանք, որ այդ բոլորը ինչնից էր կախած և որ այդ բոլորը ես եմ փշաքրել շնորհիւ իմ կենսական անընդունակութեան: Եւ այն ժամանակ ինձ ու ինձ հարցնում եմ. չլինի՞ թէ խելագարւում եմ, և յիշաւի՞ կը կարողանայի Անեկային տիրանալ: Բայց ես հիանալի կերպով ու կարգով յիշում եմ բոլոր պատահածը, մեր ծանօթութեան բոլորից սկսած մինչև այսօր... Ընդունել, որ այդ կինը կարող էր իմը լինել, ինձ հաւատարիմ լինել, ինչպէս հաւատարիմ է այն մարդուն, և դեռ հարիւրապատիկ աւելի, որովհետեւ ինձ սրտանց կը սիրէր... Այո, իսկ որ բնածին անընդունակութիւն: Բայց թէկուզ հէնց այդ բանը ինձ բոլորովին արդարացնէր իմ աչքում, ինձ ի՞նչ օգուտ դրանից, եթէ այդ արդարացումից սիրոս մի մտազաւթի չի մխիթարւում: Սիրոս մի քիչ մխիթարում է այն միտքը, թէ ինչպէս այլասեռւած տոհմերի, նոյնպէս և նոր ու թարմ ցեղերի սերունդները միեւնոյն վախճանը կունենան՝ բոլորին էլ միակերպ հոգով կը ծածկեն... Այդ փոքրացնում է իմ ու այսպէս կուլած կորովի մարդկանց տարբերութիւնը: Ինձ պէս արարածների բոլոր դժբախտութիւնը նրանց բացառիկ լինելու մէջն է կայանում: Ի՞նչ յիմար գաղափար ունեն ոչ միայն վիպասանները, այլ մինչև անգամ հոգեբաններն ու Ֆիզիոլոգները այլասեռւած ցեղերի մասին: Նրանք երևակայում են, որ մարդ իւր ներքին կենսական անընդունակութեան համապատասխան միշտ ունենում է Ֆիզիքական հաշմոթիւն, կարճ հասակ, թույլ մկանունք, սակաւարիւն ուղեղ ու թուլամտութիւն: Կարելի է երբեմն հէնց այդպէս է լինում, բայց այդ ընդհանուր կանոն չիլիս — աններելի սխալ ու պեղանտական կարճամտութիւն կլինի: Այլասեռւած ցեղերի ոչ թէ կենսական ոյժերն են պակաս, այլ այդ ոյժերի մէջ ներգաշնակութիւն չկայ: Նս ինքս Ֆիզիկապէս կորովի մարդ եմ, թուլամիտ չեմ, և իմ շրջանից շատերին եմ ճանաչում, որոնք հինաւուրց արձանների պէս էին կազմւած, ընդունակ ու տաղանդաւոր էին, որոնք, սակայն, ապրել չեն կարողացել ու վատ՝ վախճան են ունեցել դարձեալ այն պատճառով, որ նրանց շատ մեծ կենսա-

կան ոյժերի մէջ չի եղել հաւասարակշռութիւն: Մեր մէջ այդ ոյժերը նմանում են այն վատ կազմակերպւած հասարակութեանը, ուր յայտնի է, թէ որտեղից է սկսում մէկի իրաւունքը ու որտեղ վերջանում միւսի իրաւունքը. մենք անկարգութեամբ ենք կենում, իսկ բոլորին յայտնի է, որ անկարգութեամբ կենալ չի կարելի: Այդ ոյժերից իւրաքանչիւրը միայն իւր կողմն է քաշում, իւր համար է աշխատում ու յաճախ ընկճում է մնացած բոլոր ոյժերը, և ահա սրանից են յառաջանում տրագիկական բացառականութիւններ: Ես այժմ հիւանդ եմ այդպիսի բացառականութեամբ, որի շնորհիւ ինձ, բացի Անելիայից, ոչինչ չի հետաքրքրում, ոչինչ չի զբաղեցնում, և ինձ աշխարհքից բոլորովին կտրւած եմ զգում: Բայց մարդիկ չեն հասկանում, որ այդ ներգաշնակութեան բացակայութիւնը ու կենսական ոյժերի անիշխանութիւնը աւելի ծանր հիւանդութիւն է, քան Ֆիզիկական ու բարոյական անարիւնութիւնը: Ահա հանելուկի լուծումը: Առաջ մեզ փրկում էին կեանքն ու հասարակական պայմանները, որովհետեւ մեզնից զործ էին պահանջում ու որոշ աստիճան հարկադրում էին զործել: Այժմ, երբ մենք հեռացել ենք կեանքից, երբ փիլիսոփայութիւնն ու կասկածը թունաւորում են մեզ, մեր հիւանդութիւնը աւելի է սաստկանում այդպիսի հակառողջական պայմաններում: Վերջապէս այնտեղ ենք հասել, որ մեր մէջ չի մնացել զործելու ընդունակութիւն, այլ միայն խանդեր, դրանից է որ մեզնից ամենաշատ օժտւածների վերջը խելագարութիւնն է լինում: Այն բոլորից, ինչ որ կազմում է մարդու կեանքը, մեզ միայն կինն է մնացել, և երկուսից մէկն է լինում. կամ մեր կենսական դրամադուլը կուպէկ առ կուպէկ անառակութեան վրայ վառնելով, տնաքանդ ենք լինում, կամ թէ բռնելով մի սէրից, ինչպէս անդունդի եզրին աճող ոստից, կախ ենք ընկնում օդի մէջ, այնքան աւելի ենթարկելով մեզ ջարդ ու փշուր լինելու վտանգին, որքան աւելի ենք ընտրում մեզ համար ապօրինի սէրը, որ հէնց իւր էութեան մէջ պարունակում է տրագիկական սաղմեր:

Գիտեմ, որ իմ սէրը դէպի Անելիան վաստ վախճան կունենայ, և այդ իմանալով հանդերձ, չեմ փորձում մինչև անգամ գիմադրել զգացմունքիս, որովհետեւ ամեն ղիմադրութիւն վերջ ի վերջոյ նոյնպէս կորստաբեր կը լինի ինձ համար:

28 լուսնիսի.

Լողանալը և մանաւանդ այստեղի թարմ օդը օգնում են պանի Յելլիսային: Նա օր օրի վրայ աւելի առողջանում է և ինձ-
 անից աւելի ու աւելի շնորհակալ լինում, որովհետև նրան այնպես
 եմ հոգում ու խնամում, ինչպէս հարազատ մօրս: Անեկան այդ
 բոլորը նկատում է և չի կարող ինձ նոյնպէս շնորհակալ չլինել,
 բայց ես հաւատացած եմ, որ շնորհակալութեան հետ միասին նրա
 սիրտը դնալով պէտք է դառնութեամբ լցւի: Այդ նրան զաղափար
 է տալիս այն մեծ երջանկութեան մասին, որ մենք բոլորեքեան
 կունենայինք, եթէ լինէր այն, ինչ որ կարող էր լինել: Այժմ ես
 բոլոր ապացոյցներն ունեմ, որ նա Կրոմիցկուն չի սիրում: Նա
 նրան հաւատարիմ է ու հաւատարիմ կը մնայ, բայց նրանց երկու-
 սին միասին տեսնելիս, Անեկայի երեսին խոնարհութեան ու դժկա-
 մութեան հետքեր եմ նկատում: Տեսնում եմ, որ ամեն անգամ,
 երբ մարդը, որ գուցէ իսկապէս սիրում է, կամ գուցէ միայն ցան-
 կանում է, որ իրանց սիրող ամուսիններ համարեն, զգում է նրա
 ձեռները, շոյում է մազերը, համբուրում ճակատը,—նա, այդ ինձ
 համար անկասկածելի է, ուրախութեամբ գետինը կը մոնէր, միայն
 թէ իմ ու ուրիշների ներկայութեամբ չենթարկէր այդ գգանք-
 ներին: Սակայն նա տանում է ու պարտաւոր է ժպտալ, ես էլ եմ
 տանում ու նոյնպէս ժպտում, միայն սիրտս հովացնելու համար
 երեւակայութեամբ ձեռքս կոխում եմ ներսս ու գալարում եմ
 աղիքներս: Մէկ-մէկ մտքովս անցնում է, որ այդ քրմունին, երբ
 մարդու հետ առանձին է մնում, անշուշտ աւելի ազատ է լինում
 և շատ էլ չի աշխատում իրան զսպել... Բայց ես զգուշանում եմ
 այն երջանկութիւնից, որ ստանում եմ այդպիսի մտքերից, որով-
 հետև զգում եմ, որ հերիք է մի կաթիլ էլ, որ ես հաւասարակըշ-
 ութիւնս կորցնեմ և էլ իմ գլխիս տէրը չլինեմ: Իմ վարմունքը
 աստափելի է թէ Անեկայի և թէ ինձ համար: Իմ սէրը ատելու-
 թեան, արհամարհանքի ու հեգնութեան ձև է ընդունում: Այդ
 տանջում ու վախեցնում է Անեկային: Մէկ-մէկ նա այնպէս է նա-
 չում երեսիս, կարծես թէ ուզում է ասել՝ «ինչով եմ մեղաւոր»: Ես
 էլ եմ յաճախ կրկնում՝ «ինչով է նա մեղաւոր ու սակայն չեմ
 կարողանում, Աստած վկայ, չեմ կարողանում նրան ուրիշ կերպ

վերաբերել: Որքան աւելի եմ նրան կաշկանդւած ու ճնշւած տեսնում, այնքան աւելի է սիրտս զայրոյթով լցւում նրա, Կրօմլիցիու, իմ ու բոլոր աշխարհի դէմ: Այդ զգացմունքը նրանից չէ, որ իմ մէջ կարեկցութիւն չկայ դէպի մի նոյնքան դժբախտ արարած, որքան որ ես եմ: Սակայն ինչպէս ջուրը փոխանակ հանգցնելու սաստիկ կերպով բորբոքւած հրդէհը, աւելի ևս բոցավառում է նրան, այդպէս էլ իմ մէջ բոլոր զգացումները աւելի ևս սաստկացնում են յուսահատութիւնս: Երբոր ես արհամարհանք եմ ցոյց տալիս դէպի՝ ին՝ համար միակ սիրելի կինը, երբ որ միայն զարոյթ ու ծաղր եմ զգում դէպի նա,—դժանով ինձ նոյնքան եմ վիրաւորում, որքան և նրան, դեռ մինչև անգամ աւելի,—որովհետև նա ընդունակ է ինձ ներելու, բայց ինքս ինձ երբեք չեմ ներիլ:

29 չունիսի.

Կրօմլիցիին նկատել է, որ իմ ու իր կնոջ մէջ մեծ դժգոհութիւն կայ և այդ բացատրում է իրան արժանի ձևով: Կարծում է ես նրա համար եմ Անեկլային ատում, որ նա իրան գերադասել է ինձնից: Նա ինձնում տեսնում է միայն վիրաւորւած ինքնասիրութիւնից յառաջացած ատելութիւն և ուրիշ ոչինչ: Պէտք է... ամուսին լինել այդպէս մտածելու համար: Այդպիսի կարծիք կազմելով, նա աշխատում է փոխարէնը վարձատրել Անեկլային կրկնակի զորովանքով, իսկ ինձ հետ վարւում է մեծահոգի յաղթողի ներողամտութեամբ: Միայն ինքնասիրութիւնը կարող է մարդկանց այդքան յիմարացնել: Ինչ տարօրինակ մարդ է: Ամեն օր գնում է Շտրաու-Բենդեր հիւրանոցը, զաղտագողի դիտում է Վանդելբանի տակ զբօսնող զոյգերի յետևից, մի տեսակ ուրախութեամբ ամենա վատ ենթադրութիւններ է անում նրանց մասին. իւր փտած ատամները բաց արած ծիծաղում է՝ ըստ իւր դիտողութեան խաբւած ամուսինների վրայ, և ամեն անգամ, երբ այդպիսի մի նոր գիւտ է անում, այդ նրա քէֆը այնպէս է բերում, որ ժամաւ ընթացքում տասը-քսան անգամ մոնոկլը աչքից հանում է և նորից աչքը դնում: Եւ այդ նոյն մարդը, որ ամուսնական անհաւատարմութիւնը միայն յարմար առիթ է համարում սրախօսելու համար, նոյն բանը ամենամեծ և ամենասարսափելի յանցանք կը համարէր, եթէ որ

գործը իրան վերաբերէր: Քանի որ աչդ ուրիշներին է վերաբերում—նրա համար լոկ Ֆարս է, բայց հէնց որ իրան վերաբերի, նա կըսիսի երկնքի վրէժխնդութիւնը հայցել: Ինչո՞ւ, յիմար: Ով ես դու: Մօտեցիր հայելուն, նայիր շնորհքիդ, տես քո մոնղոլական աչքերը, քո մազերը, որ կարծես հրէական թասակ լինի, քո մոնղոլն ու քո երկար ոտները. նայիր քո ներսը, զննիր հոգիդ ու տես, որքան ողորմելի է քո խեղքը, որքան գոեհիկ է քո բնաւորութիւնը, և ասան, պարտաւոր է արդեօք Անեկիայի պէս կինը գէթ մի ըուպէ հաւատարիմ՝ լինիլ քեզ: Ի՞նչ եղանակով դու նրան մօտեցար, Ֆիլիքական ու բարոյական parvenu: Արդեօք աւելի շուտ հրէշաւոր ու բնութեան հակառակ չի աչն, որ դու նրա մարդն ես: Եթէ Դանտէի Բէաթրիչէն պսակէր Ֆլորենցիայի վերջին գոեհիկի հետ, էլի Անեկիայից աւելի լաւ ընտրութիւն արած կի լինէր...

Ընդհատեցի գրելս, որովհետեւ դարձեալ սկսում եմ գրողուել, դարձեալ կորցնում եմ հաւաստիչութիւնս... Իսկ ես ինչ լաւ քարացել էի: Սակայն Կրոմիցկին թող դարտ չանի, ճիշդն ասած՝ ես ինձ նրանից բարձր չեմ դասում: Եթէ մինչև անգամ ինձ համարէի աւելի ազնիւ մետաղից ձուլած, էլի շատ ուրախանալու բան չէի ունենալ, քանի որ իմ վարմունքը Կրոմիցկու վարմունքից աւելի վատ է: Նա կարիք չունի իմ առաջը կեղծելու, բայց ես պէտք է նրա առաջը կեղծեմ, նրան յարմարեմ, խաբեմ ու ինկատի առնեմ նրան, ծածկեմ նրանից ու որոգայթներ լարեմ նրա դէմ: Փոխանակ նրա կոկորդից բռնել—խեղդելու, յիշատակարանիս մէջ զըրպարտում եմ նրան—դրանից էլ աւելի գոեհիկ վարմունք: Այդպէս՝ սուրուկն էլ իրան գոհացած է համարում, երբ որ տիրոջ յետեւից ծածուկ խօսում է: Անշուշտ Կրոմիցկին երբէք իրան այնքան չնչին չի զգացել, որքան ես էի ինձ զգում, երբ հազար ու մի սուտ ու մուտ պատճառներ էի հնարում նրան Անեկիայի սենեակից որքան կարելի է հեռու տեղաւորացնելու համար: Դեռ այդ էլ չըջաջողեց ինձ: Նրա մի հասարակ խօսքը՝ թէ «ես կամենում եմ կնոջս մօտ լինել», որ նա ասաց ամենայն անկեղծութեամբ, քանդեց իմ բոլոր ծրագիրները: Նւ այժմ նա ասլրում է «կնոջ» մօտ: Բացի այդ ինձ համար անտանելի է, որ Անեկիան հասկանում է իմ իւրաքանչիւր վարմունքը, գլխի է ընկնում, թէ ինչ է նշանակում իմ իւրա-

քանչիւր խօսքն ու զխաւորութիւնը: Ինձ այնպէս է թւում, որ յաճախ նա իմ տեղակ ամաչում է: Այդ բոլորը միասին վեր առած կազմում են իմ հանապազօրեայ հացը: Զեմ կարծում, որ երկար կարողանամ տանել, որովհետեւ դրութեանս բարձրութեան վրայ չեմ գտնւում, կամ այլապէս ասած, այնքան լիրբ չեմ, որքան պահանջում են ինձ շրջապատող պայմանները:

30 տնիսի.

Այսօր պատշգամբից լսեցի Կրօմիցկու ու Անեկայի խօսակցութեան վերջը:

— Ես, — ասում էր Կրօմիցկին, — ինքս կը խօսեմ նրա հետ, բայց դու էլ քո կողմից պէտք է հօրաքրոջդ ասես, թէ գործը ինչ դրութեան մէջ է:

— Որ մեռնեմ չեմ կարող: — պատասխանեց Անեկան:

— Բայց ես շատ եմ խնդրում քեզնից, — շեշտելով ասաց Կրօմիցկին:

Չցանկանալով ականաց վկայ լինել այդ խօսակցութեան, ես ներս մտայ: Անեկայի երեսի վրայ նկատեցի մեծ անբաւականութիւն, որ նա ինձ տեսնելով աշխատեց ծածկել: Կրօմիցկին բարկութիւնից սարդնել էր, բայց ժպտալով ձեռքը մեկնեց ինձ: Մի րոպէ վախենում էր, թէ չլինի Անեկան ամեն բան ասել է մարդուն, — վախենում էի ոչ թէ Կրօմիցկուց, այլ որ նա կարող է Անեկային ուրիշ տեղ տանել ու ինձ զրկել իմ վշտերից, ստորացումներից, տանջանքներից: Զէ որ ես հէնց դրանով եմ ապրում, այլապէս կը մեռնէի սովից: Ինչ լինում է ինի, միայն թէ Անեկան միշտ աչքիս առաջը լինի: Երկար զուլս էի ճաքացնում հասկանալու համար, թէ նրանք ինչի մասին պէտք է խօսելիս լինէին: Մէկ մէկ ինձ շատ հաւանական է թւում, որ Անեկան մարդուն իմ մասին մի բան ասել է, բայց այն ժամանակ Կրօմիցկու վարմունքը ինձ հետ իսկոյն պէտք է փոխէր, մինչդեռ նա համարեա առաջւանից աւելի քաղցր է վարւում ինձ հետ: Առհասարակ պէտք է ասած, որ եթէ ես նրան ատելիս չլինէի, ոչ մի բանում մեղադրել չէի կարող նրան: Ինձ հետ նա վարւում է քաղաքավարի, քաղցր, միշտ զիջանում է ինձ, ինչպէս նեարդային կնոջ, աշխա-

տում է զրաւել իմ վստահութիւնը: Նա չի վիրաւորում, որ երբեմն իրան կոպիտ եմ պատասխանում. և յաճախ չափից դուրս անխիղճ կերպով երեւան եմ հանում նրա վատ կրթութիւնն ու նեարդերի կոտորութիւնը: Ձեռքիցս ոչ մի առիթ բաց չեմ թողնում, որ Անելկայի ներկայութեամբ ցոյց տամ, թէ նա որքան գռեհիկ խելքի ու սրտի տէր մարդ է: Բայց նա շատ համբերող է... զուցէ իմ վերաբերմամբ միայն: Այսօր առաջին անգամ տեսայ նրա Անելկայի վրայ բարկանալը. նրա երեսը բոլորովին կապտել էր, ինչպէս կապտում է այն մարդկանց երեսը, որոնք կարողանում են սառը կերպով բարկանալ, այսինքն շատ չար կերպով: Անելկան կարծես վախենում է նրանից, բայց նա ամենքից վախենում է, — այժմ մինչև անգամ ինձնից էլ: Երբեմն ինձ համար անհասկանալի է լինում, այդքան եռանդը այդպէս ազաւնու նման հեղ կինը որտեղից է վերցնում: Մի ժամանակ նրա վերաբերմամբ մոլորած էի, կարծում էի թէ այդ եռանդը կրաւորական է և թէ եթէ ուզենամ նրան տիրանալ, նա չի դիմադրիլ: Ա՛րպիսի սխալ: Նրա դիմադրութիւնը այնքան աւելի զօրեղ է, որքան աւելի անսպասելի է: Չգիտեմ ինչի մասին էր նրա խօսքը Կրոմից'յու հետ, բայց միանգամ որ ասել է, թէ չի ասիլ, ինչ որ նա իրանից պահանջում է, կը նշանակի չի ասիլ, թէկուզ երկիւղից դողդողալիս լինի: Եթէ նա իմն լինէր, ես կը սիրէի նրան, ինչպէս կարող է սիրել շունը իւր տիրուհուն: Ես նրան աչքիս լոյսի պէս կը պահէի, նրա ոտի տակի հողը կը սրբէի, նրան հոգուցս առաւել կը սիրէի:

1 լուլիսի.

Իմ խանդոտութիւնը լրբութիւն կը լինէր, եթէ այդ զգացմունքիս մէջ չլինէր կրօնասէր մարդու սրտացաւութիւնը, երբ նրա աչքերի առաջ անպատուում են նրա Աստծուն: Ես նրա ձեռքը սեղմելուց անգամ կը հրաժարէի, եթէ կարողանայի զետեղել նրան մի այնպիսի անմատչելի սարի զաղաթին, որին ոչ ոք չկարողանար մերձենալ:

2 լուլիսի.

Սխալւում էի, չէ, չեմ քարացել. նեարդերիս ժամանակաւոր զրութիւնը հոգեկան մշտական դրութեան տեղ եմ ընդունել: Ի վեր-

ջոյ, աջն ժամանակն էլ կասկածում էի, թէ իմ այդ դրութիւնը երկար կը տևի:

3 ԿՈՒԽԻ.

Սակայն նրանց մէջ մի բան պատահել է: Երկուսն էլ ծածկում են, որ իրարից դժգոհ են, բայց ես ամեն բան տեսնում եմ: Մի քանի օր է էլ չեմ տեսնում, որ Կրոմիցկին, ինչպէս առաջ սովորութիւն ունէր անելու, բռնէր նրա ձեռքերը, առաջ մէկը, յետոյ միւսը տանէր շրթունքին, մազերը շոյէր կամ ճակատը համբուրէր: Ես ուրախացել էի, բայց իմ ուրախութիւնը թունաւորեց ինքն Անելիան: Նկատեցի որ Անելիան կարծես ինքն է ուզում մարդուց ներումն ստանալ, նրա տրամադրութիւնը լաւացնել ու առաջնայ յարաբերութիւնները վերականգնել: Միտոս կատաղութեամբ լցւեց, որ նշմարւում էր իմ վարւելուց Անելիայի հետ: Երբէք այդքան անխիղճ չեմ եղել թէ նրա և թէ միւսնոյն ժամանակ իմ վերաբերմամբ:

4 ԿՈՒԽԻ.

Այսօր, Վանդելբանից վերադառնալիս, պատահեցի նրան կամուրջի վրայ ջրվէժի հանդէպ: Նա յանկարծ կանգ առաւ ու սկսեց մի բան ասել, բայց ջրի ձայնը խեղդում էր նրա ձայնը: Այդ զրգուեց իմ բարկութիւնը (ինձ այժմ ամեն բան զրգւում է), և նրան մեր ամարանոցի կողմը տանելով, առանց շտապելու ասացի.

— Զկարողացայ լսել, թէ ինչ էիր ասում ինձ:

— Ես ուզում էի հարցնել, — պատասխանեց նա յուզւած, — ինչու ես ինձ հետ այդպէս վարւում: Ինչու սկի դութ չունես դէպի ինձ:

Այդ խօսքերից արիւնը սիրտս խփեց:

— Մի՞թէ չես տեսնում, — արագ-արագ ասացի ես, — որ քեզ սիրում եմ զժլածի պէս: Ինչպէս կարելի է այդտեսակ զգացմունքը ամենևին բանի տեղ չդնել: Լսիր, ես այլ ևս ոչինչ չեմ խնդրում քեզից: Միայն ասա, թէ ինձ սիրում ես, տուր ինձ քո հոգին, և ես ամեն բան կը տանեմ, ամեն բանի կը դիմանամ, փոխարէնը կը տամ քեզ իմ ամբողջ կեանքը ու կը ծառայեմ քեզ մինչև իմ վերջին շունչը: Անելիա, դու ինձ սիրում ես, ասա, հա: Դու կը փրկես ինձ այդ մի խօսքով, արտասանիր այդ խօսքը:

Անեկան կանգնած էր տուաջիս գունատ, ինչպէս ջրվէժի փըր-
փուրը: Ինձ թւաց, թէ մի սառնաբեր քամի փչեց նրա վրայ և
նրա արիւնը երակներում սառցրեց: Մի րոպէ չկարողացաւ ոչ մի
խօսք արտասանել, յետոյ մեծ ճիգ դորձ զնեւով պատասխանեց.

— Սղաչում, պաղատում եմ քեզ, մի՛ խօսիր ինձ հետ այդպէս:

— Ուրեմն դու ինձ երբէք չես սաի այդ խօսքը:

— Երբէք:

Տեսնում ես որ դու գութ չունես...

Խօսքս ընդհատեցի: Յանկարծ մտքովս անցաւ, որ եթէ այդ
խօսքը նրանից Կրովիցկին պահանջէր, մերժումն չէր ստանալ: Այդ
որ մտքովս անցաւ, յուսահատութիւնիցս ու կարողութիւնիցս ականջ-
ներս տոժացին ու աչքերս շաղկեցին: Գլուխս բոլորովին կորցրի:
Այսքանը զիտեմ միայն, որ այնպիսի սարսափելի ու ցինիկական
խօսքեր ասացի նրա երեսին, որ ոչ մի տղամարդ սիրտ չէր անիլ
ստել անպաշտպան կնոջ: Ես ուղղակի ամաչում եմ այդ խօսքերը
գրի անցնել: Երազի պէս յիշում եմ, որ նա մի րոպէ նայեց զար-
մացած ու վախեցած աչքերով, յետոյ թեքիցս բռնեւով ու ձեռքս
թափ տալով նեարգայոյց կերպով հարցրեց.

— Լէօն, ինչ է պատահել քեզ, Լէօն...

Իսկ ինձ այն էր պատահել, որ խելքս բոլորովին կորցրել էի:
Ես ձեռքս իւեցի նրա ձեռքից ու մի կողմ դնացի: Երբ մի քանի
րոպէից յետոյ նոյն տեղը վերադարձայ, Անեկան այլ ևս չկար: Այն
ժամանակ միայն մի բան հասկացայ, որ ժամանակը հասել է, որ
պէտք է վերջ տալ: Այդ միտքը իսկոյն դարձաւ մի տեսակ փայլուն
ձեղք այն խոր խաւարի մէջ, որ պատում էր իմ գլուխը: Այդ մի
տարօրինակ դրութիւն էր միակողմանի ինքնագիտակցութեան: Ես
ինձ հաշիւ չէի տալիս, թէ ինչ է պատահել: Ես համարեա մոռու-
ցել էի թէ իմ և թէ Անեկայի գոյութեան մասին, բայց մահւան
մասին մտածում էի ոչ միայն անխռով հոգով, այլ բոլորովին հան-
գիստ սրտով: Օրինակ շատ լաւ հասկանում էի, որ եթէ ժայռի
վրայից ինձ անդունդը գցեմ, դա մի դժբախտ պատահար կը հա-
մարւի, բայց եթէ սենեակումս անձնասպանութիւն գործեմ, հօրա-
քոյրս դրանից դարդաֆահ կը լինի: Աւելի տարօրինակ էր այն, որ
այդ բոլորի մասին մտածելիս, ամենեւին ցանկութիւն չէի զգում

այդ միջոցներից մէկն ու մէկն ընտրել, կարծես դատողութեանս և կամքիս ու նրանից բղխող արարմունքներիս մէջ եղող կապը կտրւած լինէր: Բոլորովին համոզւած լինելով, որ աւելի լսւ է ինձ ժայռիցը վայր զցեմ՝ քան թէ բեւոյլներով անձնասպանութիւն գործեմ, այնու առնալով զնացի տուն բեւոյլերս բերելու: Ինչու: Չգիտեմ: Գիտեմ միայն, որ սաստիկ շտապում էի և քանի ոյժումս կար սանդուխքներից արագ վեր բարձրանալով, սկսեցի որոնել այն շէմոդանիս բանալին, որի մէջն էր բեւոյլերը: Յանկարծ սանդուխքներից արագ-արագ վեր բարձրանալու ոտնաձայն հասաւ ականջիս և անձնասպանութեան միտքը զլխիցս հանեց: Մոքովս անցաւ թէ գուցէ Անելկան լինի, որ երևի գուշակել է իմ միտքը և շտապում է խանդարելու ինձ: Դուռը բացւեց և շէմքի վրայ երևաց հօրաքոյրս:

— Էտն, — գոչեց նա խեղաւած ձայնով, — վազիր շուտով բժշկի յետեւից, Անելկան հիւանդ է:

Այդ որ լսեցի, ամեն բան մոռացայ, ամառանոցից զլսաբաց դուրս վազեցի ու քառորդ ժամից յետոյ վերադարձայ բժշկի հետ: Մենք որ եկանք, արդէն բոլորը հանգստացել էին: Բժիշկը գնաց Անելկայի մօտ, իսկ ես հօրաքրոջս հետ մնացի պատշգամբում ու սկսեցի հարցնել նրանից թէ ինչ է պատահել:

— Սրանից կէս ժամ առաջ, — ասաց հօրաքոյրս, — Անելկան տուն վերադարձաւ այնպէս կարմրատակած դէմքով, որ ես ու Յելինան իսկոյն հարցրինք թէ ինչ է պատահել: «Ոչինչ, ոչինչ», պատասխանեց անհամբեր կերպով, բաց ականում ենք որ ճիշտ չէ ասում: Յելինան պահանջում էր որ ճիշտն ասի: Այն ժամանակ Անելկան բարկացաւ (նրան այդպէս կեանքումս առաջին անգամ էի տեսնում) ու գոռալով ասաց՝ «ինչու ինձ այստեղ բոլորը տանջում են», — յետոյ սկսեց ջղաձգւել ու հետերիկաբար ծիծաղել: Մենք սաստիկ վախեցանք, և ես վազէվազ եկայ քո մօտ: Այժմ՝ փառք Աստծու, ամեն բան անցել է: Խեղճը յետոյ լաց էր լինում ու մեղանից ներողութիւն խնդրում իւր դիւրագրգռութեան համար:

Ես լուռ էի, որովհետեւ սիրտս կտրատւում էր: Հօրաքոյրս մի քանի անգամ դնաց եկաւ պատշգամբում, ի վերջոյ կանգ առաւ առաջիս և թեւերը կանթելով ասաց.

—Գիտե՞ս ինչ է իմ կարծիքը, որդիս: Մենք բոլորս այդ Կրոմիցկուն աջնպէս չենք սիրում ինչպէս պէտք է, որովհետեւ Յելինան էլ նրան հազիւ է տանում: Չարմանալի բան է, նա ամեն կերպ աշխատում է մեր աչքը մոռնել, բայց նրա երեսնարքը կարծես անկոչ հիւրի երեսնարք լինի... Այդ լաւ բան չի մեր կողմից: Անեկան ամեն բան տեսնում է և, ի հարկէ, տանջւում...

—Դուք կարծում էք, որ Անեկան նրան այդքան սաստիկ է սիրում:

—Դու էլ հէնց իսկոյն «սաստիկ, սաստիկ»... Սիրում է, որովհետեւ իւր մարդն է, և բնական է որ նրա վատն է զալիս, որ մենք նրա հետ արհամարհանքով ենք վարւում:

—Ախար ո՞վ է նրա հետ արհամարհանքով վարւում: Իմ կարծիքով Անեկան բախտաւոր չի նրա հետ—ահա բանի էութիւնը:

—Ասումա՞ծ մի՛ արտայայտե՛ք, — պատասխանեց հօրաքոյրս: Ձեւ վիճում, նա կարող էր աւելի լաւ մարդ առնել, բայց արդեօք հիմք կմց այդքան վատաբանելու նրան: Նա երևում է որ սիրում է Անեկային... Ճշմարիտ է, Յելինան չի կարողանում ներել, որ նա Գլուխովը ծախեց, ես էլ այդ չեմ մոռանալ երբէք, բայց Անեկան միշտ պաշտպանում էր նրան:

—Կարելի է համոզմանը հակառակ:

—Թէկուզ հակառակ: Այդ աւելի ապացոյց է, որ նա նրան սիրում է: Իսկ ինչ նրա զործերին է վերաբերում, զժբախտաբար ոչ ոք լաւ չը գիտէ, ի՞նչ է ինչ դրութեան մէջ են նրա զործերը, դրանից է որ Յելինան միշտ երկիւղի մէջ է: Բայց ճիշտը որ խօսենք, մի՞թէ միայն հարստութիւնն է մարդու բախտաւոր դարձնում: Ի վերջոյ քեզ արդէն ասել եմ, որ ես Անեկային չեմ մոռանալ և դու դէմ չես լինիլ դրան, ասա, չէ: Մենք երկուսս էլ պարտական ենք նրա մասին հոգ տանել, սիրելի Լէօն, նա այնքան լաւ, այնքան բարի աղջիկ է, որ բոլորովին արժանի է մեր խնամքին:

— Ի հարկէ, հօրաքոյր: Ես քոյր չունեմ, և քանի կենդանի եմ, Անեկան ոչ մի նիւթական հոգս չի քաշիլ:

—Ես այդ գիտեմ և հանգիստ սրտով կը մեռնեմ,—պատասխանեց հօրաքոյրս:

Նա ինձ գրկեց և ուզում էր էլի մի բան ասել, բայց բժիշկը խանգարեց: Նրա ասելով անհանդատանալու ոչինչ չկայ: «Նեարդերի հասարակ գրգռումն է, որ յաճախ պատահում է այստեղի ջրերում նոր լողացողներին, պէտք է առժամանակ թողնել լողանալը, շատ մնալ մաքուր օդում—ամեն բան կանցնի: Կազմաճքն առողջ է, ոչժը՝ շատ, ամեն բան հիանալի կերպով կը վերջանայ»: Այդ խօսքերի համար ես այնպէս լցրի նրա գրպանը, որ նա գլուխը ծածկեց ամարանոցի վանդակապատի միւս կողմն անցնելուց յետոյ: Կանգնեց մի քանի տարի կը տայի, որ գնամ Անեկայի մօտ, նրա տաները համբուրեմ ու ներողութիւն խնդրեմ այն բոլոր չարիքների համար, որ պատճառել եմ նրան: Երգւեցի ուրիշ մարդ դառնալ, համբուրեմաբ տանել Կրոմիցկու ներկայութիւնը, չվրդովւելի, մինչև անգամ շորանջալ: Զղջումն, լիակատար ու սրտանց զղջումն—ահա իմ հոգու ներկայ տրամադրութիւնը:

Կրոմիցկին Կալգերվեզում արած հեռաւոր զբօսանքից վերադարձաւ կէսօրին: Ես խկոյն փորձեցի նրա հետ քաղցր վարել: Նա այդ կարեկցութեան նշան համարեց և իրան շնորհապարտ զգաց: Օրւաց մնացած մասը Կրոմիցկին ու պանի Յելինան Անեկայի մօտ անց կացրին: Երեկոյեան դէմ Անեկան կամեցել է հագնել ու դուրս գալ, բայց նրանք չեն թողել: Այդ առթիւ էլ ինձ թոյլ չուեցի վրդովւել: Զեմ յիշում, որ երբ և իցէ ինքս ինձ վրայ այդպիսի մեծ յաղթութիւն տարած լինէի: Հոգուս խորքում անդադար կրկնում էի՝ «այդ բոլորը քեզ համար է, սիրելիս: Ամբողջ օրը յիմար տրամադրութեան մէջ էի: Երեկոյի պէս լացս գալիս էր, և այժմ էլ արտասուքը ինձ խեղդում է: Մի անխելքութիւն արի, այժմ հարիւրապատիկն եմ հատուցանում:

5 Կուլիսի.

Երեկան իրարանցումից յետոյ այժմ կատարեալ անդորրութիւն է տիրում, ինչպէս փոթորկից յետոյ լինում է խաղաղութիւն: Ամպերը սպառել են իրանց բոլոր էլեքտրականութիւնը: Ես ինձ թոյլ եմ զգում Ֆիզիկապէս ու բարոյապէս, բայց Անեկան լաւ է: Առաւօտեան մենք երկուսով մենակ մնացինք պատշաճաբով: Անեկային նստացրի հանգիստ բազկաթոռի վրայ ու ծածկեցի շալով, որովհետեւ այստեղ առաւօտները ցուրտ է անում:

—Անգին Անելկա,—ասացի ես,—բոլոր սրտովս քեզանից ներողութիւն եմ խնդրում երեկան ասածիս համար: Ներիր ինձ ու մոռացիր, որովհետեւ առանց այն էլ ինքս ինձ երբէք չեմ ներիւ:

Նա իսկոյն ձեռքը մեկնեց ինձ, որը ամուր սեղմեցի շրթունքներիս: Որքան կամքի ոյժ ունէի, պէտք է լարէի, որ բարձրաձայն չհեկեկամ,—այնքան մեծ էր սէրիս ու թշուառութեանս մէջ եղած վիհը: Անելկան այդ շատ լաւ զգում էր և ձեռքը շրթունքներիցս շուտով չիւլեց: Նա էլ էր աշխատում խեղդել իւր յուզմունքը, գուցէ և զսպել այն զգացումը, որ նրա սիրտը դէպի ինձ էր մղում: Նրա վիզն ու կուրծքը այնպէս էր բարձր ու ցածր անում, որ կարծես այնտեղից ուզում էր դուրս թռչել բարձրաձայն հեկեկանք: Նա հասկանում էր, որ ես իրան աշխարհիս երեսին ամեն բանից աւելի եմ սիրում, որ այդպիսի սէր միշտ չի պատահում և ուրիշ պայմաններում այդ սէրը կարող էր երջանկութեան աղբիւր լինել ամբողջ կեանքի համար:

Բաց մի քանի րոպէից յետոյ նա իրան զսպեց ու երեսը պարզեց: Նրա դէմքի վրայ երևում էին միայն խոնարհութիւն ճակատագրի առաջ և անհուն բարութիւն:

—Աւրեմն մենք հաշտ ու սիրով կը լինենք այսուհետեւ, հա,—հարցրեց նա:

—Հա:

—Սէ մի՞շտ:

—Ի՞նչ պատասխանեմ քեզ, հոգեակս: Ինքդ լաւ գիտես, ինչ է կատարւում մէջս...

Նրա աչքերը նորից մշուշով ծածկեցին, բաց էլի իրան զսպեց:

—Լաւ, լաւ,—ասաց նա,—գիտեմ, դու բարի սիրտ ունես...

—Ո՞վ, կիս,—անկեղծ զայրոյթով բացականչեցի ես,—գիտե՞ս արդեօք, որ եթէ քո երեկան ուշաճնացութիւնը չլինէր...

Բաց ես խօսքս չվերջացրի: Յանկարծ մտածեցի, որ իմ կողմից անազնութիւն կը լինի շահել նրա սէրը երկիւղով ու սպառնալիքներով: Իմ բանը չէ այդ: Ամօթս սաստիկ եկաւ, մանաւանդ որ նա վախեցաւ, և ուշի ուշով ինձ նայելով հարցրեց.

—Ի՞նչ էիր ուզում ասել:

— Ուզում էի այնպիսի մի բան ասել, որ վայել չէր լինի ինձ և որն այսօր էլ ոչ մի նշանակութիւն չունի:

— Ձէ, Լէօն, ես ուզում եմ անպատճառ ամեն բան իմանալ, թէ չէ մի բոլորէ հանգիստ չեմ լինիլ:

Քամին նրա մազերից մի փունջ զցեց ճակատի վրայ. ես կանգնեցի և ուղղեցի նրա մազերը այնպիսի հոգատարութեամբ, կարծես նրա մայրը լինէի, և ասացի.

— Անեկաս, մի՛ ստիպիր ինձ ասել այն, ինչ որ պէտք է չասեմ: Իսկ եթէ հարցը քո հանգստութեան մասին է, քեզ խօսք եմ տալիս, որ դու ոչ մի պատճառ չես ունենալ անհանգստանալու:

Նա աչքերը վեր բարձրացրեց դէպի ինձ:

— Խօսք տալիս ես:

— Ամենահաստատ ու հանդիսաւոր խօսք. ի՞նչ բաներ են անցնում մոքովդ:

Մեր խօսակցութիւնը ընդհատուեց, նամակաբերը եկաւ և մի դաստայ նամակ բերեց. Կրօմիցկուն՝ Արեւելքից, Անեկային՝ Մենատինակիներից (մարդու ձեռքը ճանաչում եմ, նա էր գրել հասցէն) և ինձ՝ Կլարայից: Ազնւահոգի Կլարան իւր մասին շատ քիչ էր գրել, բայց մանրամասն տեղեկութիւն էր հարցրել իմ կեանքից: Անեկային ասացի, որ նամակս Կլարայիցն է. նա ըստ երևոյթիւն կամենալով մեր հաշտութիւնը լիակատար դարձնել, սկսեց ձեռ առնել ինձ Կլարայի պատճառով: Ես նրա խօսքի տակ չմնացի և ասացի, որ Մենատինակին վերջին ժամանակները գլուխը մի քիչ կորցրել է: Մի քանի բոլորէից յետոյ մենք ծիծաղում ու կատակներ էինք անում: Մարդու հոգին կարծես մեղու լինի, որ մեղր է որդնում մինչև անգամ դառը ծաղիկների մէջ: Ամենադժբախտ մարդն անգամ աշխատում է իւր՝ սեփական տանջանքներից մի կաթիլ բախտաւորութիւն քամել, և այդ նպատակին հասնելու համար օգտուում է ամեն մի առիթից, ամենաչնչին պատրւակից: Երբեմն մտածում եմ, որ այդ անզուսպ պահանջը ապացոյց է, թէ մահից յետոյ մեզ մի բան է սպասում: Ես համոզւած եմ, որ մարդիկ պետքի միջոցն են դարձեալ նոյն կարիքին գոհացում տալու համար, միսիթարութեան համար, որ կարելի է ստանալ մարդկային թշուառութիւնը փիլիսոփայական ֆորմուլայի վերածելով: Այդ գո-

հացումն է դէպի գիտութիւնն ու ճշմարտութիւնը եղած ձգտման, իսկ բախտաւորութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գոհացումների մի շարք:

Գուցէ սէրը այնպիսի առատ աղբիւր է երջանկութեան, որ ամենամռայլ սիրոյ մէջ էլ կան լուսաւոր ճառագայթներ: Ինչ և իցէ, այսօր մեզ համար փայլեց այդպիսի մի ճառագայթ: Ես սկի այդքանի էլ յոյս չունէի, ինչպէս չէի սպասում, որ իւր ցանկութիւններին սահման չդնող մի մարդ, որ ձգտում է ամեն բան ունենալ, թշառութեան ժամանակ համարեա ոչնչով բաւականար: Բայց դրա օրինակը ես հէնց ինքս եմ:

Հազիւ վերջացրել էինք մեր նամակների կարգալը, որ պանի Յելինան (նա այժմ կարողանում է աւանց ուրիշի օգնութեան մօտ գալ) շէմքի վրայ երևաց ձեռքին մի փոքրիկ նստարան բռնած:

— Ա՛խ, մայրիկ, — Անեկայի վասն եկաւ, երբ պանի Յելինան կամեցաւ նստարանը դնել նրա ոտների տակ, — այդպէս բան կանե՞ն:

— Իսկ դու որ ինձ այնքան պահպանում էիր, երբ ես հիւանդ էի, — պատասխանեց պանի Յելինան:

Բայց ես նրա ձեռքից նստարանն առայ, և ծունկ չօքելով Անեկայի առաջ, սպասեցի, մինչև որ ոտները նստարանի վրայ դրեց: Այդ տեւեց մօտ կէս ընդէ, բայց այդ հերիք էր, որ ինձ ամբողջ օրը երջանիկ դարձնէր: Այո, այդպէս է: Ով որ շատ խեղճ է, ապրում է փշրանքներով, և փշրանքները հաւաքելիս ժպտում է երախտագէտ սրտով ու արտասուքն աչքերին:

6 լուրիսի.

Ի՞մ սիրտը հողմ է, բայց սիրելու ընդունակ: Այժմ եմ միայն հասկանում Մեհաոփնակուն: Եթէ ես խախտեամ մարդ չլինէի, եթէ հաւասարակշռութիւնս կորցրած չլինէի, եթէ թունաւորեամ չլինէի սկեսպոլիցիդով, ինքնազննութեամբ, եթէ իմ սէրը կանոնաւոր ու անշեղ լինէր, այն ժամանակ ես կը դանէի Անեկայի մէջ իմ կեանքի դաւանանքը, որին կը հետեւէին և միւս դաւանանքները: Բայց չգիտեմ, գուցէ ես անկարող լինէի ուրիշ կերպ սիրել, եթէ ոչ միայն խոտորնակի, գուցէ հէնց դրանում է կայանում իմ կենսական անընդունակութիւնը, — այսպէս թէ այնպէս, բայց ինչ որ

պէտք է իմ առողջութիւնն ու փրկութիւնը լինէր, դարձել է ինձ համար մահաբեր հիւանդութիւն ու նզովք: Ձարմանալի է, որքան անգամ ինձ նախազգուշացրել են դրա վերաբերմամբ: Կարելի է կարծել, թէ ինձ ճանաչողները նախատեսում էին գլխիս դադանիքը: Անդադար մտաբերում եմ, որ Սնեատինսկին գրել էր ինձ դեռ այն ժամանակ, երբ ես Պելիուսն էի Դեխսէնց մօտ, հետեւեալ խօսքերը, «Կեանքի ընթացքում մի որ և է բան պէտք է բուսնի ու աճի. տես, այնպիսի բան չաճի, որ թշուառութեան աղբիւր դառնայ քեզ ու քո սիրելիների համար»... Այն ժամանակ ծիծաղում էի այդ խօսքերի վրայ, իսկ այժմ տեսնում եմ, որ աւելի լաւ էր կարելի նախատեսել ապագան: Հայրս էլ շատ անգամ այնպէս էր խօսում, կարծես երբեմն նրա հայեացքը թափանցում էր այն վարագոյրը, որ սքողում է մեզնից ապագան: Այժմ զուր եմ այդ յիշում, այժմ այլ ևս ուշ է: Գիտեմ, որ իմ մտածմունքներից ինձ ոչ մի օգուտ չի լինիլ, բայց չեմ կարողանում ինձ պահել, որ չմտածեմ, որովհետեւ ինձ այնքան չեմ խղճում, որքան Անելկային: Նա ինձ հետ հարիւր անգամ աւելի բախտաւոր կը լինէր, քան թէ Կրոմիցկու հետ: Մինչև անգամ ընդունում եմ, որ սկզբում նրան կը սկսէի քննել ու զննել ու մէջը հազար ու մի պակասութիւններ գտնել, բայց միեւնոյն է, այդ դէպքում էլ նրան բոլոր հոգովս կը սիրէի: Նա իմն կը լինէր, հետեւաբար կը մանէր իմ եսականութեան բովանդակութեան մէջ: Նրա պակասութիւնների վրայ ես կը սկսէի նայել իբրեւ իմ անձնական թուլութիւնների վրայ, իսկ ինքն իրան մարդ ամեն ինչ ներում է. մարդս թէկուզ ամենախիստ կերպով էլ ինքն իրան քննադատելիս լինի, այնու ամենայնիւ չի զաւարում ձգտել դէպի այն, որ իրան ձեռնտու է, հետեւաբար և չի դադարում ինքն իրան սիրելի լինելուց: Այդպէս ինձ սիրելի կը լինէր և Անելկան, իսկ քանի որ նա ինձնից հարիւրապատիկ լաւ է, ժամանակով կը դառնար իմ պարծանքս, հոգուս ամենալաւ, ամենաազնիւ մասը, և ես կը համոզւէի, որ իմ կրիտիկային տեղ չի մնում նրա մօտ — և կընդունէի նրա հաւատը ու կը փրկւէի նրա շնորհիւ: Այդ ամենը չքացաւ, փչացաւ ու դարձաւ տրագեդիա ինձ համար:

7 չուլիսի.

Արդեւ եւ կրկին երեկան գրածս և ինձ զարմացնում են վերջին խօսքերս, թէ սէրս, որ եթէ շիտակ սէր լինէր, կարող էր փրկութիւն դառնալ ինձ համար, չարիքի աղբիւր է դարձել... Վժար է ինձ՝ այդ մոքի հետ հաշուել: Ինչպէս կարող է չարիք ծնել այն սէրը, որ ներշնչում է Անեկաջի պէս մաքուր էակը: Բայց մի խօսք բացատրում է ամեն բան, այն է՝ խեղաթիւր սէր: Ի վերջոյ պէտք է որ ընդունեմ այդ փաստը: Եթէ սրանից երկու տարի առաջ մէկն ի՛նձ ասէր, ինձ, որ քաղաքակրթւած մարդ եմ, ունեմ էսթետիկայէս զարգացած նեարդեր ու ապրում եմ քրէական օրէնսդրքին բոլորովին համաձայն հէնց միայն նրա համար, որ բարոյական անկարող եմ ուրիշ կերպ ապրել,—եթէ մէկը, կրկնում եմ, ինձ ասէր, որ ես դիշեր ցերեկ կը մտածեմ թէկուզ սպանութեան միջոցով վերացնել մի մարդու, որ ինձ խանդարում է, այն ժամանակ ես այդ տեսակ մարդարէին խելագար կը համարէի: Իսկ այժմ տես թէ որտեղ եմ հասել: Արամիցիին խափանում է իմ լոյսը, խլում է իմ հողը, ջուրն ու օդը: Ես չեմ կարողանում ապրել միայն այն պատճառով, որ նա ապրում է, և դրա համար հողուս մէջ անդադար փայփայում եմ նրա մահւան միտքը: Եթէ նա մեռնէր, ի՛նչ պարզ ու կատարեալ կերպով կը լուծւէին բոլոր խճճւած հարցերը, ինչպէս վերջ կը տրւէր բոլոր անբախտութիւններս: Յաճախ միտք եմ անում, որ եթէ հիպնոզացնողը կարող է ասել իւր մեղիումին՝ «քնիր» ու նա քնում է, ինչու նոյն ոյժը, միայն աւելի մեծ չափով, բաւական չի լինի քնացնելու մէկին յաւիտենական քնով: Աերջերքս վճռեցի բերել տալ զանազան գրքեր հիպնոտիզմի մասին ու գրեցի, որ ուղարկեն, իսկ առ այժմ յակամայից ամեն մի հայեացքովս ասում եմ Արամիցիուն՝ «մեռիր»: Եթէ այդպիսի ներազդումը բաւական լինէր, Արամիցիին վաղուց աշխարհի երեսից վերացած կը լինէր: Դրա հետեւանքը մինչև այժմ այն է եղել, որ նա իւր քէֆին ապրում է և ինչպէս և առաջ, էլի Անեկաջի ամուսինն է, իսկ ես պէտք է բաւականանամ այն համոզմունքով, թէ իմ դիտաւորութիւնները որքան յանցաւոր են, նոյնքան չիմար են, ծիծաղելի ու խելքը գլխին մարդու համար անվայել, և ես սկսում եմ աւելի ու աւելի արհամարհել ինձ:

Սակայն այդ չի խանգարում ինձ Կրոմիցկուն հիպոթեզներն շարունակել: Այդ վաղուցուց պատմութիւնն է, թէ երբ զարգացած մարդուն ծանր հիւանդութեան ժամանակ բժիշկները հրաժարում են բժշկելուց, նա դիմում է պառաւական զեղերին: Ես ուզում եմ իմ ախոյեանին հիպոթեզմով սպանել, իսկ թէ այդ ցանկութիւնս աւելի պարզ է ցոյց տալիս իմ ողորմելի լինելս, այդ աւելի ևս դառնացնում է վիճակս: Պէտք է բացի այդ խոստովանել, որ հէնց որ մենակ եմ մնում, սկսում եմ միտք անել ինձ ատելի մարդու չքացնելու մասին և քննում եմ այն բոլոր միջոցները, որոնք հնարաւոր են մարդու համար: Երկար ժամանակ փաշիպուլում էի նրան մենամարտի մէջ սպանելու միտքը: Բայց զրանից բան դուրս չի գալ: Անեկան իւր մարդու սպանողին չի կարող առնել, ուստի ինչպէս ամենասովորական ջանցաւոր, սկսեցի ուրիշ հնարների մասին մտածել: Եւ որ զարմանալին է, գտայ շատ այնպիսի հնարներ, որ մարդկային արգարապատութիւնը չի կարող բաց անել:

Յիմար, դատարկ բաներ են. թէօրիական դատողութիւններ են: Կրոմիցկին կարող է իրա համար հանգիստ ապրել. այդպիսի մտքեր իմ մէջ այնքան զօրանալ չեն կարող, որ գործ դառնան: Ես նրան չեմ սպանիլ, թէկուզ հաւատացած լինեմ, որ զրա համար նոյնքան պատասխանատու կը լինեմ, որքան մի սարդ սատկացնելու համար. նրան չէի սպանիլ և այն ժամանակ, եթէ միայն երկուսով ապրելիս լինէինք մի անմարդաբնակ կղզում. բայց եթէ հնար լինէր մարդու դանգը խնձորի պէս մէջիցը կէս անել ու դուրս հանել միջի թաղնւած մտքերը, կերեւար, որ չարազործութեան ցեցը ուտում է ուղեղս: Եւ որ աւելին է, շատ լաւ զգում եմ, որ եթէ ես երբէք ընդունակ չեմ լինիլ սպանել Կրոմիցկուն, զրա պատճառը «մի՛ սպանիլ» պատելիքանում պարունակող վսեմ դրդումները չեն: Այդ պատելիքանը ես արդէն սրտումս ոտնատակ եմ տուել: Ես նրան չէի սպանիլ միմիայն այն պատճառով, որ թերեւս ասպետական աւանդութիւնների մնացորդները խանգարէին, այն պատճառով, որ իմ նուրբ ջղերս ընդունակ չէին լինել այդպիսի մի կոպիտ գործ կատարել, որովհետեւ շատ եմ հեռացել նախնական վայրենի մարդուց, — մի խօսքով այն պատճառով, որ այդ ինձ համար Ֆիզիկապէս անհնարին կը լինէր, չէի կարողանալ ինձ ստիպել այդ անել: Բայց

բարոյապէս ես նրան ամեն օր սպանում եմ և ինձ ու ինձ հարցնում, արդեօք պատասխանատու չեմ լինի մարդկային դատաստանից մի աւելի բարձր դատաստանի առաջ այդ յանցանքի համար այնպէս, ինչպէս եթէ իրօք դործած լինէի այդ յանցանքը:

Գուցէ և յիրաւի, եթէ այնպէս, ինչպէս վերն ասացի, կարելի լինէր բանալ մարդկանց զանգերը, ամենաառաքինի մարդու ուղեղում անդամ այնպիսի մտքեր կը գտնէին, որ հետազօտողի մաղերը կը փշաքաղէին: Յիշում եմ, երբ որ երկխաչ էի, մի օր այնպէս թուեւ ջերմեռանդութիւնս բռնեց, որ առաւօտից մինչև երեկոյ ջերմ կերպով ազօթում էի, և միևնույն ժամանակ ջերմեռանդութեամբ ամենաշատ յափշտակւած բոլորներին մաքովս այնպիսի սրբապիղծ բաներ էին անցնում, որ կարծես քամու բերած լինէին կամ թէ սատանայ մտած լինէր մէջս: Նմանապէս պատահել է ինձ պիղծ բաներ մտածել այնպիսի անձանց մասին, որոնց հոգուս չափ սիրում էի և որոնց համար առանց տատանելու կեանքս կը զոհէի: Յիշում եմ նոյնպէս, որ այդ իմ երեխայութեան տրադիցիան էր կազմում և՛ որ սաստիկ տա՛ջւում էի դրա շնորհիւ: Բայց բանը դրանում չէ: Գալով այդ սրբապիղծ կամ յանցաւոր մտքերին, կարծում եմ, որ ոչ ոք չպէտք է պատասխանատու լինի նրանց համար, որովհետև նրանք ծագում են արտաքին չարիքի գիտակցութիւնից և ոչ թէ այնպիսի չարիքից, որ արդէն պատւաստւել է մարդու բարոյական օրգանիսմին: Նւ հէնց նրանց արտաքուստ լինելուն է, որ մարդուս թւում է, թէ սատանան է շշնջում իւր ականջին այդ մտքերը:

Մարդ լսում է և չարից խուսափելով վանում է այդ մտքերը, այնպէս որ թերևս այդ նրա առաքինութիւնն է ցոյց տալիս: Բայց իմ ուրիշ է: Կրօնիցկուց ազատւելու միտքը դրսեւից չի ներմոծւում իմ ուղեղիս մէջ, այլ հէնց իմ մէջ է զարգանում ու մնում: Բարոյապէս արդէն բոլորովին հասունացած եմ այդ բանի համար, և եթէ չեմ վճռում ու չեմ էլ կարողանալ վճռել սպանութիւն զործել, կրկնում եմ, պատճառը նեարդերս են: Իմ դեւիս դերը միայն նրանով է սահմանափակւում, որ ծիծաղում է իմ վրայ շշնջելով ականջիս, թէ եթէ միաքս դործ դարձնեմ, այդ կը լինի եռանդի ապացոյց և ոչ երբէք աւելի մեծ յանցանք:

Ահա այս է այն ճամբաբաժանը, որի վրայ կանգնած եմ այժմ: Ամենևին չէի սպասում թէ երբ և իցէ կարող էի կանգնել այդ ճամբաբաժանի վրայ և այժմ զարմացած նայում եմ հոգուս խորքը: Ձգիտեմ արդեօք իմ չտեսնւած տանջանքները քաւում են զոնէ մասամբ իմ անկումը, այնքանը միայն գիտեմ, որ ում կեանքը չի զետեղւում այն պարզ կոյեքսի մէջ, որին հետևում են Անելկան ու նրա նման մարդիկ, ում հոգին եռալով բարձրանում թափւում է այլպիսի անօթից, նա պէտք է շաղախւի փոշու ու ցեխի մէջ:

9 չուլիսի.

Այսօր ընթերցարանում Կրոմիցկին ցոյց տւեց ինձ մի անգլիացու, որ նստած էր մի շատ սիրուն կնոջ հետ, և պատմեց ինձ նրանց անցեալի մասին: Գեղեցկուհին ծագումով ռուսանիացի է և առաջ մի սնանկացած վալախիացի իշխանի կինն է եղել, որից անգլիացին նրան ուղղակի փողով գնել է Օստենդէում: Այլպիսի պատմութիւններ կեանքումս տասն անգամ լսած կը լինեմ: Կրոմիցկին անգամ ինձ յայտնեց այն գումարը, որով գնւած էր այդ գեղեցկուհին: Նրա պատմութիւնը ինձ վրայ տարօրինակ տպաւորութիւն թողեց: Ինձ ու ինձ մտածում էի՝ «այ քեզ մի միջոց էլ», — ճշմարիտ է խաչատուակ միջոց է թէ ծախողի և թէ գնողի համար, բայց և հասարակ: Կինը կարող է ոչինչ չիմանալ պաշտօնադրութեան մասին, իսկ պաշտօնը կարելի է քօղարկել ըստ կարելոյն վայելուչ պատրւակներով: Ակամայից սկսեցի մեր դրութեան վրայ նայել այդ տեսակէտից: «Ձգամ ու ես էլ...» Ամբողջ գործը ինձ երկու տեսակ էր երևում. Անելկայի նկատմամբ նայում էի դրա վրայ իբրև մի զգւելի սրբապղծութեան վրայ, իսկ Կրոմիցկու նկատմամբ՝ այդ միջոցը ոչ միայն կարելի բան էի համարում, այլ և լիապէս յաղեցնող իմ ատելութիւնն ու արհամարհանքը, որ զգում էի դէպի նա: Որովհետև եթէ նա համաձայնէր, նրա ստորութիւնը ակներև կը լինէր. այն ժամանակ պարզ կը լինէր թէ նա ինչ մարդ է և ինչ հրէշաւոր բան է եղել Անելկային նրան տալը. և ես ինձ իսկոյն անմեղ կը զգայի այն բոլոր ճիգերիս համար, որ գործ եմ դրել նրա կինը ձեռքից լսելու համար: Բայց նա կը համաձայնի արդեօք: Ինքս ինձ ասում էի՝ «չու նրան ատում

ես, այդ պատճառով ինչ վատ բան ասես ենթադրում ես նրա մասին: Միւս կողմից աշխատելով նրա մասին ամենաօբեկտիւ կերպով մտածել, չէի կարողանում մոռանալ, որ այդ մարդը ծախել է Գլուխովը, որ նա խորամանկութեամբ Անեկայից լիազօրութիւն է ստացել այդ անելու, որ նա մասամբ խաբել է թէ նրան, թէ պանի Յելինային, որ ի վերջոյ դրամամոլութիւնն է նրա մէջ գերիշխող կերբը: Ես չէի միայն, որ նրան փողի վրայ գտած էի համարում: Այդ աչքով էին նայում նրա վրայ և Մեհապինսկին, հօրաքոյրս ու պանի Յելինան: Այդ տեսակ բարոյական ախար միշտ կարող է պատճառ դառնալ այդ տեսակ անկման: Միւս կողմից հասկանում եմ ի հարկէ, որ ամեն բան երևի կախած կը լինի նրա զործերի դրութիւնից, իսկ թէ ինչ դրութեան են այդ զործերը, ոչ ոք կարգին չգիտէ: Հօրաքոյրս կարծում է որ լաւ չպէտք է լինեն, իսկ ես կարծում եմ, որ նոյն իւր ունեցած-չունեցածը ցանկ է և աջժամ առատ հունձի է սպասում: Իսկ լաւ հունձ կը լինի արդեօք: Կրոմիցիին ինքն էլ հաստատ չգիտէ, սրանից է նրա մշտական անհանգստութիւնը և այն տասնեակներով նամակները, որ ուղարկում է Արեւելք իւր հաւատարմատար Խաւատովսկուն: Յանկարծ միտքս եկաւ, որ հէնց այդ Խաւատովսկու միջոցով կարելի է իմանալ ինչպէս են նրա զործերը: Բայց դրա համար պէտք է երկար ժամանակ: Կարելի է մի օրով վիէննա գնամ, տեսնեմ բժիշկ Խաւատովսկու հետ, որ այնտեղ Կլինիկայում պարապում է, և նրանից մի բան իմանամ: Անշուշտ երկու եղբայրները միմեանց հետ նամակագրութիւն կունենան: Իսկ մինչ այդ՝ հարց ու փորձ կանեմ իրան Կրոմիցիուն, բայց որքան կարելի է զգոյշ կերպով, որ նրա սիրտը կասկած չգցեմ: Ամենից առաջ վաղը նրանից կը հարցնեմ, ինչ կարծիքի է նա այն ռումանիացի իշխանի մասին, որ իւր կնոջը ծախել է անգլիացուն: Նախատեսում եմ, որ Կրոմիցիին չի ցանկանայ ինձ հետ անկեղծ լինել, բայց ես որքան հնարաւոր է նրան կօգնեմ, իսկ մնացածը ինքս գլխի կընկնեմ: Այս բոլոր մտքերն ու դիտաւորութիւնները մի քիչ աշխոյժացրին ինձ: Կրաւորապէս տանջւելուց աւելի վատ բան չկայ, և ամեն բան, որ ինձ այդ դրութիւնից հանում է, լաւ է: Ինձ ու ինձ կրկնում եմ՝ «զոնէ վաղը կամ միւս օրը մի որ և է բանի կը ձեռնարկեմ, կը փորձեմ»

մի որ և է բան անել իմ զգացած սիրոյ համար»—և այլ ինձ կազդուրում է: Կատարեալ թմրածութիւնից ջանկարծ տենդային դործունէութեան մէջ եմ ընկնում: Գործը իմ զլսիս, իմ խելքիս է վերաբերում, որ ես կորցնելու մօտ եմ: Անեկային ազնիւ խօսք եմ՝ աւել, որ անձնասպանութիւն չեմ գործի, կը նշանակի այդ ելքն էլ փակ է ինձ համար: Իսկ ապրել այնպէս, ինչպէս ապրում եմ, այլ ևս չեմ կարող: Եթէ իմ բռնելիք ճանապարհը խաչատուակ է, յամենայն դէպս աւելի խաչատուակ կը լինի Կրօմիցկու քան ինձ համար: Ես նրանց պէտք է միմեանցից բաժանեմ ոչ միայն ինձ համար, այլ և Անեկայի համար: Անկատակ տենդ ունեմ: Բոլորին աջատեղի ջրերը օգնում են բացի ինձանից:

10 յուլիսի.

Շոք օրեր լինում են մինչև անդամ աչտեղ, Գաշտէջնում: Ինչ սարսափելի տօթ է: Անեկան սպիտակ Ֆլանելէ շոր է հագնում, ինչպէս սովորաբար հագնում են անգլիուհիք «lawn-tennis» խաղալու ժամանակ: Առաւօտեան սուրճը խմում ենք թարմ օդում: Անեկան լողանալուց գալիս է թարմ, լուսափայլ, ինչպէս ձիւն արևի ծագման ժամանակ: Նրա գողտրիկ մարմնի գծերը կակուղ շորի տակից սովորականից աւելի որոշ են երևում: Առաւօտեան արևը այնքան պարզ է լուսաստորում նրան, որ հատ-հատ տեսնում եմ նրա յօնքերի բոլոր մազերը, թերթիւնները և նուրբ աչտերը ծածկող աղւամազը: Մազերը մի քիչ թաց են լինում, բայց այդ փայլից աւելի բացգոյն են երևում, իսկ բիբերը աւելի ջինջ: Որքան ջահել է նա, որքան չքնաղ է: Նրա մէջ է ամփոփած իմ կեանքը, նրա մէջ են ամփոփւում իմ բոլոր ցանկութիւնները: Ձեմ գնալ, չեմ կարող:

Նայում եմ նրան ու խելքս կորցնում զմայելելուց ու միևնոյն ժամանակ ցաւից, որ նրա կողքին նստած է մարդը: Այդպէս երկար շարունակել չի կարող, — թող նա ոչ դիւ չստանանի, միայն թէ նրան պատկանած չլինի: Նա հասկանում է ջղերս զալարող տանջանքը, բայց հասկանում է ոչ այն չափով, որքան հարկաւոր է: Մարդուն նա չի սիրում, բայց նրա հետ կենակցութիւնը օրինաւոր է համարում: Այդ մտածելիս քիչ է մնում ատամներս զրծտացնեմ,

որովհետեւ ինձ թւում է, ընդունելով որ այդ օրինաւոր է, նա ինքն իրան ստորացնում է: Իսկ այդ չեմ կարող ներել մինչեւ անգամ նրան: Աւելի լաւ կը լինէր մի անգամ մեռնէր պրծնէր: Այն ժամանակ նա իմը կը լինէր, որովհետեւ նրա օրինաւոր մարդը կը մնար այսօրեղ, իսկ ես ոչ: Այդ պատճառով ես նրա համար աւելի օրինաւոր եմ քան Կրօմիցկին: Երբեմն-երբեմն ինձ տարօրինակ բան է պատահում: Երբ որ ինքս ինձ շատ տանջում-մաշում եմ, երբոր միտքս մի ուղղութեամբ լարւած մտածմունքիս շնորհիւ սկսում է տեսնել այնպիսի հեռաւոր տարածութիւններ, որ նորմալ դրութեան մէջ անհնար է տեսնել, վրաս այնպիսի հաւաստիութեան բողոքներ են գալիս, թէ Անեկիան ինձ է պատկանում, իմն է կամ իմն է լինելու, — որ երբ այդ դրութիւնից սթափւում եմ, զարմացմամբ եմ մտաբերում Կրօմիցկու գոյութիւնը: Կարելի է այդ բողոքներին ես անցնում եմ այն սահմանները, որ սովորաբար ոչ ոք չի անցնում կենդանի ժամանակ, տեսնում եմ բոլոր իրերը կատարեալ, ինչպէս նրանց իդէալն է և ինչպէս պէտք է լինեն արտաքին երևոյթներում: Ինչո՞ւ այդ երկու աշխարհները միմեանց չեն համապատասխանում և ինչպէս կարող են համապատասխանել միմեանց, չգիտեմ: Յաճախ ճկնում եմ վճռել այդ հարցը, զլուսս շշմում է և չեմ կարողանում հասկանալ այդ անհամապատասխանութիւնը, զգում եմ միայն, որ այդ անհամապատասխանութեան մէջն է կայանում անկատարութիւնն ու չարիքը: Այդ զգացմունքը սիրտ է տալիս ինձ, որովհետեւ եթէ, այդ այդպէս լինի, Անեկիայի Կրօմիցկուն պատկանելն էլ չարիքի արտայայտութիւն կը լինի:

11 չուլիսի.

Կրկին յուսախաբութիւն, կրկին խորտակումն իմ ծրագրերների. բաց էլի յուսոյ մի նշոյլ մնացել է մէջս, որ այդ խորտակումը վերջնական չի: Այսօր խօսեցի Կրօմիցկու հետ այն իշխանի մասին, որ ծախել է իւր կնոջը, և ինձնից մի ամբողջ պատմութիւն հնարեցի, որ Կրօմիցկու անկեղծութիւնը շարժեմ:

Անգլիացուն ու իր գնած կնոջը պատահեցինք ջրվեժի մօտ: Ես իսկոյն խօսք բաց արեցի նրա անսովոր գեղեցկութեան մասին ու վերջն աւելացրի.

—Այստեղ բժիշկը ինձ պատմեց, թէ ինչպէս է կատարւել այդ տու ծախսը: Դու չափից դուրս խիստ ես զաղում այդ իշխանի մասին:

—Ամենից առաջ ծիծաղս է գալիս նրա վրայ:—պատասխանեց Կրոմիցկին:

—Կան մեղմացող հանգամանքներ: Նա միայն իշխան չի եղել, այլ և մի մեծ կաշեգործարան է ունեցել: Նա գործը վարելիս է եղել պարտքով: Յանկարծ կաշւի արտահանութիւնը Ռուսաստանից հարեւան պետութիւնները անասնախոտի պատճառով արգելւում է: Այդ իշխանը տեսնում է, որ եթէ մի առ ժամանակ չդիմանայ, ոչ միայն ինքը կը սնանկանայ, այլ առւն տնաքանդ կանի հարիւրաւոր ընտանիքներ, որոնք հաւատացել իրանց փողը տւել են նրան: Սիրելիս, վաճառականը պէտք է վաճառական լինի: Գուցէ և վաճառականական բարոյագիտութիւնը տարբեր է ընդհանուր բարոյագիտութիւնից, բաց մէկ որ մարդ հաշուել է այդ բարոյագիտութեան հետ...

—Ուրեմն իրաւունք ունի ծախել մինչև անգամ իւր կնոջը,— հարցրեց Կրոմիցկին:—Ձէ: Մի պարտականութեան համար չպէտք է ոտնատակ տալ միւս, գուցէ աւելի սուրբ պարտականութիւնը...

Կրոմիցկին ոչնչով չէր կարող ինձ այնքան հիասթափեցնել ու զայրացնել, որքան այսպէս կարգին մարդու նման խօսելով: Սակայն եւ միանգամից յուսակտուր չեղաց: Գիտեմ, որ ամենաողորմելի մարդն անգամ ունենում է աւելի կամ պակաս ճոճուան Ֆրազների պաշար, ուստի շարունակեցի.

—Դու ինկատի չես առնում, որ այդ մարդը աղքատութեան կը մասնէր իրա հետ և իւր կնոջը: Համաձայնիր, տարօրինակ ձևով է հասկանում իւր պարտականութիւնները զէպի իւր մերձակորները այն մարդը, որ յանուն այդ պարտականութիւնների զրկում է նրանց վերջին կտոր հացից:

—Գիտես, ես սկի չէի կարծում, որ դու այդ աստիճան գործնական մարդ կը լինես:

Իսկ ես ինձ ու ինձ մտածեցի:

«Յիմար, չես հասկանում, որ այդ հայեացքները իմը չեն, այլ ուղղում եմ այդ հասկացողութիւնները քո ուղեղի մէջ հալցնեմ, և պատասխանեցի.

—Ես աշխատում եմ մանեկ այդ գործարանատիրոջ դուր թեան մէջ: Բացի այդ դու մի բան էլ ուշադրութեան չես առնում: Կինը կարող էր նրան չսիրել, այլ սիրել իւր այգիմեան մարդուն, իսկ նա կարող էր այդ բանն իմանալ:

—Որ այդպէս է մէկը միւսին արժի:

—Այդ ուրիշ հարց է: Գործը որ խորը քննենք, կը տեսնենք, որ եթէ նա անգլիացուն սիրելով այնուամենայնիւ հաւատարիմ է մնացել իւր առաջնայ մարդուն, այն ժամանակ նա մեր կարծածից թերեւս աւելի արժի: Դալով իշխանին, շատ կարելի է, որ նա հէնց լիրբ մարդ է, բայց քեզ եմ հարցնում, ի՞նչ պէտք է անի վաճառական մարդը այն դէպքում, եթէ մէկը զայ նրա մօտ ուստի. «դուք կրկնակի սնանկ էք, որովհետեւ ունէք պարտքեր, որ վճարել չէք կարող, և ունէք կին, որ ձեզ չի սիրում: Բաժանւիր այդ կնոջիցդ, և ես առաջինը խօսք կը տամ, որ նա կունենայ նիւթական ապահովութիւն ու հնարաւոր բախտաւորութիւն, երկրորդ՝ կը վճարեմ ձեր պարտքերը»: Սխար միայն այդպէս ասում են. ծախեց, ծախեց, — իսկ այդ իսկապէս ի՞նչ ծախել է: Մտածիր, որ այն վաճառականը ընդունելով այդ պայմանը, միանգամից թէ իւր կնոջն է ազատում դժբախտութիւնից (դեռ հարցէ, արդեօք հէնց այդպէս չպէտք է հասկանան մարդիկ իրանց ճշմարիտ պարտականութիւնները դէպի մերձաւորները) և թէ այն մարդկանցն է ազատում ազաբատութիւնից, որոնք հաւատացել են նրան...

Կրօնիցիկին մի րոպէ մտածեց, մոտկլը աչքից վայր քցեց ու պատասխանեց.

— Սիրելիս, պարծենում եմ, որ գործերում քեզանից աւելի եմ հասկանում, բայց քեզ հետ վէճի բռնել չեմ կարող, որովհետեւ դու ինձ լեզուակոխ կանես... Եթէ դու հօրիցդ միլիօններ չստանալիր ու փառաբան դառնայիր, էլի միլիօնների կը տիրանայիր... Դու ինձ գործը այն ձևով ներկայացրիր, որ Ասուած վկայ չեմ իմանում ինչ մտածեմ այդ Ռումանիացի սրիկայի մասին, այն գիտեմ միայն, որ կնոջ մասին պայման են կապել, որ, ինչ կուզես ասա, կեղտոտ բան է: Այդ մէկ, բայց այդ, քանի որ ես ինքս էլ մասամբ վաճառական եմ, կասեմ քեզ և հետեւեալը. — սնանկացած մարդու համար միշտ ելք կայ, կամ՝ նորից փող զատել ու հին պարտքերը

վճարել, կամ թէ չէ ատրճանակը ճակատին դատարկել: Այդպիսով նա պարտքերը վճարում է իւր արիւնով. իսկ կնոջը, եթէ կին ունի, ազատութիւն է տալիս և բաց է անում նրա առաջ նոր բախտի դռներ:

Այնպէս կատաղութիւնս եկաւ, որ Աստուած գիտի թէ ինչ կը տայի, որ նրա ականջին կարողանայի զոռալ՝ «Դու արդէն սնանկ ես, գոնէ այն կողմից, որ կինդ քեզ չի սիրում: Տեսնո՞ւմ ես ջըր-վէժը: Քեզ քցի այնտեղ ազատիւր նրան քեղանից և բաց արձ նրա առաջ նոր կեանքի դռները, ուր նա հարիւրապատիկ աւելի բախտաւոր կը լինի:

Բայց ես լուռ էի և աշխատում եի մարսել այն նոր համոզումը (որ ինձ համար շատ ու շատ դառն էր), եթէ ճիշդ է, Կրօմիցկին զուեհակահոգի մարդ է, ընդունակ է աշխարհի գործերի, ինչպէս օրինակ Գլուխովի ծախելը կամ կնոջ հաւատը ի չարը գործ դնելը, բայց իմ կարծածի չափ ողորմելի հոգու տէր չի: Ես չուսալսաբութիւն էի զգում ու տեսնում, ինչպէս են խորտակում այն ծրագիրները, որոնց հետ ժամանակաւորապէս կապել էի իմ գոյութիւնը: Դարձեալ ինձ անձար զգացի, դարձեալ տեսայ առջևս անապատ, դարձեալ փնացի օդում կախւած:

Այնու ամենայնիւ չէի կամենում ձեռքիցս թողնել այդ վերջին թելը. լաւ հասկանում էի, որ եթէ մի բան կարողանամ անել, լաւ թէ վատ մի կերպ կապրեմ, հակառակ դէպքում շատ հաւանական է, որ կը խելագարեմ: «Գոնէ հող պատրաստած կը լինեմ ապագայի համար,—մտածում էի ինձ ու ինձ,—և յամենայն դէպս Կրօմիցկուն կընտելացնեմ Անեղկայից բաժանւելու մոքին»: Կրկնում եմ, ինձ յայտնի չէր, թէ ինչպէս են նրա դրամական գործերը, բայց գիտենալով, որ առևտրական գործերում սնանկալը նոյնքան հնարաւոր է, որքան հարստանալը, այսպէս խօսեցի.

—Զգիտեմ ասածդ որքան յարմար է վաճառականական բարոյականութեան, բայց ուրախութեամբ խոստովանում եմ, որ այդ կարգին մարդուն վայել խօսքեր են: Եթէ ասածդ ուղիղ եմ հասկացել, դու զգում ես, թէ սնանկութեան դուռը հասած մարդը իրաւունք չունի կնոջն էլ իւր յետեւից աղքատութեան անդունդը տանել:

— Ես միայն ասում էի, որ կին ծախելը, երբ էլ լինի, ինչպես էլ լինի, լիրբ բան է: Ի վերջոյ կինը պէտք է վիճակակից լինի իւր մարդուն: Զուգեցինք այն կնոջը, որ համաձայն կը լինի խզել իւր ամուսնական կապերը միայն նրա համար, որ մարդը կորցրել է իւր կարողութիւնը:

— Ասե՛ք թէ կինը չհամաձայնի... Մարդը կարող է գլուխ բերել ապահարդանը կնոջ կամքին հակառակ: Այդ դէպքում ամեն մէկը պէտք է իւր պարտականութիւնը կատարի: Իսկ եթէ կինը տեսնի, որ բաժանելով բացի այդ կարող է և փրկել մարդուն, եթէ նա իսկապէս իւր պարտականութիւնները հասկացող կին է, պէտք է համաձայնի:

— Այդպիսի բաների մասին խօսելն անգա՛հ մարդու անախորժ է:

— Ինչո՞ւ: Մեղքդ է դալիս ուժմանիացին ինչ է:

— Զէ, Ասուած վկայ ես նրան միշտ կեղտոտ մարդ կը համարեմ:

— Նրա համար, որ չես կարողանում գործի վրայ օբիեկտիւ կերպով նայել: Բաց այդ զարմանալի չի: Այն մարդը, որի բոլոր գործերը յաջողակ են գնում, երբէք չի կարող հասկանալ սնանկի հոգեբանութիւնը, եթէ որ փիլիսոփայ չի, իսկ փիլիսոփայութիւնը միլիոններ վաստակելու հետ կապած չի լինում:

Այլ ևս չկամեցայ շարունակել այդ խօսակցութիւնը, որովհետեւ իմ ստորութիւնս ինձ համար էլ չափից դուրս զգւելի էր: Ինձ թւում էր, թէ ցանեցի մի սերմ, գուցէ շատ չնչին ու անզօր, որ կարողանայ աճել, գուցէ ձեռքիս կրկին մի թել կունենամ: Մի հանդամանք ինձ սիրա էր տալիս: Այն բոպէին, երբ սկսեցի համոզել Կրոմիցկուն, թէ նա այն կարծիքին է, որ սնանկացած մարդը պարտական է ազատ թողնել իւր կնոջը, նրա դէմքի վրայ նկատեցի անհանգստութեան ու զժգոհութեան նման մի բան: Նոյնպէս նկատեցի, որ նրա միլիոնների մասին խօսելիս նա կամացուկ հառաչեց: Նա շատ կը լինէր զրանից եզրակացնել, որ նրան սնանկութիւն է սպառնում, բաց ես կարող էի կարծել, որ նրա գործերը շատ էլ յաջողակ չեն, և ո՞վ գիտի թէ նրան ինչ վախճանի կը հասցնեն:

Եւ ես վճռեցի ամեն բան լաւ տեղափանալ: Այդ բոպէին ես

տարզ զգում էի ինչպէս թէ իմ մէջ երկու մարդ լինի: Մէկն ասում էր Արամիցկուն. «Ն[թ]է դու դէ[թ] մի փոքր տատանում ես, ես քեզ կօղենմ որ վայր ընկնես, և թէկուզ ինքս էլ ամբողջ կարողութիւնիցս զրկւելու լինեմ, քեզ մի հարածով կը տապալեմ: Այն ժամանակ ես գործ կունենամ կոտրած մարդու հետ և կը տեսնենք, արդեօք մի քանի պայմանագրութիւնների դու աւելի մեղմ անուն չես տալ, քան լրբութիւն անունը»: Սակայն դրա հետ միասին գիտացում էի, որ գործելու այդ եղանակը իմը չի, ես չեմ դրա մտածողը, այլ չգիտեմ մի տեղ կարգացել թէ մէկից լսել եմ,— և որ իմ յուսահատ դրութիւնս չլինէր, ես այդ միջոցին երբէք չէի դիմի, որովհետեւ նա իմ զգանքս է բերում ու միանգամայն հակառակ է իմ բնաւորութեանը: Փողը իմ կեանքում երբէք զեր չի խաղացել ոչ իբրեւ միջոց և ոչ իբրեւ նպատակ. ինձ անընդունակ էի համարում գործ ածել այդ տեսակ զէնք. զգում էի, ինչ ստորացումն է իմ ու Անեկայի համար մեր շարաքերութիւնների մէջ այդպիսի տարր մտցնելը: Զգանքս դնալով ածուս էր և ես հարցնում էի ինձնից. «Մի[թ]է այնքան ընկել ես, որ մինչև այդտեղ ես հասել, մի[թ]է այդպիսի ամանից էլ պէտք է խմես: Նայիր տես ինչպէս աւելի ու աւելի ես ստորանում. առաջ սկի մոքովդ էլ չէր անցնի այդպիսի բան, որ ի լրումն ամենայնի, զուցէ քեզ ոչ մի հետեւանքի չհասցնի և միայն քեզ նոյն իսկ քո աչքին արհամարելի դարձնի»:

Եւ յիրաւի, առաջ ամենևին զուրքս չէր զալիս, երբ հօրաքոյրս խօսք էր բաց անում Արամիցկու դրամական գործերի մասին ու կասկած չաշտնում նրա գործերի չաջողութեան մասին: Նախատեսնելով որ նա զուցէ ինձից երբ և իցէ օգնութիւն խնդրի կամ առաջարկի մասնակցեմ իւր գործերի մէջ, ես միտք էի անում ինչպէս վարւեմ այդպիսի դէպքում, և միշտ միևնոյն որոշմանն էի զալիս. ինձ խօսք էի տալիս մերժել նրա թէ մէկ և թէ միւս առաջարկութիւնը,— այնքան սիրտս չէր ուզում, որ իմ ու Անեկայի շարաքերութիւնների մէջ փողի հաշիւ խառնւի: Յիշում եմ, որ այդ ապացոյց էի համարում բնաւորութեանս նրբազգացութեան և զգացմունքներիս ազնւութեան: Իսկ այժմ բանն այնտեղ էր հասել, որ այդ զէնքի օգնութեանն եմ գիմում, կարծես բանկիր եմ եղել ու ամբողջ կեանքումս կռիւ եմ մղել փողով:

Բոլորովին հաւաստի կերպով տեսնում եմ, որ իմ վարմունքս ու մտքերս ինձանից աւելի վատ են, և յաճախ անկարող եմ լինում բացատրել, թէ ինչու է այդ այդպէս լինում: Հաւանական է նրա համար, որ չեմ կարողանում նեղ ու ծուռ անցքերից մեծ ճամբան դուրս գալ: Ես սիրում եմ մի ազնիւ կնոջ, մեծ է իմ սէրը, և սակայն այդ զուգադրութիւնից յառաջանում են ձախողակութիւններ, կախարդւած շրջաններ, որոնց մէջ փչանում է իմ բնաւորութիւնը, կորչում է անգամ նեարդերիս նրբութիւնը: Առաջ, երբ անկման րոպէներին դէն էի քցում բարոյականութիւնը, մէջս էլի մնում էր մի բան, մի տեսակ էսթետիկական զգացմունք, որի միջոցով բարին չարից տարբերում էի: Այժմ այդ էլ չի մնացել մէջս, կամ կայ, բայց անզօր է: Ախ, եթէ դրա հետ դռնէ կորցրած լինէի և զզւելի լինելու գիտակցութիւնը: Բայց չէ: Նա էլի կայ իմ մեջ նոյն չափով, միայն թէ դադարել է ինձ սանձահարելուց և ծառայում է միայն տանջանքներս սաստկացնելուն: Անելկալի սիրուց զատ մէջս ոչնչի համար տեղ չկայ, բայց գիտակցութիւնը տեղի կարտութիւն չունի: Գիտակցութիւնը բուն է դնում և՛ սիրոյ, և՛ ատելութեան, և՛ վշտի մէջ, ինչպէս խլիրդը (ракъ) հիւանդ կազմաւածքի մէջ: Ով իմ վիճակի միջ չի եղել, նա չի կարող հասկացողութիւն ունենալ վիճակիս մասին: Ես, ի հարկէ գիտէի, որ սիրացին յուզումներից կարող են ծնել շատ տանջանքներ, բայց այնքան էլ չէի հաւատում: Չէի կարծում, որ նրանք այդքան իրական ու այդքան անտանելի կը լինին: Այժմ միայն հասկացայ «գիտենալ» ու «հաւատալ» բայերի զանազանութիւնը, այժմ միայն հասկացայ մի Ֆրանսիացի հեղինակի այն խօսքերը՝ թէ «մենք գիտենք, որ պէտք է մեռնենք, բայց չենք հաւատում որ մեռնելու ենք»:

12 լուլիսի.

Այսօր երակս տենդային կերպով է խփում, գլուխս զժժում է: Պատահեց մի դէպք, որի յիշելուց անգամ իմ ամեն մի նեարդս տարսըռում է:

Հրաշալի օր էր, իսկ երեկոն աւելի հրաշալի էր. լուսնի լրումն էր: Վճռեցինք զբօսանք անել դէպի Հոֆգաշտէյն, միայն Պանի Յեւրեան ցանկացաւ տանը մնալ: Հօրաքոյրս, ես ու Կրովիցկին դուրս

եկանք ամարանոցից. Կրօմիցկին գնաց կառք վարձելու, իսկ մենք մնացինք ու սպասում էինք Անեկային, որը չգիտեմ ինչու ուշացաւ տանը: Շատ որ սպասեցինք չեկաւ, ես վազեցի նրան կանչելու և տեսայ նրան ամարանոցի վերին յարկից դէպի պարտէզը տանող ներքին պտուտակաձև սանդուղքի վրայ:

Լուսինը լուսաւորում էր ամարանոցի հակառակ կողմը, իսկ այս կողմը թաղւած էր խաւարի մէջ, այդ պատճառով Անեկան կամաց-կամաց էր իջնում սանդուղքներից: Պտուտականման սանդուղքը իջնում է համարեա ուղղահայեաց: Մի րոպէ եկաւ որ իմ զուլսը Անեկայի ոտների տակ գտնւեց, Հէնց որ ոտները տեսայ, իսկոյն երկու ձեռքով երկիւղածութեամբ բռնեցի և սկսեցի համբոյրներ դրոշմել նրանց վրայ սիրատուն: Չթուռնքներովս: Գիտէի, որ յետոյ տանջանքով պիտի քաւեմ այս մի րոպէ բախտաւորութիւնս, բայց չկարողացայ, ոյժ չունեցայ հրաժարել դրանից: Սակայն վկայ է Ստուած, թէ որքան երկիւղածութիւն կար շրթութունքներիս վրայ, որոնց չէի կարողանում հեռացնել այդ սիրելի ստներից, և որքան տանջանքների վարձատրութիւն էր այդ քաղցր րոպէն: Եթէ Անեկայի դիմադրութիւնը չլինէր, ես նրա ոտը պէտք է գնէի զլսիս ինչան աջն բանի, որ ինքս ինձ յախտեան նրա ստրուկն եմ դարձրել: Բայց նա իսկոյն յետ քաշւեց, իսկ ես վազեցի ներքև ու գոչեցի այնպէս, որ ձայնս հօրսքրոջս ականջին հասնի:

—Անեկան պատրաստ է, գալիս է:

Նա ուզէր չուզէր, պէտք է սանդուղքից իջնէր, որ նա առանց վախենալու կարող էր անել, որովհետև ես նրա առջևիցն էի գնում: Այդ րոպէին եկաւ և Կրօմիցկին ու կառքը բերեց: Անեկան մօտեցաւ մեզ ու ասաց.

—Ես եկայ, հօրաքոյր, ձեզանից ներողութիւն խնդրելու. մայրիկին չեմ ուզում մենակ թողնել: Դուք գնացէք, իսկ ես ձեզ համար թէյ կը պատրաստեմ:

—Ցելինան իրան հօ շատ լաւ է զգում,—քիչ զժգոհ պատասխանեց հօրաքոյրս,—հէնց նա է այս զբօսանքը մտածել յատկապէս քեզ համար:

—Այո, բայց...—սկսեց Անեկան:

Այդ միջոցին Կրոմիցկին մօտենալով մեզ ու տեղեկանալով թէ բանը ինչու՞ն է, չոր-չոր ասաց.

—Խնդրեմ չխանգարէք մեր զբօսանքը:

Անեկլան անխօս նստեց կառքը հօրաքրոջս կողքին: Չնայելով որ յուզւած էի, ես ուշ դարձրեցի թէ Կրոմիցկու տոնի վրայ և թէ Անեկլայի լուռ ու մոռնջ խոնարհութեան վրայ, և ուշ դարձրեցի գլխաւորապէս այն պատճառով, որ առաջուց նկատել էի, որ Կրոմիցկին այսօր աւելի ևս սառն է վերաբերւում դէպի Անեկլան քան առաջ: Նրա անախորժութեան այն ինձ անյայտ առիթները, որոնք մի անգամ արդէն սառնութիւն էին քցել նրանց մէջ, նորից կրկնւել էին և աւելի սաստկութեամբ: Բայց ժամանակ չունէի դրա մասին մտածելու: Անեկլայի ոտներին դրոշմած համբոյցներին թարւոյ տպաւորութիւնը համակել էր իմ ամբողջ էութիւնը: Միևնոյն ժամանակ զգում էի և՛ երջանկութիւն, և՛ ուրախութիւն, և՛ երկիւղ: Երջանկութեանս պատճառը հասկանալի էր ինձ, — ես ինձ միշտ երջանիկ եմ զգացել, երբ դիպել եմ թէկուզ Անեկլայի ձեռքին: Բայց ինչիցն է ուրախութիւնս:—Նրանիցն է, որ գուշակում էի, որ այդ անյողգոյզդ կինը չկարողացաւ պահպանել իրան իմ դէմ և այժմ անշուշտ ինքն իրան ասելիս կը լինի. «Ես էլ եմ թեք մակարդակի վրայ, ես էլ չեմ կարողանում ուղիղ մարդկանց երեսին նայել. մի րոպէ առաջ իմ ոտներին մօտ էր այն մարդը, որ ինձ սիրում է, և ես պէտք է մասամբ նրա զործակիցը լինեմ, որովհետեւ չեմ գնալ ու մարդուս չեմ ասիլ. պատժիր նրան, իսկ ինձ տար քո հետ»:

Գիտէի նոյնպէս, որ նա այդ չի կարող անել առանց աչքի տակ առնելու, որ դրանով մօր առողջութիւնը վտանգի կենթարկի և ընտանեկան ահազին փոթորիկ կը բարձրա յնի, իսկ եթէ կարողանայ էլ, միևնոյն է դարձեալ չի անի, վախենալով որ իմ ու Կրոմիցկու մէջ ընդհարում տեղի կունենայ: Եւ ինչ որ մի ձայն շշնջում էր ականջիս. — «Ո՞վ գիտի, ո՞ւմ համար է աւելի շատ վախենում»:

Յիրաւի նրա դրութիւնն էլ բացառիկ էր, իսկ ես օգտուում էի նրա դրութիւնից բոլորովին գիտակցաբար, առանց ամենևին խղճահարսելու, ինչպէս զօրավարը պատերազմի դաշտում օգտուում է հակառակորդի անցած ուղիով: Ես ինձ միայն մի հարց տուցի՝ թէ «արդեօք կանէի նոյն բանը, եթէ իմանայի, որ դրա հա-

մար Կրոմիցկին ինձ անձնական պատասխանատուութեան կենթարկի»: Տեսայ որ կարող եմ կատարեալ բարեխղճութեամբ պատասխանել «այո», և վճռեցի, որ պարտաւոր չեմ ուրիշ նկատումներով առաջնորդել:

—Չէ... Կրոմիցկին ինձ համար միայն նրանով է երկլուղալի, որ կարող է Անեկային վերցնել և ով գիտէ ուր տանել: Յուսահատութիւնն ինձ տիրում է այդ միտքն անելիս:

Բայց այդ բոլորէին կառքի մէջ ես ամենից շատ Անեկայիցն էի վախենում: Ի՞նչ կը լինի վաղը: Ի՞նչ աչքով կը նայի նա իմ աչսօրւան վարմունքի վրայ: Իբրեւ լրբութեան վրայ կը նայի, թէ իրրեւ սիրոյ խանդի վրայ, սիրոյ, որ մօտենում է աստաճացման: Ես զգում էի այն, ինչ որ զգում է այն շունը, որ վատ բան է արել ու վախենում է ծեծից: Անեկայի դիմացը նստած, աշխատում էի նայել նրա երեսին այն բոլորին, երբ լուսնի շողքը նրա վրայ էր ընկնում, և կարգաւ նրա երեսի վրայ, թէ ինձ ինչ է սպասում: Այնպէս հեղութեամբ էի նայում նրան, այնքան խեղճ էի երեւում, որ ինքս ինձ խղճում էի. ինձ թւում էր, որ նա էլ պէտք է ինձ խղճալիս լինէր: Բայց նա ինձ չէր նայում ու լսում էր կամ ցոյց էր տալիս թէ լսում է Կրոմիցկուն, որ երկար ու բարակ բացատրում էր հօրաքրոջս, թէ ինչ ահագին օգուտներ կը քաղէր, եթէ Պաշտէյնը իրանը լինէր: Հօրաքրոջս գլխով էր անում, իսկ նա ժամանակ առ ժամանակ կրկնում էր՝ «այնպէս չի, հը»: Ակներեւ է, որ նա ուզում էր հօրաքրոջս համոզեցնել, թէ ինքը վաճառականական հանճարեղ ընդունակութիւնների տէր է և կարող է ամեն մի գուօշ տաննապաիկ դարձնել:

Հօֆգաշտէյն տանող ճանապարհը կտրած տարած է ժայռերի միջով և օձապտոյտ գալարւում է անդունդի վերեւում: Լուսնի շողքը ճամբադարձին մէկ մեզ վրայ էր ընկնում, մէկը մեր տիկիներին վրայ: Անեկայի երեսի վրայ տեսնում էի միայն մեզմ վիշա, բայց այդ էլ ինձ սիրտ էր տալիս,--լաւ էր որ խստութիւն չկար: Նա ոչ մի անգամ չնայեց ինձ, բայց ես ինքս ինձ քաջալիրում էի ենթադրելով, որ նա ինձ այն ժամանակ է նայում, երբ ինքը մըթնում է լինում, իսկ մեզ լուսաւորում է լուսնեակը, և ինքն իրան մտածում: «այնու ամենայնիւ ոչ ոք ինձ աշխարհի երեսին այնպէս

չի սիրում, ինչպէս նա, և նրանից անբախտ մարդ չկայ: Եւ իրօք, այդ զուտ ճշմարտութիւն էր:

Մենք երկուսով լուռ էինք, խօսում էր միայն Կրօմլիցկին: Նրա խօսքերը խառնում էին գետի ձայնի հետ, որ հոսում էր անդունդի խորքում, և անւարգելի (ТОРМАЗЫ) անախորժ ձռնուցի հետ, որով կառավար անդադար դանդաղեցնում էր կառքի ընթացքը: Այդ ձռնուցը գրգռում էր իմ նեարգերը, բայց միւս կողմից հանգստացնում էր նրանց տաք ու պայծառ գիշերը: Արդէն ասել եմ, որ լուսնի լրումն էր. լուսինը դուրս եկաւ սարերի ետեւից և լողում էր ջինջ երկնակամարի վրայ, լուսաւորելով Բօքշտէյնկոդլ լեռների կատարները, Տիշկարի սառցակոյտերը և Գրանկոդլի անդրնդահերձ լանջերը: Գազաթների վրայի ձիւնը փայլում էր բաց-կանաչաւուն, մետաղեայ գոյնով, և որովհետեւ լեռների ստորոտները խաւարի մէջ միախառնւում ու մի գորշ զանգւած էին կաղմում, այդ պատճառով գազաթները երևում էին կարծես օդի մէջը կախւած, օդեղէն, հողից բոլորովին կտրւած: Այնքան վեհութիւն կար այդ ամբողջ տեսարանի մէջ, այնպիսի անդորրացնող հանգստութիւն էր բուրում քնի մէջ թաղւած լեռներից, որ ակամայ միտս եկան այս խօսքերը.

Օ՛, այսպիսի րոպէներին ոգեշունչ

Երկու սրտեր արտասւում էին լուռ ու մունջ,

Եւ մոռանում, իրար ներում ամեն բան,

Ինչ ներելով՝ կարող են տալ մոռացման ¹⁾:

Սակայն նա ինչ բան պէտք է ների ինձ,—այն, որ համբուրեցի նրա սրտը: Օ՛, եթէ նա տաճարի մէջ դրւած սուրբ արձան լինէր, դարձեալ իրաւունք չէր ունենայ բարկանալու. ու վիրաւորւելու իմ ջնկեռանդութեան այդ տեսակ արատաշատութեան համար: Եթէ բանը բացատրութեան հասնի, ես այդ նրան կասեմ, և նա պէտք է համաձայնի ինձ հետ:

Յաճախ միտք եմ անում, որ նա նրա համար է ինձ հետ անիրաւացի վարւում, որ գուցէ առանց ինքն իրան հաշիւ տալու, առանց ամեն բանի իւր անունը տալու, իմ սէրը համարում է

¹⁾ Թարգմ. Ա. Մատուրեանց:

լով երկրային զգացմունք, իբրև զգայական սիրոյ մի խանդ։ Ես էլ զիտեմ, որ իմ սէրը հիւսած է զանազան թեւերից, բայց Անեկական կարծես չի հասկանում այն, որ իմ սիրոյ մէջ կան վերին աստիճանի իդէալական, կարծես պօէզիայից մանւած թեւեր։ Երբեմն կիրքս քնում է, ես սիրում եմ նրան հոգեկան սիրով, այնպէս, ինչպէս մարդիկ կարծում են թէ սիրում են պատանեկան հասակում։ Երբեմն էլ այն միւս մարդը, որ նստած է իմ մէջ, որը ամեն բան քննում, կշռադատում ու յաճախ ծաղրում է, ասում է ինձ՝ «ես չեի իմանում, որ դու սիրում ես զիմնազիտի ու ռոմանտիկի պէս»։ Բայց ճիշտ որ այդպէս է։ Կարելի է այդ ծիծաղելի է, բայց ես այդպէս եմ սիրում և զգում եմ, որ իմ սէրը շինծու չէ և միևնոյն ժամանակ թշուառ սէր է, որովհետեւ նրան միակողմանի են դատում և հարկաւոր նշանակութիւնը չեն տալիս նրան։

Ահա հիմա էլ այն բուլեներիցն է, երբ կիրքս քնած է լինում, և ես սրտիս խորքում ասում էի Անեկային՝ «Դու կարծում ես իմ մէջ չե՞ս հնչում իդէալական լարեր։ Ահա հէնց այս բուլենս քեզ սիրում եմ այնպէս, որ դու կարող ես, մինչև անգամ պէտք է ընդունես իմ սէրը... և վայ կը գայ օրիկ, եթէ մերժես, որովհետեւ ընդունելով ինքդ ոչինչ չես կորցնի, իսկ ինձ փրկած կը լինես կորստից։ Ես ինձ ու ինձ կասեի՝ ահա իմ աշխարհը, ահա այն սահմանները, որոնց մէջ հնարաւոր է իմ գոյութիւնը, գոնէ կունենայի մի բան, կաշխատէի բնութիւնս փոխել, ընդունել քո հաւատը ու մի անգամ ընդ միշտ հետևել քո դաւանանքներին»։

Ինձ թւում էր, որ նա կարող է ու պէտք է ընդունի այդ պաշմանը, որից յետոյ մեր մէջ ու մեզ համար մշտական խաղաղութիւն կը լինէր։ Ես ինձ խօսք տւեցի, որ այդ նրան կասեմ, և եթէ ընդունենք, որ մեր հոգիները յաւիտեան միմեանց են պատկանում, զրանից յետոյ մենք կարող ենք մինչև անգամ միմեանցից բաժանուել։ Սիրտս հաստատ վկայում էր, որ նա կը համաձայնի, որովհետեւ կը տեսնի, որ առանց զրան մեր երկուսիս կեանքն էլ անտանելի կը լինի։

Ժամը ինն էր, երբ հասանք Հովհաշտէյն։ Գիւղը բոլորովին հանգիստ էր, ոչ մի տան կրակ չկար, հիւրանոցի առաջ ոչ մի

կառք չկար: Լոյս էր երևում միայն հիւրանոցի պատուհաններէց. Մեղերի մօտ տղամարդկանց մի համերգ բաւական լաւ երգում էր: Մենք մէկ ուղեցինք առաջարկել երգիչներին, որ մի բան էլ մեզ համար երգեն, բայց դուրս եկաւ, որ երգողները զիւղացիք չեն, այլ Վիէննացի ալպինիստներ, որոնց ի հարկէ չէր կարելի առաջարկել, որ վտղով երգեն: Գնեցի ալպեան ծաղիկների երկու փունջ, մէկը տեցի Անեկային, միւսի կապը քանդեցի և որպէս թէ յանկարծ ձեռքիցս այնպէս վայր գցեցի, որ ընկաւ Անեկայի ոտների մօտ:

—Թող մնայ այդպէս,—ասացի ես,—տեսնելով որ նա ուղւում է ժողովել ծաղիկները, և գնացի երրորդ փունջը գնելու հօրաքրոջս համար:

Դէպի կառքը վերադառնալիս լսեցի Կրոմիցկու ձայնը.

—Այստեղ էլ, Հոֆգաշտէյնում, եթէ մարդ մի հիւրանոց շինի, հարիւրին հարիւր կաշխատի:

—Քո խօսքը էլի նոյն բանի մասին է,—հարցրեցի հանգիստ կերպով:

Այդ հարցը դիտմամբ տեցի: Այդ նոյնն էր, եթէ ասէի Անեկային. «Տես, մինչ իմ սիրտն ու հոգին միայն քեզնով է լիքը, նրա ուշ ու միտքը միայն փողի հետ է: Համեմատիր մեր զգացումները ու մեզ երկուսիս»:

Համարեա հաւատացած եմ, որ նա միտքս հասկացաւ: Վերադառնալիս մի քանի անգամ փորձ արեցի խօսակցութիւն սկսել, բայց ինձ չյաջողեց Անեկային խօսացնել տալ: Երբ մենք կանգ առանք ամառանոցի դռանը, Կրոմիցկին գնաց տիկիներին հետ, իսկ ես մնացի կառապանի փողը վճարելու: Անեկան թէյ խմելու չեկաւ: Հօրաքրոջս ասելով նա մի քիչ յոգնած է ու գնաց քնելու: Ես անհանդիստ եղաց ու սկսեցի ինքս ինձ յանդիմանել, որ նրան տանջում եմ: Ոչինչ այնքան ծանր չէ սիրող մարդու համար, քան այն գիտակցութիւնը, թէ ինքը չարիք է պատճառում ու վնասում սիրած էակին: Թէյը խմեցինք լուռ, որովհետեւ հօրաքրոջս քունը տանում էր, Կրոմիցկին նոյնպէս կարծես անհանդիստ լինէր, իսկ ես ինձ աւելի ու աւելի էի կրճում ներքուստ: «Երևում է, որ իմ վարմունքը պիպել է նրա սրտին,—մտածում էի ես: Զէ որ

նա միշտ նայում է ամեն բանի վրայ ամենափառ կողմից: Եւ զգում էի, որ նա վաղը ինձանից կը խուսափի և մեր մէջ կապած հաշտութիւնը խախտած կը համարի իմ կողմից: Այդ մտքերը սիրտս երկիւղով լցրեցին և ես վճռեցի վաղը գնալ կամ ճիշտը փախել Վիէննա, առաջինը նրա համար, որ Անեկայից վախենում էի, երկրորդը՝ որ տեսնեմ Խաատովսկու հետ, իսկ երրորդը՝ մտածում էի, — և միայն Ասուած գիտէ որքան դառնութիւն կար այդ մտածմունքիս մէջ, — մտածում էի որ լաւ կը լինի ազատեմ Անեկային ինձանից և գոնէ երկու օր հանգիստ թողնեմ նրան:

15 լուլիսի.

Որքան դէպքեր: Ձեմ խմանում, որից սկսեմ, որովհետեւ ամենավերջինը ինձ համար աւելի նշանաւոր է: Կեսնքումս ոչ մի անգամ աւելի պարզ ապացոյց չեմ ունեցել, որ նա անտարբեր չէ դէպի ինձ: Բոլոր ճիգս պէտք է թափեմ պատմութիւնս կարգով անելու համար: Համարեա հաւատացած եմ, որ Անեկան կը համաձայնի իմ անելիք առաջարկութիւններին: Մէկ-մէկ գլուխս սկսում է պտոյտ գալ:

Սկսեմ կարգով:

Գնացի Վիէննա: Վերադարձայ այս երեկոյ: Բերել եմ մի քանի տեղեկութիւններ, որոնց մասին կը խօսեմ հօրաքրոջս հետ: Տեսայ Խաատովսկուն և խօսեցի հետը: Ի՛նչ խելքը զլինին տղայ է... Նզան պէս աշխատում է կլինիկայում. ժողովրդական ընթերցանութեան համար կազմում է առողջապահական գիտելիքներ, որ նրա գրավաճառ եղբայրը պէտք է հրատարակի կուպէկանոց բրոշիւրների ձևով. գործունեայ անդամ է զանազան բժշկական և ոչ բժշկական ընկերութիւնների, և այդ բոլորից յետոյ կարողանում է ժամանակ գտնել զանազան ուրախ, գուցէ մինչև անգամ շատ ուրախ քէյֆեր անելու Kaerthner-strasse-ի շրջակայքում: Ասուած վկայ չգիտեմ, այդ մարդը երբ է քնում: Բաց չնայելով դրան, անաշէնը կարծես ափզհայ լինի: Ի՛նչ յորդառատ կեանք է, տեղն ու տեղը եւ է գալիս:

Առանց աւելորդ ոլորաբանութեան յայտնեցի նրան Վիէննա գալուս պատճառը:

— Զգիտեմ յայտնի է ձեզ թէ ոչ, — ասացի ես, — որ ես ու հօրաքոյրս մեծ փող ունենք. վաստակագործելու (спекулировать) մենք ամենևին կարիք չունենք, բայց եթէ կարելի լինէր շահեցնել մեր ունեցած իրամագլուխը այնպիսի մի գործում, որ կարգին շահ բերէր, այդ շահը մեր հայրենիքին կը յատկացնէինք. բացի այդ կարծում եմ, որ պան Կրոմիցկուն էլ զրանով ծառայութիւն մատուցած կը լինենք, այնպէս որ թէ մենք շահած կը լինէինք թէ նա: Անկեղծ ասած, զէպի ինքը Կրոմիցկին մենք անտարբեր ենք, բայց որովհետեւ նա բարեկամ է դարձել մեզ, ինչու նրան էլ օգնած չլինենք, — ի հարկէ այս հաստատ պայմանով, որ մենք ինքներս ոչ մի վնաս չկրենք:

— Եւ դուք ուզում էք իմանալ, ինչպէս են նրա գործերը:

— Պարզ բան է: Նա յոյս ունի, և իմ կարծիքով անկեղծ յոյս ունի, որ իւր գործերը փայլուն վախճան կունենան: Բայց բանը նրանումն է, արդեօք չի սխալւում նա: Ուստի եթէ ձեր եղբայրը ձեզ մի բան գրել է, չէք կարող արդեօք ինձ հաղորդել, — ի հարկէ եթէ այդ գաղտնիք չէ, — թէ ինչ է գրել: Մէկ էլ դուք մեզ շատ պարտաւորեցրած կը լինէք, եթէ խնդրէիք նրան, որ մեզ ամեն բան մանրամասնօրէն գրի: Այդ դէպքում հօրաքոյր յոյսը նրա մօտիկութեան վրայ է և այն կապի վրայ, որ կար մեր ու նրա մէջ աւելի առաջ, քան նրա ու Կրոմիցկու մէջ:

— Լաւ, եղբօրս կը գրեմ, — ասաց բժիշկը: — Նա մինչև անգամ ինձ դրա մասին մի բան գրել է, բայց չեմ յիշում թէ ինչ, որովհետեւ այդ ինձ քիչ էր հետաքրքրում:

Նա սկսեց թղթերը քրքրել, գտաւ եղբօր նամակը ու սկսեց բարձր կարդալ:

«Աեանքը անասելի տաղտկալի է: Կին քիչ կայ, իսկ սիրուն կնիկ դեղապետի համար էլ չի գտնւի»: Զէ, այս չի... Այ թող Վիէննա գայ... Ահա այս է, գտայ:

Բժիշկը մի երես դարձրեց ու տւեց ինձ: Ինձ հետաքրքրողը մի քանի տողում էր: «Ինչ վերաբերում է Կրոմիցկուն, — նաւթի գործում մեր բանը բուրգ է: Բոռշիլիւների հետ կուելը անկարելի է, իսկ նա ուզում էր Բոռշիլիւի հետ ոտ մեկնել: Մի կերպ դուրս պրծանք, բայց մեծ կորուստով: Նաւթ մատակարարելու համար

ահագին փող վեր դրեցիք և մենավաճառութիւնը մեր ձեռքը դրեցինք. այդ մի կողմից միլիոնների յոյս է տալիս, միւս կողմից՝ ահագին պատասխանատուութիւն կայ մեր վրայ: Ամեն բան կախաւած կը լինի մեր ճարտարութիւնից ու հմտութիւնից: Աշխատում ենք գործը որքան կարելի է լաւ տանել և ապագայի վրայ նայում ենք մեծ յոյսով: Հարկաւոր է միացն փող և փող: Մեզ վճարում են որոշեալ պայմանաժամերին, իսկ մեզ նաւթ տեղները փողը կանխիկ են պահանջում, և բացի այդ յաճախ վատ ապրանք են տալիս: Այդ բոլորը այժմ իմ վզին է բարձած» etc:

— Փող մենք կը տանք, — ասացի ես կարդալը վերջացնելով:

Վերադարձին ես երկար մտածում էի դրա մասին և իմ մէջ լաւ բնազդումներս էին շարժւում: «Ինչ լինում է լինի, — ասում էի ինձ ու ինձ, — իսկ այժմ աւելի լաւ ու աւելի հեշտ չի լինի արգեօք, Կրոմիցկուն փնտրելու փոխարէն օգնել նրան: Անեկան կը կարողանայ գնահատել իմ վարմունքը ու հասկանալ իմ անշահախնդրութիւնը, իսկ ապագան թող որոշի ինքը Նախախնամութիւնը»: Սակայն, աւելի խորը նայելով իմ ներսը, տեսայ, որ այդ մտքերումս էլ եսականութիւնը որոշ չափով դեր է խաղում: Ես նախատեսում էի, որ Կրոմիցկին փողը ստանալուց չետոյ իսկոյն կերթայ Փաշտէյնից և ինձ կազատի այն բոլոր տանջանքներից, որ նրա ներկայութիւնը պատճառում է ինձ: Անեկան կը մնայ մենակ ու երախտապարտ ղէպի ինձ և զժգոհ, գուցէ և բոլորովին նեղացած Կրոմիցկուց, որ ընդունեց իմ օգնութիւնը: Ինձ թւում էր, որ այդ դրութիւնը կը բանայ իմ առաջ նոր հորիզոններ: Իսկ նախ և առաջ իմ ցանկութիւնս էր ինչ էլ լինի Կրոմիցկուն այստեղից ռադ անել:

Այնպէս խորը մտածմունքների մէջ էի ընկել, որ սկի չնկատեցի Լէնդ-Պաշտէյն հասնելս, ուր տեսայ բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորւածներ. — կողքի երկաթուղու զծի վրայ, որ տանում է Յելիամ Զէ, քիչ առաջ գնացքը խորտակւել էր: Բայց այդ սարսափելի տպաւորութիւնը կառք նստելուն պէս բոլորովին անցաւ: Անեկայի մոտին մտածմունքս նորից տիրեց ինձ: Զգում էի, որ ինչ էլ լինի մեր յարաբերութիւնները պէտք է փոխւեն. պէտք է մի բան անել, թէ չէ իմ էլ, Անեկայի էլ բանը վատ կը լինի:

Բայց թե՛ անել: Մի բան էի միայն պարզ տեսնում՝ որ նա տանջում ու սպանում է ինձ, իսկ ես՝ նրան, որովհետև մինչ ես փափագում եմ ունենալ ամեն բան, իսկ նա չի համաձայնում և ոչ մի բանի, դրանից մեր մէջ այնպիսի տարաձայնութիւն է ծագում ու այնպիսի դրամա է տեղի ունենում, որ լաւ կը լինէր նա իրան ջրվէժը դցէր, իսկ ես կառքի ու ձիերի հետ միասին անդունդը գլորէի: Բացի այդ ես այն համոզմանն եկայ, որ ոչ մի բանի չհամաձայնող կի՛նն անգամ վերջ ի վերջոյ իւր մէջ սարսափելի երկունութիւն պէտք է զգայ, եթէ նրան սիրի մի օտար մարդ: Հէնց վերցնենք Անեկային. նա ինձ ամենաչնչին զիջումն անգամ չի արել, իսկ ես այնու ամենայնիւ ժամանակ առ ժամանակ համբուրում եմ նրա ձեռքերն ու ոտքերը, այնու ամենայնիւ նա պէտք է լսի իմ խոստովանութիւնները, իւր մօրից ու մարդուց զաղտնի պահի, միշտ զգոյշ կենայ, ինքն իրան ու ինձ հետեւի առանց երբեք իմանալու, թէ մինչև ուր կարող եմ հասնել: Այդպիսի պայմաններում երկուսիս համար էլ կեանքը անկարելի է: Այս բոլորին պէտք է վերջ տալ:

Վերջապէս ինձ թւաց, թէ գտայ խնդրի լուծումը: Թող Անեկան, — մտածում էի ես, — համաձայնի և ընդունի իմ սէրը. թող նա ինձ ասի. «Ես քոնն եմ, հոգով ու սրտով քոնն եմ և յաւիտեան քոնը կը լինեմ: Բայց դու պէտք է բաւականանաս զրանով: Եթէ դու այդ պայմանին համաձայնես — մեր հոգիները նոյն ընկից նշանւած կը լինեն»:

Եւ սրտիս խորքում վճռեցի ընդունել այդ պայմանը: Երեւակայում էի, որ ձեռքս կը տամ նրան ու կասեմ. «Անում եմ քեզ ու երդում, որ քեզանից էլ ուրիշ ոչինչ չեմ պահանջի, որ մեր կապը է և կը լինի զուտ հոգեկան, բայց և այնպէս մեր կապակցութիւնը կը համարեմ որպէս ամուսնութիւն և քեզ՝ որպէս իմ կինը»:

Բայց հրակաւոր է արդեօք այդ տեսակ պայմանադրութիւն, և վերջ կը տանջ արդեօք նա մեր տանջանքներին: Ինձ համար այդ հաւասար կը լինէր բաղձանքներիս ու յոյսերիս վերին աստիճանի սահմանափակման, բայց այնուհետև կունենայի իմ սեփական աշխարհը, որի մէջ Անեկան կը պատկանէր ինձ անբաժան: Բացի

դրանից այդ կօրինազործէր իմ սէրը, իսկ այդ այնքան մեծ նշանակութիւն ունէր, որ պատրաստ էի առողջութիւնս զոհել, միայն թէ Անեղիան օրինաւոր համարէր իմ սէրը: Այդ իմ աչքում մի նոր ապացոյց է, թէ որքան սաստիկ եմ սիրում այդ կնոջը, ինչպէս հոգով սրտով ցանկանում եմ, որ նա որ և է կերպով պատկանի ինձ:

Այո, ես այն աստիճան վռիւլեւ եմ, որ այդ գնով պատրաստ էի համաձայնել ամեն տեսակ սահմանափակումներ:

Ուստի սկսեցի ուշի ուշով կշռադատել միայն այն հարցը, թէ կը համաձայնի՞ արդեօք Անեղիան:

Ինձ թւում էր, որ նա պէտք է համաձայնի:

Նս կարծես արդէն լսելիս լինէի, թէ ինչպէս եմ ասում նրան.

— Եթէ դու յիշաւի սիրում ես ինձ, տես, միւսնոյն բանը չի՞ արդեօք, այդ քո բերնով ինձ ասած կը լինես թէ ոչ: Ի՞նչ կաց աւելի վսեմ, աւելի սուրբ այն սիրուց, որ ես պահանջում եմ քեզանից: Նս տալիս եմ քեզ իմ ամբողջ կեանքը, — թող քո խիղճն ասի, պարտական չե՞ս արդեօք ինչպէս հարկն է ընդունել այդ զոհաբերութեան նշանակութիւնը: Ձէ որ այդ նոյնն է, ինչ որ Բէատրիչէի վերաբերումը դէպի Գանտը: Այդ տեսակ սիրով մինչև անգամ հրեշտակները կարող են միմեանց սիրել: Դու ինձ հետ մօտ կը լինես այնպէս, ինչպէս երկու հոգիներ կարող են միմեանց մօտ լինել, և միւսնոյն ժամանակ այնքան հեռու, որպէս թէ ապրելիս լինէիր այս սարերից ամենաբարձրի գագաթին: Եթէ այդ սէրը երկրային սէր չէ, եթէ սովորական մարդիկ այդպէս սիրել չեն կարող, ուրեմն ևս առաւել դու չպէտք է մերժես, որովհետև ընդունելով այդ սէրը, դու կը մնաս մաքուր, որպէս ձիւն, և միւսնոյն ժամանակ փրկած կը լինես ինձ, — ձեռք կը բերես լիակատար հանգստութիւն ու բախտաւորութիւն, որքան որ այդ հնարաւոր է երկրիս վրայ:

Նս ինձ անկեղծ ընդունակ էի համարում այդպէս միատրկաբար սիրելու և հաւատալու, որ այդ հոգեղէն ու վաղանցուկ բոժոժից կը գոյանայ անմահ թիթեռ, որ կտրւած երկրային պաշտմաներից, կը թռչի մի մոլորակից դէպի միւսը, մինչև որ կը միանայ ամենազոյնութեան հոգու հետ: Առաջին անգամ մաքուր անցաւ,

որ ես ու Անելկան, ինչպէս ձեռք, կարող ենք ոչնչանալ, իսկ մեր սէրը մեզնից յետոյ էլ զոյութիւն կունենայ, կը մնայ յաւիտեան, և հէնց այդ կը լինի մեր անմահութիւնը: Ո՞վ գիտի,—մտածում էի ես,—արդեօք հէնց այդ չէ միակ ու իսկական անմահութիւնը: Որովհետեւ պարզ տեսնում էի, որ իմ զգացմունքի մէջ կայ մի բան, որ յաւիտենական է և անցաւոր երեւոյթների կարգից դուրս է: Պէտք է մարդ սաստիկ սիրի, որ ընդունակ լինի այդպէս զգալու ու այդ տեսակ մտածմունքներ ունենալու. նոյնպէս պէտք է մարդ չափից դուրս զգալիս լինի և, շատ կարելի է, խելագարւելուն մօտ:

Խելագարութեան դեռ շատ մօտ չեմ, բայց գնալով աւելի եմ խորասուզւում միատիկականութեան մէջ և ինձ բախտաւոր եմ զգում, երբ այնքան անհետանում ու ցիր ու ցան եմ լինում, որ այլ ևս չեմ կարողանում գտնել իմ սեփական «ես»-ը: Եւ զիտեմ թէ ինչ է դրա պատճառը: Ի՞նչ երկաբաժանումներս, իմ ներքին կրիտիկան միշտ բաւական են եղել խորտակելու կեանքի բոլոր հիմունքները, ուրեմն և քայքայելու այն պայմանական բախտաւորութիւնը, որ կարող են տալ այդ հիմունքները: Իսկ այնտեղ, ուր հաւաքաբանութիւնը անդի է տալիս զգացումներին ու տեսիլքներին, ես իմ կրիտիկայով ոչինչ չեմ կարողանում անել, հանգստանում եմ և անասելի թեթեւութիւն եմ զգում:

Այդպէս հանդստանում էի ծանապարհին՝ Գաշտէյն գնալիս: Տեսնում էի ինձ ու Անելկային հողեպէս նշանւած, անդորր, հալարտանում էի մտածելով, որ այնու ամենայնիւ կարողացայ դուրս պրծնել կախարչւած շրջանից և հնար գտայ բախտաւոր լինելու: Ես հաւատացած էի, որ Անելկան ուրախութեամբ ձեռքը կը տայ ինձ այդպէս միատեղ ծանապարհորդելու համար:

Բայց չանկարծ սթափւեցի ինչպէս քնից ու նկատեցի, որ իմ սեփական ձեռքը ամբողջապէս արեան մէջ է: Բանից երեւոյց, որ իմ կառքով վիրաւորներ են կրել զնացքը խորտակելուց յետոյ: Կատապանը չի նկատել, որ կաշէ բարձերի ծալքերում բաւական արիւն է ժողովւել: Իմ միատիկականութիւնը այնքան հեռու չի գնում, որ կարողանայի հաւատալ, թէ զերաշխարհային ոյժերը մասնակցութիւն ունեն մարդկային կեանքի մէջ, մանաւանդ զանազան բարի կամ չարագոյն շահ նշանների ու նախազգուշացումների

ձեռով: Ես նախապաշարեալ չեմ, բայց կարողանում եմ ինձ նախապաշարեալ մարդու դրութեան մէջ զննել, ուստի և կարողանում իմ նշմարել մի օտարոտի բան: Զարմանալի էր առաջինը՝ որ հէնց այն կառքում, որի մէջ սկսեցի գծագրել նոր կեանքի պատկերներ, շատ հաւանական է, որ քիչ առաջ հանգել է մէկ ուրիշի կեանքը, երկրորդ՝ որ համաձայնութեան ու անդորրութեան մասին երազում էի արիւնաթաթախ ձեռքերով: Այդ տեսակ զուգադրութիւնը ամեն նեարդոտ մարդու սիրտ լցնում են միշտ տխուր ոչ—նախապաշարումներով—այլ տալաւորութիւններով և կարող են մռայլ սուեր գցել նրա մտածմունքների ամբողջ ընթացքի վրայ:

Իմ մտքերս էլ անշուշտ մռայլ գոյն կընդունէին, եթէ արդէն Վիլլիբալդին մօտենալիս չլինէի: Մեր կառքի հանդէպ, որ կամաց-կամաց բարձրանում էր սարը, մի ուրիշ կառք սրարշաւ իջնում էր սարից: «Մի բան էլ հիմա չպատահի,—մտածեցի ինձ ու ինձ,— ճանապարհն այստեղ նեղ է, դժւար թէ երկու կառք կարողանան անցնել...» Բայց այդ բոպէին մեր ղիմացը եկող կառքի կառապանը անւարգելը յանկարծ այնպէս դարձրեց, որ քիչ մնաց ձիերը նստէին յետի ոտների վրայ: Կառքի մէջ ի մեծ զարմանս իմ նստած էին հօրաքոյրս ու Անելկան, որոնք ինձ տեսնելուն պէս աղաղակեցին՝ «Նա է, նա է, լէօնն է»: Մի բոպէից յետոյ ես նրանց մօտն էի: Հօրաքոյրս ինձ զրկել ու անդադար կրկնում էր. «Փառք քեզ Աստուծոյ, փառք քեզ»—հազիւ հազ շունչ քաշելով, կարծես թէ Վիլլիբալդից ոտքով ու վազէվազ եկած լինէին: Անելկան ձեռքս բռնել ու բաց չէր թողնում: Յանկարծ նա սարսափած երեսով գոչեց.

—Դու վիրաւորեալ ես:

Հասկացայ ինչ էր նրա ասածը և իսկոյն պատասխանեցի.

—Ձէ, չէ: Ես այն գնացքում չէի: Վրայիս արիւնը կառքիցն է, որով երևի վիրաւորներ են կրել:

—Ուղիղ ես ասում, հմ, ուղիղ, —հարց ու փորձ էր անում հօրաքոյրս:

—Հաւատացած կացէք:

—Այդ ձր գնացքն է խորտակւել:

—Յէլ-ամ-Ձէից եկող:

—Այո, տէր իմ Աստուած: Իսկ հեռագրում ասած էր թէ Վիեննայինը: Քիչ մնաց սիրտս ճաքէր: Տէր Աստուած, այս ինչ բախտ է: Փնփռ իրան, փնփռ:—Հօրաքոյրս սրբեց ճակատի քրտինքը, Անեղիան զածի պէս սպրդնել էր: Ձեռքս թողնելով նա երեսը մի կողմ դարձրեց, որ չնկատեմ նրա դողդոջացող շրթունքներն ու աչքի արտասուքը:

—Մենք տանը մենակ էինք,—պատմում էր հօրաքոյրս,—Արոմիցկին ինչ որ բեղիկացիների հետ զնացել էր Նասիօնը: Այդ միջոցին հիւրանոցի տէրը վազէվազ եկաւ մեզ մօտ ու ասաց, թէ ճանապարհին դժբախտութիւն է պատահել: Ես զիտէի, որ այսօր դալու ես. երևակայիր թէ ինչ կը լինէի ես: Իսկոյն ուղարկեցի կառքի յետևից. Անեղիան (ազնիւ հոգի) ոչ մի կերպ չհամաձայնեց ինձ մենակ թողնել: Այն ինչ բոլորէ էր, որ մենք քաշեցինք... Բայց, փառք Աստուծոյ, բանը միայն երկիւղով վերջացաւ... Դու վիրաւորւածներին տեսար:

Ես համբուրեցի Անեղիային ու հօրաքրոջս ձեռքը և սկսեցի պատմել Լէնդ-Գաշտէյնում տեսածս: Բանից երևաց, որ Կուրհաուզում շատ վիրաւորներ ու սպանւածներ կան: Բոլորն այնպէս են հասկացել, թէ աղէտը պատահել է Վիեննա-Ձալցբուրգ զծի վրայ... Տասից մէկն էի պատմում,—զլխիցս դուրս չէր գալիս այն ուրախալի միտքը, որ Անեղիան չի ցանկացել տանը սպասել հօրաքրոջս վերադառնալուն, այլ նրա հետ եկել է ինձ դիմաւորելու: Արդեօք. այդ միայն հօրաքրոջս համար է արել: Հաւատացած էի, որ չէ: Տեսնում էի նրա անհանգստութիւնն ու շփոթմունքը, նրա երկիւղը, երբ նա տեսաւ ձեռքս արիւնոտած, նրա պայծառացած, ուրախ գէմքը, երբ իմացաւ, որ ես ականատես անգամ չեմ եղել այդ սարսափելի աղէտին. տեսնում էի, որ նա մինչև այժմ էլ յուզւած է և սրտի ուրախութիւնից լացը զալիս է: Նա լաց կը լինէր անշուշտ, եթէ ես նրա ձեռքից բռնէի ու ասէի թէ սիրում եմ իրան... այն ժամանակ նա անշուշտ չէր խլի իւր ձեռքը: Իսկ երբ այդ բոլորը ինձ համար լոյսի պէս պարզեց, ինձ թւաց թէ իմ տանջանքներին վերջը եկել է, իմ կեանքը կը փոխուի և դոցութեան նոր շրջան կը սկսի: Փորձ չեմ անում անգամ նկարագրելու, թէ ինչ էի զգում ես, ինչպիսի ուրախութեամբ էր լցւած սիրտս: Ժամանակ

առ ժամանակ նայում էի Անեղկային այնպիսի հայեացքով, որի մէջ ուզում էի ամփոփած լինել սիրոյս բոլոր ոյժը, — և Անեղկան ժպտում էր երեսիս: Նկատեցի, որ նա ոչ վերարկու էր հագել և ոչ ձեռնոց: Պարզ է, որ նա երկիւղից ու շփոթւելուց ամեն բան մոռացել է: Եղանակը ցրտում էր և ես ծածկեցի նրան իմ վերարկուով: Նա մի քիչ ընդդիմացաւ, բայց շուտով համաձայնեց, մանաւանդ որ հօրաքոյրս էլ իմ հողմն էր:

Տանը պանի Յելլինան ինձ այնպէս սրտանց ողջունեց, որ կարծես իմ մահից յետոյ Անեղկային չէր հասնելու Պոշոփսկիների բոլոր կարողութիւնը: Այդպէս ազնւահոգի, բարեսիրտ կանանց ցերեկով էլ ճրագով չես գտնի: Բայց ես երաշխաւոր չեմ լինի, որ երբ Կրոմիցկին Նասֆելդից վերադարձել ու իմացել է ամեն բան, կամացուկ հողոց չի քաշել ու ինքն իրան մտածել, թէ աշխարհը իւր ընթացքը չէր փոխի, եթէ որ զրկէր բոլոր Պոշոփսկիներից:

Նա վերադարձաւ յոգնած ու թթւած: Այն բեղկացիները, որոնց հետ նա ծանոթացել ու Նասֆելդ էր զնացել, անուերպեցի կապիտալիստներ են: Կրոմիցկին նրանց իզիտու էր անւանում, որովհետեւ նրանք բաւականանում էին երեք տոկոսով իրանց զրամագլխից: Վաղը, ինչպէս նա ասաց, պէտք է ինձ հետ խօսի մի կարեւոր գործի մասին: Առաջ ես անհանգիստ կը լինէի, բայց այժմ գուշակում էի, որ այդ կարեւոր գործը վերաբերելիս կը լինի որ և է Ֆինանսական ձեռնարկութեան: Ես կարող էի իսկոյն և եթ ասել տալ նրան իւր միտքը, բայց գերադասեցի մնալ մէն մեհակ իմ մտքերիս հետ, իմ բախտիս հետ, իմ Անեղկայիս հետ, որ կրում եմ սրտիս ու հոգուս մէջ... Ես սեղմեցի նրա ձեռքը բարի զիշեր ցանկանալով, և նա սրտաստանեց ինձ նոյնպէս ջերմ սեղմելով ձեռքս: Միթէ յիշաւի դու արդէն իմս ես:

(Կը շարունակուի)

ՍՈՖԹ ԱՅՈՒԹԻԻՆԸ

(ԷՏԻԻԴ)

Ս. ԱՏՐՊԵՏԻ

1876 թվականի ապրիլի միջերգում, մի ամպամած օր, Կ. Պոլսում Ղալաթա-Սարայում, Օսմանեան Լիցէի (Մէքթէպի-Սուլթանիէի) ծառադարդ բակերում, անձրևի և խոնաւութեան տակ դասամիջոցի քառորդ ժամի հանգիստը, երբեմն թրջւելուց զողալով, երբեմն թռչկոտելով անցկացնելուց յետոյ, զինւորական թմբուկը ածեցին (զանգակ չի թոյլ տրոււմ մի իսլամական հիմնարկութեան մէջ) և աշակերտներս դասարան-դասարան բաժանւելով, վերակացուներիս հետ կամաց-կամաց դիմեցինք դասարան: Աշակերտական, աւելի լաւ է՝ պատանեկան, հանդարտ քայլերը գիշերօթիկ ուսանողները կարող են հասկանալ, մանաւանդ երբ ստորին յարկի սանդուխներէից բարձրանում էինք միջին յարկը և դասարանների մէջ եղած երկայն տախտակեայ յատակով անցքերից (կորիդոր) անցնում, մեր ոտնաձայնի աղմուկը թնդացնում էր ահագին շինութիւնը, որտեղ կարիք եղած ժամանակ թիւրքաց կառավարութիւնը կարող էր տասներկու հազարից աւել զօրք տեղաւորել: Ո՞վ էր ուշք դարձնում զլիսաւոր վերակացուի ստորին օդնական յոյն Monsieur «Չանչափինչօյի» (ներողութիւն՝ իսկական անունը չեմ յիշում) lentement-ներուն, որի կերպարանքը զգանք էր պատճառում բոլոր աշակերտներին:

—Արամ, Արամ, ասաց Ձերքէզ ընկերակիցս Զիան, արմունկով թևս բռնելով, տես մեր Սադրզ Էֆէնդին աչսօր ինչ մեծ մուշտակ

է հագել: Մեզ վերայ ծիծաղում է, թէ շատ էք հագնում, մրսկան էք, թույլ էք: Մէկը իւր խօսքերը այսօր իրեն յիշեցնէ...

—Դու չես իմանում, մեծ մարդիկ ուրիշին խրատ կը տան, բայց իրենք իրենց քարոզածի հակառակը կը գործեն: Կարգը դնում են խեղճերի համար:

—Ախար չէ, մի լաւ մտիկ տուր: Յունւարի մէջ աշնան թեթեւ պալտօյով ման եկողը, ապրիլին մուշտակ է հագել:

—Երեւի հիւանդ է, ասացի, ի՞նչ ես շտապում, հիմի նորա դասն է, կերթանք և կը հասկանանք բանը ինչու՞ն է:

Սատուդ էֆէնդին ուսուցչական սենեակ մտնել չէր սիրում. նա մեծ մարդ էր, մանր-մեղ արարածների քով գործ չուներ, ուղղակի վազէց մօտաւ դասարան: Ուսումնարանի անցքերը խօ վերջ չունեն, գնահ, որ հասնիս: Ահա գաւիթում մի ուրիշ թուրք ուսուցչի հետ կանաչներ հագած և գլխին կանաչ փաթաթած մօլլա, կամ ինչպէս այն օրերում սովորաբար ասում էին— «Սոֆթա»:

—Մի սրա աֆաթին մտիկ արա, ասաց կրկին անգամ Զիան, դժոխքի նման սև ու դեղին, մօրուքում տասը մազ չկայ, պեխերն էլ կարծես մկներ են կերել: Ի՞նչ են իմացել մեր խօջանները (թուրքական, արաբական և պարսկական լեզուների ուսուցիչները), ամեն օր հետները մի-մի պոչ կապած մտնում են դասարան:

—Առանց էն էլ շատ բան են սովրեցնում աշակերտներին, հիմի էլ դասարաններում դրանց հետ ժամերով մասլահաթ են անելու, կարծես թէ իրենց ջամիների լացարաններին կից եղած մէդրէսէ լինի մեր ուսումնարանը:

—Կարգ չկայ, կանոն չկայ... թէ դը-Սալը (լիցէի առաջին ֆրանսիացի տեսուչը) այստեղ կը լինէր, իրանց կը սովրեցնէր մասլահաթ անելը: Նա մի անգամ դասընթացքում խօսակցութեամբ բռնել էր մի խօջայի, հանել ջէպից տասը փարա, տւել ձեռքն և ասել—Գնա դայֆախանա, մի ֆինջան ղայֆա խմիր և մինչև իրիկուն ինչքան քէյֆդ ուզէ մասլահաթ արա:

—Ափսոս, ես այդ ձեր դը-Սալին չտեսայ: Բայց մեր Սաւափաշան ոչ մի մոլլայի սիրտը չի կոտրիլ, չի էլ կարող նրա վրայ բան խօսիլ, թէ ոչ դուրս կանեն:

— Ե՛հ, սա էլ եղաւ տեսնու՛... ուտէ՛, խմէ՛, հաստանայ... Ուրիշ բան չկայ: Գիտես ի՞նչ կայ:

— Ի՞նչ:

— Ասում են, որ քրիստոնեայ վալիներ են նշանակելու, որտեղ որ շատ քրիստոնեաներ են բնակւում և սրան էլ Կրէտէ, կամ Արշիպելաքի կղզիների վալի են նշանակելու:

— Յայտնի բան է, սրա նման մարդը միշտ առաջ կերթայ:

Այս խօսակցութիւնները անելով մտանք դասարան և թուրքերէն դասագրքերս, տետրակներս, գրիչներս և թանաքամաններս վեր առած զիմեցինք Սաղըզ էֆէնդիի մասձ դասարանը: Պէտք է իմանալ, որ լիցէում առարկաներն աւանդում էին Ֆրանսիացի ուսուցիչները (մէջները մէկ-երկու հայեր էլ կային) Ֆրանսիական լեզուով, իսկ թուրքաց և օթանդակ արաբերէն և ֆարսի լեզուները աւանդում էին թուրք խոջաները (մոլլա), և որովհետեւ աշակերտները թուրքերէնի մէջ առաջադէմ և յետադէմ էին լինում, այդ պատճառով երկու տեսակ դասարաններ կային. մինը՝ լիցէական դասընթացքի համար Ֆրանսերէն լեզուով, միւսը՝ թուրքերէն և օթանդակ լեզուների: Այս իսկ պատճառով թուրքերէն և օթանդակ լեզուների դասերի ժամանակ պարտաւոր էինք դասարաններս փոխել: Թուրքերէնի վեցերորդ դասարանում էինք, դեռ երկու տարւաց կուրս էլ ունէինք շարունակելու: Սաղըզ էֆէնդին սիպտակ դէմքով, շէկ մազերով և նոսր ու կարճ մօրուքով նիհար մարդ էր. նրա այդ օրւաց մուշլ երեսը աւելի ևս դաժանացրել էր նրա ժանդազն դէմքը: Սովորականից զուրս էր նորա շարժմունքը, այդ պատճառով բոլոր աշակերտներս էլ լուրջ դէմք առած հանդարտութեամբ սպասում էինք հետեանքին: Ոչ մի կողմից ձայն ծպտուն չկար, նա էլ զլուխը կոխած Թիէրի գրած Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մի հատորի մէջ, անթարթ կարդում էր:

Մենք աշակերտներս մանաւանդ այդ դասարանցիներս, շատ չէինք ուշադրութիւն դարձնում մեր ուսուցիչների բարկութեան կամ կատաղութեան վրայ, որովհետեւ մեզ չէին կարող դուրս անել, նախ որ արդէն նրանք մեծ յոյս ունէին մեզ վրայ, որպէս իրենց հասցրած ամենալաւ աշակերտների և զլխաւորը՝ որ ամեն մէկս մի-մի փաշայի, վիզիրի, պալատական մեծ պաշտօնէի տանից

էինք, կամ նրանց պաշտպանութեամբ ձրի ղետեղւած այդ հիւնարկութեան մէջ: Բայց Սաղըզ էֆէնդին էլ սովորական ուսուցիչներին չէր. նա, որպէս դերմանական ուսուցիչների մօտ կըթւած անձնաւորութիւն, գիտէր աշակերտներին գրաւել և իրեն յարկել տալ: Նրա վրայ և աւելացրէք նրա դիրքը, որ ունէր մայրաքաղաքում, — արտաքին գործերի նախարարութեան դիւանի պետի պաշտօնին նրան հեռացնելը դեռ երեք ամիս չկար: Նա մեզ թարգմանել էր տալիս թուրքերէնից ֆրանսերէն և ֆրանսերէնից թուրքերէն զանազան քաղաքագիտական թղթեր և ամեն բառի բացատրութիւնները պոլիտիկական նշանակութեամբ պարզաբանում և մեզ պատրաստում էր, որպէս արտաքին գործերի նախարարութեան ասպագայ ծառայողներ կամ դեսպանատների և հիւպատոսների աւագ թարգման:

Անցաւ հինգ րօպէ, էլ աւել, բայց նա խորասուզւած կարդում էր Թիէրի կենդանի նկարագրութեամբ պատկերացրած Մարատի գործերի պատմութիւնը և ողբորութեամբ կարդալուց չէր էլ զգում, որ դասարանումն էր:

Վերջապէս աշակերտական մի կալտառ քրքիջ սթափեցրեց նրան և նա զուլը շուռ տւեց մեր կողմը, ծալելով կարդացած թերթի երեսը: Աշակերտական ցուցակի գիրքը առանց բանալու,

— Բոլորդ այստեղ էք, հարցրեց, որին միաբերան դասարանը պատասխանեց.

— Բոլորս:

— Հա, ասաց, այսօր մուացաց, գործ ունէի և չկարողացայ քեթաբէթ (կանցելարիա) մօնել և ձեզ համար մի յարմար բան բերել թարգմանելու: Ոչինչ, այստեղից այսօր քիչ կը թարգմանենք, ասաց և կրկին բացեց Թիէրի պատմութիւնը:

— Նա կը թելադրեմ, բացէք տետրակներդ և գրեցէք, յետոյ զուք կը թարգմանէք առանց իմ օգնութեան, վերջը կը համեմատենք:

Ժակոբէնների կեանքից մի փոքր պատկեր թելադրեց, որոնց պատմութիւնը մեր կրակոտ ֆրանսիացի ուսուցիչները շատ մանրամասն մեզ սովորեցրել էին:

— Եֆէնդի, ասաց մի աշակերտ, ժակոբէն բառը ես իշարի

որ թարգմանեմ ինչ փնաս ունի: Ժակոբէն թուրքերէն գրելը դժւար է:

Սադըգ էֆէնդին ժպտաց: Այս ծիծաղից խրախուսւած մի ուրիշ աշակերտ հեգնելով պատասխանեց.

—Ենիշերութիւնը կործանւեց, դու կարող ես ժակոբէն գրել: Մի ուրիշն էլ թէ՛

—Ենիշերութիւնը թէ՛ կործանւեց, բայց նորա տեղն առաջացաւ Սոֆթայութիւնը: Հետեապէս՝ ենիշերութիւնը չ՛նջւեց աշխարհից: Սադըգ էֆէնդին թէ՛ կարդում էր և թէ լսում աշակերտներին: Նրա լռութիւնը աւելի սիրտ տւեց և մի աշակերտ ասաց՝

—Էֆէնդի, մեզ խոստացաք անցեալ դասին խօսել Սոֆթայութիւնի, նրա ծագման և նշանակութեան մասին. չի կարելի խնդրել, որ կատարէք ձեր խոստումը: Մենք բոլորս ցանկանում ենք ծանօթանալ այդ կարեւոր հարցի հետ:

—Խնդրում ենք, էֆէնդի, եթէ կարելի է, սկսեցին ամեն կողմից թախանձել:

—Յետոյ, յետոյ կը պատմեմ:

—Սրա թարգմանելը ինչ դժւար է... Այսօր մի հետաքրքիր դործ էլ չունինք, խնդրում ենք պատմեցէք:

—Պատմեցէք, պատմեցէք, էֆէնդի, կրկնեցին բոլոր աշակերտները.

—Լաւ, ասաց, հանդարտեցէք, կը պատմեմ:

Իսկոյն տիրեց լռութիւնը և ամենքս անհամբեր սպասում էինք:

—Դուռը կապիր, ասաց նա Զիաին, որ իսկոյն փակելուց յետոյ ուսուցչի աչքերին մտիկ տւեց և փականքի բանալին էլ շուր տւեց: Դրսից անակնկալ հիւր մեզ այլ ևս չէր կարող խանդարել:

—Ես ձեզ բոլորիդ ճանաչում եմ, ամենքդ էլ իսլամ էք, բացի Սարաֆեանից և Բոստանջեանից, որոնք թէ՛ և իսլամ չեն, բայց օսմանեան տէրութեան այնպիսի հպատակ հայեր են իրենց տասնեակ սերնդով, որ մենք երբէք հայերի վրայ կասկած չենք կարող ունենալ:

—Ոչինչ կասկած մի ունենաք, էֆէնդի, նրանց մեղանից մի զանազանէք, ասացին ամեն կողմից:

Բոպէական լռութիւնը դարձեալ տիրեց: Սաղըգ էֆէնդին չէր իմանում, որտեղից և ինչպէս սկսէր: Հազաց, ուղղւեց, ձեռքը ճակատին տարաւ:

—Հնա, ի՞նչ էինք ասում:

—Սոփթացութեան մասին, էֆէնդի:

—Խօսքը այս շորս պատի մէջ, այստեղից դուրս չի դնալ: Ես վստահ եմ ձեր ազնիւ խօսքին:

—Ազնիւ խօսք, անհոգ եղէք, էֆէնդի:

—Գիտէք ի՞նչ կայ: Դուք, ամեն մինդ մի-մի փաշայի և վեզիրի որդիք էք, էզուց, էլօր ձեր ձեռքն է անցնելու երկրի կառավարութիւնը: Դուք պետութեան ներկայացուցիչներն էք և մեզանից աւանդ ստացած երկիրը և հարստութիւնը թողնելու էք ձեր յաջորդներին: Որպէս տէր երկրի, պէտք է նրա բոլոր մանրամասնութիւններին հետ ծանօթ լինիք, որ կարողանաք ամեն դէպքում պահպանել այս պետութիւնը ներքին թէ արտաքին զանազան թշնամիներից: Զեր դոյութեան ասլահովութեան համար պէտք է ձեր ոյժը վաղօրօք չափած և կշռած լինիք: Այսօր թէև ես ուսուցիչ, դուք աշակերտներ էք, բայց խնդրում եմ քիչ դէնը զցնեք այդ ձևը և մենք հաւասար ընկերներ դառնանք ու դուք, ինձ լսելուց յետոյ, դատեցէք, ինչպէս որ կամենաք: Փոքր չէք, ամենքդ էլ խելահաս էք և արդէն երևում է ձեր երեսի վրայ պիտերն ու միրուքը...

—Շոգը նեղացնում է, ներեցէք ինձ, ասելով Սաղըգ էֆէնդին մուշտակը հանեց, աթոռի վրայ գցեց և երկու աւելուէր դըրպանից հանելով՝ ուսուցչական ամբիոնի վերայ գրեց Ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան գրքի մօտ: Աւերարկւի տակ Սաղըգ էֆէնդին այդ օրը հազել էր սովորական սև սերտուկի փոխարէն պարսկական ծաղկուն շալից խալաթ, խալաթի տակ կապած լացն երիզ գօտին քանդելուց յետոյ՝ բաց թողեց էնթարու երկայն փէշերը, որոնք քիչ էր մնում գետին հասնէին: Ծոցից հանեց մի ծալովի թաղիքի գտակ, հազաւ գլուխը և էնթարու լացն դրպանից մի կանաչ երկայն փաթաթոց դուրս տալով կապեց գլուխը:

Լուռ ու մունջ դիտում էինք այդ զգեստաւորութեան տեսարանը, որը թէև մեր ծիծաղը զրգռում էր, բայց մեր հետաքրքր-

րութիւնը այն աստիճան էր բորբոքում, մեր ջղերը զսպած սկսում էինք արարողութեան աւարտին: Երբ վերջացրեց զգեստաւորութիւնը՝ բարձրացաւ ամբիոն և լուրջ դէմք առնելով մոտիկ տեց չորս կողմը, ասաց.

—Ես էլ սոֆթա եմ: Երբ սուրբ գործ է կատարելու ճշմարիտ իսլամականը, պէտք է որ սոֆթա լինի, և պարտականութիւն ճանաչող միւս իսլամականը չի խոյս տալ այս կոչումից:

Այս խօսելուց յետոյ նստեց աթոռի վրայ և ռեւորւերները քննելով շարունակեց.

—Իսլամական վարդապետութիւնն է այն պետութիւնը, որ տիրում է մեր աշխարհին՝ այդ վարդապետութիւնից շեղելը կը նշանակի քանդել, կործանել մեր պետութիւնը: Այդ վարդապետութիւնով տիրել են մեր պապերը այս անհուն տարածութեանը, այդ վարդապետութիւնով պահպանել են դարերով իրենց իշխանութեան տակ այնքան ազգեր և առանց այդ վարդապետութեան չենք կարող մեր հարստութեան գոյութիւնը պահպանել:

Թէ ինչի, դրա պատասխանը շատ հեշտ է տալ, դուք շատ լաւ կարող էք ըմբռնել:

—Դուք գիտէք, որ մեր սուլթանը խալիֆա է, Ալլահի պառգամաբեր Մուհամէդի և նորա արժանընտիր յաջորդների Աբուբէքերի, Էօմէրի, Շամի (Գամասկոս) և Բադրադի խալիֆների յաջորդն է: Նա ոչ թէ միայն տիրապեան է այն երկրների, որոնց այսօր զէնքի զօրութիւնով տիրած կառավարում ենք, այլ նա գլուխ է ամբողջ իսլամականութեան: Այդ ծայրագոյն իշխանաւորի կեանքի և կարողութեան համար աղօթում է իսլամականութիւնը թէ Հնդկաստանում, թէ Թաթարստանում և կենդրոնական Ասիայում, թէ Ափրիկէի ամբողջ ծովեզերքում և Սահարա անապատում, թէ Երիւմում, Ղազանում, Սպանիայում, վերջապէս աշխարհի ամեն մի կողմը, ուր որ բնակւում են հաւատացեալները: Մեր մարդարէի թիկունքով կրած եղջերւի մորթը այսօր փռւած է նրա բաղմոցի վրայ. նա ոչ եւրոպական գահակալների նման լոկ մի կալաճատէր է (? Խմբ.), այլ նա իսլամականութեան ղեկավարն է և Մուհամէդի տեղակալը: Իսլամականութիւնը զարդարւած թաղակիր կամ կալաճատէր իշխող չի կարող ունենալ, նրա պետը, խալիֆայական

երկնայրի սուրը ձեռքին պիտի պաշտպանէ իսլամը և նրա վարդապետութիւնը ընդհանրացնէ ամբողջ աշխարհքում: Ահա այս է կրօնապետի ամենագլխաւոր և ամենասրբազան պարտականութիւնը:

—Քանի որ օսմանեան առաջին իշխանները՝ Օրխանը, Օսմանը միայն իշխողներ էին Ղահրիմանիայի, Ղոնիայի և ուրիշ զաւառների, նրանք մի հասարակ կալաւածատէր բէդեր էին, իսլամութիւնը նրանց չէր կարող ճանաչել պետ կամ առաջնորդ. բայց երբ նոքա աիրեցին ուխտատեղիները՝ Մէքքէն և Մեդինէն և նրանց ճանապարհները բացին հաւատացեալների առաջ, երբ ձեռք բերին Մուհամէդի մեզ աւանդած Սանճագի-Շէրիֆը (նւիրական զրօշակը) Խրիսայի Շէրիֆը (Մուհամէդի վերարկուն), իսկոյն խոնհարեց նրանց առաջ իսլամականութիւնը և ամեն կալաւածատէր իսլամ իշխան՝ ստիպւած իւր ժողովրդից, ստիպւած զուրանի վարդապետութիւնից, խոնարհեց օսմանեան տան ինքնակալների առաջ, ոչ որպէս յաղթողի, այլ որպէս կրօնական պետի: Ղուրանը բացարձակապէս վարդապետում է՝ թէ ով որ տկամաց չի հպատակւում խալիֆին, նա բաժանւում է իսլամականութիւնից և այդ հերձաւածին աշխարհի երեսից ջնջելը ամեն մի իսլամի պարտականութիւնն է:

Այսօր Մարոկում, Սուդանում, Հնդկաստանում, Բուխարաւում, Ափկանդում, Աֆղանստանում, Բէլուջիստանում և ուրիշ երկրներում իսլամ իշխողներ կան, որոնք ունին ահագին կալաւածներ, բայց եթէ չեն միացած մեր երկրի հետ, զորա պատճառը մեր և նրանց սահմանների մէջ եղած այլապաւան պետութիւններն են. միացրու սահմանները և նրանք ժողովրդով, զինուորական ուժով, հողով և հարստութիւնով իսկոյն կը միանան խալիֆի դրօշի տակ: Իսլամական ժողովուրդը, որանդ որ բնակի, չի հաշտւում ոչ մի իշխանի, բէդի, շէյխի հետ, եթէ վերջինս չի խոնարհւում խալիֆի առաջ և չի ստանում նրանից իւր գիրքի հաստատութիւնը: Մինչև անգամ այս էլ պիտի գիտենաք, որ պարսիկ շիւիները, որոնց մենք որպէս անհաւատների (Ղուրանի վարդապետութիւնը ծռողների) հալածում ենք և նրանք մեզանից ափսոսան խորշում են, որքան մենք խողի մօից, եթէ սուլթանը որպէս խալիֆ դուրս բերէ Սանճագը-Շէրիֆը կրօնի պաշտպանութեան անունով, իսկոյն

կը վազեն հովանաւորելու այդ սրբութեան տակ և նրա պաշտպանութեան համար իրանց անձերը զոհելու:

— Ահա խալիֆայութեան կոչումը, այս է խալիֆայութեան վեհութիւնը:

— Ուրեմն լինել խալիֆ, լինել իսլամականութեան կրօնապետ, նստել եղջերւի մորթի վրայ, գլխի վրայ ունենալ Սանջաղը-Շէրիֆը, հարիւր քառասուն միլիոն իսլամական ժողովրդի անսահման հպատակութիւնն ու սէրը վայելել և իսլամական վարդապետութեան՝ զուրանի և Շերիաթի՝ հակառակ կառավարել երկիրը — աներևակայելի հախտութիւն է. այդպիսի մի ընթացք չէր կարող նախատեսուած չլինել երկնային վարդապետութեան մէջ: Հէնց այդ պատճառով մեր զուրանը, խալիֆի իրաւունքները որոշելուց յետոյ, նրա առաջ կանգնեցնում է համարաւոր մի ժողովրդական դասակարգ, մի ժողով, որը պիտի գծէ ու որոշէ խալիֆի ընթացքը: Այդ դասակարգը, այդ ժողովականները մեր կրօնի վարդապետութեան քարոզիչներն են և նոյն վարդապետութեան ամենաջերմ զինւորներն են մինչև աշխարհի վերջը: Ահա այդ դասն է, որ մեր երկրում կոչուում է Սոֆթայ, այդ դասակարգին է պատկանում ամեն մի իսլամ, որ ուսումնասիրած է զուրանի վարդապետութիւնը: Ահա այդ սոֆթաների մի անհատն էլ ես եմ...:

— Մի հարիւր տարի չկայ, որ եւրոպացիք, իրենց իշխողների մօտ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու, հարկեր որոշելու, օրէնքներ դնելու համար մի-մի ժողով հիմնեցին, որ կոչուում է պարլամենտ. բայց նոքա չեն իմանում թէ իսլամականութեան մէջ զուրանը սրանից հազար երեք հարիւր տարի առաջ որոշել է խալիֆի, նորա իրաւունքների և գործունէութեան սահմանները, ամեն մի իսլամ անհատի և իսլամականութեան պահպանութեան և մըշտնջենաւոր չարատելութեան համար հողով ու սրտով զինւորածների պարտականութիւնները: Մեր սարայը (սլալատ) աշխարհքն է և նորա առաստաղը երկինքը. որտեղ որ հաւաքւենք, այնտեղ էլ կարող ենք կայացնել մեր վճիռը: Մեր դաշնադրութիւնը երկինքն է մեզ շնորհել ասաքեալի ձեռքով, խալիֆը նրա մի խազն անգամ փոխելու իրաւունք չունի և մեղանում ամեն մի իսլամական, որ ծանօթ է զուրանի վարդապետութեան, ընտրեալ է և նորա ձայնը

սերովբէներն անգամ չեն կարող խեղդել... Սահմանադրութիւն, այսինքն ժողովրդի և նորա իշխողների մէջ եղած դաշնադրութիւն ունեցել է իսլամը իւր սկզբնական քարոզութեան ժամանակ և իսլամականութեան աշխարհի ամեն կողմը աջնքան արագ տարածւելու մի պատճառն էլ այդ իրաւունքների արդար բաշխումն է:

— Եւրոպական երեսփոխանակ մն ժողովները օրէնքներ են դնում, հարկեր են որոշում, բայց մեր ժողովը այդ մասին մտածելու կարիք չունի. մեր Ներեաթը (կրօնական օրէնք) անփոփոխելի է, պետական և հասարակական հարկերը այնտեղ որոշւած են, ոչ կարելի է աւելցնել և ոչ պակսեցնել: (Եւ սակայն, ներկայիս Թիւրքիայի բոլոր հարկերը շէյրիաթում որոշւածները չեն. հէնց օրինակ՝ ծխախոտի բէժին: Ծան. Խմբ.): Սոփթայական իշխանութեան, այսինքն համ-իսլամական ժողովի պարտականութիւնն է հսկել թէ՛ արդեօք մեր աշխարհում շէրիաթը խօչէն ոտնատակ տալիս: Այսքանն էլ բաւական է: Սուլթանի վեզիրների և նոյն իսկ Շէյխ-Իւլ-Իսլամի կարգադրութեան վրայ բաւական է նրանց «օլմազ» (չէ կարելի) խօսքը, որ հռոմէական արիքունների veto-ի նման ոչնչացնում և անիրագործելի է թողնում խալիֆի կրօնքի հակառակ տւած մեծ-մեծ «իրադէները» (հրովարտակ), և չկայ աշխարհի վրայ մի զօրութիւն, որ կարողանայ դիմադրել այդ սօփթայական օլմազին:

— Շէրեաթի համաձայն Խալիֆն է ընտրում, հրաժարեցնում Շէյխ-Իւլ-Իսլամին (կրօնապետ իսլամական) և սատրազամին (նախարարապետ): Այդ բացարձակ իրաւունքը չի կարելի ուրիշին տալ: Բայց ամեն դործի ծաղրագոյն վճիռը տալիս է անկախ Շէյխ-Իւլ-Իսլամը, որի մի տառն անգամ փոխելու իրաւունք չունի Սուլթանը և Սատրազամը: Սուլթանը ոչ կարող է վճռել և ոչ դործադրել: Բայց կարող են այդ երեքը միաձայն և միախորհուրդ վճռել և դործադրել հակառակ Շէյրիաթի. հէնց այդ պատճառով դրանց վճիռները քննելու, բնութենելու կամ ժխտելու իրաւունքը Շէյրիաթի հմուտ իւլէմաներին (Ղուրանի ուսումնասիրողներին) է յանձնւած, վերջիններս ֆէթուաներով (Ղուրանի հատւածներով) նրանց շեղմունքը կը յայտնեն սօփթաներին, և այս վերջինները ժողովելով կը քննեն դործը և կը կայացնեն վերջնական վճիռը:

իսկ այս վերջնական սօփթացական վճռի գործադրութեան համար պարտաւոր է և հետեւում է, գլուխ զոհ դնելով, ամեն մի իսլամական երեխայից մինչև զառամեալ ծերը, նոյն իսկ ամենաթոյլ կիներ: Ահա այս է սօփթացութեան սարսափելի ոյժը:

—Ինչպէս ասացի, իսլամը թագակիր չունի, իսլամ անհատը տէր չի կարող ունենալ, իսլամը հպատակ չի կարող լինել և այս բանը ամեն մի իսլամ հաւատացեալ գիտէ: Նա Սուլթանին հնազանդւում է որպէս իր առաջնորդին, իսկ երբ Խալիֆը իւր իրաւունքի սահմանից անցնում է, նա կորցնում է իւր նշանակութիւնը իսլամականութեան աչքում: Առաջինը մարդկանց ծննդի մէջ դասակարգ չի ճանաչում, իսլամի համար մի և նոյն է թէ Խալիֆը սերւած լինի Կորեշեան ցեղից, Իւմեան սերնդից, Ալիի ժառանգներից, Օսմանեան տանից թէ քիւրդ Հասոյի, կամ շէյխ Իբոյի որդիներից: —Նա պահանջում է միայն, որ այդ առաջնորդը Շէյք ի աթի սահմանած օրինաւորութիւնը ունենայ: Իսկ այդ օրինաւորութիւնը, յայտնի բան է, երկու մարդ չեն կարող ունենալ: Խալիֆը, ինչպէս վերև ասացի, պէտք է տէր լինի ուխտատեղիներին՝ Մէքքէին և Մէդինէին, նրա ճանապարհները բաց պիտի պահպանէ իսլամականութեան առաջ, Մուհամէդի աւանդները՝ Սանչաղը՝ Շէրիֆը և Խրիսայի Շէրիֆը պիտի ունենայ մօտը, պիտի պահպանէ Շէյք ի աթը և պիտի սուրը ձեռքին տարածէ աշխարհի շուրջը այդ վարդապետութիւնը: Եթէ այս օրինական իրաւունքներից մինը պակասի, նա Խալիֆ չի կարող ճանաչւել և իսլամականութիւնը այդ ժամանակ անհամբեր պիտի սպասէ Մահդիին, որ սա դայ և հաստատէ այդ բոլորը:

—Ամեն մի իսլամ խալիֆի փառքին հաւասար բաժանորդակից է, ամեն բարիք վայելում են բոլոր իսլամները հաւաստարպէս և խալիֆի հպատակները հպատակ են իսլամականութեան, իսկ ամեն մի իսլամ անհատի ծառայելու պարտական են, որպէս իրենց կեանքի վրայ իշխողի: Այս սկզբունքներով կաթի հետ սնւել է ամեն մի իսլամական, այս վարդապետութիւնով դաստիարակւել «մէդրէսէներում» (գարոց իսլամական) և ջամիներում (աղօթարան) և նախորդների իրեն աւանդած այս իրաւունքներից և պարտականութիւններից մազաչափ անդամ չի շեղւել, քանի որ

նորա երակներում եռալով վազում է արիւնը...

—Ուրեմն Սոֆթալութիւնը իսլամականութեան վզին նստած մի ինքնակոչ նոր դասակարգ չէ, մի հրոսակացին գունդ չէ, այլ նա իսլամականութեան հետ հիմնւած և հաստատած մի ոյժ է, որ միշտ պահպանել է Շէյրեաթի որոշած ծրագրով իսլամական հասարակութեան իրաւունքը ներքին և արտաքին թշնամիների դէմ։ Սոֆթալութեան պահպանութեան համար ժողովրդից ոչ տուրք է պահանջուում, ոչ էլ ողորմութիւն, նրանք առանց ծանրանալու իսլամականութեան ուսին, ասլում են ունեւոր հաւատացեալների նրանց կտակած (կաջքերի) վազքների եկամուտներով, որոնց գումարը միլիոններ է կազմում և այդ կաջքերի կապալը ստացւում է համարեա ամեն տեղ ոչ իսլամ ժողովրդից։ (Կարծես թէ հարուստների ունեցածը նոյն ժողովրդի աշխատանքի արդիւնքը չէ. ծանօթ. Խմբ.)։ Այս դասակարգը ղուրանը ծոցում, սուրը ձեռքին պաշտպանելի երկիրը, ժողովուրդը, պետութիւնը, ընդարձակելով նրա տիրապետութեան սահմանները և եկամտի աղբիւրները։ Եւ ո՞ր ճշմարիտ իսլամականը խոց կը տալ այդ խմբից...

—Այս ամենից յետոյ հասկանալի է, որ Սոֆթալութիւնը նոյն ինքն իսլամականութիւնն է, իսկ իսլամականութիւնը կազմւած է իրարից անբաժան երեք հաւասար տարերքից՝ ջերմեռանդ ժողովրդից, շէյրիաթի վարդապետութեան ուսուցիչ Սեֆթաներից և խալիֆից։

—Մի ժամանակ, խալիֆալութիւնը օսմանեան պետութեան ձեռքը անցնելու միջոցներին, ղուրանի ուսուցիչները Բազդադի, Շամի, Գահիրէի և Կորդովայի խալիֆների, ամիրների և ուրիշ իշխողների ղուրանի վարդապետութեան դէմ բռնած ընթացքից զգւած, մտածեցին անձամբ մոնել պետական ղինւորական զօրութեան մէջ, իշխել այնտեղ և սրի զօրութեամբ աներկիւղ ուղղել խալիֆներին շէյրիաթի ընթացքով։ Եգիպտոսի մէմլուկները մի այսպիսի դասակարգից առաջացած ղօրութիւն էին, որոնք ժամանակին սարսափ էին սփռել աշխարհին. այդ դասակարգից էին նոյնպէս օսմանեան Ենիէրիները։ Հաւաքում էին Անստողիայից, Հայաստանից և Ասորեստանից զանազան առողջակազմ պատանիներ, սովորցնում էին նրանց սուր շարժել, յարձակել բերդերի պարիսպ-

ների վրայ՝ վառել, լափել թշնամու բնակութիւնը և յափշտակել հարստութիւնը, գերել կինը, որդիքը, աղջիկները, և յաղթեալ զաւարով ու աշխատութիւնով հանգիստ և երջանիկ ապրել։ Եւ այդ պատանիներին սուր շարժելու հետ սովորեցնում էին զուրանի վարդապետութիւնը, որոնք սոսկ կրօնական զինւորներ, կամ շէրիաթի աշակերտներ էին։ Այս աշակերտներն էին այն ենիչէրիները, որոնք երեք չորս տասնեակ տարիների ընթացքում տիրեցին ամբողջ Բալկանեան թերակղզին, Բուլղարիան, Սերբիան, Ղարապաղը, (Չերնոգորիան), Բոսնիան, Ալբանիան, Ռումինիան, Մաջարլանդը, Լեհաստանը, Վենետիկը և այլն և այլն։ Այդ ենիչէրիների առաջ խոնարհեց հազարաւոր տարի աշխարհին տիրած Հռոմացեցիների արեւելեան Բիւզանդական կայսերութիւնը, այդ ենիչէրիները մտան Ասորիա, ստիպեցին Գերմանիայի կայսեր ամեն տարի հարկ տալ իսլամականութեան խալիֆներին և վերջապէս այդ ենիչէրիները տիրեցին Պարսկաստանը, Արաբիան, Եգիպտոսը, Միջերկրականի կղզիները և նրանց անունից սարսափահար մնաց Եւրոպան ամբողջ երեք չորս դար։

Բայց ենիչէրիները այն աստիճան զօրացան, որ նրանցից ոչ միայն օտար ազգերն էին սարսափում, այլ վերջին ժամանակները սկսեցին նրանք սարսափ գցել նոյն իսկ իսլամականութեան մէջ։ Երբ իսլամական բարձր հոգեւորական դասի վճիռների համաձայն ենիչէրիները մի երկու պարտազանց սուլթաններին գահից վեր առին, դրանցից յետոյ էլ սկսեցին աներկիւղ խրոխտալ նոյն իսկ այդ բարձր հոգեւորականութեան դէմ։ Սուլթանները ենիչէրիական զօրութիւնը ստորացնելու համար, աւելացրին այլադաւան ենիչէրիների թիւը մեր հոգեւորական դասի կամքի հակառակ, վերջիններն էլ սուլթաններին ընկճելու համար շատ անգամ ենիչէրիների հետ միացած դահից գլորեցին Հիւնքեարներին։ Այդ կուսակցական հակառակութեան՝ զոր զնացին իրար ետեւից հինգ-տասը սուլթաններ, անթիւ իւլէմաներ, (կրօնական ուսումնական), վէզիրներ, Շէյխ-իւլ-իսլամներ և ենիչէրիական անունը սկսեց իսլամականութեան ատելի դառնալ։ Վերջապէս այն աստիճան շատացան այլադաւաններն ու անհաւատներն, որ ենիչէրիների օջախներում իսկական իսլամի գոյութիւնն անգամ՝ տարակուսելի եղաւ։ Նրանք ոչ միայն սուլթաններին իրենց

կամքի և քմքի համաձայն էին վարում, այլ ստիպում էին Շէյխ-իւլ-իսլամին, որ իրենց ցանկութեան համաձայն վճիռներ կաշացնի: Ել համբերել անկարելի էր: Սուլթանը միացաւ սոֆթաչական կուսակցութեան հետ, Շէյխ-իւլ-իսլամը տւեց Ենիշէրիներուն կոտորելու վճիռը և այլապիսով ազատուեց երկիրը այդ անսանձ և անկրօն օջախականների ճիրանների լծից: Այդ ժամանակ վճիռ կաշացրին երբէք այլ ևս չհաստատուել զինուորական սոֆթաչութիւնը, այլ որ միշտ սոֆթաչութիւնը, իւր սկզբնական ձևով առանձին մարմնից կազմւած, հսկի քաղաքական և զինուորական ոյժերի վրայ, որպէս իսլամականութեան լիազօր երեսփոխանները կամ պատգամաւորները երկրի մէջ: Եւ ենիշէրիական ազաի (Շէֆի) պալատը յատկացւեց սոֆթաչութեան առաջնորդողներին և այն օրից մինչև այժմ կոչւում է Շէյխ-իւլ-իսլամ ի դուռ: Այդ պէս էլ եղաւ: Այդ վերանորոգութիւնից յետոյ ահա լրացաւ վաթսուո տարին, օրից օր աճեց և ճոխացաւ սոֆթաչութիւնը, ձեռքի մէջ ամփոփելով երկրի կառավարութեան ղեկը: Այսօր այդ սոֆթաչներից զտնւում են վեզիրներին, պալատականների, կուսակալների շարքում, երկրի ամեն զասակարգի մէջ, ազատ սփռած են պետութեան ամեն կողմը և կատարում իրենց սրբազան սլաւոականութիւնները, վայելելով անթիւ բարիք:

— Բայց ի՞նչ են կամենում նրանք, պատճառն ի՞նչ է որ այս վերջին երեք չորս ամիս ընթացքում այնքան սոււարացաւ դրանց թիւը մայրաքաղաքում, ի՞նչ նիւթի մասին են վիճում դրանք այս վերջին ժամանակներում իրանց ժողովներում, հարցրեց ուսանողներից մէկը, համարձակ ոտքի կանգնելով:

— Այդ մասին, էլ այսօր ուշ է, ասաց Սալըդ-էֆէնդին ժամացոյցին մօտիկ տալով, հինգ տասը բոպէից յետոյ թմբուկը կածեն և կը պարտաւորենք հեռանալու: Ուրիշ անգամ կը բացատրեմ ձեզ: Միայն այսքանը պէտք է իմանաք, որ մեր պետութեան մէջ դրանց ժողովները միշտ կայանում են, եթէ Կ. Պոլսում արգելքի պատահեն, Բրուսայում կը հաւաքեն. եթէ այնտեղ էլ արգելք լինի, Անգլիանապօլում, Զմիւռնայում, Այաթնում, Գոյնիայում, Անգորայում, որտեղ որ կամենան: Այս էլ պիտի գիտենաք, որ մեր պետութեան ամեն քաղաքներում էլ անպակաս են նրանց ժողով-

ները և միշտ իրար հետ բերանացի յարաբերութեան մէջ են: Ինչ վճիռ որ կայացնեն, իսկոյն ամեն երկիր ականջից ականջ իրանց մէջ կը պատմեն և երբէք չի պատահել, որ այդ վճիռը չիրագործուի:

—Ննիչարութեան անկումից յետոյ դրանք նշանաւոր գործեր ունեցել են, էֆէնտի, հարցրեց Զիւն աչքերը յառելով սօֆթա ուսուցչի աչքերին:

—Ինչպէս չէ. ինչպէս չէ: Սուլթան Մահմուդին նրանք ամենախիստ կերպով առաջին անգամ զիմադրեցին, երբ վերանորոգող Սուլթանը իւր խորհրդատուների հետ մտածում էր մի կերպ թուլացնել սօֆթայութիւնը և բոլորովին իւր ձեռքն անցկացնել վարչութեան ղեկը: Նա մտածել էր նախ սօֆթայութեան (խլամ հոգեւորականի) եկամուտը բոլոր վազըֆը (շամլիների անշարժ կաշքերը, որոնց եկամուտով կառավարւում է իսլամ հոգեւորականութիւնը) տիրելով և ապա քաղցածութեան մասնելով, թուլացնել և ստրկացնել հոգեւորական դասը: Բայց սօֆթաները, ժամանակին նկատելով գործի դրութիւնը, նամանաւանդ որ չէին էլ սիրում նրա եւրոպական տիրապետներին նմանելու սովորութիւնները, մի գիշեր երեք բարձ դրին թշառ միապետի բերնին ու խեղդեցին Իսկուտարի սարի գլխին, Չամլիջայի սարայում: Սուլթան Մէջիւն էլ շատ աշխատեց սօֆթայական ոյժին զիմադրել, բայց միշտ խոնարհեց և երբէք նպատակին չը հասաւ: Այդ իսկ պատճառով հարբեցողութեամբ անցկացրեց կեանքը, Ղուրանի վարդապետութեան հակառակ ոգիւից խմիչքներ ընդունելով:

—Ի՞նչ հակառակութիւն կար, էֆէնտի:

—Սուլթան Մէջիտը ուզում էր, եւրոպական պետութիւնների պահանջման համաձայն, կրօնի ազատութիւն և հաւասարութիւն տալ մեր երկիրներում: Այդպիսի մի ստորութեան իսլամականութիւնը չէր կտրող համբերել: Բացի այդ, միշտ ստիպում և թախանձում էր բարձր հոգեւորականութեան, որ վճիռ տար իւր մահից յետոյ որդուն Մուրատ-էֆէնդուն զահակալելու, հակառակ իսլամական ժառանգական օրէնքների: Ո՞վ կը յանդգնէր այդպիսի հակաիսլամական պահանջներն ընդունել: Երբ վերջին անգամ նա եւրոպական պետականներին պատասխանել էր, որ համաձայնում է կրօնաւիժի իսլամներին ներողամիտ աչքով նայել, էլ համբերելն

անհնարին դառնալով՝ Ֆրանսիացիք բերել տրւած շահականիա զինով
թուանաւորեցին նրան սօժթաները: Թողնենք այս և վերջացնենք
մեր խօսքը:

—Այսպէս, ուրեմն մեր պետութիւնը՝ իսլամականութիւնն է,
իսլամական ամեն մի անհատ այս երկրում թէ ժողովուրդ է, թէ
զինւոր է և թէ իշխան: Հաւասար ժողովրդական սնդամներ են
իսլամականութեան մշակները սօժթաների, իւլէմների և Սուլթանի
հետ, հաւասար զինւոր են բոլորը միասին իսլամականութիւնը
պաշտպանելու համար, հաւասար վայելում են ամենքը պետական
բարիքները և իշխանաբար ամեն մի իսլամ իրաւունք ունի հրամա-
յելու պետութեան բոլոր հպատակներին և հարկատուներին: Այս է
մեր սահմանադրութիւնը, այս է մեր երկնացին վարդապետութիւնը
և այսպիս Նէյրիաթի դէմ դործելը կը նշանակէ ջնջել իսլամակա-
նութեան իրաւունքները: Ոչ ոք չի կարող զիջանել ու համբերել,
տեսնելով մի այնպիսի խայտառակ ընթացք և ամեն մի իսլամ ու-
նի այնքան զգացում և քաջութիւն իւր սրտում, որ կարողանայ
իւր նախնիքներից աւանդւած իրաւունքները պաշտպանել: Հասկա-
ցող իսլամը միշտ Նէյրիաթի զինւոր է—սօժթա:

Բըռ... բռ... կէսօրաց թմբուկը ածեցին և Սադըդ էֆէնդին
սկսեց արագ արագ կրկին նախկին ձեւը տալ իւր զգեստներին:
Պէտք է յայտնեմ ձեզ, ընթերցող, որ ամեն բան տարօրինակ էր
մեր լիցէյում. թուրքերի դասերը երկու ժամ էին տևում: Դ-ը Սալ-ը
Ֆրանսիացին սկզբում մի ժամ էր որոշել, բայց երբ նկատել էր
որ խօջաների մինչև դասարան մտնելը, կալոշներ հանելը, նստելը,
զրիչներ վեր առնելը, մինչև աշակերտների թանաքն ու եղեգնէ
զրիչը պատրաստելը միշտ քառորդ ժամից աւելի ժամանակ էր
տևել, այդ պատճառով մի քառորդ աւելացրել էր այդ դասերին,
որպէս զի հնարաւոր լինի թուրքերէն լեզուն իւր օժանդակ արաբա-
կան և սլարսկական լեզուներով մի կերպ սովորեցնել աշակերտնե-
րին: Բայց երբ կարող էին մէդրէաների անկիւններում ծալապատիկ
նստելով իրանց ուսուցանողների հազար ու մի ծառայութիւնները
կատարած և գաւազանի հարւածներով Ղուրանը բերան սովորած
խօջանները դաս աւանդել հայհոյանք և ծեծ վերջացրած մի դա-
սարանում: Դ-ը Սալ ից յետոյ զիրեկտորները յուսալով, որ դասի

Ժամանակամիջոցը երկարացնելով կարելի է օգնել զասաւանդութեան, աստիճանաբար երկու ժամի էին հասցրել ու միշտ յուսակաւոր մնացել: Երբէք չէին մտածում տղէտ և նախապաշարեալ խօջաներին փոխել, որոնց ոչ թէ զասարան, այլ ուսումնարանի պարտէզի շէմքից անգամ ներս թողնելը ամենամեծ յանցանք պէտք է լինէր:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ՅԱԿՈԲ ԱՆԱԳԶԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

VIII

Գործարանական արդիւնաբերութեան և վաճառականութեան համառօտ տեսութիւնը անելուց յետոյ՝ զառնանք մեզ զբաղեցնող խնդիրներին—գործարանականութեան բարգաւաճմանը և մեր ընկած վաճառականութիւնը իր ցանկալի բարձրութեանը վերածելուն—մի կողմ թողնելով այն հարցը թէ արդիւնագործութեան որ ճիւղերը ցանկալի է որ զարգանային գործարանական ճանապարհով և որ ճիւղերը՝ տնայնագործական—հարցեր՝ որոնք բաւականաչափ պարզաւ չեն տակաւին:

Որպէս զի գործարանականութիւնը տարածւի, ծաղկի՝ նրան հարկաւոր են մեր կարծիքով.

Նախ՝ դրամադրութիւն և ապա՝ գործադրական տեխնիկական գիտութիւն, գործին հմտութիւն, նախաձեռնող ոգով և վարելով ընդունակութեան հետ միասին:

Խոշոր և միւսնոյն ժամանակ ազատ դրամադրութիւններ մեզանում զրեթէ չկան: Մեր ունեցած տեղեկութիւնների համեմատ՝ եթէ այսօր Թիֆլիսում հրապարակի վերաց լինի որ և է ընկերու-

¹⁾ Տես «Մուրճ» 1893 թ. № 1:

Թեան ծրագիր,—ընկերութեան, որի շահաւէտութիւնը երաշխաւորէր անգամ, և հարկ լինէր ժողովելու մի միլիոն ռուբլու դրամազուխ—Թիֆլիսում՝ չնայելով նրա հարստութեան հաշակին՝ 100—200 հազարով մասնակցողների թիւը շատ սահմանափակ կը լինէր։ Գալով Բազուին՝ պէտք է ասել, որ աղատ դրամը աջնոեղ աւելի ևս հազաւորուեց և որ մասնաւոր անձինք, նոյն իսկ ընկերութիւններ, ուրախութեամբ վճարում են տարեկան տոկոս 12⁰/₀ և աւելի։

Բայց պակասող այդ խոշոր դրամազուխների փոխարէն մենք ունինք վաճառականների մօտ շատ մանր դրամազուխներ՝ զետեղւած այնպիսի ձեռնարկութիւններում, որոնք, ինչպէս վերև տեսանք, արդէն գոտնուում են յետադիմութեան—եթէ չասենք քայքայման—շրջանի մէջ. և այդպիսով այդ ձեռնարկութիւնները ոչ թէ միայն մի հաստատուն, շօշափելի շահ չեն տալիս իրանց տէրերին, այլ նոյն իսկ ոչ մի երաշխաւորութիւն չեն ներկայացնում իրանց մէջ զետեղւած դրամազուխները հետզհետէ սպառման վտանգից զերծ կացուցանելու։

Տեսնելու էր, մասնագէտներ—թէև ոչ ամեն արդիւնաբերութիւններից—մեզանում կան, բայց նրանք թէ սեփական միջոցների սղութեան և թէ դրամատէրերի անտարբերութեան պատճառով իրանց զիտութեան գործադրութիւն քիչ գտնելով մեղանում՝ կամ նւիրւել են ուրիշ զբաղմունքների, կամ շրջում են անգործ։ Վերջապէս դրանց պատրաստելը կամ առժամանակ դրսից բերելը մեծ դժւարութիւններ չունի։

Գալով նախաձեռնող ոգու և վարելու ընդունակութեան՝ չի կարելի ասել, որ մեզ պակասում են դրանք։ Այն գործարանական և առևտրական հաստատութիւնները, որ այժմ գոյութիւն ունին մեզանում և որոնք ստեղծւել են անհատական ոյժերի շնորհիւ, առանց պետական որ և է օժանդակութեան—ապացոյց են նախաձեռնող ոգու ներկայութեանը, իսկ այդ հաստատութիւններից նրանք, որոնք բարեկարգ վիճակի մէջ են—վկայ են, որ ձեր մէջ ևս կան վարելու ընդունակ անձնաւորութիւններ։

Այստեղ չի կարելի լռութեամբ անցնել երկու հայերի վերայ, որոնցից մինը (Նուխ-Մելիքով) Մոսկւայում 1855 թւին հիմնեց

մեռաբսի թելի առաջին մանարանը, որը յետոյ 60-ական թվերին (Յակոբ Վարդազարեանի ձեռքով) փոխադրւեց Ներքին-Ազուլիս գիւղը, և միւսը (Մկրտիչ Մելիքեանցով) Մոսկւայում բաց արաւ առաջին «պլիւշի» գործարանը:

Եւ այսպէս, մեր երկրի հում բերքերը մշակելու և նրանց, իբրեւ գործարանական արդիւնք, տեղական ազգաբնակութեանը մատակարարելու համար մենք ամեն ինչ ունինք, բացի գործարաններէրից: Քննենք այժմ այն պատճառները, որ մեզ խանգարում են լրացնել այդ պակասը և տեսնենք թէ որքան հնարաւոր է դրա իրագործումը:

1) Խոշոր դրամագլուխներ ի բացակայութիւնը: Քանի որ, ինչպէս տեսանք, խոշոր դրամատէրեր մեզանում սակաւութիւ ևն և եղածները գրեթէ ամենք խրաւժ են զանազան ուրիշ ձեռնարկութիւնների մէջ (նաւթային արդիւնաբերութիւն, արքունի կապալներ, բանկային հաստատութիւններ և այլն). բացի սրանից, քանի որ իսկապէս անհեռաւորութիւն կը լինէր որ և է դրամատէրի կողմից իր ամբողջ կարողութիւնը մոցնել մի դեռ ևս անծանօթ, անփորձ ձեռնարկութեան մէջ—մեզ մնում է գործել հաւաքական ուժով, ընկերութիւններով: Եսկ մեր ընկերութիւնները ինչպէս են կազմւում:—Ըստ մեծի մասին առանց մշակւած, հիմնական և իւրաքանչիւր անդամի ու կառավարչի պարտաւորութիւններն և իրաւունքները սահմանող կանոնների: Ուստի՝ հէնց որ տեղի է ունենում որ և իցէ ձախորդութիւն—փոխանակ անկողմնապահ կերպով քննելու իրերի դրութիւնը, որոնքու մնասի իսկական պատճառը, ուղղելու կատարւած սխալը և աւելի աչալրջութեամբ առաջ տանելու գործը—ընկեր ընկերի վերայ է բարձում յանցանքը, իսկոյն սկսւում է անբաւականութիւն, վէճ և ահա լուծւեց ընկերութիւնը: Նուիրւայ առեւրական ընկերութիւնը—որի մասին վերեւ խօսք եղաւ.—այդ կերպով կազմւած ընկերութիւններից մէկն էր. ոչ մի կանոնադրութիւն, ոչ մի հրահանգ չը կար. ամեն ինչ կախւած էր անփոփոխ կառավարչի բարի կամքից, որը—ի դէպ ասենք—ընկերութեան բախօից վերին աստիճանի շիտակ և անշահասէր մարդ էր. նրան իբր թէ օգնում էին խորհրդով ընկերութիւնից ընտրւած 4 անդամներ: Քանի որ ընկերութիւնը տալիս էր 40—60%⁰

շահ—ամենքը դո՛ւ էին. իսկ երբ վերայ հասաւ 60-ական [թւերի վերջերում՝ անդի ունեցող կրիզիսը—իսկոյն բարձրացան տրտունջներ, աղմուկներ, որոնց հետեւեց բաժանումն:

2) Գործի ձեռնարկումն առանց բաւականաչափ դրամագլխի, որը հնարաւորութիւն չէ տալիս ձեռնարկողներին գործը այնքան ընդարձակելու, որ իրանց ապրանքը շուկայում գնի և յատկութեան կողմից արտաքին մրցումների դիմանայ: Բացի դրանից՝ այդպիսի գործարանատէրերը միշտ ստիպւած են լինում [թանդ տոկոսներ վճարել անհրաժեշտ դրամը ձեռք բերելու համար, որը իր փնասակար ազդեցութիւնը անում է նրանց անդինաբերութեան դների վերայ: Այսպիսի հանգամանքներում եթէ մի արտաքին ձեռք օգնութեան չէ հասնում—նրանց բանը պրծած է: Բարոն Կուչենբախ Բորչւալուի զաւառում 1863 [թւին հաստատուելով՝ իր 12 հազար ռուբլիովը հիմնում է սկանրի գործարան շէշգարական գրութեամբ: Բայց շուտով նկատելով իր անկարողութիւնը՝ մի քանի անգամ դիմումներ է անում պետութեան և 26 հազար ռուբլի ներւած պարտքն ու 27 հազար ռուբլի փոխաւումութիւնը հաղիւ [թէ բաւական են լինում նրան կարգի դնելու իր գործարանը: ¹⁾

3) Ձեռնարկութեան անհեթեթ լինելը կամ ըստ ծաւալին, որը չներկայում գործատէրերին որ և իցէ ներգործական դեր ստեղծել իրանց համար արդինաբերական և առեւտրական ասպարիզում՝ նրանց խաղալիք է շինում ազդեցիկ մրցակիցների և շրջապատող ընթացիկ հանգամանքների ձեռքում (այս վիճակն ունէին Բադուում կէրոսինի այն փոքրիկ գործարանատէրերը, որոնք խոշորների հետ միասին միւլնոյն ասպարիզում գործել չկարողանալով՝ շաղարեցրին իրանց գործառնութիւնը). կամ ըստ կարեւորութեան, որը ոչ մի պակաս չլրացնելով ժողովրդական տնտեսութեան մէջ՝ ոչ մի առաջադիմութեան հաւանականութիւն չէ ներկայացնում ձեռնարկողներին: Յնկով, Զուբալով և ընկ. 1883 [թ. Գերմանիայից բերել ունին կառարելադրւած, նաւթով վառող հնոցներ իրանց հացապործ վարպետներով, բայց որովհետև Թիֆլիսի

¹⁾ Обзоръ фабр. и завод. Тифл. губ. Гулишамбаровъ 1888 г.

ազգաբնակութիւնը կարիք չունէր իր սալորական հացը թողնելու և իր ստամոքսը ուրիշ հացի ընտելացնելու՝ թէև դա մի փոքր էժան ևս լինէր, ուստի ընկերութեան հացը՝ նրա բոլոր ջանքերին հակառակ՝ ընդունելութիւն չգտաւ ¹⁾։

4) Անպատճառ մի մեծ, մի փայլուն գործի ձեռնարկելու սէրը։ Բազում կան նաւթային արդիւնագործութեան հետ առնչակից բաղմաթիւ մանր զբաղմունքներ, աւելի ապահով և աւելի շահաւէտ միջին զբաղմունքներ ի համար քան թէ նաւթային արդիւնաբերութիւնը. այսպէս են՝ հորերի փորելը, փայտեայ և թիթեղեայ արկղների շինելը, տակառագործութիւնը և այլն. բայց սրանք բոլորն էլ օտարների ձեռքին են—մենք սիրում ենք նաւթային գործում կամ հորատէր, կամ կէրոսինի գործարանատէր լինել, կամ երկունսն էլ միասին։

5) Գործնական հասկացողութեան և ըմբռնողութեան պակասութիւնը՝ տեղի անսխալ ընտրութեան վերաբերմամբ։ Շմիդտ 1856 թ. պետութեան օգնութեամբ Թիֆլիսում Կուր դետի վերայ սարքում է 300 հազար ռուբլի նստող ջրաղաց, բայց յետոյ նկատում է, որ լաւ տեղ չէ ընտրել և որ դետից օգտուելը իրան շատ թանգ է նստում՝ ամեն տարի նորանոր ծախքեր պահանջելով ջրի հոսանքի կապրիքներից ազատ մնալու համար։ Շմիդտ անանկանում է, իսկ նրա ջրաղացը՝ շոգէաղացի փոխւած՝ այժմ Թամամշեկին է պատկանում ²⁾։ Երկրորդ օրինակ. ինժեներ-տեխնոլոգ Կանդուրալով Արտաղովի հետ միասին 1878 թ. Թիֆլիսում բաց արին կաւեղէն արդիւնքների գործարան։ Երբ ամեն ինչ շինւած վերջացած էր՝ յետոյ նկատեցին որ տեղի ընտրութիւնը անաջող է—մօտակայքում ոչ մի տեղ լաւ տեսակի կաւ չկայ։ Այդ գործարանը փակեց 1883 թ. մեծ դեֆիցիտով ³⁾։

6) Հիմնողների զուրկ լինելը անհրաժեշտ գործնական զիտութիւնից և բոլոր յոյսը միայն տեխնիկների վրայ դնելը։ Իշխ. Երիտով 1841 թ., պետական նպաստով բաց է անում սեփական կալւածքում ապակիի գործարան։ 30

¹⁾ ²⁾ ³⁾ Обзоръ Фабр. и Завод. Тиф. губ. Гулимамбарова 1888.

տարի շարունակ ի վնաս իր յամառ տիրոջ գործելուց և այդքան միջոցում մի կարգին ապրանք դուրս բերել չկարողանալուց յետոյ՝ երբ իշխանի մահւամբ գործարանը 1872 թ. կապալով անցնում է Եպիստէյնի ձեռքը—յայտնուում է, որ նախկին տեխնիկը իր քթի տակ (300 քաջլի վրայ) եղած պատուական աւազը չէր նկատել, այլ այդ նիւթը, այն էլ ստոր տեսակը, հեռի տեղից էր բերել տուլիս ¹⁾։ Ուրիշ օրինակ. Ղամբարով և Սահակով բաց են անում Գորիում կաշւի գործարան 70-ական թւերին. բայց որովհետեւ իրանք գործից հասկացողութիւն չունէին և իրանց բոլոր յոյսը դրել էին գերմանացի վարպետների վերայ—շարունակել չկարողացան ²⁾։

7) Յատուկ կառավարչի չը լինելը, որ պատահում է սակաւաթիւ անդամներից բաղկացած ընկերութիւններում, երբ ամեն մէկ անդամի՝ կարգադրութեան մէջ խառնուելով՝ տրուում են գործակատարներին՝ յաճախ իրար հակասող՝ հրահանգներ, անտարակոյս, ի վնաս ընդհանուր գործի։ Այսպիսի դէպքերի շատ օրինակներ այս տողերը զրոյին յայտնի են ագուլեցիների առևտրական ընկերութիւնների կեանքից։

8) Անպարտաճանաչ և անազնիւ կառավարիչը, որը աւելի սեփական շահերի ու անձնական հանգստութեան վերայ է մտածում, քան թէ իր կառավարութեան յանձնած հաստատութեան վրայ, և մատերի արանքով է նայում տեղի ունեցող թանկ գնումների, անշահ վաճառումների, շուայլ և աւելորդ ծախքերի, գործակատարների զեղծումների և կեղծ հաշւետուութիւնների վերայ, որոնց հետեանքը յայտնի է։

9) «Եօլայ տանելու» սկզբունքը, — մի վնասակար սկզբունք՝ որ առաջնորդում է մեղ մեր ամեն ձեռնարկութիւնների մէջ։ Կառավարիչը, տեխնիկը, մեքենավարը, հաշւապահը, վարպետը, գործակատարը, բանւորը մի քիչ պակաս էլ հասկանան իրանց գործը—հոգ չէ, եօլայ կը տանեն, միայն թէ էժան գնով վարձւին։

10) Գործողութեանց նախագծի և ծախուց նախահաշւի բացակայութիւնը, որի շնորհիւ հաստատութիւնը ընթանում է միշտ ենթարկւած անդեկ և անկողմնա-

¹⁾ ²⁾ Обзоръ Фаб. и Завод. Тиф. губ. Гулишамбаровъ 1888 г.

ցոյց նաւի պէս՝ հանգամանքների բերմունքին, կամ վարիչների կամայականութիւններին ու անգիտակցական սխալներին:

11) Կանոնաւոր հաշւի բացակայութիւնը, որի շնորհիւ հաստատութիւնը ամեն ժամանակ հնարաւորութիւն է ունենում տեսնելու իր ճշգրիտ պատկերը, տեղեկանալու իր իսկական վիճակի մասին:

12) Օժանդակող գործարանների պակասութիւնը: Յայտնի է, որ շատ զանազան գործարաններ կապ ունին միմեանց հետ—մէկը լրացնում է միւսի պակասը: Արդ՝ քանի որ մեզանում գործարանները չնչին թւով են, շատերը բնաւ չը կան և եղածները օրինակ, մեքանիկական գործարանները, շատ պակասաւոր են, —այս պատճառով աշխատութեան բաժանումն տեղի է ունենում մեր մէջ և մեր գործարանատէրերը հարկադրւած են լինում թէ մէկ գործարանի տեղը երկուսը բանալու—օրինակ Միրզոյեվը, կտաւի գործարանը բանալու համար, առաջ պէտք է բամբակի մանարան բաց անէր—և թէ օժանդակող բաժանումներ բանալու—օրինակ կտաւի գործարանին կից՝ փականագործութեան բաժանումն:—Լինում են դէպքեր, երբ գործարանատէրերը ստիպւում են ամիսներով դադարեցնել գործը, մինչև մի վնասւած մեքենայ կարկատել տան երկրից դուրս մի հեռաւոր գործարանում:

13) Առհասարակ աշխատաւոր ձեռքերի և մասնաւորապէս վարպետ գործաւորների սակաւութիւնը և թանգութիւնը մեզանում—հանգամանքների, որոնք ոչ թէ միայն անհնար են կացուցանում ներմուծող ապրանքների հետ մրցումը՝ թանգ նստեցնելով տեղական արդիւնքները, այլև բանւորների գործադուլների՝ դէպքում ամիսներով գործարանը փակելու և հեռի տեղերից վարպետ բանւորներ բերելու հարկին մէջ են դնում գործարանատիրոջ: Այսպիսի մի դէպք էր, որ ստիպեց Միրզոյեւին լոճից գործաւորներ բերել, թէև զրանք ոչ էժան են նրստում և ոչ երկար մնում են մեր երկրում:

IX

Ուշի ուշով քննելով մեր այստեղ մէջ բերած պատճառները՝ մենք գտնում ենք, որ հնարաւոր է վերացնել նրանց և գործարա-

նական գործի համար ստեղծել զոյութիւն ունեցողներին հակառակ պայմաններ:

Մեր կարծիքով այդ պայմանները կարող են հետևեալները լինել՝

1) Բարեկազմ ընկերութիւններ:

2) Բաւականաչափ դրամագլուխ:

3) Կարեւոր, շահաւէտ, թէև ոչ միշտ փայլուն ձեռնարկութիւններ:

4) Անսխալ ընտրութիւն տեղի:

5) Գործագէտ, շիտակ, ըստ արժանոյն վարձատրւած կառավարիչներ, տեխնիկներ, հաշւապահներ, գործակատարներ և այլն: Աւելի լաւ է՝ եթէ սրանք ընկերներից լինեն, կամ զոնեա՝ եթէ սրանց սեփական շահերը ուղղակի կախած լինեն հաստատութիւնների զուտ շահերից:

6) Որոշ, անթերի ծրագիր:

7) Կանոնաւոր հաշւապահութիւն:

Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքներին, որ մեզանում օժանդակող, միմեանց պակասը լրացնող գործարաններ չը կան և աշխատող ու վարպետ ձեռքերը թանգ են—զրանք ժամանակի հարցեր են և գործարանական գործի ծաղկելովը՝ ինքնին կը վերանան: Գործաւորների սակաւութեան և օրավարձի թանգութեան պատճառը զխաւորապէս պէտք է որոնել ընտանեկան կազմակերպութեան մէջ: Յայտնի է որ ամեն տեղ օրավարձի իջեցնողը գործաւորուհին է. իսկ մեզանում իդական սեւը, մանաւանդ հարեմական կեանքով սնւած թրքուհին, իրան, որքան կարելի է, հեռի է պահում գործարանական աշխատութիւնից, կամ գուցէ սոխպած է այդպէս անել: Բայց պէտք է աւելացնենք, որ իրերի այդ վիճակը, որի օրինակները մենք տեսնում ենք Վարաբաղում, Նուխիում, Օրդուբաթում, տեղական չէ. և եթէ մենք կարողանանք ընտրել տեղը, հիմնել մեր գործարանը կենտրոնում—մենք ոչ գործաւորների պակասութիւն կը զգանք և ոչ. թանգ օրավարձ կը վճարենք:

Վերջացնելով գործարանների մասին մեր ասելիքը՝ չենք կարող չնկատել, որ մի ժամանակ ամենքը այն կարծիքի էին, թէ

շոգիի ոյժը մանեղով արդիւնաբերութեան մէջ և ստեղծելով այժմեան ընդարձակ, տեղ տեղ ահագին գործարանները՝ պիտի իսպառ կլանէ, մեռցնէ տնայնագործութիւնը: Բայց փորձերը ցոյց տւին՝

1) Որ միայն շատ ընդարձակ գործարանների արդիւնքները մեքենաների շնորհիւ էժան են նստում տնայնագործութեան արդիւնքներից.— ուրեմն որ տնայնագործութիւնը դեռ կարող է գոյութիւն ունենալ:

2) Որ գործարանականութիւնը ստեղծում է զրամագլխի տիրապետութիւն աշխատանքի վերայ, մի բռնութիւն, որի դէմ աշխատանքի ներկայացուցիչները միայն գործադուլներով են բողոքում.— ուրեմն որ տնայնագործութիւնը, որը մի յայտնի չափով երաշխաւորում է բանւորների անկախութիւնը զրամագլխից, արժանի է ամենայն խրախուսանքի և ցուցմունքների ինտելիգենտ անձինքների կողմից: Վերջին տարիներս նոյն իսկ պետական շրջաններում միջոցներ են ձեռք առնւում տնայնագործութիւնը զարգացնելու, ինչպիսի են՝ փոխատու բանկեր, մնայուն ցուցահանդէսներ և այլն:

X

Վերև մենք ծանօթացանք մեր վաճառականութեան ներկայ վիճակի հետ,— այստեղ նրա պահանջած փոփոխութիւնների մասին խօսելուց առաջ՝ տեսնենք թէ ի՞նչ պիտի լինի վաճառականութեան դերը ժողովրդական տնտեսութեան մէջ:

Վաճառականը պէտք է միջնորդ լինի արտադրողի և սպառողի մէջ— եթէ դրանք հնար չունին տեղի հեռաւորութեան, ժամանակի սղութեան, զրամի պահստութեան, կամ այլ պատճառներով ուղղակի յարաբերութեան մէջ լինել միմեանց հետ: Քանի որ՝ այդ միջնորդների թիւը հարկաւոր չափից աւելի է— որպէս զի գոյութեան կռիւը ստիպէ նրանց զանազան ղեղձումներ ու խարդախութիւններ գործել զիմացիների հետ մրցելու համար.— ուրեմն, քանի որ նրանք շիտակաբար են կատարում իրանց պաշտօնը— համեմատաբար մի շնչին վարձատրութեամբ և մեծամեծ ռիսկներով մատուցանում են մի մեծ ծառայութիւն տեղական ազգաբնակչութեանը— նրանք ամենայն պատւի և շնորհակալութեան արժանի են վերջինի կողմից:

Բացի սրանից՝ վաճառականը կարող է նաև մեծապէս նպաստել գործարանական արդիւնաբերութեան զարգանալուն՝ բաժանելով գործարանատիրոջ հետ աշխատութիւնը։ Վաճառականը կարող է, օրինակ, դնել բամբակը գիւղացուց, բերել և վաճառել մանարանատիրոջ՝ վերջինիցս ի փոխարէն և յապահովութիւն վերցնելով նրա մանածը նրա հաշւին յանձնավարձքով վաճառելու։ Այս այդ մանածը վաճառելով կտաւի գործարանատիրոջ՝ վերցնել նրանից վերոյիշեալ պայմաններով նրա կտաւը։ Յետոյ այդ կտաւը վաճառելով չթագործին՝ վերցնել նրանից նոյն պայմաններով նրա չիթը և այլն։

Եթէ մենք կարողացանք ուղիղ սահմանել վաճառականութեան կոչումը ժողովրդի անտեսական բարօրութեան տեսակէտից, — այդ կոչման վերածելու համար մեր արդի ընկած վաճառականութիւնը — բացի վերացնելուց այն պակասութիւնները, որոնք ընդհանուր են ամեն տեսակ ձեռնարկութիւնների և որոնց վերայ մենք մատնանիշ արինք գործարանականութեան մասին խօսելիս — հարկաւոր է, մեր կարծիքով, որ հեռանան ասպարիզից բոլոր աւելորդները — մանաւանդ նոր սկսողները, անընդունալիները, զժգոհները, որոնք իսկապէս խանգարում են միւսներին — միացնեն իրանց դրամագլուխները, կազմեն ակցիոնէրական ընկերութիւններ և ձեռնարկեն գործարանական ու գիւղատնտեսական արդիւնաբերութիւններին, մինչև անգամ՝ նաև վաճառականութեան, եթէ դրանով մի պակաս ունին լրացնելու, ինչպէս մեր վերև յիշած աշխատութեան բաժանումն է գործարանատիրոջ հետ։

Երբ այդպիսով, աւելորդների հեռանալով, շուկայում կը մնայ վաճառականների միայն անհրաժեշտ քանակութիւնը, — այն ժամանակ մի կողմից նրանք՝ վաճառականները՝ ապահոված լինելով իրանց շահերի մասին՝ ստիպւած չեն լինիլ խարդախութիւններ գործելու, որպէս այժմ, իրանց ապրուստը հայթհայթելու համար, և մէկ կողմից հասարակութիւնը, մանաւանդ մեր ինտելիգենցիան, որ այժմ այնքան արհամարհաբար է վերաբերւում նրանց, կը ստիպւի ձանաչել և խոստովանել վաճառականների ծառայութեան կարեւորութիւնը։

Իսկ այն վաճառականների մասին, որոնք առանց դրամադիւի,

միայն պարտքով, վարկով են գործ տեսնում և որոնց թիւը դժբաղ-
դաբար քիչ է մեզանում—խօսել աւելորդ ենք համարում. նրանք
զրանով միայն վտանգի տակ են դնում իրանց պատիւը և վնասներ
պատճառում թէ իրանց վարկ բացողներին և թէ դրամատէր ու
շիտակ վաճառականներին:

Վաճառականութեան մասին մեր ասածներից այսքանը իսկա-
պէս վերաբերում է նրա տեսական, իդէալական կողմին. բայց՝ եթէ
մեր առաջարկած միջոցները գործնականապէս անիրագործելի են,—
ցանկալի կը լինէր գոնէ, որ վաճառականները բռնէին այն ճանա-
պարհը, որի վերայ գտնւում են Եւրոպայի առևտրականները: Նրանք
կամ յանձնակատար են, որոնք ընդունում են ամեն տեսակ ապ-
բանքների վաճառելու և գնելու յանձնարարութիւններ ի հաշիւ
յանձնատուների. (սրանք ըստ մեծի մասին և աւանդառու են, այն
է իրանց ընդունած ապրանքի գէժ կանխավճար տուող, ինչպէս
վերև ասացինք). կամ ներկայացուցիչ գործակալ որ և է գործա-
րանի, որոնք նպաստում են իրանց դրամով գործարանտիրոջը և
նրա արդիւնքները վաճառում:

IX

Մնում է մեզ երկու խօսք ևս ասել արդիւնաբերական և
առևտրական ընկերութիւնների կազմելուն արգելք եղող պատ-
ճառների մասին:

Թէ մենք հասկանում ենք միացած ուժով դործելու օգուտը—
դրան աւելի պարզ ապացոյց է կարող լինել, քան թէ այն բնո-
րոշ խօսքերը, որ ասում էին մի քանի տարի առաջ մի նախադժւած
առևտրական ընկերութեան նախաձեռնողները այս ու այն վաճա-
ռականի զիմելով՝

«Եղբայր, ասում էին նրանք, հէնց այն խնայողութիւնը՝ որ
մեզանից իւրաքանչիւրը ունենալու է այս ու այն քաղաքի ծախ-
քերում և այն տարբերութիւնը գների մէջ, որ մենք ունենալու
ենք միմեանց մրցակից չը հանդիսանալուց ապրանքի թէ գնման և
թէ վաճառման քաղաքներում—եթէ մեզ մնան՝ բաւական է»:

Թէ՛ մենք ձգաւմն ունինք ընկերութիւններ կազմելու—դրան
ապացոյց են այն բազմաթիւ ընկերութիւնները, որոնք ծնունդ են

առել վերջին երկու-երեք տասնեակ տարիներում, թէև նրանց ամենամեծ մասի կեանքը շատ կարճատև է եղել և վախճանը՝ ողբալի:

Ուրեմն՝ մենք թէ՛ լմբռնում ենք ընկերութիւնների օգտուէտութիւնը և թէ՛ ձգտում ենք նրանց կազմելու. բայց այսու ամենայնիւ ընկերական դործը մեզանում առաջ չի գնում և դրա պատճառը, բացի վերև մէջ բերածներից, —որոնք վերաբերում էին արդէն կազմւած ընկերութիւնների լուծւելուն—մենք զսնում ենք և հետևեալ՝ ընկերութիւնների կազմւելուն արգելք եղող՝ պայմանների մէջ:

1) Լուծւած և լուծւող անբարեկազմ ընկերութիւնների վհատեցուցիչ օրինակը:

2) Որովհետև ընկերութիւնները յաճախ փնաս են մասնաւորների շահերին, —ուստի վերջիններին մէջ միշտ գտնւում են զանազան մեքենայութիւններ լարող, այս ու այն անձի և նրա զործունէութեան վերայ սուեր զցող անհատներ, որոնց ինտրիզաների և կազմւող ընկերութեան անդամների պարզամտութեան և անինքնուրոյնութեան շնորհիւ նախաձեռնողների բոլոր ջանքերը ընդունայն են անցնում: Կախում և ջաքաթալում 3—4 տարի առաջ կազմւած ճոթավաւերների ընկերութիւնների նախաձեռնողները թէև կարողացան՝ զանազան մեքենայութիւնների հակառակ՝ գլուխ բերել իրանց ընկերութիւնները, բայց նրանցից առաջինը՝ Կախինը միայն 2 տարի գոյութիւն ունեցաւ, իսկ երկրորդը՝ Ջաքաթալինը հազիւ թէ պահւում է տակաւին՝ ընկերութեան խիստ պայմանների շնորհիւ:

3) Մեր խոշոր վաճառականները չեն ախորժում, որ մանրերն իրանց հետ ընկերանան, իրանց հաւասարեն:

Կարծեմք այս հանգամանքը շատ լաւ բացատրած կը լինինք բառ առ բառ մէջ բերելով մի՛ իբր թէ խոշոր վաճառականի խօսքերը իրանից ստոր համարւողի վերաբերմամբ.

«Թող, ասում էր նա, զատարկ կարասը զարկւի լի կարասին — տեսնենք թէ հրը ողջ կը մնայ»:

4) Մեր խոշոր վաճառականները եթէ համաձայնութիւն էլ չայտնում են մասնակցելու որ և իցէ ընկերութեան —նրանց առաջին և անփոփոխ պայմանը այն է լինում, որ զլիաւոր և գէր արշ-

տօնների վերայ իրանք և իրանց ազգականները նշանակեն կանխապէս:

5) Մտաւոր զարգացման, կրթութեան և սկզբունքի բացակայութիւնը ամենամեծ խոչընդոտն է, ինչպէս ամեն հասարակական, նոյնպէս և ընկերութիւնների կազմակերպութեան գործում: Անկիրթ մարդիկ առհասարակ չեն ախորժում սահմանափակել իրանց բացարձակ իրաւունքները, ճանաչել իրանց պարտաւորութիւնները, խոստովանել ընկերոջ իրաւունքը և յարգել ուրիշի կարծիքը: Բացի սրանից—տգիտութիւնը կասկածոտ է». տգէտը թէ կուրաբար չի հաւատում—նա միշտ կասկածելով է վերաբերւում դէպի ամեն ինչ, ամեն անձնաւորութիւն, ամեն երևոյթ: Նա գիտակցական հաւատ չունի, նա վստահութիւն չունի:

Մեր այստեղ մէջ բերած՝ ընկերութիւնների կազմելուն արգելք եղող՝ պատճառները թէև աւելի դժւար վերացնելի, դժւար զարմանելի են, քան թէ ընկերութիւնների անյարատւութեան և լուծւելուն նպաստող պատճառները, որոնց մասին վերև խօսեցինք—որովհետև սրանց արմատները գտնւում են մարդկանց իրանց մէջ, իրանց մտի և արիւնի մէջ,—սակայն այս հանգամանքը մեզ չպիտի վհատեցնէ. նախ՝ որ կան մեր հասարակութեան մէջ բաւական թւով այս հակահասարակական ախտերից ազատ մարդիկ, որոնք և, այսպէս թէ այնպէս, կարողացել են հիմնել այն՝ թէ հանգուցեալ և թէ կենդանի՝ ընկերութիւնները, որ մեզ յայտնի են և ապա՝ դրանք, այդ պատճառները, իբրև անկրթութեան հետևանք, ժամանակաւոր են միայն:

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՍԵՐՃԱՏՈՒԹԻՒՆԸ

ԲԺ. ԹԱԴԵՈՍ ԶԱՔԱՐԵԱՆՅԻ

Ա

Սերհատութիւն ասելով մենք կամենում ենք արտայայտել կենդանի կազմաւածքի այն կենսաբանական (բիոլոգիական) զրու-թիւնը, երբոր նա կորցնում է կենդանութեան գլխաւոր հիմունք-ներէից մէկի—որդե՞նութեան—ընդունակութիւնը:

Բոլոր կենդանական աշխարհը՝ սկսած ամենամանր կազմաւած-քից, որը, մի քանի հարիւր անգամ խոշորացոյցի տակ մեծացնե-լուց յետոյ հազիւ միայն նկատելի է լինում, մինչև վիթխարի փիղը, ենթարկւում են այն մեծ տիեզերական օրէնքին, որ անւան-ւում է «Գոյութեան կռիւ» և որը առաջին անգամ պարզեց անգ-լիացի Զարլզ Դարւինը:

Երկու խօսքով պարզենք այդ տիեզերական օրէնքի միտքը: Ամեն մի կենդանի կազմաւածք աշխատում է պահպանել իւր անհա-տական գոյութիւնը աշխարհի վրայ: Այդ նպատակին հասնելու հա-մար նա ստիպւած է պաշտպանել իւր կեանքը հազար ու մի տե-սակ պայմանների դէմ, որոնք ամեն րոպէ սպանում են նրա գոյու-թիւնը. նա ստիպւած է պաշտպանուել այն կենդանիների դէմ, որոնք՝ կերակրւում են նրա մարմնով, այն կենդանիների դէմ, որոնք խլում են նրանից իւր սնունդը: Նա ստիպւած է զիմանալ

1) Ռուսաց вырождение կամ вымирание, եւրոպացոց dégénérescence բառերը մենք թարգմանում ենք սերհատութիւն խօսքով, որ կազ-մում ենք սերել (սերունդ) և հատնել (վերջանալ) բառերից:

կլիմայի խստութիւններին, երկրի անյաջող պայմաններին, քաղցին, ծարաւին և այլն: Այդ երեւոյթն է որ անւանւում է գոյութեան կռիւ և որից յաղթող են դուրս գալիս միմիայն այն անհատները, որոնք իրանց թէ ֆիզիքական և թէ հոգեկան կարողութիւններով ընդունակ են յաղթել ներկայացող վտանգներին և կամ խուսափել նրանցից:

Բայց ամեն մի անհատ, ինչքան էլ որ նա ընդունակ և զօրաւոր լինի, չի կարող իւր անհատական գոյութիւնը շարունակել յաւիտեան, որովհետև անհատական կեանքը ունի սահման և այդ սահմանն է անխուսափելի մահը: Այդ պատճառով անհատը աշխատում է շարունակել իւր գոյութիւնը սերնդի մէջ, առաջացնելով իւր նման անհատներ և հաղորդելով նրանց իւր առանձնապատկութիւնները: Սերունդ առաջացնելը վերին կարգի կենդանիների մէջ կատարւում է տարբեր սեռերին պատկանող երկու անհատների փոխադարձ յարաբերութեամբ: Սեռերի այդ տարբերութիւնը տեղի է տալիս «սեռական կռիւն», երբոր արական անհատը ստիպւած է խլել իւր նմանից իգական սեռի անհատին: Բացի սրանից, նա աշխատում է գտնել այնպիսի զուգակից, որը կարող է ժառանգաբար հաղորդել սերնդին աւելի զօրաւոր ընդունակութիւններ. հետեւաբար նա կատարում է այն՝ ինչ որ Դարւինը անւանում է «սեռական ընտրողութիւն»:

Այդ ընտրողութեան յաջողութիւնից է կախւած սերնդի յարաւեութիւնը: Թոյլ անհատները առաջացնում են թոյլ սերունդ, որը, անընդունակ լինելով զիմանալ շրջապատող վտանգներին, վաչր է ընկնում գոյութեան կռիւի մէջ: Այդ անկումը արտապայտւում է կամ անհատի անմիջական մահով և կամ նրանով, որ, թէև անհատը շարունակւում է ապրել, բայց կորցնում է սերունդ առաջացնելու ընդունակութիւնը:

Ահա այդ դրութիւնն է, որ մենք անւանեցինք սերհատութիւն: Դառնանք ուրեմն սերհատութեան խնդրին:

Նոյն իսկ առօրեայ կեանքի մէջ յաճախ մենք վկայ ենք լինում մասնաւոր ընտանիքների սերհատութեան: Եւ ոչ միայն մասնաւոր ընտանիքներ այլ և ամբողջ զիւղեր և հասարակութիւններ

մեր աչքի առաջ սերհատուում են, թողնելով իրանց հոռից ընդարձակ աւերակներ իբրեւ ապացոյց այն կռիւի, որը տարիների և դարերի ընթացքում տեղի է ունեցել այդտեղ զոյութեան համար: — Նոր-Ձեւանդիայի և Ասորայիայի բնիկները, Ամերիկայի կարմրակաշկները այժմ կամ բոլորովին անհետացել են կամ մօտ են անհետանալու: Վերջին տասնեակ տարիների ընթացքում նոյն իսկ քաղաքակիրթ Ֆրանսիայում ծննդաբերութիւնը այն աստիճան նւազել է որ շատերը սկսել են կասկածանքով նայել այդ մեծ ժողովրդի ապագայի վրա.— Lagneau'ի 1885 թ. Ֆրանսիական Ակադեմիային ներկայացրած ղեկուցումից երևում է որ Ֆրանսիայի 37 ղէպարտամենտներում (նահանգ) տարեկան մեռնողների թիւը աւելի մեծ է քան թէ ծնողներինը. իսկ մնացած ղէպարտամենտներում Բոդիօի վիճակադրութեան համեմատ ծնողների թիւը այնպէս է վերաբերւում մեռնողների թւին ինչպէս 25,8 : 24,0. մինչդեռ Ռուսաստանում այդ յարաբերութիւնն է 49,5 : 36,7, Պրուսիայում 38,7 : 27,2, Անգլիայում 35,6 : 22,0 ¹⁾:

Միևնոյն երևոյթը աւելի ևս լայն չափով նկատուում է նաև կենդանիների և բոյսերի աշխարհում: Հնագիտութիւնը (պալէօնտոլոգիա) մինչև այսօր արդէն գտել է մօտ 3.200 տեսակ կենդանիների մնացորդներ, որոնք մի ժամանակ զոյութիւն են ունեցել աշխարհի վրայ, բայց այսօր համարւում են վերջնականապէս անհետացած: Ուր են այն հսկայ խլէզները, վիթխարի մամուլները, յաղթանդամ իսթիոզաւրները և մաստոդոնտները, առիւծների և վագրերի ցեղակից մասայրոպոսները, որոնց կմախքները միայն այսօր գտնւում են երկրի խորաւոր շերտերում և որոնց զոյութիւնը վերադրւում է նախապատմական ժամանակներին: Ձկան շատերը նոյն իսկ այն կենդանիներից, որոնց չիշատակը դեռ կենդանի է մօտաւոր տարեդրութիւնների մէջ: Այդպէս են Եւրոպայի փասպարային արջը և քաւթառը, հիւսիսային հսկայ եղջերուն և վերջապէս ծովային կովը, որը դեռ ևս 18-րդ դարում նկարագրւած է Շտեյլէրի ձեռքով: Օրէցօր նւազում է նաև կէտերի և փոկերի

¹⁾ Տես պրոֆ. Эйхвальдъ—Къ вопросу объ уменьшеніи смертности въ Россіи, 42 8.

Թիւը, որոնցով մի ժամանակ այնքան առատ էին հիւսիսային ծովերի ջրերը:

Անհետացած կենդանիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս որ նախապատմական ժամանակներում այդ հսկայ կազմաճքները առաջացել են աւելի թույլ տեսակի կազմաճքներից այն նշանաւոր օրէնքի հիման վրայ, որ անւանուում է տեսակների ծագումն 1): Սկզբում նրանք եղել են աւելի թույլ և աւելի սակաւաթիւ. գոյութեան կռիւը ստիպել է նրանց զօրանալ և բազմանալ և, երբ այդ զարգացումը հասել է իւր զագագթնակէտին, նրանք սկսել են կրկին թուլանալ, մանրանալ, սակաւանալ և վերջապէս սերհատուել: Ինչպէս որ ամեն մի կենդանի անհատի համար բնական է ծնւել, զարգանալ և մեռնել, նոյնպէս և ամբողջ կենդանական տեսակի համար ընդհանուր կենսաբանական օրէնք է՝ ծագել, զարգանալ և սերհատուել. մի օրէնք, որից գերծ է եղել և չի կարող լինել ոչ մի կենդանի տեսակ:

Բ

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ծագում թէ արդեօք ի՞նչ վիճակ է սպասում այն կենդանի տեսակին, որը կենդանաբանների

1) Մի որ և է կենդանի փոխելով իւր կեանքի պայմանները (տեղը, կլիման և ալըն) ստիպւած է, իւր գոյութիւնը պահպանելու համար, չարմարեցնել իւր կազմաճքը ալդ նոր պայմաններին: Ալդ չարմարելու ձգտումը առաջացնում է կենդանու կազմաճքի մէջ մի շարք աչնպիսի փոփոխութիւններ, որոնք զգալի կերպով տարբերում են նորան իւր նախկին տեսակից: Ալդ փոփոխութիւնները կատարւում են ի հարկէ ոչ մի անգամից, ալ մի քանի սերունդների ընթացքում: Ալդպէս է բացատրում Գարւինը աչն բազմաթիւ կենդանական տեսակների ծագումը, որոնք գոյութիւն ունին ներկայ ժամանակ և որոնք ծագումն են առել մի ընդհանուր նախնական տեսակից: Գարւինը աղանձնների վրայ փորձեր անելով ցոյց տւեց որ մի տեսակ աղանձուց մի քանի սերունդների ընթացքում կարելի է ստանալ մի քանի զանազան տեսակ աղանձներ տարբեր նախկին տեսակից: Ալդ փորձերից հանձարեղ զխոնականը եղրակացրեց, որ եթէ մարդը ալդքան կարճ միջոցում կարող է ալդպիսի տարբեր տեսակներ առաջացնել, ինչու թույլ չտալ, որ նոյնը կարող է կատարել նաեւ բնութիւնը միլիոնաւոր տարիների ընթացքում:

լեզուով ասուում է բանական մարդ (homo sapiens) և որին Դիոգենէսը անւանում էր «անփետուր երկոտանի» իսկ Բիւֆոնը և նորագոյն բանաստեղծ-փիլիսոփաները անւանում են «բնութեան թագաւոր, բնութեան թագն ու պսակ»: Միթէ՞ այդ բանական արարածը պէտք է ենթարկւի նոյն թշւառ վիճակին, որին ենթարկւել են մամուլները, մասդոգոնները և ինթիոգաւները:

Վաթսուն, եօթանասուն տարի առաջ մի այդպիսի հարց տալը մինչև անգամ անվայել էր համարւում մարդու արժանապատուութեան համար. բայց այժմ, երբ Լամարկի, Դարւինի, Հէօկսլիի, Ֆոխտի, Հէկկէլի և ուրիշ գիտնականների շնորհիւ մարդը արդէն իջել է իւր առանձնաշնորհած բարձրութիւնից և անցել է կենդանական տեսակների շարքը, այլ ևս տեղիք չկայ կասկածելու, որ բնութեան յաւիտենական օրէնքների առաջ հաւասարապէս պէտք է խոնարհւի նաև մարդ-կենդանին, թէև լինի նա բանական և իմաստուն:

Դեռ ևս Դարւինի նշանաւոր աշխատութիւնը տեսակների ծագման մասին լոյս չէր սեռած, երբ Ֆրանսիացի բժիշկ Մորէլը, հիմնւելով միմիայն հիւանդների վրայ արած ուսումնասիրութեան վրայ, եկել էր այն եզրակացութեան, որ շատ հիւանդութիւններ պատճառ են լինում սեռական զգացումների թուլութեան, որդեճնութեան նւազելուն և տեսակի սերհատութեան: Այդ ուսումնասիրութեան հետեանքն էր նորա նշանաւոր աշխատութիւնը «Մարդկային սեռի ֆիզիկական, մտաւոր և բարոյական սերհատութեան մասին»¹⁾, որը լոյս տեսաւ 1857 թւին և որը մինչև այսօր ևս չի կորցրել իւր հեղինակութիւնը: Մորէլից յետոյ, այդ խնդիրը ենթարկեց բազմակողմանի ուսումնասիրութեան թէ մարդաբանների (անտրոպոլոգ), թէ վիճակագիրների (ստատիստիկոս), թէ բնաբանների (նատուրալիստ) և թէ բժիշկների կողմից, որոնք հաստատելով մարդկային ցեղի սերհատւելու ֆակտը, միեւնոյն ժամանակ աշխատեցին պարզել այն պայմանները, որոնք նպաստում են այդ երևոյթին:

¹⁾ Morel—Traité des dégénérescences physiques, intellectuelles et morales de l'espèce humaine.

Այդ պայմանների մէջ առաջին տեղը բռնում են աշխարհագրական պայմանները, որոնք ամենից աւելի ընդհանուր, աւելի տարածւած և միևնույն ժամանակ աւելի անխուսափելի են:

Տաք երկրի բնակիչները, օրինակի համար նեղրները, ինչքան էլ որ իրանց երկրում առողջ և ամրակազմ լինին, այսու ամենայնիւ սառը երկիր փոխադրելով սովորաբար վարակւում են թութախտով և մեռնում են: Մինչև անգամ բարեխառն կլիմային նրանք դժւարութեամբ են սովորում, և թէև աւելի քիչ են հիւանդանում, բայց զգալի կերպով կորցնում են որդեծնութեան ընդունակութիւնը: Ամերիկական կռւից յետոյ, երբոր նեգրները (1863 թ.) գերութիւնից ազատեցին, ամենքը կարծում էին որ այժմ իբրև ազատ քաղաքացիներ նրանք շուտով կաճեն ու կը բազմանան. սակայն փորձը ցոյց տւեց որ ընդհակառակը տարեցտարի նրանց թիւը սկսեց նւազել, չնայելով որ շատերը պատկանում էին արդէն երկրորդ կամ երրորդ սերնդին. նմանապէս էսկիմոսները և ուրիշ բեւեռային ցեղերը չեն դիմանում ոչ միայն տաք կլիմային, այլ սերհատւում են նոյն իսկ բարեխառն դատու տակ: Ինչ որ վերաբերում է Հնդկա-եւրոպական ցեղերին, սովորաբար կարծւում է որ նրանք ընդունակ են յարմարւել բոլոր կլիմաներին. սակայն եւրոպական զաղթականութիւնների դարաւոր պատմութիւնը ցոյց է տալիս որ այդ կարծիքը սխալ է: Չորս հարիւր տարուց աւելի է որ եւրոպացիներն սկսել են զաղթականութիւններ հաստատել տաք գոտու զանազան տեղերում. սակայն նրանց թիւը մինչև այսօր էլ այնքան աննշան է որ եթէ նոր զաղթողներ չլինեն, եղածներն էլ շուտով կանհետանան: 1652 թին տասը հազար ֆրանսիացիք զաղթեցին Գալիանա. մի քանի տարուց յետոյ այդ բազմութեան հետքն անգամ չէր մնացել: Ֆրանսիական կառավարութիւնը նոյն փորձը կրկնեց նաև ներկայ դարուս վաթսուհական թւականների սկզբում և դարձեալ նոյնպէս անյաջող ¹⁾:

Անգլիացիք, որոնք, ըստ երևոյթին ամենադիմացկուն ժողովուրդն են, մինչև այսօր դեռ չեն կարողացել յարմարւել Հնդկաս-

¹⁾ Shtu II. A. О х а т и н ъ—Вліяніе расы на заболеваемость и акклиматизацию.

տանի կլիմային, չնայելով որ այնտեղ նրանք շրջապատւած են կենսական ամեն տեսակ յարմարութիւններով: Ամենաառողջ անգլիացի ծնողների զաւակները Հնդկաստանում սովորաբար լինում են այն ատիճանի թոյլ և հիւանդոտ, որ ծնողները նրանց կեանքը պահպանելու համար ստիպւած են լինում նրանց փոխադրել Անգլիա:

Նոյնը պատահել է նաև հայերի հետ, որոնք մի ժամանակ բաւական մեծ քանակութեամբ զաղթած են եղել Հնդկաստան: Ուր են Բոմբէյի, Մադրասի, Սուրաթի և Կալկաթայի բազմաթիւ հայ զաղթականները, որոնք մի ժամանակ պատել էին ամբողջ Հնդկաստանը և մինչև Յեյլոն կղզին իրանց առևտրական տներով: Եթէ կարելի լինէր ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել այդ հայերի մասին, այն ժամանակ կը տեսնէիք որ նրանք ոչ թէ կուլ են գնացել քաղաքակիրթ անգլիացիներին, ինչպէս որ սովորաբար կարծւում է, այլ ոչնչացել են շնորհիւ Հնդկաստանի անսովոր կլիմային, որի ազդեցութեան տակ շատերը մեռել են, շատերն էլ ենթարկւել են սերհասութեան օրէնքին--կորցրել են աճելութեան ընդունակութիւնը: Նոյն վիճակը սպառնում է անշուշտ նաև այն հայ զաղթականներին, որոնք մինչև այսօր շարունակում են դաղթել թէ՛ դէպի սաաը հիւսիս, թէ՛ դէպի տաք Անդրկասպեան աշխարհը և թէ՛ նոյն իսկ հեռաւոր Ամերիկա: Այդ զաղթականները կորած են ոչ միայն ազգի այլ և մարդկութեան համար, որովհետև օտար հողի, օտար կլիմայի տակ նրանք վերջ ի վերջոյ պէտք է օրհասական կերպով սերհասուեն և բնաջինջ լինեն¹⁾:

Քանի որ խնդիրը ֆիզիոլոգիայէս սերհասուելու մէջն է, մենք պէտք է նկատենք, որ լոգւածաղիւ բժ. Զաքարեանի կարծիքի հետ մենք համաձայն չենք, որ ինչ վերաբերում է Ամերիկայ զաղթող հայերին: Կուլտուրայէս Հիւսիսային Ամերիկայում շատ ազգերի զաղթականներ են կուլ գնացել անգլո-ամերիկական տարրին, բաց նոցա ֆիզիքայէս սերհասուելը ամենևին ապացուցւած չէ: Ընդհակառակը, եթէ տնտեսական պաշտօնները ներքէն գաղթողների սերունդը աճել է և ոչ նւազել: Նոյն իսկ նեգրները, որոնք Ամերիկայից են սերւել, ներկայումս Ամերիկայում թուով 8 միլիոն են, մինչդեռ հազիւ թէ դարերի ընթացքում անգամ նաւերով աղքատ հողի փոխադրւած լինեն Ամերիկա:

Բժիշկ Օրժան, որ յայտնի է իւր ուսումնասիրութիւններով տաք երկրներում տիրապետող հիւանդութիւնների մասին, բացարձակ կերպով պնդում է որ Հնդկա-եւրոպական ցեղը ոչ մի ժամանակ չի կարող յարմարւել տաք զօտիների կլիմային: Որպէս զի եւրոպացին կարողանայ բոլորովին յարմարւած համարւել տաք կլիմային, ասում է նա, անհրաժեշտ է, որ նա միանգամայն աշխատուի և ստանայ այդ կլիմայի տակ ապրող բնիկների ֆիզիքական յատկութիւնները. սակայն մինչև այսօր դեռ ոչ մի եւրոպացի, նոյն իսկ մի քանի սերնդից յետոյ, չէ աշխատուել և նէզը դարձել ¹⁾:

Գ

Աշխարհադրական պայմանների մէջ մեծ նշանակութիւն ունի սերնատութեան վերաբերութեամբ երկրի դիրքը և բարձրութիւնը ծովի մակերևոյթից: Ինչպէս յայտնի է, սարերի վրայ օդը աւելի նոսր է քան թէ ցած դաշտավայրերում. այդ պատճառով, ինչքան աւելի վեր բարձրանանք ծովի մակերևոյթից, այնքան աւելի նւազում է օդի ճնշողութիւնը և նրա մէջ պարունակւած թթւածնի քանակութիւնը: Պօլ Բէրի նշանաւոր փորձերը ցոյց են տալիս, որ 4.000—10.000 ոտնաչափ բարձրութեան վերայ թթւածնի քանակութիւնը արեան մէջ պակասում է $\frac{1}{6}$ — $\frac{1}{3}$ անգամ, այսինքն, սովորական 20⁰/օ-ի փոխանակ, արիւնը պարունակում է ընդամենը 16—13,5⁰/օ թթւածին: Թթւածնի այդ պակասութիւնը ի հարկէ անհետւանք չի մնում բարձր սարերի վրայ ապրող ժողովրդի առողջութեան վրայ: Մինչդեռ առաջ կարծում էին, որ լեռնային կլիման նպաստում է կազմւածքի զօրանալուն, նորագոյն փորձերը ընդհակառակը ցոյց են տալիս, որ երկրի բարձր դիրքը մեծապէս արգելք է լինում սերնդի բարւոքւելուն ²⁾: Ժուրդանէն, ուսումնասիրելով Ամերիկայի բարձրութիւնների վրայ ապրող ցեղերը, եկաւ այն եզրակացութեան, որ լեռների բնակիչները՝ չնայելով շատ անգամ իրանց չաղթանդամ կազմւածքին՝ աւելի թոյլ, աւելի սակավարիւն են. հոգեպէս նրանք աւելի անզարգացած և աւելի անըն-

¹⁾ См. Дневникъ III-го съѣзда русскихъ врачей т. 2 74.

²⁾ См. проф. Памутинъ—Общая патологія 4. р. 156, 138.

դունակ են քան թէ դաշտավայրերի բնակիչները. միևնոյն ժամանակ լեռնականները աւելի դժւարութեամբ են զիմադրում զանազան հիւանդութիւններին. սեռական զգացմունքը նրանց մէջ աւելի ծնշւած է և որդեծնութիւնը նւազ ¹⁾:

Բեյլշարժէի, Կրիշբուխէի, Պանտիւխովի և ուրիշների բազմաթիւ հետազոտութիւնները ցոյց են տալիս որ լեռնային կրճերում ապրող ցեղերը շատ անգամ ենթակաջ են խածի ²⁾ (306Ֆ) և ապուլութիւն (кРЕТИНИЗМЪ, ИДИОТИЗМЪ) ասւած հիւանդութիւններին, որոնք նշան են ցեղի սերհատւելուն: Այդ տեսակ հիւանդները կամ բոլորովին անընդունակ են որդեծնութեան և կամ նրանց որդեծնութիւնը շարունակում է ամենաշատը երկու կամ երեք սերունդ: Ֆրանսիայի մի քանի լեռնոտ նահանգներում խածի ունեցողների թիւը հասնում է հազարին՝ 73, իսկ ապուլներինը հազարին՝ 22 ³⁾: Տիւրինգիայում, Սիլեզիայում և Ալպեան սարերում այդ թիւը աւելի ևս մեծ է: Զափազանց տարածւած է խածին Սամարղանդի նահանգում, որտեղ բժ. Սռակաչէւի ասելով, մի քանի զիւղեր երբեմն ամբողջապէս ենթարկւում են այդ հիւանդութեան ⁴⁾: Կովկասում խածին և ապուլութիւնը տարածւած են Օսետիայում, Սւանետիայում, Դաղստանում և պարսկական Ղարաբաղի լեռներում. վերջինիս բնակիչները վաղուց արդէն յայտնի են ժողովրդին իբրեւ բժամիսներ: Բժիշկ Պանտիւխովի վկայութեամբ Սւանետիայի մի քանի տեղերում ապուլների թիւը հասնում է մինչև 550/0-ի, իսկ խածի ունեցողներինը 400/0-ի ⁵⁾: Հայաստանի նահանգներից յայտնի է լեռնային Սասունը իւր «ծռերով» (Սասնայ ծռեր), որոնք ուրիշ բան չեն բաց եթէ կրէտիններ (ապուլներ): Այն երկրներում, որտեղ

¹⁾ Տեա Բлюгге—Основныя гигиены երես 124—125:

Մասամբ տորանով կարելի է բացաղրել, որ անցեալ տարւալ խորհրայի ժամանակ Կովկասի ոչ մի նահանգը այնքան զոհ չտուց, ինչքան լեռնոտ Դաղստանը:

²⁾ Խածի ասւում է չնչափողի առաջ գտնուող մասնների ուռուցքը:

³⁾ Տեա Dechambre—Dictionnaire des sciences médicales եր. 427:

⁴⁾ Տեա «Врачъ» 1893 № 17, երես 495:

⁵⁾ Տեա Пантюховъ—Антрополог. наблюденія на Кавказѣ 1893 երես 79:

տիրապետում է ապշութիւնը իբրեւ տեղական հիւանդութիւն, այդ նշան է ժողովրդի սերհատութեան—ասում է հոգեկան հիւանդութիւնների յայտնի պրոֆէսոր Կրաֆտ-Էբլինգը: Այդպիսի երկրի ժողովուրդը երկարակեաց է. նա անընդունակ է մոսաւոր և Ֆիզիքական աշխատութեան. որդեծնութիւնը նրա մէջ նւազ է, իսկ սերունդը ենթակաջ մարմնաւոր պակասութիւնների, ջղային և հոգեկան հիւանդութիւնների» ¹⁾:

Այդպէս ուրեմն լեռնային կլիման շնորհիւ թթւածնի պակասութեան և մի քանի ուրիշ պայմանների, որոնց վրայ կանգ առնելը շատ հեռու կը տանէր մեզ, առաջացնում է մի շարք այնպիսի փոփոխութիւններ մարդու կազմաձքի մէջ, որոնք նպաստում են ցեղի նւազելուն և սերհատելուն: Այդ փնասակար ազդեցութիւնը աւելի խիստ կերպով արտայայտւում է մանաւանդ այն ցեղերի վերայ, որոնք, դարերի ընթացքում սովոր լինելով դաշտավայրերի կլիմային, ստիպւած են լինում գաղթել լեռնային երկիրներ: Այդ տեսակէտից տխուր ապագայ է սպասում այն բազմաթիւ ռուս գաղթականներին, որոնք հարթավայր Ռուսաստանի խորքերից ամեն տարի գունդագունդ դիմում են դէպի Կովկասի լեռնային նահանգները: Տէրութիւնը այդ գաղթականներին տեղ է տալիս սովորաբար այնպիսի լեռնադաշտերի վրայ (Ղարսի նահանգ), որտեղ դիրքի բարձրութեան շնորհիւ օդի ջերմութիւնը աւելի մօտ է Ռուսաստանի եղանակին. սակայն սրանով արգելք է դնում այն փնասակար ազդեցութեան, որոնք առաջանում են օդի ճնշողութեան և թթւածնի քանակութեան նւազելուց. պայմաններ՝ որոնց անսովոր է դաշտային Ռուսաստանի բնակիչը և որոնք ուրիշ պայմանների հետ միասին քայլ առ քայլ պէտք է առաջնորդեն նորան դէպի սերհատութիւնը: Դժբաղդաբար մենք ձեռքի տակ չունինք վիճակագրական տեղեկութիւններ այն ռուս գաղթականութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել դեռ ևս ներկայ դարու սկզբներին. սակայն հիմնւելով լոկ տեսական սկզբունքների վերայ, կարող ենք ասել որ եթէ այդ գաղթականութիւնները չեն նւազել բաց և զգալի կերպով չեն աճել, չնայելով որ անտեսապէս գտնւել են

¹⁾ См Крафт-Эблинг—Психіатрія т. II. стр 248.

աւելի յաջող պայմաններում: Յամենայն դէպս կարելի է պնդել, որ այդ գաղթականների սերունդը Ֆիզիոլոգիայէս աւելի թոյլ է քան բուն հայրենիքում ապրող ռուս ժողովուրդը: Գեղեցիկ ապացոյց է ներկայացնում այդ օրէնքին Հայաստանի, Փուրդիստանի և Փոքր-Ասիայի լեռնոտ նահանգներում ապրող տաճիկ տարրը, այժմեան սերունդը այն մոնղոլների և թիւրքերի, որոնք ծնւած և սնւած էին Արալեան հարթավայր անապատների համար: Ահա թէ ինչ է ասում նրանց սերհատութեան մասին յայտնի ռուս ճանապարհորդ բժ. Ելիսէեւը: «Ճանապարհի բոլոր երկայնութեան վրայ ես անդադար ուշադրութիւն էի դարձնում այն բազմաթիւ գերեզմանատների վրայ, որոնցով ծածկւած են Փոքր-Ասիայի լեռները և հովիտները: Ես կարծում եմ որ իմ ճանապարհի վրայ գերեզմանատների թիւը գոնէ երեք անգամ աւելի էր քան թէ գիւղերինը և ես տխրութեամբ պէտք է խոստովանւեմ, որ այդ գերեզմանատները մեծ մասամբ փռւած են նախկին տաճկական զիւղերի աւերակների վրայ: Այդ մեռելային սոսկալի յիշատակարանները ամենուրեք բարձրանալով Փոքր-Ասիայի տարածութեան վրայ, պաշտօնական վիճակագրութիւններից աւելի պերճ կերպով վկայ են հանդիսանում թիւրք տարրի թէև զանդաղ բայց յարատե և օրհասական սերհատութեան» ¹⁾:

Դ

Եթէ երկրի լեռնային զիրքը նպաստում է ազգերի սերհատութեան, առաջացնելով խաճի և ապշութիւն, դաշտային հովիտները ծնունդ են տալիս նոյնպէս հիւանդութիւնների, որոնք ոչ պակաս նպաստում են սերնդի նւաղելուն: Այդ հիւանդութիւններից մենք կը յիշենք միայն ճահճային տենդը (болотная лихорадка, малярия), խոլերան և ժանտախտը (чума), որոնք կատարեալ պատահաներ են մարդկային ցեղի համար: Խոլերայի ծննդավայրը, ինչպէս յայտնի է, Բէնգալիան է և Գանգէսի գետները. ժանտախտը զարգանում է զլխաւորապէս Եփրատ և Նեղոս գետերի բե-

¹⁾ Տես А. В. Елисеѣевъ—Антропология. Экскурсія попереку Малой Азии 37:

րաններում և այդտեղից երբեմն-երբեմն արշաւում է դէպի աշխարհի ամեն կողմերը: Խոլերայի յիշատակը, շնորհիւ անցած տարւայ համաճարակին, դեռ այնքան թարմ է, որ չարժէ երկար կանգ առնել նորա պատճառած արագին փնասների վրայ. բաւական է եթէ միայն չիշենք, որ ներկայ դարուս սկզբից մինչև մեր օրերը մարդկութիւնը զոհել է խոլերային աւելի քան երեսուն միլիոն հոգի: Բայց թէ մինչև որ աստիճան ժանտախտը և խոլերան ազդում են որդեճնութեան և սերնդի սերհատութեան վրայ՝ այդ հարցը դեռ ուսումնասիրւած չէ:

Այդ կողմից աւելի վտանգաւոր են տենդային հիւանդութիւնները, որոնք, Տորոպովի ասելով, զարգանում են ամեն տեղ, որտեղ կայ «տաքութիւն, խոնաութիւն և բուսականութիւն», այսինքն աշխարհի համարեա ամենամեծ մասում ¹⁾: Մորէլի, Բիւրդէլի, Մոնֆալկոնի, Կոմբարի, Տորոպովի և ուրիշ գիտնականների բազմաթիւ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ տենդային հիւանդութիւնները երբեմն պատճառ են լինում ամբողջ ցեղերի և նահանգների գլխովին սերհատութեան: Տենդոտների զաւակները լինում են վտիտ, դալկադէմ, կարճահասակ և թույլ թէ մոաւորապէս և թէ Ֆիզիկապէս: Նրանք կամ բոլորովին անընդունակ են որդեճնութեան և կամ նրանցից ծնւած զաւակները չեն կարողանում երկար ապրել: Տենդային հիւանդութիւնները մեր երկրում սաստիկ տարածւած են բոլոր մեծ գետերի—Յրասխի, Կուրի, Ռիոնի, Թերքի և Կուբանի հովիտներում, նոյնպէս և Սև ու Կասպեան ծովերի այն ափերում, որոնք հարուստ են բուսականութեամբ: Լենքորանի, Աղ-սուի, (?) Գեօկչայի գաւառները և Գուլթայիսի, Նլիզաւետապոլի և Երևանի նահանգների մի քանի մասերը կատարելապէս սերհատում են շնորհիւ ձահճային տենդերի: Նոյնը նկատւում է նաև Թերեքեան նահանգում. վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ազլար քաղաքը տարէցտարի այնքան նւազում է բնակիչներով, որ շատ երկար չանցած այդ հայաշատ քաղաքի միայն անունը մնացած կը լինի պատմութեան էջերում իբրև մի աւելորդ

¹⁾ См. Тороповъ—Опытъ медиц. географіи Кавказа относительно перемежающихся лихорадокъ стрлм 3:

ապացոյց այն զոհաբերութեան, որ հայ ժողովուրդը արել է դադ-
թականութեան ակտին: Նկատուած է նմանապէս որ ոչ մի տեղ
Կովկասում ծննդաբերութիւնը այնքան նւազ և ամուլ ամուսնու-
թիւնների թիւը այնքան շատ է, ինչքան տենդային տեղերում:

Տենդային հիւանդութիւններից ոչ պակաս վնասակար են այն
վարակիչ հիւանդութիւնները, որոնք կախումն չունին աշխարհա-
գրական պայմաններից, այլ տարածւած են ամեն տեղ և ամեն ժա-
մանակ: Այդ հիւանդութիւնների շարքումն են հարինքը (տիֆ)
իւր զանազան տեսակներով, ծաղիկը, կարմրուկը, բկացաւը և բո-
լոր այն մանկական հիւանդութիւնները, որոնք ամեն տարի միլիո-
նաւոր զոհեր են խլում մարդկութիւնից: Մենք չենք չլշատակում
այլ ևս այն հիւանդութիւնների մասին, որոնք ընդհանուր անու-
նով կոչւում են մրսողական հիւանդութիւններ (ըեւմատիզմ, թո-
քերի բորբոքումն և այլն), որոնք նոյնպէս ահաղին քանակութեամբ
զոհեր են տանում: Այդ հիւանդութիւններից մի քանիսը, օրինակ
հարինքը, առաջացնում են մի շարք այնպիսի խորին փոփոխու-
թիւններ մարդու կազմածքի մէջ, որ նւազեցնում կամ բոլորո-
վին ոչնչացնում են նորա որդեծնութեան կարողութիւնը:

Բայց սերնատութեան տեսակէտից աւելի կարեւոր են այն քրո-
նիկական հիւանդութիւնները, որոնք ժառանգաբար փոխադրւում
են մէկ սերնդից միւս սերնդին և որոնք սովորաբար անւանւում են
ժառանգական հիւանդութիւններ: Այդ կարգի հիւանդութիւննե-
րիցն են սիֆիլիսը, թոքախտը, ուրկութիւնը (проказа), անգլիա-
կան ախտը (ոսկորների հիւանդութիւն), գեղձախտը (злотуха, scro-
phulosis) և վերջապէս հոգեկան ու ջղային բազմատեսակ հիւան-
դութիւնները: Այդ բոլորը ոչ միայն հալում ու մաշում են ան-
հատի կազմածքը, այլ և, ժառանգաբար անցնելով որդիներին,
առաջ են բերում մի շարք թոյլ, հոգեպէս և ֆիզիքապէս անզար-
գացած, հիւանդ և ակտաւոր սերունդ, որը միանգամայն անընդու-
նակ լինելով դոյութեան կուլի համար, սերնատւում, ոչնչանում է:

Այդ հիւանդութիւնների նշանակութիւնը աւելի ևս մեծա-
նում է, երբ մոաբերենք, որ նրանք սարսափելի կերպով տարած-
ւած են աշխարհի բոլոր կողմերում, ինչպէս հիւսիսային սառու-
ցապատ բևեռներում, այնպէս և արեւակէջ հասարակածի տակ:

Ռուսաստանում ամբողջ նահանգներ, ինչպէս են Վոլգայի վերին մասերում գտնուող նահանգները, համարեա ամբողջապէս վարակեաժ են սիֆիլիսով. նոյնը կարելի է ասել նաեւ եւրոպական տէրութիւնների, մանաւանդ Բալթեան և Ադրիական ծովերի ափերում գտնուող երկրների վերաբերութեամբ ¹⁾: Մեզանում ևս, առաւել Անդրկովկասեան երկաթուղու բացումից յետոյ, սիֆիլիսը արագ քայլերով սկսում է տարածւել, չինացելով նոյն իսկ հեռաւոր գիւղերը: Բժիշկ Պանտիւսովի ասելով, Դաղստանի մի քանի մասերը կատարելապէս սերհատուում են ժառանգական սիֆիլիսի պատճառով:

Ինչ որ վերաբերում է թոքախտին, պրոֆէսսոր Հիրշի վկայութեամբ աշխարհի բոլոր մեռնողների ¹⁾ մասը զոհ է գնում այդ հիւանդութեան ²⁾:

Իսկ հոգեկան և ջղային հիւանդութիւնները այն աստիճան տարածեալ են, որ շատերը իրաւամբ անւանում են մեր 19-րդ դարը «ջղային դար», մի դար՝ որի յատկանիշն է «zu viel Nerven, aber zu wenig Nerv—շատ ջղեր, բայց շատ սակաւ առողջ ջղեր»: Ուշադրութեան արժանի է այն երևոյթը, որ բոլոր այդ հիւանդութիւնները առաւելապէս տարածեալ են քաղաքակիրթ ազգերի մէջ, ուր, պրոֆէսսոր Տուրնովսկիւ ասելով, «цивилизация съ сифилизаціей идутъ рука объ руку—քաղաքակրթութիւնը և սիֆիլիսը ձեռք ձեռքի տաւած են առաջ գնում»: Այդ ճշմարիտ է մանաւանդ հոգեկան և ջղային հիւանդութիւնների վերաբերութեամբ, որոնք տարեցտարի աւելի և աւելի խոր արմատներ են ձգում քաղաքակիրթ ազգերի մէջ: Հոգեկան հիւանդների թիւը ներկայ դարում ^{2—3} անգամ աւելի է, քան թէ անցած տասնևութերորդ դարում:

Այդ տխուր երևոյթը բացատրւում է կենսական այն նուրբ և բարդ պայմաններով, որ ստեղծում է ժամանակակից քաղաքակրթութիւնը և որոնց շնորհիւ գոյութեան կռիւը օրէցօր աւելի և աւելի դժւար է դառնում: Այդ կռիւը Ռեծ մասամբ ծանրանում է ջղերի և ուղեղի վրայ, որոնք ստիպւած լինելով գտնւել անդադար գրգռման և լարեալ դրութեան մէջ, վերջ ի վերջոյ թուլանում,

¹⁾ Տե՛ս Проф. Ге—Куретъ венерич. болѣзней երես, 543:

²⁾ Տե՛ս Эйхгорстъ—Частная патологія т. IV. երես 239:

ջլատում են և առաջնորդում մարդու կազմածքը դէպի սեր-
հատութիւնը: Ժամանակակից մարդը, ասում է Կրաֆտ-Յօնինգը,
դեռ ևս դպրոցական մատաղ հասակից ստիպւած է տեղի տալ գո-
յութեան կուի պահանջներին. իսկ մրցումը գիտութեան, արւեստ-
ների և վաճառականական ասպարէզի վրայ, միացա՜հ հարստանալու
և զւարճանալու անյադ ցանկութեան հետ, ստիպում են ժամանա-
կակից հասարակութեան լարել իւր ջղաջին բոլոր ոյժերը, զրգռել
ուղեղի բոլոր զօրութիւնը»¹⁾:

Ե

Ուղեղի և ջղերի զրգուման մեծապէս նպաստում են մի շարք
թոյներ, որոնց գործածութիւնը օրէցօր աւելի և աւելի տարած-
ւում է: Այդ թոյներն են թէյը, սուրճը, ծխախոտը, օպիումը,
օղին և առհասարակ բոլոր նարկոտիկական միջոցները և ոգելից
ըմպելիքները: Այդ թոյների տարածումը պատահական երևոյթ չէ
այլ նշան է այն չափազանց զրգուման, որը գոյութեան կռիւը
պահանջում է ժամանակակից մարդուց: Եւ եթէ այդ բոլոր միջոց-
ների չափաւոր գործածութիւնը ժամանակաւոր կերպով նպաստում
է հոգեկան և ջղաջին կարողութիւնների պահպանման, ընդհակա-
ռակը նրանց չափազանց կա՛հ չարասե գործածութիւնը ջլատում
է այդ կարողութիւնները և պատճառ է լինում ամբողջ կազմած-
քի քայքայման:

Աւելի տարածւած, հետեւեալ աւելի վնասակար են ոգելից
ըմպելիքները, որոնց գործածութիւնը, ինչպէս յայտնի է, պատճառ
է դուռնում ամբողջ ցեղերի սերհատութեան: Եւ բոսպացիները հա-
մարեա միայն օղիի միջոցով բնաջինջ արին Ամերիկայի բնիկներին,
տարածելով նրանց մէջ սաստիկ հարբեցողութիւն: Նոյն հարբեցո-
ղութեան գոհ են գնում նաև հին և նոր աշխարհների բեւեռային
ցեղերը, Աֆրիկայի և Աւստրալիայի կիսավայրենիները: Բայց և
քաղաքակիրթ երկիրներում ինչպէս օրինակ Ռուսաստանում²⁾ և

¹⁾ Крафт-Эбингъ.—Психіатрія, т. I, էջ 157.

²⁾ Եւրոպական Ռուսաստանում 1889 թ. գործ է ածւած 25,140,774
վոդրօ անխառն սպիրտ. հաշւելով բնակիչների թիւը 99,656,336, ամեն
մի հոգւոյն ընկնում է $\frac{1}{4}$ վոդրօ անխառն սպիրտ կամ մօտ $\frac{3}{4}$ վոդրօ 40°
օղի. տես Ежегодникъ Минист. Финанс. вып. XVI, 1889 г.

նոյն իսկ Եւրոպայում հարբեցողութիւնը դարձել է ընդհանուր ժողովրդական աղէտ, որի զէմ զեռ չեն կարողանում չաջողութեամբ մաքառել գիտութիւնը և օրէնսդրութիւնը:

Մագնուս Հուսի, Մորէլի, Լանսէթի, Լիբիլի, Մանիանի, Բէրի, Կոմբէմալի, Կովալէվսկու և ուրիշ շատ գիտնականների բազմաթիւ և բազմակողմանի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս որ ոչ մի բան այնպէս չէ նպաստում հոգեկան և ջղային հիւանդութիւնների զարգացման—ինչքան հարբեցողութիւնը: Սպիրտը ենթարկում է ուղեղը և մարմնի բոլոր հիւսւածքները մի շարք այնպիսի փոփոխութիւնների, որոնց վերջնական հետեանքը լինում է անդամալուծային խեղացնորութիւն (паралитическое слабоумие) և կազմաճքի ընդհանուր ծիւրումն: Օղիի ամեն մի կաթիլը, որ մտնում է մարդու կազմաճքի մէջ՝ մի մուրհակ է կեանքի մնացած օրերի համար—ասում է նշանաւոր քիմիկոս Լիբիլը:

Բայց աւելի ցաւալի է այն ազդեցութիւնը, որ հարբեցողութիւնը անում է սերնդի վրայ: Հարբեցողների զաւակները մեծ մասամբ լինում են ապուշներ, խեղացնորներ և ջղայիններ. նրանցից շատերը (համարեա ⁴/₁₅ մասը) մեռնում են, նոյն իսկ մանկական հասակում. իսկ մնացածները սովորաբար ենթակայ են լինում խտերիկայի, ընկճաւորութեան (падучая болѣзнь, эпилепсія) և անդամալուծութեան ¹): Բժ. Մարսէնը ուսումնասիրելով Պարիզի Սալպետրիէր անւանաւոր նշանաւոր հիւանդանոցում 83 ապուշ մանուկների կեանքը՝ գտաւ որ նրանցից 60-ը հարբեցողների զաւակներ են: Մարսէն ճանաչում էր մի հարբեցող ընտանիք, որի 16 զաւակներից 15-ը մեռան փոքր հասակում ջղաձգութիւնից (convulsія), իսկ միակ կենդանի մնացածը ենթարկեց ընկճաւորութեան:

Հարբեցողութիւնը զարմանալի կերպով նպաստում է նաև բարոյական զգացմունքների անկման. այդ է պատճառը, որ յանցաւորների ամենամեծ տոկոսը կազմում են հարբեցողները կամ հարբեցողների զաւակները: Պարիզի վիճակագրական բիւրօի կառավարիչ Իւէրնէսի հաշւից երևում է, որ երբ Ֆրանսիայում հինգ տարւայ ընթացքում ոգելից ըմպելիքների գործածութիւնը բարձրա-

¹) *Shu Combemale*—La descendance des alcooliques.

ցաւ 3,53 լիտրից մինչև 3,83 լիտր իւրաքանչիւր բնակչին, նոյն ժամանակամիջոցում յանցաւորների թիւն էլ 172,000-ից բարձրացաւ մինչև 195,000-ի: Ընդհակառակը Շւեդիայում հինգ տարւայ ընթացքում—(1838—1842) ողելից ըմպելիքների գործածութիւնը կիսով չափ պակասելով, յանցաւորների թիւը նոյնպէս իջաւ 64,520-ից 47,000-ի:

Ֆրէրինգը, Ռիւրը և Դէմոն ցոյց տւին, որ նոյն խսկ հարբեցողութիւնից ազատ ծնողների զաւակները վերին աստիճանի են: Թակայ են դառնում ջղային և հոգեկան հիւանդութիւնների, եթէ որ նրանց յղութիւնը անզի է ունեցել հօր կամ մօր պատահական կերպով հարբած ժամանակ ¹⁾:

Մորէլը և Դարւինը ընդունում են, որ հարբեցողների ցեղը սերհատում է ամենաուշը չորրորդ սերնդում: Մորէլը հետևեալ կերպով է դասաւորում այդ չորս սերունդները: Առաջին սերունդը—բարոյական զգացմունքների անկումն և յարատև հարբեցողութիւն: Բ. սերունդը—պարբերական խելացնորութիւն և անդամալուծութիւն: Գ. սերունդը—մեղմադձութիւն, կեանքի ատելութիւն, ինքնասպանութիւն և ոճրագործութիւն: Դ. սերունդը—ապշուրութիւն, չիմարութիւն և ընտանիքի սերհատութիւն:

Այդպիսով խորին իմաստ են ստանում Ս. Գրքի այն խօսքերը թէ «ձեր հայրերի մեղքերի համար ես վրէժ կ'առնեմ ձեզանից մինչև երրորդ և չորրորդ սերունդը»:

Ողելից ըմպելիներից յետոյ գալիս են նարկոտիկական թոյները, որոնցից աւելի փնասակար են օպիումը, հաշիշը և մորֆինը: Թէչի, սուրճի և ծխախոտի վրայ կանգ չենք առնում, որովհետև նրանց ազդեցութիւնը սերհատութեան տեսակէտից զեռ մանրամասն կերպով ուսումնասիրւած է. սակայն աչքի առաջ ունենալով այն սաստիկ թոյները, որոնք պարունակում են՝ օրինակ ծխախոտի մէջ (նիկոտին և ցիանի թթւաւ), պէտք է կարծել որ նրանց գործածութիւնը յամենայն դէպս չի կարող մնալ առանց խորին ազդեցութեան մարդու կազմաւածքի վրայ: Օպիումի գործածութիւնը սաստիկ տարածւած է Զինաստանում, Պարսկաստանում,

1) *Տես Краткъ-Эбингъ.—ор. с. т. I. кр. 183.*

Տաճկաստանում և առհասարակ բոլոր այն արևելեան երկրներում, որտեղ տիրապետւում է մահմեդականութիւնը: Հաշիշը, որ ստացւում է հնդկական կանեփից, տարածւած է Հնդկաստանում, իսկ մորֆինը՝ որ պատրաստւում է օպիումից և կազմում է նրա բաղկացուցիչ մասերից ամենազուտածը, զործածական է քաղաքակիրթ ազգերի մէջ և այն էլ գլխաւորապէս հասարակութեան բարձր կոչւած շրջաններում: Օպիումը, որ Պարսկաստանում անւանւում է թիրիաք, իսկ Տաճկաստանում աֆիոն, գործ են ածում կամ ուղղակի ներս ընդունելով և կամ ծխում են զալիաներով: Պարսկաստանում տարածւած են առանձին տներ, որտեղ ժողովուրդը յաճախում է յատկապէս թիրիաք ծխելու համար: Այդ տները, ինչպէս և օպիումի զրգուիչ ազդեցութիւնը, գեղեցիկ կերպով նկարագրւած են Վաֆֆիի պարսկական նամակներում, ուր և չլում ենք ընթերցողներին:

Բոլոր այդ թոյները սաստիկ կերպով զրգոում են ջղային և ուղեղային սխտեմը, վառում են երեակայութիւնը մեծ մասամբ վաւաշոտ պատկերներով, ծիրում են ամբողջ մարմինը և պատճառ են դառնում վաղահաս ծերութեան և բուռական զգացմունքների բթութեան: Նրանց ենթակայ եղող անհատները կամ բոլորովին անընդունակ են դառնում որդեծնութեան և կամ նրանցից ծնւած սերունդը լինում է թոյլ, հիւանդոտ, ջղային և վերջ ի վերջոյ սերնատում է, ինչպէս և արբեցողների սերունդը:

2

Այդպիսով թոյլ և ակտուոր սերունդների թիւը օրէցօր սկսում է շատանալ և մարդկութիւնը աւելի և աւելի մօտենում է սերհատման վիճակին: Այդ տխուր ապագայի առաջն առնելու համար հարկաւոր է կամ ժառանգականութեան ոյժը թուլացնել, մոցնելով հիւանդ տոհմի մէջ թարմ և առողջ արիւն, կամ բոլորովին արգելել ամուսնութիւնը ժառանգական հիւանդներին: Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում սկսել է յաճախ և յաճախ արծարծւել այն միտքը թէ անհրաժեշտ է ամուսնացողներին նախապէս ենթարկել բժշկական քննութեան և թոյլ տալ ամուսնանալու միմիայն այն անհատներին, որոնք ընդունակ են առողջ սերունդ առաջաց-

նելու: Եւ իսկապէս եթէ նոյն իսկ հասարակ գործերի համար այսօր ամեն տեղ պահանջում են բժշկական, ծննդական և այլ վկայականներ, որչափ ևս առաւել անհրաժեշտ է այդ այնպիսի նշանաւոր և ծանրակշիռ խնդրում ինչպիսին է առողջ սերունդ արտադրելու խնդիրը:

Ինչ որ վերաբերում է սերնդի մէջ թարմ և առողջ արիւն պահպանելու խնդրին, այդ կարող է կատարել միմիայն սեռական ընտրողութեան միջոցով, որը, ինչպէս փորձով ցոյց տուեց Ղարաբինը, կատարեալ հրաշքներ է գործում բուսական և կենդանական թաղաւորութիւնների մէջ, բարեօքելով նրանց տեսակները: Սակայն ժամանակակից հասարակական ակտերից՝ մէկն էլ չէնց այն է, որ սեռական ընտրողութեան տիեզերական սկզբունքը ներկայ քաղաքակիրթ ազգերի մէջ տեղի է տւել աւելի չնչին, աւելի ստորին սկզբունքների: Ամուսնութեան խնդիրը դառել է փողի և կարիքի խնդիր, սերնդի ապագայի հարցը տեղի է տւել նիւթական նեղ և գժուճ շահերին: Հարուստ կամ զիրք ունեցող ծնողների աղջիկը, ինչքան էլ որ նա լինի Ֆիզիոլոգիայէս պակասաւոր, միշտ գտնում է իւր համար փեսայ, ինչպէս և թոքախտաւոր, ապուշ, սիֆիլիսովի դրամատէրը գտնում է իւր համար կին: Սորա հետեւանքը լինում է այն, որ հարուստ և նշանաւոր տոհմերը երրորդ կամ չորրորդ, յաճախ նոյն իսկ երկրորդ սերնդում, արդէն սերհատուում, ոչնչանում են:

Այդ բանին մեծապէս նպաստում է նաև ամուսնութիւնը մտաւոր ազգականների մէջ, որով տոհմը զրկւում է իւր մէջ թարմ արիւն ընդունելու միջոցից ¹⁾: Ահասարակ նկատուած է որ թէ կենդանիների, թէ մարդոց և թէ նոյն իսկ բոյսերի մէջ արիւնակից ամուսիններից ծնւած զաւակները լինում են աւելի թույլ և աւելի ենթակայ զանազան հիւանդութիւնների: Բորլգարը, ուսումնասիրելով 17 արիւնակից ամուսնութիւններ, գտաւ որ նրանցից սերւած 95 երեխաներից 24-ը ապուշներ էին, մէկը խուլ,

¹⁾ Տե՛ս Darwin—Ehen Blutsverwandter; Devay—Du danger des mariages consanguins. 1857.

²⁾ Տե՛ս Beauregard—Annales d'hygiène 1862 Կր. 226:

մէկը թղուկ և 37-ը Փիզիքական այլ և այլ պակասութիւններով ¹⁾։ Եւսթիսը գտաւ որ ազդակից ամուսիններից ծնած 3822 զաւակներից 1113-ը՝ այսինքն 29⁰ օ-ը՝ պակասաւորներ էին, որոնցից 306 ապուշներ, 142 խուլ ու համրեր, 60 ընկնաւորներ և 36 խելացորներ ³⁾։ Այդ տեսակէտից մեր եկեղեցու այն օրէնքը, որ արգելում է ամուսնութիւնը ազգականների մէջ հինգերորդ և մինչև անգամ եօթերորդ սերնդից առաջ, ունի խորին կենսաբանական հիմք։

Քանի որ սկսեցինք շօշափել ընկերական պայմանները՝ կանգ առնենք երկու նշանաւոր հասարակական չարիքների վրայ, որոնք իսկապէս ջլատում են ազգերի ուժերը և արգելք են դառնում մարդկային կազմաւածքի ազատ և կանոնաւոր զարգացման։ Այդ չարիքներն են—դրամապետութիւնը և ռազմապետութիւնը (կապիտալիզմը և միլիտարիզմը)։ Կապիտալը ծնունդ է տւել գործաւորների դասակարգին, որը այսօր կազմում է Եւրոպայի ամբողջ բնակչութեան համարեա կէս մասը և որը գոյութեան կռւին դիմանալու համար ստիպւած է ծանրաբեռնել իւր կազմաւածքը ոյժից վեր աշխատութիւնով։ Տասից մինչև տասնհինգ ժամ ամենօրեայ ծանր և միօրինակ աշխատանքը, որ պահանջում է դրամապետութիւնը ժամանակակից գործաւորներից, մի կատարեալ բռնաբարութիւն է մարդկային կազմաւածքի վրայ, որ պանդուխտ բաց անսպաթաք կերպով առաջնորդում է մարդուն դէպի վաղահաս գերեզման։ Նէլէլի հաւաքած վիճակագրութիւնից երևում է, որ արհեստաւոր դասի կեանքը $\frac{1}{3}$ -ով աւելի կարճ է, քան թէ ունեւոր և ապահովւած դասակարգի անձանց կեանքը։ Այդպէս օրինակ մինչդեռ դատաւորները և փաստաբանները միջին հաշուով ապրում են մինչև 63 տարի, հոգեւորականները մինչև 68 տարի, տպարանի գործաւորների և գրաշարների միջին կեանքը չէ անցնում 39 տարուց աւելի, իսկ քանդակիչները և վիմագիրները մեծ մասամբ մեռնում են 30—35 տարեկան հասակում։ Աւելի ևս սարսափելի է գործարանների, հանքերի և այլ բանւորների դրութիւնը, որոնք աշխատում են փակ և վարակւած օդի մէջ, ենթարկելով

¹⁾ See Med. chir. Review, July, 1860.

իրենց կեանքը և ջրի և տաքի և պաղի անդադար ազդեցութեան: Բնական է, որ մարդկային կազմաձևի վրայ կատարուող այդ բռնաբարութիւնը տեղիք է տալիս մի շարք պահանջների, որոնց նպատակն է խնայել մարդկային ոյժերը և թեթևացնել գոյութեան կռիւը մարդկութեան այդ ստուար բազմութեան համար: Ժամանակից բանւորների պահանջն է «ութ ժամ աշխատանք, ութ ժամ ազատութիւն և ութ ժամ քուն»: Եւ առողջապահական գիտութիւնը արդարացնում է այդ պահանջը, ասպնջուցանելով, որ ութ ժամուայ ազատութիւնից և ութ ժամուայ քնից յետոյ մարդկային ոյժը կարող է մնացած ութ ժամուայ մէջ նոյնչափ արդիւնք արտադրել, ինչքան ներկայ պայմաններում արտադրում է 12 — 15 ժամուայ ընթացքում:

Եթէ դրամապետութիւնը խորտակում է գործաւորների կեանքը, ենթարկելով նրանց չափազանց Ֆիզիքական աշխատանքի, միևնոյն ժամանակ նա քայքայում է նաև դրամատէրերի կազմաձևը, անդադար լարելով նրանց ջղերը, զրգռելով նրանց ուղեղը օրէցօր դժարացող մրցման համար և վերջապէս ենթարկելով նրանցից շատերին մաշող և սպանող մոլութիւնների: Այդպիսով կապիտալիզմը ներկայացնում է մի երկսայրի սուր, որ մի կողմով հարւածում է գործաւորներին, միւս կողմով դրամատէրերին, իսկ երկու կողմով ևս մղում է մարդկութիւնը դէպի վաղաժամ սերհատութիւն:

Դրամապետութեան ծնունդն են նաև մեծ քաղաքների այն բազմութիւնակիները, որոնք գործաւորների հետ միասին կազմում են պրոլետարիատ դասակարգը և որոնց թիւը սարսափելի արագութեամբ բազմանում է: Քաղաքները իրանց նեղ և աղտոտ բնակարաններով, վարակած և փչացած մթնոլորտով կազմում են բարեյաջող միջավայրեր մի շարք վարակիչ հիւանդութիւնների համար, որոնց զոհ է գնում պրոլետարիատը հազարներով և հարիւր հազարներով: Հազարները մեռնում, ոչնչանում են և նրանց փոխարէն գիւղերից գալիս են նոր և թարմ հազարներ միևնոյն վիճակին ենթարկւելու համար. և այդպէս շարունակւում է անընդհատ: Ֆրանսիայի ազգաբնակչութեան $\frac{2}{5}$ մասը արդէն ապրում է քաղաքներում. իսկ Անգլիայում քաղաքացիների թիւը աւելի է քան թէ գիւղացիներինը:

Այդ ամենին հետևում է բարոյականութեան անկումը, որը պոռնկութեան ու ոճրագործութեան արանքից առաջնորդում է ազգերին զէսի վաղահաս ծերութիւն և զէսի գերեզման:

Դրամապետութեան չարիքներից անցնենք ռազմապետութեան այսինքն պատերազմին և պատերազմի պատրաստութիւններին: Դեռ ևս խաղաղութեան ժամանակ միմիայն եւրոպական տէրութիւնները պահում են մշտական մօտ 5,000,000 զինւոր, որոնց թիւը պատերազմի ժամանակ կարող է կրկնապատկել, եռապատկել և մինչև անգամ քառապատկել: Այդ հինգ միլիոնը կազմում են ժողովրդի ամենազօրեղ և առողջ տարրը: Եւ ահա այդպիսի մի տարր, փոխանակ արդիւնաբերելու, փոխանակ սերունդ առաջացնելու՝ ենթարկւում է զինւորանոցների փշացած օդի և հակաառողջապահական պայմանների ազդեցութեան և յաճախ զոհ է դառնում այլ և այլ մոլութիւնների: Իսկ պատերազմի ժամանակ նրանք զոհւում են հարիւր հազարներով և իրանց հետ միասին զրկւում են մարդկութիւնը այն ամուր սերնդից, որ կարող էր առաջանալ մի այդպիսի զօրաւոր տարրից: Ֆրանսիան միմիայն նապոլէօն առաջնի պատերազմների ժամանակ զոհել է 1,350,000 հոգի. իսկ Եւրոպան յիսնական թւականներից սկսած կորցրել է ամենաքիչը միլիոնուկէս երիտասարդ ու առողջ զինւորներ:

Բայց միայն այդ չէ միլիտարիզմի զոհը: Արնդտի ¹⁾ հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ ոչ մի զբաղմունք այնպէս չէ նպաստում ջղային և հոգեկան հիւանդութիւնների զարգացման, ինչպէս զինւորականութիւնը: Եւ այդ շատ հասկանալի է, աչքի առաջ ունենալով մի կողմից այն զրկանքները և ծանրութիւնը, որոնց զինւորը ենթակայ է խաղաղութեան ժամանակ, և միւս կողմից այն սարսափներն ու ջղային լարւած դրութիւնը, որոնց նա ենթարկւում է կռիւների մէջ: Մենք չենք չիշում այլ ևս այն բարոյական ու տնտեսական փնասների մասին, որոնց ենթարկւում է ամբողջ հասարակութիւնը պատերազմի ժամանակ և որոնք հասարակապէս ծանրանում են թէ յաղթողների և թէ յաղթւողների վրայ:

¹⁾ See Arndt—Zeitschr. f. Psych. 30 p. 64.

Սրանք են ահա այն զլխաւոր պայմանները, որոնք նպաստում են մարդկային ցեղի սերնատութեան և որոնց ազդեցութիւնը արդէն նկատելի է ժամանակակից սերնդի վրայ: Ալֆրէդ Ուոլլէս, Հալտոն, Գրանտ-Ալլէն և ուրիշ կենսաբանները միաբերան վկայում են, որ եւրոպական ցեղերը նկատելի կերպով մանրանում և վատթարանում են, այսինքն գտնւում են սերնատութեան ճանապարհի վրայ ²⁾ Այդ պատճառով վերոյիշեալ պայմանների ուսումնասիրութիւնը հարկաւոր է ոչ միայն իբրեւ լոկ գիտական խնդիր, այլ և նրա համար որ կարելի լինի առնել նրանց փնասակար հետեանքների առաջը և միջոց տալ մարդուն աւելի տոկունութեամբ պաշտպանել իւր կեանքը գոյութեան օրհասական կռւի մէջ:

Այստեղ ահամայ հարց է ծագում թէ՛ ինչ օգուտ այդ պայմանների ուսումնասիրութիւնից և նրանց դէմ մաքառելուց, քանի որ գիտութիւնը արդէն նախապէս կարդում է իւր զատաւճիւր մարդկութեան անխուսափելի վախճանի մասին: Սակայն ուրիշ բան է բնական մահը և ուրիշ՝ կանխահաս մահը: Միթէ այն հանգամանքը, որ ամեն մարդ մահկանացու է, արգելք է լինում մեզ կռւել հիւանդութիւնների դէմ, մաքառել վաղահաս մահւան դէմ: Ինչքան որ բնական և անխուսափելի է մահը, նոյնչափ ևս բնական է մահւան դէմ մաքառելը, գոյութեան համար կռիւիլը: Եւ չէ որ հէնց այդ կռիւն է, որ անւանւում է կեանք և որը իմաստ ու խորհուրդ է տալիս ինքն ըստ ինքեան աննպատակ գոյութեան:

Եւ ի՞նչ զիտէ, երբ ներկայ մարդկային ցեղի համար կը հնչէ բնական մահւան ժամը, գուցէ մարդկութեան դիակի տակից կը ծլի մի ուրիշ կենդանական տեսակ, որ աւելի արժանի կը լինի կրել «բնութեան թաղաւորի» կոչումը և անւանւել «պատկեր Աստուծոյ»:

²⁾ Оболенский—Биологи о женскомъ вопросе. Русская Мысль. 1893 № 2

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

(Դասախօսութիւն, կարդացւած 20-ն մայիսի 1893 թ. Վարժուհիների եւ Դաստիարակչուհիների Ընկերութեան մէջ Թիֆլիսում):

ՍՈՖԻԱ ԵՐԿԱՅՆԱՐԱԶՈՒԿ-ԱՐԼՈՒԹԵԱՆԻ

Համարեա ամեն մի քաջլափոխում, թէ գրականութեան եւ թէ կեանքի մէջ, շարունակ լսուում է որ Ընտանիքը եւ Դպրոցը պէտք է ձեռք ձեռքի տւած ընթանան. թէ այդ երկու մարմինները իրար պէտք է լրացնեն. թէ նոցա մէջ օրգանական կապը այնքան սերտ պէտք է լինի, որ նոցա գործունէութեան մէջ սահմանագիծ չնկատուի. թէ Ընտանիքը եւ Դպրոցը պէտք է ինկատի ունենան մի ընդհանուր խնդրի լուծումն—նոքա պէտք է ունենան զործելու միևնոյն եղանակ եւ սկզբունքներ: Բայց տարաբաղդաբար հազիւ թէ կեանքի մէջ Դպրոցը եւ Ընտանիքը նոյն կերպ լինեն զործում: Մեզնից ում չի պատահել լսել գանգատներ թէ ծնողներից եւ թէ դաստիարակներից: Ծնողները ասում են.

—Այս մանկավարժները երբէք չեն ուզում հասկանալ թէ մենք չենք նրանց համար, այլ նրանք են մեզ համար: Այդ ով է նրանց այնքան անսահման իրաւունքներ տւել որ նրանք, առանց ծնողների միջամտութեան, վճռեն երեխայոց վիճակը:

Մի ուրիշ մայր թէ՛

—Ես ինչ անեմ, ահա մի շաբաթ է որ իմ Կոլեան մի անհասկանալի տրամադրութեան մէջ է: Երեւակայեցէք ձեզ, — այդ տղան, որ այնքան սիրով պարապւում էր, անհամբեր սպասում էր դպրոց մտնելու, հիմա յայտնում է՝—«Մայրիկ, եթէ կարելի լինէր

այլ ևս ուսումնարան չգնալ»։—«Ինչի, սիրելիս, մի՞թէ ձանձրացար պարապելուց?»։—«Ոչ, ոչ, մայրիկ, դու չգիտես, բոլորովին այլ պատճառ կայ»։

— Ինչու չէք գնում ու իմանում ամեն բան ինչ հարկն է, հարցնում ես մօրը։ Գուցէ ընկերներից մէկը նրան վիրաւորել է, կամ որ և է թիւրիմացութեան պատճառով նրան մեղադրում են որ և է յանցանքում, բայց իւր ա՛ֆօթխածութեան պատճառով նա լռել է և չի ուզեցել իւր ընկերոջ մատնել։

— Ոչ, ոչ, պատասխանում է մայրը, ես ոչ մի ցանկութիւն չունեմ նրանցից որ և է բացատրութիւն լսել. աւելի լաւ է՝ երեսային կը հանեմ ուսումնարանից։

— Յի, այդ վարժուհիները խօսմ—լսում ես մի ուրիշից—երբէք ինկատի չեն առնիլ երեխի բնաւորութիւնը, նրա ընտանեկան կացութիւնը. ամենքին մի արշինով են չափում, մեզ ծնողներիս վրայ էլ նայում են ինպէս անկողների վրայ։

— Գնեսա, պատասխանիր դասդ, դուրս է կանչում վարժուհին աղջկանս։— Մայրս ինձ թոյլ տւեց այս դասը չսովորել. նա ասաց թէ սա դժւար դաս է։— Մայրդ որտեղից դուրս պրծաւ, գոռում է վարժուհին։ Այն ժամանակ էլ ինչ հարկ կար ուսումնարան մտնել, մօրդ մօտ կը պարապէիր էլի։

Մինչև մեզանում կանոնաւոր ընտանիք չի լինիլ, գանգատւում է միւս կողմից մանկավարժը, մենք ոչ մի գործ չենք կարող անել։ Եթէ դիտէք մեր ընտանիքները, ասում է հիասթափւած վարժուհին, դուք կը նկատէք կատարեալ բացակայութիւն յարաբերութիւնների, հիմնած փոխադարձ սիրոյ, հաւատի և յարգանքի վրայ։ Չկայ բարոյական հսկողութիւն մեծերի և ընտանիքի բոլոր անդամների կողմից, չկայ ոչ հաստատ հիմք, ոչ փոխադարձ հաւատ յարաբերութիւնների մէջ։ Հայրը, մայրը և մեծերը երբէք չեն ամաչում երեխանց մօտ աշկարայ սուտ խօսելու։ Ձսիրելով մի հիւրի ու նեղանալով նրա այցելութիւնից, նրանք զրկաբաց ընդունում են նրան ու նեղանում թէ ինչու վաղուց չի այցելել։ Բայց հէնց որ ոտը շէմքից դուրս դրեց՝ հայհոյանքներ է որ թափւում են հիւրի յետևից, երեսայնոց ներկայութեամբ։

— Ես մօրս միշտ խնդրում եմ, գանգատւում է ինձ մի փոքրիկ

աղջիկ, (պատմում է նոյն վարժուհին), թէ մի դուրս կանչիլ ինձ երբ մեզ մօտ դալիս է տիկին N, ես նրան չեմ սիրում: Իսկ մայրս, նրան հաճելի լինելու համար, միշտ դուրս է կանչում ու ասում նրան—«Օ՛հ, իմ Լիզաս հիացած է ձեզանից»:—Ասացէք խնդրեմ, կարող է երեխի մէջ մնալ հաւատ, ակնածութիւն, յարգանք դէպի անձը, դէպի մարդը ընդհանրապէս:

—Ինչպէս վարւեմ այն երեխանց հետ, որոնց ծնողները խորշում են նրանց պատիարակութիւնից, հարցնում է մի երրորդը: Երեխանցը տանը գրելու դաս եմ տալիս, ամենքը գրում են, բացի մէկից:—«Ես անպատճառ վաղը կը ներկայացնեմ աշխատութիւնս», պատասխանում է երեխան, ներողութիւն խնդրելով:—Վերադառնալով տուն, երեխան իսկոյն դասի է նստում:—«Բաւական չէ (ասում է մայրը) ինչ որ ուսումնարանում գրեցիր, որ տանն էլ շարունակում ես, վեր կաց, գնանք մօրաքրոջս մօտ, այսօր նրան խօսք եմ աւել նրա մօտ լինելու: Գնում են մօրաքրոջ մօտ, այնտեղ ամեն տեսակ խօսակցութիւններ են լինում, յետոյ թխտախաղի են նստում և ահա արդէն զիշերւաց 11 ժամն է:—Մայրիկ, ախր ես դասս դեռ չեմ պատրաստել:—«Ինչ դասեր պատրաստելու ժամանակ է, հարկ չկայ, պարկիր քնիր, մի անգամ էլ կարելի է առանց դաս պատրաստելու մնալ:—Եւ այդ մի՛ անգամը կրկնում է համարեա օրը մէջ: Դէհ, ինչպէս վարւել այդ երեխի հետ. ինչպէս վերաբերւեմ դէպի նրա վարքը:

Այս ամենից տեսնում ենք թէ որքան փոխադարձ թիւրիմացութիւններ են պատահում, որքան զայրոյթ երկու կողմից, որքան զուր գանդատներ և մեղադրանքներ իրար վրայ, որքան անարդարութիւն և յաճախ տրտունջներ են լինում, կողմնապահութիւններ և անուղղելի սխալներ... Երեխանց կրթութիւնը դառնում է մի դժար լուծելի խնդիր, մինչև անգամ ուժերից վեր գործ ծնողների և դաստիարակների համար: Գոցանից առաջինները զործի այդ դուրթեան պատճառը տեսնում են աւելի յաճախ ուսումնարանական կարգերի մէջ, իսկ երկրորդները մեղադրում են ծնողներին: Իսկ կեանքը, սակայն, ընթանում է իւր շաւղով. և մեր երեխերքը ձիշտ որ ոչ սակաւ ծանր բեռն են դառնում ընտանիքի վզին և նոյնքան ծանր բեռ ուսումնարանի համար. և ոչինչ բան չեն խոս-

տանում ապագայի համար: Նախ քան այդ բոլոր թիւրիմացութիւնների քննելը, մենք կը պատասխանենք թէ ինչ կոչումն ունի ընտանիքը և ինչ՝ ոգեւորմանը, ներկայացնելով պատկերներ մեր ներկայիս ընտանիքի և ուսումնարանական կրթութեան:

Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ընտանիքի նշանակութիւնը ծանաչւած է ամենքից և հազիւ թէ մէկը ուզենայ վիճել այն բանի դէմ թէ մարդու մանկութեան առաջին տպաւորութիւնները հոգու մէջ թողնում են անջնջելի հետք. հազիւ թէ մէկը վիճի այն բարոյական կամ ներքին կապի անհրաժեշտութեան դէմ, որ կայ երեխաների և ծնողների մէջ և թէ այն բանի դէմ, որ ծնողները ազդեցութիւն ունեն իրանց երեխաների վրայ: Վերջապէս հազիւ թէ ով և իցէ մէկը լինի որ չզգայ թէ մարդու բարոյականութեան ստեղծողը, ձեռողը զլիսաւորապէս ընտանիքն է:

«Ընտանիքը, ասում է մանկավարժներից մէկը, նմանում է փոքրիկ թագաւորութեան, որտեղ ընտանիքի անդամների բարոյականութիւնը կախւած է ընտանիքի թագուհի-մօր խորիմաստ կաւաւարութիւնից: Նորա պարտաւորութիւնների բարեխիղճ կատարումը, նորա քնքոյշ հոգացողութիւնը, սիրուելով ամենքի վրայ, առաջացնում է այն գոհունակութիւնը, որ և կազմում է ընտանեկան երջանկութեան աղբիւրը: Այդ պարտաւորութիւնները բարեխիղճ կերպով կատարելը շատ մեծ ծառայութիւն է, և լաւ մօր տիտղոսը աւելի նւազ շողոքորդող չէ քան դիտութիւնների մագիստրոսի կամ դոքտորի տիտղոսը»:—«Նրեխին պէտք է գուրգուրանք, փափկութիւն, սրտակցութիւն, մայրական տաքութիւն, ասում էր ինձ մայրերից մէկը: Թէև կարելի է գտնել բարի արարած, որը նախազգոյշ և հոգատար կերպով կը նայի երեխի վրայ, կը սիրէ նրան, բայց ոչ դք մօրից աւելի չի կարող անսահման և քնքշաբար սիրել»:

Այդ բոլորը հիանալի է և կարծում եմ որ մեզից ամեն մէկը զիտակցում է և գնահատում է այդ բարձր և անփոխարինելի զգացմունքը: Բայց ինձ թւում է թէ միմիայն քնքշութիւնով և հոգատարութիւնով նպատակին չինք հասնիլ. պէտք է որ երեխան

չազդուէ իրար հակասող ազդեցութիւններից և ոչ ոքի բերնից չպէտք է լսի մի խօսք, որ հակառակ լինի մտքերի ընդհանուր հոսանքին: Մեր ընտանիքներում մենք հեռաւորապէս անգամ չենք գտնում համաձայնութիւն այն բոլոր ազդեցութիւնների մէջ, որոնք ներգործում են երեխաների վրայ: Ազդեցութիւն ունեցողների խօսքից ու գործից ուղղամտութեան ոգի չէ բուրում: Իմ մանկավարժական պրակտիկայի մէջ ինձ պատահում է տեսնել շատ մայրեր, որոնց դաստիարակութեան սխառեմին թէ որ նայելու լինէ՞ կը տեսնէք որ չկայ ընտանիք, որը ծայրացեղութեան մէջ չընկնէր:

1. Կան այնպիսիներ, որոնք շատ էլ երկար չմտածելով, թողնում են որ իրանց երեխաները մեծանան, ինչպէս բազդը կը անօրինի: Բնութիւնից խելօք և կարգին, չնայելով իրանց ազդեցութեանը՝ նոքա իրանց սրտակցութիւնովն ու անկեղծութիւնովը անգիտակցաբար ազդեցութիւն են անում երեխի բարոյականի վրայ: Նրանք գրեթե չեն դաստիարակում իրանց երեխաներին, այլ կենդանի օրինակով: Այդ մայրերի ուղղամտութեան շնորհիւ, երեխաները երբէք առիթ չեն ունենում կորցնել յարգանքը դէպի նրանց:

—Հն, ինչպէս են իմ երեխերքը, հարցնում է ինձ այդպիսի մայրերից մէկը:

—Հիանալի են, մենք շատ և շատ գոհ ենք նրանցից:

—Իսկ տանը նրանք շատ չարերն են. երբեմն նրանք ինձ ուշաթափութեանն են հասցնում: Խնդրում եմ նրանց նկատողութիւն անէք, միայն թէ, ի սէր Աստուծոյ, միք ասիլ թէ ես ձեզ մօտ զանգատեցի. այդ նրանց շատ անախորժ կը լինի. ես նրանց խօսք եմ տւել այդ մասին ոչինչ չասել. իսկ դուք զիտէք որ երեխաներին ճշմարտութիւն սովորեցնելու համար՝ պէտք է ինքս ստի մէջ չբռնւեմ:

Ես շատ ցանկացայ իմանալ, ունի արդեօք բացի մօրից մի ուրիշ մարդ ազդեցութիւն այդ երեխաների վրայ: Այդ մտքով ես հարց տւի՝

—Ձեր երեխերքը մեծ մայր ունին?

—Ոչ, չունին, ես եմ ու մարդս: Մարդս առաւօտանից խանութ է գնում և վերադառնում է զիշերւայ ժամը 9—10-ին, երբ երեխերքը արդէն քնած են, այնպէս որ նրանք միայն ինձ հետ

են: Իսկ երբ հիւրեր են դալիս մեզ մօտ, երեխերքս հեռանում են իրանց սենեակը: Ես չեմ սիրում երբ նրանք գալիս են ցցւում մեծերի կողքին. հազար ու մի բաներից կարող ենք խօսել—ինչ հարկ կայ որ նրանք վկայ լինին:

Եւ որքան այդ մօր երեխաները աչքի են ընկնում միւսների մէջ! միշտ ճշմարիտի կողմն են. անչափ բարի են և արգարամիտ: Դորա փոխարէն միշտ առանձին զգուշութեամբ և սիրով են վարւում ընկերները նրանց հետ:—«Օրիորդ, խնդրում եմ ներէք Տեպանին—օրիորդ, նորից հարցրէք Տեպանին, հիմի նա դասը լաւ գիտէ. —Օրիորդ, թող Տեպանը կողքիս նստի»—լսում ես միշտ այդպիսի ընկերներից: Չարմանալի է որ վատ ընկերները բնազդմամբ փախուստ են տալիս նրանցից, և եթէ նրանց շրջանի մէջ ընկնում են վատերը՝ սրանցից չեն վարակւում: Ահա ինչու ես չեմ հասկանում թէ ինչու շատերը երկիւղ են կրում իրանց երեխաներին դպրոց տալ:

—Իմ մէջ սաստիկ կռիւ է մղւում, ասում է մայրերից մէկը, տալ արդեօք աղջկանս գիմնազը թէ ոչ: Ասում են թէ նրանք շատ փշանում են իրանց ընկերակիցների շրջանում:

Ես կը պատասխանեմ, որ չեմ կարող ինձ երեւակայել, որ բառիս բուն նշանակութեամբ բարեկարգ ընտանիքի զաւակներին կարողանան փշացնել վատ ընկերները: Խելացի ուղղութեամբ կրթւող երեխի մէջ դուք միշտ կը նկատէք զգւանքի և ատելութեան զգացմունք ամեն վատ բանի դէմ: Գուցէ նրանք շատ վատ բաներ տեսնեն և լսեն, բայց նրանց կրթութեան հողը այդ ամենը չի ընդունում, և այդ պատճառով այդ բոլորը անցնում է նրանց մօտով առանց հետքի, և ոչ մի չարիք չի պատւաստւում նրանց վրայ:

2) Կան այնպիսի մայրեր, որոնք թէ երեխի երեսին և թէ ամեն ուրիշ տեղ պնդում են, որ աշխարհքում նրանց պէս չկանարներ չկան: Քիչ են այնպիսի ծնողներ, որոնք իրանց անզգոյշ ու անտակտ նկատողութիւններով և ծաղրանքով երեխին խորամանկ, չարահոգի և փեսասկար արարած են դարձնում: Ես մի մայր եմ ճանաչում, որի բերանից ուրիշ խօսքեր չէին դուրս գալիս քան՝ դարչեղի լակոտ, հօրանմանիկ, օձի ճուռ և այլն: Բայց երեխան ամենևին արժանի չէր այդ հայհոյական խօսքերից և ոչ մէկին:

ձիշդ է, մօր կշտին նա կատարեալ ապուշ էր դառնում, բաց այդ նրանից էր որ սաստիկ վախենում էր մօրից: Նորա դէմքի արտայայտութիւնը այդ բոլորէին փոխւում էր և դառնում էր վախկոտ և յանդուգն: Ես խղճում էի թշուառ մօրը, որը վաղ թէ ուշ պիտի իւր հատուցումն ստանար այդպիսի անսիրտ և եսական վերաբերմունքի փոխարէն: Ի՞նչ ենթադրութիւնը կատարւեց, և ահա ինչպէս: Մի անգամ այդ մայրը ուզեց իւր երեխին մի շաբթով տուն տանել ուսումնարանից: Բայց յանկարծ երեք օրից նա ուսումնարան բերաւ նրան: «Ես չեմ կարող այս դայլի ձագին ընտանիքումս պահել», ասում էր մայրը:—Եւ նրա պատմածից իմացաց հեռեւեալը:

—«Երէկ ես տկար էի, պատմում էր մայրը, և խնդրեցի երեխաներին ինձ մօտ մնան, բայց աղմուկ չհանեն: Անտօնիկս ու իմ հինգ տարեկան աղջիկս մահճակալիս մօտ խաղում էին: Ես, թէպէտ աչքերս խփած էի, բայց քնած չէի: Անտօնիկը սկսեց բղաւել: «Սուս կաց, ասաց աղջիկս, տեսնում ես որ մայրիկը հիւանդ է»: «Էհ, շատ հարկաւորս է որ հիւանդ է ասաց, աղէս, թէկուզ մեռնի, մեզ համար աւելի լաւ կը լինի. այն ժամանակ մայրիկիս բոլոր բաները կը վերցնեմ ու այնպէս կ'ապրեմ, ինչպէս ուզում եմ»:—«Ձեռքս ամաչում» այդպիսի բաներ ես խօսումս:—«Շատ հարկաւոր է, տես, իր երկրորդ մարդուն վերարկու էլ առաւ և ամեն ինչ էլ որ ուզեց, իսկ ինձ համար մի գնդակ էլ չառաւ»:

—«Ես այլ ևս չկարողացայ լսել, շարունակեց մայրը արտասուքի միջից, արտասուքը ինձ խեղդում էր. ես ուզեցի վեր թռչել, բռնել նրա կոկորդից ու խեղդել: Մի խօսքով այլ ևս չգիտեմ թէ ինչ էի ուզում անել: Երեսո շուռ տւեցի դէպի նա. բայց կարող էք երեւակայել նրա ստորութիւնը! Նա վեր է կենում, վազում է դէպի ինձ և գգւանքով ասում՝ մայրիկ, սիրելի մայրիկ, դու ինձ համար գնդակ կ'առնես? Ես, պատասխանի տեղ, հեկեկացի: Իսկ նա շարած նայում էր վրաս, կարծես ինձ չի հասկանում»:

Եւ այդ երեխան միայն ութ տարեկան էր:

Կարելի է միթէ ենթադրել որ այդպիսի մի պատլիկ հոգու մէջ այդքան շատ բնածին չարութիւն կար?

Մայրը խօսմ գանդաւում էր թէ նա իւր «դայլի ձագին»

տանը չի կարող պահել: Այո, դրանից ստիպւած նա իւր երեխային ուսումնարան տւեց, և դորանով նա գուցէ ազատեց մի մարդու ապագան... Որքան և դառն լինի խոստովանքը, բայց այդպիսի զէպքերում երեխային ազատողը լինում է այն, որ այդպիսի ընտանիքի փչացնող ազդեցութիւնից նրան վաղ հեռացնեն և դցեն առաջին հակառակ մի այլ շրջան: Բազմաւորութիւն է այդպիսի երեխաների համար, եթէ նրանք կ'ընկնեն սիրող և սրտալի մարդկանց մէջ, որոնք կը տաքացնեն նրանց իրանց ջերմութիւնով և կ'աշխատեն մեղմացնել նրանց կատաղութիւնը իրանց հաւասար և արդարադատ վարմունքով:

3) Երրորդները սպասում են թէ ամեն ինչ ինքն իրան կը դա: Նրանց բնաբանն է՝ ոչ մի բանում չխառնել և չխանգարել երեխայի ազատութիւնը. ինչ որ բնութիւնից տրւած է երեխային, այն էլ պէտք է մնայ. թող երեխայի բնական ոյժերը և ընդունակութիւնները ազատ զարգանան. թող նրանք իրանց դատաւորը լինեն, իրանք իրանց ուղղեն, առանց կողմնակի ճնշման: Ինքը կեանքը ամեն ինչ կը դրստի. նա նրանց բնաւորութիւն կը տալ և ուղիղ ձանապարհը ցոյց կը տալ:

—«Մայրիկ, արի կարդա ինձ համար», ասում է երեխան մօրը, որը շտապ գործով է զբաղւած և կամ խօսում է մի մարդու հետ մի կարևոր գործի մասին:

—Դու աւելի լաւ կ'անես մորակից գտնես, պատասխանում է նրան մայրը, ցանկանալով որ երեխայի ուշքը ուրիշ բանով գրաււի:

—Դէ որ այդպէս է, արի ձի խաղանք:

Մայրը երեխայի խնդիրը չմերժելու համար, (հետեւելով իւր վերոյիշեալ բնաբանին), կարծես անգիտակցաբար երեխայից վերցնում է երասանակը և շարունակում է իւր խօսակցութիւնը:—Մայրիկ, բղաւում է զրդուած երեխան, ես այդպէս չեմ ուզում:—Դէ լաւ, նկատում է մայրը, և նորից վերցնում չաւնը իւր ձեռքը: Մայրը, չուղենալով հիւրին անյարմար դրութեան մէջ զնել, շարունակում է խօսակցութիւնը. և այդ պատմութիւնը կրկնւում է աւելի ու աւելի սաստկանալով:—Դէ լաւ, ասում է երեխան, ինձ հետ չեն ուզում խաղալ, ես էլ մեղիկացով կը քայլեմ: Եւ նա բակից կեղտոտ դուլը բերելով սե-

նեակը, սկսում է քայլել կեղտոտ ոտներով, անդադար խփելով դատարկ դռներին: Հիւրի զլուխը շժմում է աղմուկից և ստիպւած հեռանում է, և երեխան շարունակում է իւր դրդորոցը:

— Ինչու չէք ասում երեխին, որ դուք զբաղւած էք. կամ ինչպէս էք թոյլ տալիս փչացնել այդպիսի թանկագին կահարասիքը:

— Գիտէք ինչ կայ, ասում է մայրը. նրան կեանքում դեռ այնքան բաներ են արգելելու և խեղճը այնքան բաներ պէտք է անի ոչ իւր ասածովը, որ թող զոնէ մանուկ հասակում սրտի ուղածն անէ:

— Ինչու չէք ասում ձեր երեխին, որ ժամանակ է գործի նստելու:

— Նա ինքը կը զգայ թէ երբ է ժամանակը:

— Այո՛, բայց նա կարող է խաղով գրաւել և դասեր պատրաստելը մոռանալ:

— Այդ կը նշանակէ թէ ցանկութիւն չունի. ես խօսմ չեմ կարող նրան զօրով գործի նստեցնել:

— Ինչու էք թողնում երեխին որ այդքան ուտի: Տեսէք ինչպէս մեքենայաբար է ծամում. երևում է բոլորովին կուշտ է:

— Ոչ, պատասխանում է մայրը, եթէ նա ուտել չուզենար՝ չէր ուտիլ: Ես սաստիկ խոցս եմ տալիս չէի կարելի խօսքից: Ինչ անկարելի խնդիրքով էլ որ նրանք զիմեն ինձ՝ չեմ կարող մերժել: Այդ զէպքերում ես ամեն կերպ կ'աշխատեմ նրանց ուշքը գրաւել ուրիշ բանով:

Բայց արդեօք կարելի է միշտ նրանց բաւարարութիւն տալ, և ինչ հարկ կայ այդպիսի արհեստական միջոցների դիմել: Ինձ թւում է թէ ծնողները, այդպիսի ծայրացեղութեան դիմելով, անհատելի կերպով իրանց երեխաներից եսասէրներ են ստեղծում, որոնց զը թւայ թէ աշխարհքը միայն իրանց համար է ստեղծւած: Կարող են արդեօք այդպիսի երեխաներ զոհնել իրանց շահերը? Ոչ: Այդպիսի երեխաները, թւում է ինձ, կեանքում աւելի մեծ կռիւ պիտի մղեն իրանց ցանկութիւնների համար, քան ուրիշները. ամենաթեթեւ անյաջողութիւնը կամ անզիջողութիւնը հակառակ կողմից նրանց կը կատաղեցնի: Ինձ պատմել են թէ քսան տարեկան

մի երիտասարդ, որ ծնողների միակ զաւակն էր և որ մեծացել էր այդ սկզբունքներով, առաջարկութիւն արաւ մի սիրած աղջկայ, և մերժում ստանալով՝ կեանքից զրկեց իրան, թողնելով հետեւեալ նամակը. «Ինձ համար անկարելին չկար, և կեանքումս առաջին անգամ լսեցի «ոչ» խօսքը. լաւ է մեռնել քան վիրաւորւած լինել»:

Ահա ինչու ինձ թւում է թէ անհրաժեշտ է սովորեցնել երեխային, որ նա իւր շրջապատը ճանաչի: Այդպիսիները շատ անգամ, նոյն իսկ իրանց ծնողների հակառակ, անսանձ կեանք են վարում և դառնում են յանդուգններ:

4) Զորքերը պնդում են տոկունութեան (выдержка) անհրաժեշտութեան վրայ և յաճախ, սահմանից անցնելով, կենդանի մարդուց մեքենայ կամ խաղալիք են շինում, որի հետ կարող են խաղալ ինչպէս քիմքը կը տալ: «Լեոն վեր կաց, — Լեոն նստի, — Լեոն կարգա — Լեոն տուր ձեռքդ, թէ չէ վայր կ'ընկնես — Լեոն, թող կոճակդ գցեմ, թէ չէ դու չես կարող — Լեոն, զգոյշ — Լեոն, դրուստ կանգնիր — Լեոն, այդքան բարձր մի՛ ծիծաղիր — և այլն: Առանց չափազանցնելու կարող եմ ասել, որ երբեմն հինգ բոլէշարունակ ափսքան նկատողութիւններ կ'անեն որ երեխան միանգամայն շարած է մնում և չգիտէ ինչ անէ:

«Զարհուրելի բան է, զանգաուում է մայրը իւր երեխայի վրայ, առանց իմ օգնութեան նա դրականապէս ոչ մի բան չգիտէ շինել»: Եւ կսկսի այլ և այլ օրէնքներ և հրահանգներ տալ երեխաներին: Կսկսի խաղալու և սլարելու ժամեր որոշել, բայց հազիւ երկու-երեք օր անցած՝ կը փոխի կամ ինքն էլ չի հետեւիլ իւր տւած ծրագրի դործադրութեանը: Բայց լաւ է ոչ մի ծրագիր չունենալ, քան շարունակ փոխել և ոչ մէկին չհետեւել:

5) Հինգերորդները, ժամանակ կորցնելուց վախ կրելով՝ իրանց երեխաներից մի-մի «годовастик»-ներ են շինում, զրկում են նրանց երեխայութեան երջանիկ և անդառնալի զարճութիւններից, զրքի են նստեցնում քիչ է մնում թէ օրօրոցից և ինչ որ «արտակարգ» բան տեսնելով նրանցում՝ լքցնում են նրանց ուղեղը ամեն տեսակ տեղեկութիւններով: Բայց որքան էլ այդպիսի մի երեխայ գեղեցիկ լինէր և որքան նա զարմացնէր ինձ իւր խելքով, ես այնուամենայնիւ չեմ կարող առանց խղճալու նայել նրանց ծերացած գեղե-

ցիկ գէմքերի վրայ: Նրանց զուենատ գէմքերը և նրանց տարիքի համար չափից դուրս խորն ընկած աչքերը ինձ սարսափեցնում են: Ես երբեք չեմ մոռանալ այն տպավորութիւնը, որ ստացայ մի այդպիսի երեխայից: Այդ երեխան ինձ շատ սիրում էր և, կարծեմ, միայն ինձ հետ լինելիս իրան երեխայ էր զգում, թէ ևս ինքս նրան չէի կարողանում երեխայի տեղ ընդունել: Անցքը պատահեց մի ամառանոցում: Նա նստած էր մի սանդուխքի վրայ և մի ինչ որ բանի վրայ խորախորհուրդ կերպով մտածում էր:

«Պետեա, Պետեա, գոչում եմ ես վայր իջնելով կառքից: Ինչպէս է քէֆդ: Այժմ բոլորովին առողջ ես: (Նա շատ նեարդալին և թոյլ երեխայ էր. զլխացաւերը նրան հանգստութիւն չէին տալիս):

«Բարով Ձեզ, Դուք հիմա եկաք? Էհ, որտեղից եմ առողջ, այդ բժիշկները իմ հոգիս հանեցին: Ես շուտով կարծեմ բոլորովին երկաթ եմ դառնալու: Հէնց երկաթի ջուր է, որ ինձ տալիս են: Ըղորդն ասած՝ նրանք իմ զահլէն տարան»:

Այդպիսի խօսքեր արտասանողը հինգ տարեկան երեխայ էր!

— Իսկ ինչու այդպէս ձանձրացած նստած էիր սանդուխքի վրայ:

— Ձանձրացածս որն է. գիտէք ինչ, — ես մտածում էի թէ ինչու մեղանում չկան ակադեմիաներ, ինչպէս Պետերբուրգում, որ նրանց համար հաւաքւեն բոլոր փողոցային շները: Ձէ որ այդ շները շատ հարկաւոր են նրանց համար: Հայրիկս ինձ պատմել է որ բժշկական ակադեմիայում ամենից առաջ շների վրայ են փորձեր անում: Նրանց անդամահատում են և այլ և այլ հետազոտութիւններ են անում:

— Դարդը կտրւել է, Պետեա, այդ ընչից փէնց խելքդ:

— Նրանից որ այդ անպիտան շները իմ զահլէն տարել են (ցոյց տալով հէնց մօտը կանգնած շներին): Ձեն թողնում, որ մարդ անցնի, ամենքի վրայ յարձակւում են, անմիտ կերպով հաչում են:

6) Վեցերորդները — այդ այն մայրերն են, որոնք իրանց անմեղ պարզամտութեամբ իրանց երեխաների բարոյական այլանդակութեան պատճառ են դառնում: Այդ այն «անմեղ մեղաւորներն» են, որոնք աղջկութեան ժամանակ կեանքի նպատակ չեն ունեցել, որոնք այնքան անզօր են եղել իրանց ձգտումների մէջ, որ չեն կա-

բողացել իրանց համար ճանապարհ հարթել, որոնց միշտ ձեռքին բռնած են մանածել կամ յետևից հրելով են առաջ տարել:

Այդպիսիների միակ ազատումը—մարդու գնալն է: Դրանք օրօրոցից հենց լսում են թէ պէտք է մարդու գնալ ու լաւ առիթ բաց չթողնել: Առաջ եմ բերում 11 տարեկան մի աղջկայ խօսքերը, որ այս վեցերորդ տիպարի ապագայ մայր է դառնալու:

—«Тетя, մայրիկս ինձ ասաց, որ ես ձեզ մօտ մնալու եմ մի տարի ևս, յետոյ մի տարով մոնելու եմ madame Ս-ի մօտ, իսկ յետոյ... դուք ինքներդ գիտէք թէ ինչ...»

—Հապա ինչ, հարցնում եմ ես, բան չկասկածելով.

—Ես ամաչում եմ թէ ասեմ...

Այո, նա ուզում էր ասել թէ յետոյ պէտք է աշխարհք մտնի և մայրը պէտք է նրան մարդու տալ...

Թէև վերջին ժամանակներս մեր ընտանիքները իրանց բարոյական պարտաւորութիւնն են համարում իրանց որդիներանց ուսում տալ, ժամանակից և հասարակութեան պահանջներից յետ մնալ, բայց, տարաբախտաբար, նրանցից շատ քչերն են ազատում ընտանիքի նախապաշարութեանց և ճնշումից: Տասնութթ—18 տարեկան աղջիկը, որը հեշտութեամբ հասել է եօթերորդ դաստիարակման, վկայական ստանալով թողնում է գիմնազը:

—Ոչ, ոչ, չեմ կարող Տ-երորդում երկու տարի մնալ, ասում է նա իւր բարեկամուհուն. ինքդ դատիր, էլ երբ աշխարհք դուրս գամ, էլ երբ մարդու գնամ:

Եւ այդ տակում է այնքան անկեղծութեամբ! Դրանք այն ապագայ մայրերն են, որոնց իգէալն է շուտով իրանց որդուն գիմնազիստի համազգեստի մէջ տեսնել:

«Միայն թէ իմ Արտուշը մտնի գիմնազը, ես ու նրա հայրը ոչինչ չենք խնայել: Եւ ես էնդուր եմ նրա բոլոր ցանկութիւնները կատարում, որ նա լաւ սովորի: Ամեն օր հայրը նրան փողեր է տալիս որ ինչ ուզում է առնի: Գիտէք, երբ իմ Արտուշը համազգեստ կը հագնի—ինձ կը թւայ թէ ես նրան պսակում եմ»:

Եւ տարօրինակ բան. այդ համազգեստը միանգամից բաժանում է մօրը որդուց! Մինչև գիմնազ մտնելը երեխան ոչ մի բոլոր չէր հեռանում մօրից, ամեն ժամանակ և ամեն տեղ նա, պոչի նման,

այէտք է նրան ուղեկցէր. այդ անօգնական և թույլ երեխան, որի վրայ մայրը նայում էր որպէս խաղալիքի ու մանրքէնի վրայ, որ նրա վրայ հագցնէր ամեն ձեւի շորեր, — այդ երեխան մի անգամից դառնում է ուժեղ, մեծ և անկախ: Նա միանգամից բաժանւում է մօրից և դառնում է հօր անբաժանելի ուղեկիցը: Նա իրան զգում է կէս-տէր և գիտէ որ նրա ամեն մի հրամանը կատարւելու է մօր կողմից առանց հակաճառութեան: Մօր համար նա արդէն ոյժ է և հեղինակութիւն:

— Իսկ ինչպէս էք ուզում անել ձեր միւս երեխաների հետ, հարցնում եմ ես մօրը:

— Իմ Դաւիթը (1) տարեկան զիմնազիստ) ասում է թէ լաւ է նրանց միասին միեւնոյն ուսումնարանը չտալ, այլ մէկին՝ մի, միւսին՝ ուրիշ ուսումնարան տալ:

Եւ այդ մայրը խնդրում-պաշտում է ինձ որ ես նրա որդու հետ խօսեմ:

Վնդրում եմ ձեզ, ես ձեզ մօտ կ'ուղարկեմ իմ Դաւիթին իբր թէ մի գործով, իսկ դուք նրա հետ լրջօրէն խօսեցէք: Ի սէր Աստուծոյ, միայն թէ նա չիմանայ թէ ես ձեզ մօտ զանգատել եմ, թէ չէ կը նեղանայ և ամբողջ ամիս էլ ինձ հետ չի խօսիլ: Ասացէք նրան որ նա պարապ ման չդաչ բուլւարում: Կը հաւատամք ինձ, նրան ամենեւին չեմ տեսնում: Լի օրերը, զիմնազից գալով նա կամ վազում է կոնստորը, հօր մօտ, կամ թէ բուլւարը. իսկ տօն օրերը ուր հայրն է, այնտեղ էլ նա է վազում:

Եւ որքան անգամ ես այդ երեխային տեսել եմ իւր հօր ընկերների շրջանում, ուր նա սրտի բերկրութեամբ լսում է նրանց խօսակցութիւնները: Դէմքից երևում է որ նա այդ բոլորներին ապրում է նրանց շահերով և միասին զգում նրանց բոլոր վրդովմունքները:

Վերեակայիր, հայրիկ, ասում է որդին իւր հօրը ճաշի ժամանակ, ես կարգացի լրագրում, որ այդ կապալը մնացել է N-ի վրայ: Իսկ ձեր գների մէջ զանազանութիւնը մեծ էր արդեօք:

Պէտք էր տեսնել երեխայի դարդոտ դէմքը, որ երեակայել կարողանաք այդ փոքրիկ մարդուն, որը իւր հօր ձեռնարկութեան յաջողութեան և անաջողութեան մասին է մտածում! Որքան այդպի-

սինները անախորժելի են երեխաների մէջ! Նրանք վերին աստիճանի անուշադիր են, եսական են և գործնական: Դուք նրանց ոչնչով չէք կարող ոգևորել, ոչնչով չէք կարող դրդել նրանց:

Ես այլ ևս չեմ խօսում այն ծնողների մասին, որոնք ամեն մի կրթութեան վրայ ձեռք են թափ տալիս: Նրանք աւելի լաւ են համարում իրանց որդկերանց ծառաներին ապաւինել:

—Գիտէք, օրիորդ, ես և Գիգօն երէկ մեր խոհարարի հետ Մուշտայիդ գնացինք, պատմում էր ինձ մի եօթ տարեկան տղայ: Վայրիկը ինձ 20 կոպէկ տւեց: Մի անգամ ես հիւրասիրեցի խոհարարին զարեջրով, միւս անգամ՝ նա ինձ»:

Ինչ է մտցնում կեանքի մէջ, ինչ ուղղութիւն է արւում նրան, ինչպէս են երեխաները հաւատում, ինչին են նրանք ականջ դնում—այդ բոլորը պատահականութեան է թողած: Մանր է ինձ համար խոստովանել, բայց երկար զիտողութիւններից յետոյ ես եկայ այս շատ տխուր եզրակացութեան, որ այս երեխաների վերջին տեսակը այժմ ամենատարածւածն է մեզանում: Եւ ահա այլ և այլ ուղղութիւնների և կրթութեան իրար հակառակ սիստեմների պատուհները մոնում են զպրօքը, ուր նրանք ամենքը հարկադրւած են ենթարկւել ընդհանուր կանոններին և ամենքի համար անխորի սահմանած կարգերին:

Ես վախ եմ կրում որ դուք, վերը առաջ բերած օրինակներից յետոյ, չկարծէք թէ ես չեմ ընդունում կանոնաւոր (նորմալ) ընտանիքի գոյութիւնը մեզանում: Ոչ, ես սուրբ կերպով հաւատում եմ, որ մեզանում կայ նորմալ ընտանիք, որ կան մեզանում հայրեր և մայրեր, որոնք իրանց ժամանակի մեծ մասը նւիրում են ընտանիքին և երեխաներին. բայց այդպիսիները, ցաւակցաբար, գրեթէ բացառիկ են, համեմատապէս հազազիւտ են:

Ինձ թւում է թէ նորմալ ընտանիքում երեխան պէտք է մեծանայ, ինչպէս վերը նկատեցի, բոլորովին իրար ներդաշնակ ազդեցութիւնների մէջ, և չպէտք է որ և է մէկի բերանից լսի ընդհանուր կրթութեան հակառակ ոգուն մտքեր:

Նորմալ ընտանիքի երեխաները պէտք է զգան որ նրանց ծնողները ոչ միայն իրանց են պատկանում, այլ և հասարակութեան: Բարձրագոյն կրթութիւն ստացած մայրը իւր երեխաների ծծմայրը

ու դաշեակը չէ միայն, որը միմիայն երեխաներին է նւիրւում,— ոչ, թէ մայրը և թէ հայրը անբաժան բարեկամներ են իրանց երեխաների և խելացի կառավարիչները ընտանիքի:

Նորմալ ընտանիքի ծնողները չեն ստիպում իրանց երեխաներին որ սոքա ամեն բանի վրայ նայեն վարդապետն ակնոցների միջով, չեն զարգացնում նրանց մէջ կարճամտութիւն և ոչ էլ չափազանց հեռատեսութիւն, այլ ընդհակառակը ամենից առաջ ամեն կերպ աշխատում են որ իրանց երեխաները սովորեն իրանց սեփական աչքերով դիտել, և որ առողջութիւն և նորմալ տեսողութիւն ունենան: Նորմալ ընտանիքի երեխաները ամեն բանում և իրանց բոլոր վարմունքի մէջ պարզ են իրանց ծնողների հետ: Վարելի է նկատեն թէ այդ մի փոքր դժւար է: Ոչ, միայն թէ պէտք է հրաժարել եսականութիւնից և սեփական արժանաւորութեան չափազանցացրած զգացմունքից:

«Հաւը ուզեց իւր թւերով ծածկել ձագերին, որոնք արդէն փետուրւել էին:— Մեզ այլ ևս հարկաւոր չեն քո խնամքները, բղաւում էին ձագերը,— դու մեզ խեղդում ես:— Եղ ոչինչ, պատասխանում է հաւը,— դուք ոչինչ չէք հասկանում: Շատ կարելի է որ ես ձեզ այլ ևս պէտք չեմ, բայց դուք ինձ հարկաւոր էք: Նախ որ ինձ ախորժելի է իշխանութիւն բանեցնել ում և է մէկի վրայ, դա մի պատիւ է ինձ համար, իսկ երկրորդ՝ ես ձեր հատիկներն էլ եմ ուտում:»

Այդպէս է ասում Էսկիրոսը իւր «XIX-րդ դարի Էմիլը» գրքում: Եւ այդպէս է վարւում իւր երեխաների հետ եսական մայրը:

(Վերջը չաջորդ համարում)

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒՆ

ՖԵԼԻՔՍԻ

(Շարունակութիւն ¹)

ԷՄԻԼ ԶՈՒՆ (Emile Zola)

II ԿԱՏԱՐԵԱԼ, ԳՈՂԱՐԿՈՒՄՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԵՍԻ:

Une oeuvre est un coin de la nature vu à travers un tempérament.
Zola.

Մի գործ (հեղինակութիւն) բնութեան մի անկիւն է, որը մենք հեղինակի աչքերով ենք տեսնում.

Զ. Ն.

Օրէկտիւ ըմբանը.—Հեղինակը չի կարող անտարբեր մնալ.—Զոլան հաւատացած աչք մասին:

Նատուրալիստ ըմբանը պիտի անդիմական լինի: Ֆլորերը ցոյց տւեց, որ աչք կարելի է, Զոլան աչք սկզբունքը օրէնքի վերածեց:

Զոլան իր վէպերում ոչ մտքեր ունի, ոչ զգացմունքներ, ոչ համոզմունքներ, ոչ թուլութիւններ, ոչ ցնծութիւն, ոչ վիշտ, ոչ կրիտիկական հայեացքներ: Նա այնպիսի մի դիտող է, ինչ որ է ընթերցողը, բայց կարծես աւելի անտարբեր, աւելի սառնասիրտ:

¹) Տես «Մուրճ» № 6

Եւ, ճշմարիտ որ, ընթերցողը յուզուում է այս ինչ կամ այն ինչ կտորը կարդալիս, անդիտակցաբար բացականչութիւններ է արձակում կամ խորհրդածութիւններ անում իր մտքում, իսկ ըմբռնիստը լուռ է իր գրեածքի մէջ, նա կարող է տանջւել կամ երջանկանալ իր գործող անձերի տանջանքներով ու երջանկութիւնով, բայց ոչ մի բառով, ոչ մի հնչիւնով նա այդ չի արտայայտի, նրա լեզւին փակ է դրած:

Այսպէս էին ուզում գրել նորագոյն բոմանիստները: Նրանք, ճնշելով իրանց զգացմունքները, սառնարիւն էին, կամենում մնալ:

Այսպիսով նրանք կը ցանկանային, որ իրանց ետը միանգամայն քողարկւէր, կը ցանկանային, որ բոմանը իսկապէս մի սպառնալիք լինէր:

Մենք չենք խօսում առ այժմ, թէ որքան այդ կարելի է, (մի ուրիշ անգամ մենք կը տեսնենք, որ այդ մի ցնորք է—իր սիրտը, իր զգացմունքները ծածկել) և թէ որքան հնարաւոր է մարդուն բոլորովին օբյեկտիւ լինել իր գրեածքներում,—մենք տրամադրում ենք միայն նախուրախսների ցանկութիւնը:

Սակայն, չնայելով այդ ցանկութեան, գուցէ և դիտակցօրէն, յաճախ բոմանիստները անտարբեր չեն մնում դէպի իրանց զրքերում սպառնալիք դրամաները: Յաճախ նրանք խօսում են իրանց հերոսների բերանով, յայտնում են իրանց համոզմունքները, իրանց հայեացքները, իրանց զգացողութիւնը և այլն:

Աւելացնենք արդարութեան համար, որ Զոլան ինքը զգում էր նախուրախսների օբյեկտիւ մնալու չաւանդութեան չափազանցութիւնը, նա հասկանում էր, որ մի մարդու ձեռի գործ (այն էլ մտաւոր աշխատութեան արդիւնք) անհրաժեշտաբար պիտի կրէր այդ մարդու ընդհանուր տրամադրութեան կնիքը:

Նորագոյն հոգեբանական դպրոցը աւելի ևս պիտի ընդարձակէր այս միջոցը և ամբողջ փիլիսոփայական էութիւններ տար իր բոմաններում: Այս մասին մենք մանրամասն կը խօսենք մի ուրիշ անգամ:

III ՄԻՋԱՎԱՅՐԻ ՃԻՇՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

L'homme est déterminé par le milieu.

Zola.

(Մարդս շրջավայրի պտուղ է:
Զ. ռ. ռ.)

Միջավայրի նկարագրութեան նշանակութիւնը.—Բնութեան և շրջավայրի ազդեցութիւնը մարդու հոգեկան շարժումների վրա.—Նկարագրելու երկու ձևերը, անտարբեր և հոգեբանական նկարագրութիւններ.—Մի օրինակ վերջին ձևի: Ճշգրիտ նկարագրութիւններ պատմական և ժամանակակից վիպերում:—Զտլարի լակունն և թուլութիւնը գէպի նկարագրութիւնները:

Միջավայր կամ շրջավայր (milieu, среда) անւանում ենք մենք այն աշխարհը, որի մէջ ապրում են բոմանի գործող անձերը: Միջավայրը, նեղ առնումով, հերոսի տունն է իր կահ-կարասիքով, իր բնակիչներով,—աւելի լայն նշանակութիւնով, նա ամբողջ երկիրն է, իր բնութիւնով: Նատուրալիստ բոմանը (և իբրև այս ուղղութեան ամենաբարձր յայտնութիւն — Զոլայինը) չի բաւականանում նեղ շրջավայրի ճշգրիտ նկարագրութիւնով, նրա նպատակն է ուսումնասիրել նոյնպէս և բնութիւնը, որտեղ կատարւում է բոմանի դրաման:

Ինչ նպատակ ունի բնութեան նկարագրութիւնը բոմանի մէջ? Ինչ կապ կայ անձրեացին եղանակի և մի սալոնում, վառ բուխարու տաջ, փոփոկ բազկաթուի մէջ նստող մի օրիորդի մտքերի ընթացքի հետ:

Այսպիսի հարց տալ նշանակում է կասկածել, որ մի կապ կայ մեր ներքին աշխարհի և արտաքին բնութեան մէջ:

Մի փթած ճշմարտութիւն է, թէ մեր զգացմունքները կարող են հիմնական կերպով փոփոխւել դրսից եկած ազդեցութիւնների ներքոյ: Սիրահալը տարբեր յուզմունքով, տարբեր բաւերով, տարբեր տոնով է յայտնում իր սէրը սիրած առարկային, նայելով թէ որտեղ է նա.—մի զեղեցիկ այգիում թէ մի նեղ, թանձրասօղ սենեակում, ծովի ափին թէ աղքատիկ խրճիթում, տխուր թէ ուրախ հանգամանքներում: Մեր վիշտը թեթևանում է, երբ դիտում ենք մի բանաստեղծական պէչզած և ծանրանում է ամպամած, տախտկալի երկնքի տակ:

Հետևաբար բնութեան ճիշտ նկարագրութիւնը անհրաժեշտ է հերոսների այս ինչ, կամ այն ինչ հոգեկան շարժումը և նրա գործերը հասկանալու համար:

Եթէ բնութեան ազդեցութիւնը այսչափ մեծ է անհատի վրա, որչափ նա աւելի մեծ պիտի լինի մի ամբողջ բնակութեան վրա, որը տանեակ տարիներ ապրում է այս ինչ կամ այն ինչ բնութեան գոգում:

Վերցրէք երկու քաղաք, մէկը ծովի ափին, միւսը նրանից հեռու: Այս երկու քաղաքների բնակիչների բարք ու վարքը, նրանց կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով տարբեր են: Մէկը ձկնորս է, միւսը հողագործ, առաջինը լողալ գիտէ, երկրորդը ոչ, առաջինի ուղեղը զբաղւած է ծովով, երկրորդինը հողով: Այս երկու միմեանցից տարբեր մարդիկ հիմնական կերպով զանազանւում են միմեանցից թէ ֆիզիկապէս և թէ հոգեբանօրէն, հետևաբար, նրանց գործերն էլ իրար նման չեն կարող լինել:

Այս հանդամանքը այնքան աչքի ընկնող մի հանգամանք է, որ բոլոր գրողները, ինչ ուղղութեան էլ որ պատկանէին նրանք, զգացել էին բնութեան ճիշտ նկարագրութեան կարևորութիւնը:

Զարմանալի ճշդութեան, մանրամասնութեան և ճոխութեան հասաւ իսկական միջավայրի նկարագրութիւնը նատուրալիստների գրչի տակ: Նրանց կարծիքով անկարելի է հասկանալ գործող անձերի արարքը ու զգացմունքները առանց տեղեկանալու մանրամասնօրէն այն տան մասին, որտեղ նա ապրում է, նրա սենեակի կարասիների, նրա հագուստի ձևի, նրա համակեացների մասին և այլն և այլն:

Այս տեսակէտից միջավայրի ուսումնասիրութիւնը նոյն նշանակութիւնն ունի բոմանի այս ինչ էպիգոդը հասկալու, ինչ որ ֆիզիոլոգիական մի փորձը հասկանալու համար՝ փորձի պայմանները:

Յիրաւի մի որ և է հոգեկան շարժում կամ որ և է արարքի շարժառիթը հասկանալու համար, երկու բան են հարկաւոր. մէկ — բոլոր նախընթաց հանգամանքները, երկրորդ — շրջավայրը, որի մէջ գտնւում է նա որոշեալ բոպէին: Մի օրինակ կը բացատրի մեր միտքը:

Ահա մի սիրահարւած երիտասարդ, նա երկար չի վստահանում իր սէրը յայտնել իր սիրուհուն:

Մի լուսնեակ գիշեր, ծաղկալից պարտէզում, օրիորդին տխուր

տրամադրութեան մէջ տեսնելով, երիտասարդը քաջալերուեմ է և իր խոստովանանքը անուամբ Այս լուսնեակ գիշերը և այս ծաղկալից պարտէզը, օրիորդի այդ տխուր տրամադրութիւնը, երիտասարդին վստահութիւն տուող հանգամանքներն էին, առանց որոնց այդ օրը նա իր խոստովանանքը չէր անի:

Նատուրալիստները, նկարագրելով մի որ և է միջավայր, սկզբնաւորապէս նպատակ ունէին ծանօթացնել ընթերցողին այդ միջավայրին, առանց ճգնելու բացատրել նրա ազդեցութիւնը գործող անձերի հոգեկան շարժումների վրա: Բայց յետոյ, երբ որ հոգեբանական տարրը իշխող հանդիսացաւ բոմանուհ, նորագոյն նատուրալիստ հեղինակները աշխատեցան այդ երկրորդ տեսակէտից նկարագրութիւններ տալ:

Զուլտի գրեածքներում այս տարբերութիւնը ակներև է: Երբ նա կամենում է մեզ միայն բարձր ու վարժի նկարագիր տալ, նա լոկ մանրամասնութիւններ է բերում միջավայրի մասին, աշխատելով ինքը չէզօք մնալ, իսկ երբ նա իր հերոսի հոգեկան շարժումներն է ուզում բացատրել, նա դիտում է շրջավայրը այն գործող անձի հոգեկան աչքերով: Այս վերջին դէպքում այն մանր-մունք իրերը մի յայտնի գոյն են ստանում և կենդանանում են, կարծես հերոսը իր հոգին փշել է շրջապատող առարկաների մէջ:

Ահա մի հատուած:

(Նրկու սիրահարներ. — երիտասարդ քահանայ Սերժը և օրիորդ Ալբինը շրջում են պարտիզում):

«Այս ժամերին պարտէզը ամբողջապէս նրանցն էր. նրանք տիրապետել էին այգու բոլոր անկիւնները: Վարդենին նրանց համար էր ծաղկում, կանաչազարդ գետինը նրանց համար էր քաղցր և մեղմ բուրմունքներ արձակում, — բուրմունքներ, որոնք գիշերները ներս էին մտնում լուսամուտով և նրանց աչքերին քուն բերում: Մրգաստանը կերակրում էր նրանց, Ալբինի գոգը պտուղներով լըցնում և իրանց ճիւղերի անուշահոտ ստերի տակ սիրահարներին հովութիւն տալիս, երբ արեգակի ծագումից յետոյ նստում էին նախաճաշելու: Մարդագետնի վրա նրանց էին պատկանում կանաչը և ջրերը, — կանաչը, որը անվերջ տարածւում էր և լայնացնում իր

իշխանութեան սահմանները, անդադար նորանոր մետաքսեայ զորգեր փռելով սիրահարների առաջ,— ջրերը, որոնք նրանց ամենամեծ ցընծութեան աղբիւրներն էին, նրանց անբծութեան, նրանց անմեղութեան պատկերը, այն զովադուցիչ հեղուկը, որի մէջ սիրում էին զովացնել իրանց պատանեկութիւնը։ Նրանք տիրապետել էին անտառը սկսած ահագին կաղնիներից, որոնց հազիւ տաս մարդ կարող էին գրկել, մինչև մացառները, որոնց երեխան անգամ կրկուորէր.— անտառը իր բոլոր ծառերով, իր սուերով, իր ծառուղիներով, իր բացորակ տեղերով, իր ծաղկապատ անցքերով, որոնք թռչուններին անգամ անցալտ էին,— անտառը, որի մէջ, ինչպէս մի վիթխարի վրանի մէջ, նրանք կէս օրին թագցնում էին առաւօտը ծնած գզւանքը։ Նրանք թագաւորում էին ամեն տեղ, մինչև անգամ ապառաժների ծայրերին, աղբիւրների ակերին։ Այսպէս, այժմ աջ ու ձախ նրանք տէր էին և իշխող, նւաճել էին այս երկիրը, փայլում էին բարեկամ բնութեան մէջ, որը նրանց ճանաչում էր, որը ողջունում էր նրանց և հնազանդ աղախնութեան իրան զոհում նրանց երջանկութեան։ Յետոյ նրանք երջանկանում էին երկնքով, իրանց զլխի վերև տարածւող այն լայն կապուտ ծածկով։ Պարիսպները չէին քողարկում այդ երկինքը, որը նրանց հաջեացքին էր պատկանում և մի մասն էր կազմում նրանց ապրելու բաղդաւորութեան մէջ՝ ցերեկը իր յաղթական արևով, գիշերը ջերմութիւն անձրևող աստղերով։ Արեգակը սքանչացնում էր նրանց օրւայ ամեն վայրկեանում, փոփոխւելով կենդանի մարմնի նման. առաւօտը աւելի սպիտակ, քան թէ նոր քնից զարթնող օրիորդը, կէս-օրին ոսկեգօծած, իբրև սիրով ու տարփանքով տուրուած, երեկոյեան դալկացած, կարծես գզւանքից զաղարած քաղցր յոգնածութեան մէջ։ Երեկոները, արևը մայր մոնելիս, մի ժպիտ էր ուղարկում նրանց։ Երբեմն սահում էր հրդեհած երկնքի անդորրութեան մէջ, որտեղ մի ամպ անգամ չէր նկատւում, երբեմն էլ ցրւում էր ծիրանի ճառագայթների, պատռելով իր գոլորշիի ծածկոցը, որ դուրս ցատկի հրեղէն ալիքների պէս և քողարկի երկինքը, նման գիսաւոր աստղերի, որոնց ագիները հրդեհում էին բարձրաբերձ ծառերի գագաթները... Բայց բուսականութիւնը մինակ չէր, կենդանիներն էլ խոնարհւել էին նրանց առաջ։ Ալբինը

ու Սերժը ինքնակալների պէս շրջում էին խոնարհող կենդանիների մէջ: Թիթեռնիկների երամները բարձրանում էին նրանց հայեացքը փաղաքշելու համար, հովհարում էին նրանց իրանց թևիկներով, հետևում էին նրանց, ինչպէս արեգակի կենսատու ոգիներ, ինչպէս թռչող ծաղիկներ, որոնք թափ էին տալիս օդի մէջ իրանց բուրմունքները ! »:

Վալտեր Սկոտը, Կուպերը իրանց պատմական վէպերի մէջ նկարագրական մասը հրաշալի ճոխութեան հասցրին: Նրանց տւած բնութեան նկարագրութիւնները մի-մի սքանչելի ձիթանկարներ են: Պատմական բովանդակի աչք մեծ ստեղծողներից յետոյ, բովանդակները սկսեցին իսկական գիտնականների նման ուսումնասիրել հին աշխարհը, ասորեցոց, եգիպտացոց, հռովմայեցոց, պարսից և միւս ազգերի քաղաքակրթութիւնը: Տէոֆիլ Գոտիէն իր «Ալէոպատորաի մի գիշեր» վէպի մէջ, Ֆլորբերը իր «Սալամբոի մէջ» երևում են իբրև լուրջ գիտեցողներ հին աշխարհի: Վիկտոր Հիւգօն իր Notre Dame de Paris բովանդակ զարմանալի ճշտութիւնով նկարագրում է հին Պարիզը: Իսկական միջավայրի նկարագրութեան մեծ կարևորութիւնը ճանաչւած էր Զոլաից առաջ Բալզակի, Ալէքսանդր Դիւմաի, Հիւգօի, Ժորժ-Զանդի տւած զարկից յետոյ: Ինչ ուղղութեան էլ պատկանէին բովանդակները, բոլորը պահանջ էին զգում նկարագրել մարդուն շրջապատող բնութիւնը, իրերը:

Սակայն միջավայրի նկարագրութեան այն ձևը, որից մի նմուշ տալու համար առաջ բերեցինք նախընթաց հատւածը, միմիայն մեծ գրողներին էր յաջողւել: Ֆլորբերի գրքերի մէջ, որտեղ մենք հիացումով ամեն տեսակ կատարելագործութիւններ ենք գտնում, դը Գոկուրների գրածքներում, Ալէքսանդր Դիւմաի «Կամելիազարդ Տիկին» բովանդակ և մեր ժամանակակից Ալֆրոնս Գոդէի¹⁾ օրինակելի վէպերում, որոնցից ամեն մէկը մի գլուխ գործոց է, մենք կարող էինք մատնանիչ անել մեծ քանակութիւնով այսպիսի նկարագրութիւններ:

¹⁾ Յոյս ունինք մի օր մի ընդարձակ էտիւդ տալ Ա. Գոդէի բովանդակ մասին, որոնք նույնպէս պատկանում են նատուրալիստ զարկից, բաց որոնք որոշ փոքրութիւններ են նշմարկւած:

Նկարագրութեան այս ձևը, որը կարելի է հոգեբանական ան-
ւանել, անտարակոյս միակ ձևն է, որը կարող է հետաքրքրել հո-
գեբանին:

Ձուլի նման վարպետը չէր կարող չըհասկանալ և չըզգալ այս
նկարագրութիւնների անհրաժեշտութիւնը, իր գործող անձերի հո-
գեկան ըուկական շարժումները բնորոշելու համար: Եւ այս տե-
սակէտից նա դարուս ամենապահւելի վիպասանների շարքն է
անցնում:

Առհասարակ Ձուլն իր գրքերի մէջ նկարագրութեանը մեծ
տեղ է տալիս: Նա պարզապէս սիրում է նկարել: Նա հոգով ար-
տիստ է:

Նրա բոմանները, այսպէս ասած, մի-մի պատկերահանդէսներ
են, պատկերազարդ գալերէաներ: Եւ որքան բազմակողմանի են
այս նկարները. կարծես ոչ մի բնական երևոյթ, ոչ մի անկիւն եր-
կեքում ու երկրի վրա չի ուզում անուշադիր թողնել!: Եւ ընթեր-
ցողը պարզ զգում է, որ այս մի անդիմադրելի պահանջ է հեղինա-
կի համար: Նա չի կարող սառնասրտութիւնով մի հայեացք զցել
Պարիզի վրա և նկարագրել նրան առաւօտ թէ երեկոյ, անձ-
րեւի տակ, թէ տաք արեւի ճառագայթներով սփռւած: Չարմանալի
ճշտութիւն, զարմանալի ըմբռնումն կոլորիտի! Այնպէս որ մարդ
զանազանում է գոյների ամենաթուլցիկ նիւշանները (առտիճան-
ները), զգում է նկարագրած բնութեան արեւից ստացած ջերմու-
թիւնը, անձրեւից թափանցած խոնաւութիւնը և ձիւնի բերած
սառնութիւնը: !!

Իր գեղարւեստական ճաշակին հետեւելով, Ձուլն չի կարող անցնել
Նոր-Վամուրջի վրա, որ չընկարագրի Սենա գետը իր ափերը զար-
դարող Պարիզի բոլոր հրաշալիքներով, լուսնեակ կամ մութ գիշերի,
կէսօրին կամ արեւը մայր մօնելիս: Անտարակոյս, Ձուլի նկարագրու-
թիւնները չափազանց մեծ տեղ են բռնում, — անտարակոյս, յաճախ
նրանք ոչ մի կապ չունեն գործող անձերի հոգեկան աշխարհի հետ,
և այս կշռամբանքը մենք վստահ ասում ենք Ձուլի բոմանին. սա-
կայն ոչ մի գեղարւեստական հոգու տէր ընթերցող չի կարող չըս-
քանչանալ նրանցով և մի առանձին յափշտակման մէջ չընկնել:

Հետեւեալ յօդածներում մենք դարձեալ կանգ կառնենք նկարագրութեան նշանակութեան վրա հերոսի հոգեբանութեան տեսակէտից:

IV. ՃԻՇՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ:

„La Société c'est l' imitation“
Tarde

Հասարակութիւնը նմանողութիւն է:
Տ ր ք

Բնաւորութիւնների և բարք ու վարքի նկարագրութիւններ (ըստ Պօլ Բուրժէի). — Ի՞նչ է բնաւորութիւնը և բարք ու վարքը. — Նատուրալիստի զաղափարը նկարագրութեան վրա. — Նրա սառնասրտութիւնը և անտարբերութիւնը դէպի իր նկարագրածը. — Ի՞նչ է Հասարակութիւնը (նոր թէօրիա). — Զուլիսի պրոգրամը. — Նրա Le Ventre de Paris, Nana, Au Bonheur des Dames, Germinal, La Terre, L' Argent, La Débacle բովանդակների համառոտ պարունակութիւնը:

Հասարակական կեանքի ճիշտ և մանրամասն ուսումնասիրութիւնը իսկապէս նատուրալիստ բովանդի անմիջական նպատակն է: «Բարք ու վարքի բովանդ» հէնց նրանով էլ բնորոշւում է, որ «բարքում է, հետազոտում է որոշեալ շրջանի կեանքը»:

Այս տեսակէտից բովանդիստներին կարելի է, Պ. Բուրժէին հետեւելով, երկու կարգի բաժանել. — մէկ նրանք, որոնք նկարագրում են բնաւորութիւններ (Caractère — характер) և երկրորդ, որոնք նկարագրում են բարք ու վարք (meurs):

«Բնաւորութիւնը այն զծերն են, որոնցով մարդիկ տարբերւում են միմեանցից, իսկ բարք ու վարքը պարունակում է այն զծերը, որոնցով մի մարդ նմանում է մի ամբողջ դասակարգի: Այսպիսով, նկարագրել մի բնաւորութիւն — նշանակում է երեւան հանել առանձին արտակարգ անձնաւորութիւններ, նկարագրել բարք ու վարքը — նշանակում է ասպարէզ հանել միջին կարգի մարդիկ»: (P. Bourget)

Առաջին կարգի զբոլներին պատկանում են մեծ տեղեւորները. — Շէքսպիրը, Ստենդալը, Բալզակը, Հիւգօն, Տոլստոյը, Դոստոյեւսկին և այլն. բարք ու վարքի նկարագրողներն են, — Դոնկուտները, Զոլան և նորագոյն բովանդիստները մինչև հոգեբանների դպրոցը:

«Բարք ու վարք նկարագրելու համար նրանք (բովանդիստները)

մանրամասնօրէն նկարագրում էին շրջավայրը, ճանաչելով նրա անդեցութիւնը անձնաւորութեան վրա,» ասում է Պ. Բուրժէն:

Հասարակութեան կեանքը այնքան բարդ է, որ նրա կատարեալ և ամենակողմանի ուսումնասիրութիւնը անկարելի է: Բոմանիստը միայն ցոյց է տալիս մեզ մի որոշեալ շրջանի որոշեալ ժամանակէալ կեանքը:

Նկարագրել կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, այնպէս, ինչպէս կազմակերպւել է դարերի ըրթացքում. — ահա նատուրալիստի իդէալը! Եւրեւ ճասարակութեան սիրտը, պարզել նրա ծաւքերը, մերկացնել նրան, որպէս զի նա երեւայ իր իրական մերկութիւնով, իր կաշու իսկական գոյնով! գործող արձերի մարմինը ու հոգին քըրքըրել, մոնել նրա սուներ, ցնծալ ու տանջել նրա հետ, խորհել ու գործել նրա հետ. — ահա նատուրալիստի իդէալ!

Իրական բոմանի ներկայացուցիչները ահազին տոկունութիւնով սկսեցին զիտել իսկական կեանքի մանրամասնութիւնները: Համարեա ոչ մի դասակարգ, ոչ մի հասարակական շրջան ազատ չմնաց նրանց հետազօտութիւններից:

Անխնայ և անխոր զիտականի պէս, որի համար չկայ ոչ վատ, ոչ լաւ, ոչ ազնիւ և ոչ ստորին իր հետազօտած առարկաների մէջ, նատուրալիստները անատոմիական դանակը ձեռներին մօտն հասարակութեան զանազան շերտերը և սկսեցին քըքրել նրանց: Լաւն ու վատը, գեղեցիկն ու տգեղը, բարոյականն ու անբարոյականը նոյն գիտականի սիրով ուսումնասիրեցին նրանք ու մեզ իրանց հետազօտութիւնների արդիւնքը տւեցին:

Բայց տեսնենք, թէ ինչ է հասարակութիւնը:

Նորագոյն մարդաբանական դպրոցը հասարակութեան կազմակերպութիւնը հիմնում է հոգեբանական օրէնքների վրա: Հասարակութիւնը այնպիսի մարդկանց համագումար է, որոնք ազդում են միմեանց վրա բարոյապէս և հոգեպէս: Այս փոխադարձ ազդեցութիւնը կամաց-կամաց մեղմ

կերպով միաձևում է մարդկանց հոգեկան և մտաւոր աշխարհները և այսպիսով գոյանում են մի շարք անձեր, որոնք մի լեզւով են խօսում, մի կրթութիւն են ստացել, մի կերպով են մտածում, զգում, միևնոյն իդէալները, միևնոյն ձգտումներն ունեն։ Այս անձերը միասին գումարած կազմում են մի դասակարգ, իսկ մի քանի զանազան դասակարգեր միանալով կազմում են մի հասարակութիւն։

Մի ուրիշ անգամ մենք մանրամասն կը ծանօթանանք այս թէօրիաի հետ, առ այժմ պահենք մեր մոքքում այն, թէ հասարակութեան իւրաքանչիւր անդամը ազդու է մնացած անդամներին բարոյական հոգեկան աշխարհի վրա և ազդու է փոխադարձաբար հասարակութիւնից։ Այս փոխադարձ ազդումն արդի մարդաբանական հոգեբանութիւնը բացատրում է փոխադարձ նմանողութեան օրէնքով, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հետևանք նոյնպէս փոխադարձ հիպնոսման։ Այս թեթև հիպնոսումները կամ ներշնչումները անդադար կատարւում են հասարակութեան մի անդամից միւս անդամներին վրա, և այսպիսով իրար նայելով, իրարից օրինակ վերցնելով, մի խօսքով իրար նմանւելով, մի որ և է հասարակութեան անդամները վերջ ի վերջոյ մի տեսակ կրթութիւն են ստանում և ուրեմն մօտաւորապէս միակերպւում են։ Այս է, որ իրաւունք է տալիս յայտնի Ֆրանսիական մարդաբանին ասել. «հասարակութիւնը նմանողութիւն է, այսինքն հաւաքական սոնամբուլիսմ (հիպնոսումն)։ Սակայն միայն մարդիկ չեն ազդում իրար վրա, բնութիւնն էլ, շրջապատող իրերն էլ կրթում են մարդուն։ Այս բարձր ազդեցութիւնների ներքոյ, այն է՝ դաստիարակութեան, ուսման, տեսած օրինակների, նկատած երևոյթների, գիտած իրերի և այլն, կազմւում են մարդիկ, որոնք սերտ կապւած լինելով միմեանց հետ, կազմում են մի ահագին ընտանիք, որ կոչւում է հասարակութիւն։

Այս բացառութիւնից ակներև է, որ մի հասարակութիւն լաւ նկարագրելու համար անհրաժեշտաբար պէտք է ուսումնասիրել մարդկանց և իրերը, այսինքն այն բոլորը, ինչ որ մենք անւանեցինք շրջավայր։

Ճանաչել մի որ և է հասարակութեան անդամներին, ուսումնասիրել նրանց ծագումը, նրանց յաջորդական յատկութիւնները, նրանց դաստիարակութիւնը, նրանց բարոյական, մտաւոր ու ֆիզիկական առանձնաչատկութիւնները,—յետոյ դուրս բերել նրանց միմեանց վրա գործած ազդեցութիւնը (այսինքն, զիտնական բառով — ներշնչումները) — այդ կը նշանակի ուսումնասիրել մի հասարակութիւն:

Ահա այն դժւարին խնդիրը, որ կամեցաւ վճռել նատուրալիստ դպրոցը:

Եւ պէտք է խոստովանել, որ նա մօտեցաւ այս խնդրի լուծմանը: Այս տեսակէտից նա վերցնում է մի դասակարգ, ուսումնասիրում է նրան կազմող անդամներին, որքան հնարաւոր է մանրամասնօրէն, յետոյ դիտում է նրանց իրար վրա ունեցած ազդեցութիւնը, զրգուելով նրանց կրքերը և այդպիսով զանազան ընդհարումներ առաջացնելով: Բայց քանի որ հասարակութիւնը մի դասակարգից միայն չի լինում բաղկացած, վասնորոյ բոմանիստը անհրաժեշտաբար պէտք է միւս դասակարգերին էլ դիմէր և մտցնէր իբրեւ ազդող տարրեր իր նկարագրած զրուպայի մէջ:

Ձուլի բոմանները բոլորը այս պրոգրամով են զրւած:

Le Ventre de Paris, Assomoir, Nana, Pot-Bouille, Au Bonheur des Dames, Germinal, L'oeuvre, La Terre, L'Argent, La D'èbacle, Էմիլ Ձուլի գլխաւոր աշխատութիւններն են, որոնց մէջ նա տալիս է հասարակութեան կեանքի ուսումնասիրութիւնը:

Le Ventre de Paris — (Պարիզի որկոր) վէպում մէջ բոմանիստը մեզ մի հաստ հատորում զարմանալի համբերութիւնով նկարագրում է Պարիզի գլխաւոր մթերքավաճառանոցի (Halles) պատկերը, իր աղմկալից խլրտումով, վաճառողների ֆիզիկական և բարոյական յատկանիշներով, ահազին ծանրութեան կթոցներ կրող յաղթանդամ «բազարի ուժեղներով» (forts des Halles), այս ահազին բազարը յաճախող ամբոխի աղմկալից, դատարկ ու լի զամբիւղներով մոնել դուրս դալովը, մթերք վաճառող հաստափոր և կշկշան կանանց դուռում-գոշումով, իր երկաթէ ապակու պատերով ու ծածկով և ահազին շէնքի շուրջը պատող մեծ ու փոքր սայլիկներով, որոնք շրջակաների բոլոր արդիւնաբերութիւնները, արեւը դեռ չը ծագած, բե-

բում են—Թափում այս անդունդը, որտեղից երկու ու կէս միլլիոն բերաններ պէտք է օրւայ ուտելու պաշար տանեն:

Nana (Նանա), որի մէջ Զոլան դուրս է բերում կանանց անբարոյական դասակարգը, որը Պարիզում պաշտօնապէս տաս հազարներով է հաշոււմ, իսկ իրապէս հարիւր-հազարներով (? Խմբ.), նրանց խաղացած դերը ընտանեկան բարօրութեան տապալման մէջ, հասարակական զւարճալիքների անբարոյականացումն, պատանեկութեան գրաւումն, ծերերի չափշտակումն, այդ շնորհանուր հիպնոսումն այն կոկոսներին, որոնք լիքն են օտարօտութիւններով, որոնց հոգեկան աշխարհը կոնսորասմների, հակադիմութիւնների մի աշխարհ է, որտեղ ամենազաղրելի անբարոյականութեան կողքին գտնում ենք չափազանց բարոյական զգացմունքներ, ամենամեծ պարզամտութեան մօտ—դժոխացին խոր ամանկութիւն, իսկ անսահման ինքնազոհութեան մօտ—ամենաստոր անձնասիրութիւն:

Au Bonheur des Dames (Կանանց բաղդը) պառակտական վէպը, որի մէջ այնպէս զօրեղ գրչով դուրս է բերւած նոր ձևի վաճառականութեան կռիւը հին ձևի առևտրի հետ, նրա տապալող զօրութիւնը, իր ապրանքների սոսկալի դարսումներով, իր վաճառող դասի երարխական կազմակերպութիւնով, իր բաժանմունքներով մեծ ու փոքր մասերի (րէյոնների) զանազան իրերի համար—կառքերից, մահճակալներից սկսած մինչև ասեղ-թելը, անցնելով պատրաստի հագուստների, ձեռնոցների, ապակեղէնների ու խաղալիքների վրայով: Ահագին մագաղիններ, որոնց չորս փողոցի վրա լայն բացւող զռներով ներս են մտնում ու չարկերը լցնում 30—40 հազար ամլոխը, —մագաղիններ, որտեղ յոգնածը հանգստանալու համար փափուկ թաւիշեայ բազկաթոռներ ունի հարուստ գրադարանի մէջ, որտեղ ծարաւողը անվճար ըմպելիքներ է ստանում, իսկ ցանկացողները անվճար թուղթ ու թանաք, որքան կամենան, իրանց թըղթակցութիւնները անելու համար,—մագաղիններ, որոնց մէջ կենտրոնանում է մի ամբողջ քաղաքի առևտուրը, որտեղ օրական խրիղը հասնում է երբեմն միլլիոնի, որտեղ եռում է մի օտարօտի կեանք. զրգռումն կանացի պճնասիրութեան, շլացումն րէյոնների վրա ամենքի առաջ փռած հիանալի և զբաւիչ իրերով...

Germinal (Արշալոյս), հանքաբանւորների այս լուսանկարը,

որի վրա մենք կրակոտ գոյներով նկարած ենք տեսնում բանորի սարսափելի տանջանքները գետնի տակ, զուհատ զէմքերով, կռացած ողնաշարով: Մի ամբողջ հասարակութիւն, որը ստրուկ է դառել իր ուժերը ծծող հանքին, որի միջից հազիւ նա մի կտոր չոր հաց է դուրս բերում, և որի մէջ կեանքը մի զաղրալի անբարոյականութեան ասպարէզ է դառնում, բռնաբարած դեռահասներով, պուռկացած ամուսիններով!!

La Terre (Հող), որի մէջ Ֆրանսիական հողագործը պէտք է դուրս բերէր իր անսահման սիրով զէպի իր մշակած հողը, իր նեղ շրջահացեացով, իր աշխատասիրութիւնով, իր սոսկալի անբարոյականութիւնով և գարշելի ցինիամով, որտեղ աչքի ընկնող գոյներով լուսաբանւած է հողային խնդիրը ֆրանսիացում, զրամի անդիմադրելի ոյժի ներմուծումն հողագործների շրջանը, երկրագործութեան նոր սխտեմը, — մեքենայական մշակումն երկրի, — որը անխնայ կապում է ուշբարի ձեռները և մրցումն անկարելի դարձնում, որտեղ վերջապէս մարդը յարմարել է իր անասուններին, որոնց հետ նա կողք-կողքի է ապրում, և որոնցից նա փոխ է առել մինչև անգամ ազատ, աշկարայ սիրելու սովորութիւնը!!

L'Argent (Արծաթ), այս վարպետական էտիւդը Պարիզի Ֆինանսական աշխարհի. — բանկային մեքենայութիւններ, որոնց միջից ծագում են կապիտալի սոսկալի կուտակումներ, քրտինքով վաստակած թշուառների գրոշներից դոյացրած: Հեղինակը այս զրքի մէջ բեմ է հանում մի ամբողջ դասակարգ, հեշտ վաստակի փափագով գրգռւած, մի դասակարգ, որի համար ոչ մի աւելի բարձր ձգտումն չկայ, բացի որսային վաստակը, — մի գարշահոտ մթնոլորտ, որտեղ մի քանի Ֆիւնդերմաններ և Սակարներ խաղում են մի ամբողջ հասարակութեան, մի ամբողջ երկրի բարօրութեան հետ ակցիաների միջոցով, գրաւելով և ի չար դործ դնելով ամբոխի թեթևամիտ հաւատարմութիւնը, որտեղ մի վաչրկենում զիզւում են և միւս վաչրկենում օղի մէջ ցնդում ահազին հարստութիւններ և որտեղ հրէայի սառնարիւն գործնականութիւնը զարմանալի անգթութիւնով տապալում է այն ամենը, ինչ որ յանդգնում է զէմ կենալ նրա ստակ վաստակելու ամեն բան լափող ախորժակին:

La Débacle (Զախջախումն կամ Տապալումն) Ֆրանս-պրուսա-

կան սոսկալի պատերազմի այս կենդանի նկարագիրը, որի մէջ վառ զոհներով նկարագրւում է Սեդանի ահռելի կռիւը, Ֆրանսիական զօրքի զարհուրելի ջախջախումն, — այս սոսկալի պարտութեան պտտմութիւնը, որը պիտի Ֆրանսիան զուով Բիսմարկի անգթութեանը մատնէր, Նապոլէոն III-ին Վիլհելմին գերի տար և հայրենիքը անդամահատէր... Այս պատուական զբքում պէտք է դուրս բերէր նորագոյն պատերազմական արւեստի տարած յաղթութիւնը, Նապոլէոնեան միապետական ռազմագիտական սխառեմի վրա Ֆրանսիացի յետամնացութիւնը, իր տգէտ օֆիցերներով, և անձնազոր զինւորներով, կառավարութեան անպատրաստականութիւնը, Պարիզի ամբոխի ինքնահաւանութիւնը, որը նրան տղայաբար բացականչել է տալիս՝ «A Berlin, à Berlin!!» (չէսլի Բերլին !):

Մենք մի քանի գրքերի մասին միայն խօսեցինք, բայց Զոլաի բովանդակութիւնները մեծ մասը հասարակական կեանքի «էտիւդներ» են: Մենք կ'աւելնք յետոյ, թէ ինչ տեղ են բռնում անձնաւորութիւնները Զոլաի այս էտիւդների մէջ, առ այժմ մեզ զբաղեցնում է նրա հասարակական կեանքի ուսումնասիրութիւնը՝ և այս տեսակէտից նրա նպատակը պարզ է, այն է, ներկայացնել մեզ հին կարգերի կործանումն և նոր կեանքի որ և է ծագումը: Այս այն յաւիտենական կռիւն է հին ու նորի, խաւարի և լոյսի մէջ: Այս տեսակէտից մենք Զոլաի կողքին կարողանում ենք դնել Ալֆոնս Դոդէին, Ժորժ Օնէին իրանց պատուական բովանդակութիւններով:

(Կը շարունակւի)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԷՆ» վէպ. Թիֆլիս տպ. Ռոտինեանցի, 1891—92 թ. Առաջին մաս, 190 էջ, գինն է 50 կոպ., Երկրորդ մասն, 260 էջ: Արտատպած «Մուրճ» ամսագրից: Գինն է 1 ռ.

«Հեղինէն» մի հասարակական վէպ է, որի նիւթն է «կանանց հարցը», կամ, աւելի ճիշտն ասած, կանանց հարցին վերաբերող երկու խնդիրներ: Առաջին խնդիրն ալն է, թէ ինչ պիտի անէ ալն կինը, որի ամուսինը աւելի ու աւելի խարդախութիւնների ու ստորութիւնների մէջ խորասուզուած է: Սորաւ հեղինակը պատասխանում է իւր վէպով, թէ նա պիտի իւր ամուսնուց հեռանալ: Երկրորդ խնդիրը կապւած է նրա մէջ, թէ ինչպէս պահէ իրան և իւր երեխային անամուսին կինը, քանի որ ժողովրդի նախապաշարմունքը և ալլ պալմաններ զժառանգում են նորա աշխատանքի միջոցները: Այդ խնդրին վէպը պատասխան չէ տալիս, ալ սա արծարծւած է մի էպիզոդի մէջ, բողոքի ձևով:

Վէպը գլխաւորապէս զբաղւած է առաջին խնդրով, իսկ երկրորդ խնդիրը միջանկեալ, երկրորդական տեղ է բռնում:

Նախ տեսնենք թէ, որքան ազդեցիկ կերպով արծարծել է հեղինակը առաջին գլխաւոր խնդիրը:

Հեղինէն վէպի սկզբում մի չափահաս օրիորդ է, որը թէև ինստիտուտը աւարտել է, սակաւ դեռ որոշ, պարզ աշխարհայեցողութիւն չունի: Նորա բնաւորութիւնը ազնիւ է, անկեղծ է, բայց նա զգում է, որ իրան ինչ որ պակասում է, ալսինքն չէ բաւականանում սովորական կեանքի ուրախութիւններով, ուսել ու խմելով և դատարկ զարճախօսութիւններով, ինչպէս ապրում են նորա շրջապատողները: Հեղինէն զգում է գործելու, աշխատելու ցանկութիւն...

Հէնց ալ ժամանակները նորա հետ ծանօթանում է համալսարանը աւարտած և պետական ծառայութեան մտած երիտասարդ Ամիրանովը, որը և չուտով առաջարկութիւն է անում նորան: Հեղինէն թէև դեռ հաստատ չէ սիրում Ամիրանովին, բայց նորա քանի մի խօսքերից ենթադրում է, որ նորա հետ

ինքը բաղդաւոր կը լինի: «Մենք միասին կը պարապենք—մտածում է նա—կ'աշխատենք, նա կը լրացնի իմ կրթութիւնը, ընդհանուր ձգտում ներուկ գաղափարներով կը ոգեւորւենք. միթէ աղքատը բաւական չէ, որ ես նրան հոգով-սրտով սիրեմ»:

Նոքա ամուսնանում են և հէնց սկզբից Հեղինէն սկսում է նկատել, թէ Ամիրանովի մէջ մութ կէտեր կան. Օրէցօր աւելի ու աւելի է ճանաչում Հեղինէն իւր ամուսնուն և գալիս է վերջապէս աչն եզրակացութեան, որ Ամիրանովը իւր շահի և կարգերակի համար ետ չի կանգնում ոչ մի խարդախութիւնից, ոչ մի ստորութիւնից: Նա սկսում է սառչել, ատել և վերջապէս զղել իւր ամուսնուց նորա ստոր բնաւորութեան պատճառով: Իսկ Ամիրանովը շարունակում է իւր «էնը քշել», առանց նշանա կութիւն տալու կնոջ «սոստուց» խօսքերին: Հետեանքը աչն է լրանում, որ մի օր Հեղինէն թողնում է ամուսնու տունը և հայրենիքը և իւր միակ երեխային վերցնելով՝ ճանապարհում է Պետտիդորսի, ուր ապրում էր ալժմ նորա քեռին, որի տանը Հեղինէն մեծացել էր:

Ինչ վերաբերում է երեխային, Հեղինէն հաստատ օրոշել է նրանից չ'անջատուել և պահում է իւր մօտ, չը նախելով Ամիրանովի սպառնալիքներին:

Բանն աչն է, որ Հեղինէն երբ իւր ամուսնուց փոքր առ փոքր սառչում էր, միւս կողմից կամաց-կամաց սիրահարւում էր իւր նոր հանգուցեալ ընկերուհի Կատիակի ամուսնու վերայ: Վերջինս վաղուց Հեղինէի

բնաւորութեան մէջ գտնում էր աչն չատկանիչները, որոնց նա էգուր փնտռում էր իւր Կատիակի մէջ: Բնական է, որ Հեղինէի և Սահառունու մէջ պիտի հաստատ փոխադարձ սէր չառաջ գար, և իսկապէս չառաջ եկաւ: Բայց դեռ Հեղինէն իւր ամուսնուց չէր հեռացել, երբ Սահառունին, ինչոր մի բան ուսումնասիրելու համար, նորից գնում է արտասահման (ուր նա չորս տարի եղած էր Մոսկուայի համալսարանը աւարտելուց չետով): Նւ ահա Հեղինէն ընկնում է զանազան նիւթական և բարոյական նեղութիւնների մէջ: Նա կամոնում է հալալ աշխատանքով ապրել, բայց հասարակական կեանքը արգելքներ է չարուցանում: Նա տնային դասեր է գտնում, բայց չուտով նորա դէմ ուղղած բամբասանքը իւր նպատակին համոնում է, աղնիւ ընտանիքները զգուշանում են ամուսնաթող կնոջից: Նորան դպրոցում տեղ չեն տալիս՝ հիմնարկութեան անւանը չ'ընտանելու համար: Նորան իւր տանն հանգիստ չեն թողնում լիբը հասարակութեան լըր-բագոնն ներկայացուցիչները, որովհետեւ նա գեղեցիկ է: Աղք միջնադէպը բաւական սրտաշարժ կերպով է դուրս բերւած և ցուց է տալիս որ հեղինակի սրտումը ինչոր բողբ չառաջացնող կայծ կալ, եթէ ոչ վէպի մնացեալ մասերը սառն են և մեծ սպաւորութիւն չեն անում:

Ազգպէս, ուրեմն, մենք ընդունում ենք, որ Հեղինէի հիմնական միտքը, որը մի բողբ է հասարակութեան մէջ տիրապետող կարգերի դէմ, կատարելապէս համակրելի և ուղիղ է:

Հեղինակը ինչ որ ուզում է ստել և աչդ «ինչորը» ժամանակակից է և ուշադրութեան արժանի: Բայց և ահապէս վէպը կարդացում է բաւական անհետաքրքրութեամբ և ընթերցողի վերաջատ թուլ, անցողական տպաւորութիւն է անում, բացի վերոյիշեալ միջնադէպից: Բնորոշութեամբ ամբողջ վէպը կարդալուց ընթերցողը չօչափելի կերպով չէ խղճահարում Հեղինէի վրայ, չէ վշտանում նորա վշտով, սիրտը չէ վիրաւորում նորա համար: Միւս կողմից ընթերցողը չէ զգում չօչափելի արհամարանք դէպի Ամիրանովը և դէպի ահա ստոր կեանքը և շրջապատը, որտեղ նա պտտում է: Գուք կարդում էք վէպը և մտածում թէ Հեղինէն լաւ կողմեր ունի և Ամիրանովը ուղիղ մարդ չէ... և ուրիշ ոչինչ... Բայց աչդ բաւական չէ:

«Հեղինէ» վէպի ազդեցութիւնը շատ աւելի կը լինէր, եթէ նա պատշաճաւոր կերպով մշակւած լինէր. բայց նա խիստ անմշակ գրածք է, կանցեմք ցոյց տալու նորա անմշակութեան գլխաւոր կէտերը: Բայց որպէս զի ընթերցողը, մեր նկատողութիւնները սխալ չհասկանայ, հարկաւոր ենք համարում մատնացոյց անել նախ մեր տեսակէտի վրայ: Տ. Մա. րիսեհանի գրածքի վերաջ մենք չենք նախում, որպէս լոկ նկարագրական վէպի վերաջ: Այստեղ ու ահապէս անցած թւականներ լիչելը բաւական չէ, որ մի վէպ պատմական դառնալ. Ամենայն մանրամասնութեամբ դիտեցէք Հեղինէ վէպը, տեսէք թէ արդեօք կը գտնէք նորա մէջ որ և է կեանք, երեւոյթ, պատկեր, թէկուզ

տիպ և աչդ, որի մասին կարելի լինի աւել, թէ սա բնորոշում է վաթսուեակաւ կամ ևօթահասակաւ թւականները, թէ ուրեմն աչդ ինչ երեւոյթ, որ վէպի մէջ արտապատած է, մեր ժամանակի պտուղ չէ, աչ միայն անցած թւականների պատմաները կարող էին նորան ստեղծել: Հեղինակը մեղ հաւատացնում է թէ վաթսուեակաւ թւականներին հոյ արիստոկրատները բաւկր են սարգել, պարել են, միմեանց հետ սիրաքոտիկ են արել, թէ են խմել, հայ են կերել... Աչ բոլորի մէջ ոչինչ պատմական բնորոշութիւն չկայ, որովհետեւ հէնց աչմ էլ նոյն օտարացած շրջանները կան, և նոյնպէս են պարում ինչպէս և վաթսուեակաւ թւականներին:

Նրկրորդ՝ «Հեղինէ» վէպը տենդեցիկա ունեցող գրածք է, նա ձգտում է ժամանակակից հասարակական հարցեր լուծել, որպէս ցոյց տալինք մեր գրախօսութեան սկզբումը: Բայց եթէ աչ հարցերը չեն վերարբերում ժամանակակից կեանքին, մենք չենք հասկանում թէ վէպի միջոցով նոցա լուծելը ինչ նշաւի միջոցով նոցա լուծելը ինչ նշաւի միջոցով: Ուրեմն եթէ աչդ հարցերը լուծւած են արդէն ինչպէս անցեալին վերաբերող խնդիրներ, էլ հեղինակը ինչու կը ձգտէր իւր վէպի միջոցով նոցա ուղիղ լուծելուն նպաստել, իսկ եթէ նոքա ժամանակակից հարցեր են, ուտտի ինչ միտք ունի նոցա շրջապատել վաթսուեակաւ թւականների պարագաներով:

Նւ վերջապէս եթէ վէպը պատմական է, ուրեմն Հեղինէն, Սահառունին և աչդ չէին կարող աւելի

առողջ ժտածողութիւն, աւելի բարձր բնաւորութիւն ունենալ, ազատ լինել աշխարհի վտարութիւններից իբր թէ մալրենի լեզուն անհրաժեշտ է, ապա հեղինակից պահանջում է, որ որ նա ղգար ալդ, ալսինքն դիտակցէր որ իւր Հեղինէները ու Սահառունները ժամանակակից հալ լինողութեան կնոջ և երիտասարդի հետ համեմատած չափից դուրս ստոր են, ոգէտ են, չեա միացած են... Եթէ հեղինակի ալդ դիտակցութիւնը վէպի մէջ երևար մենք խօսք չէինք ունենալ ասելու Բալց ընդհակառակը իւրաքանչիւր քաղաքիսում երևում է, որ հեղինակը աշխարհ զօրեղ կերպով համակրում է Հեղինէի, Սահառունու և Վրթանեսեանի աշխարհալիցողութեանը, որ պարզ երևում է թէ նա իւր համակրելի հերոսուհիներին և հերոսներին կամենում է ժամանակակից հալ կնոջ ու երիտասարդի համար զբօշակարի աստիճան տալ:

Անցնենք ալժմ ցոյց տալու վէպի ակնարկեալ թոյլ կողմերը:

1) Նախ և չառաջ հեղինակը չաբայար սխալուել է, որ իւր ծառը չէ տնկել բուն-ժողովրդական հողի վերալ: Նա ուզում է Հեղինէին ժամանակակից հալ կնոջ համար մի տիպար, մի իղէալ կանգնեցնել, բալց ոչ, Հեղինէն իւր մալրենի լեզուով չէ խօսում... Եւ երբ նորան հարցնում են, թէ.

— Տիկին Հեղինէ, ինչո՞ւ դուք երբէք հալերէն չէք խօսում, ձեր ուսուցիչն ասում է, որ դուք շատ լաւ գիտէք հալերէն, — Հեղինէն պատասխանում է.

— Զիշտ է, ես բաւական լաւ հասկանում եմ, բալց ազատ խօսել չեմ կարողանում:

Պրծաւ ու գնաց... Եւ հեղինակը կամենում է արդարացնել Հեղինէին, աւելացնելով, որ «Վրթանէսեանը (աշխարհաբարանական պարոնը, որը ամենից շատ ազդեցութիւն արաւ Հեղինէի աշխարհալիցողութեան վերալ) մանկութիւնից աշխարհի պայմանների մէջ էր ապրել, որ մալրենի լեզուն իմանալը ամեն մի հալի անհրաժեշտ պարտականութիւն չէր համարում». Բալց հեղինակը մոռանում է, որ եթէ Վրթանէսեանի մէջ որ և է «փափուկ ջիլդ» կար դէպի իւր հալերենակիցները, եթէ նորա սրտում որ և է իղէալ կար, վաղուց պիտի նա գլխից հանած լինէր աշխարհալի ստիքստութիւնը թէ «մալրենի լեզուն անհրաժեշտ չէ»:

Եւ իսկապէս Հեղինէն ոչ միայն մալրենի լեզուն արհամարում է, ալ իսկի նորա ձգտումների մէջ ոչինչ հալերենական, ժողովրդական բան չ'կալ, կամ եթէ կալ էլ, աշխարհ մոլթն է որ ընթերցողի աչքին չէ ընկնում: Մենք տեսնում ենք միայն, որ Հեղինէն պահանջում է իւր ամուսնուց չը խարդախել, չը ստորանալ Ուրարովի ժառանգութիւնը ստանալու համար... միւս կողմից Հեղինէն կամենում է կարգալ, լսել ուրիշների կարծիքները, օրինակ, ամուսնական խնդիրների մասին և ալդպէս մի քանի ոչ-վատ ձգտումներ ունի նա: Բալց ալ բոլորը շատ քիչ է ժամանակակից հալ կնոջ իղէալը ներկայացնելու համար:

Հեղինակը կարող է մեղ պատասխանել, թէ ինքը իսկի չի ել կամեցել Հեղինէին իղէալական կին դուրս բերել: Բայց ալդ սխալ է: Տ. Մարխանը սկզբից մինչեւ վերջը վերաբերում է դէպի Հեղինէն, որպէս մի ամենաընտիր կնոջ, որպէս մի բարոյական գոհարի, իսկ ալդ արդէն իղէալից հեռու չէ: Միայն թէ նա չէ կարողացել հերոսուհուն ամբողջութեամբ դուրս բերել. ալ բաւականացել է նորա մէջ մի քանի բարոյական չափանիշներ ցոյց տալով: Միւս կողմից տ. Մարխան չէ ձգտել Հեղինէին ոչ թէ միայն իղէալական կին ստեղծել, ալ և իղէալական հալուհի: Գուցէ իսկի բնական չէր լինի ալդպէս անել քանի որ ինստիտուտում ուսած և իշխան Շակունու օտարահոգի ընտանիքում մեծացած Հեղինէն հազիւ կարող էր ընտիր հալուհի լինել: Համաձայն ենք: Բայց ախր ինչն էր ստիպում հեղինակին իւր ընտիր հերոսուհուն դնել անպատճառ ոչ թէ բուն հալ ժողովրդական շրջաններում, ալ անհարազատ Շակունիներին, անամօթ Միհրանովաներին և լրբագոյն Տրունիցիներին շրջաններում: Միթէ բուն հալ շրջանները չեն կարող ընտիր կանաչք չառաջ բերել: Աչքներդ բարձրացրէք և նախքան ձեր շուրջը: Տեսէք թէ ինչ պիտի եռանդով և անվիհերութեամբ անապոհով, սակայն հալոնեատէր և ուսումնաժարաւ հալ օրիորդը արտասահման է վազում դէպի ծաղկաթիւրը թռչող մեղրի նման իւր հալոնները մեղր բերելու նպատակով: Ահա ձեզ իղէալ, ահա ձեզ ժամանա-

կակից հալ կնոջ ներկայացուցիչը: Վերցրէք ալդպիսի մէկին, զցեցէք մի անսիրտ և խարդախ Ամիրանովի ձեռքը և ցոյց տէք մեղ նորա մաքառումը, նորա տանջանքները, աչն ժամանակ կը տեսնէք, թէ ինչ զօրեղ ազդեցութիւն կանէք հալ ընթերցողի վերաւ, ինչպիսի առատ արտասուք կը հոսեցնէք նորա աչքերից: Կրկնում ենք, ինչո՞ւ տ. Մարխան իւր հերոսուհուն չէ վերցրել ալդպիսի մէկին, ալ վէպը անկել է անհարազատ հողի վերաւ, որտեղ ամալրենի լեզուն անհրաժեշտ չէ համարում: Գուցէ աչն պատճառով, որ տ. Մարխանը ալդ շրջաններին հետ ծանօթ չէ և ինքն էլ մալրենի լեզուն անհրաժեշտ չէ համարում: Բայց մենք մեղաւոր չենք: Հալերի համար վէպեր գրողը ոչ միայն պիտի նորա լեզուն պարտք համարէ, ալ և անհրաժեշտութիւն:

2) Տիպիւրը մեծ մասամբ անդուն են, միակողմանի են, նոյն իսկ հակասական են: Ամբողջ վէպի մէջ չկայ ոչ մի հոգեբանական կտոր, չը նախելով որ անթիւ են աչն դէպքերը, որտեղ հեղինակը պարտաւոր էր թափանցել հոգիներին մէջ, ցոյց տալ թէ ինչ է կատարում ալ և աչն հերոսի ներքին աշխարհում: Մարդ աւանալ մտածում է, թէ արդեօք տ. Մարխանի հերոսները երբէք իրանց իրանց չեն մտածում, չեն զգում, իրանց մէջ չեն խորատուլում: Երևակայեցէք ձեզ օրինակ, Սահառունու դրութիւնը: Նա սիրում է Հեղինէին, բայց միևնույն ժամանակ կամենում է զոպել իրան, վախենալով աւելի ամբողջացնել Հե-

ղինէին. նա թողնում է հալոնիքը և հեռանում արտասահման. Արդեօք նա ինչպէս էր զգում իրան, ինչ էր մտածում, ինչ լոյսերով էր արտասահման ուղեւորում, ինչ ողբերգութիւն էր կատարւում նորա ներքին աշխարհում... կամ թէ նա իսկապէս մոռացել էր իւր հանգուցեալ կենցաղը, իւր վաւարական Վաստակին, որին փոքր առաջ աշխատէր սիրում էր, արդեօք չէր կտրատւում նորա սիրտը, չէր սղոթում նորա մտքը, չէին զբաղեցնում նորան ամենալանդուգն հերոսական նախագծեր... Այդ բոլորից մենք ոչինչ տեղեկութիւն չենք ստանում, որպէս թէ նորա իսկի գոյութիւն չունենա ինչու:

Որովհետեւ տ. Մարիսեանի գրիչը խորը չէ թափանցել սրտերը քննելու, հէնց այստեղից է չառաջանում վէպի աշն անագին թերութիւնը, որ հերոսների մեծ մասը փախեղէն տիրիկնների են նմանում: Հեղինակը մեզ ցոյց է տալիս, թէ հերոսները ինչպէս են խօսում միմեանց հետ, ինչպէս են միմեանց բարեւում, թէ համեցէք անում, աթոռ առաջարկում, բաց չենք տեսնում, թէ ինչ է կատարւում նոցա ներքին աշխարհում: Այս պատճառով ամենալաջողած տիպը Տրունիցկին է, որը ոչ զգացող է, ոչ մտածող է, ոչ տանջուող, ոչ լուզուող... Նա գիտէ միայն պարել, կոպիլիմէնտներ ասել, սիրաքստիկ անել, աղ է նորա էութիւնը: Անհա աշն տիպը, որը իսկապէս «ներքին աշխարհ» չունի, բոլորովին ճշգրիտ է գուրս բերած:

Բանը սա է որ վէպի ամեն մի քաղաքականութիւնը և որ հեղինակը

կը լանձին հեղինէի ոչ թէ ցանկացել է մի որոշ շրջանի շատ թէ քիչ մաքուր տիպը գուրս բերել, այլ հեղինակը կարծես ինքը հաւատացած է որ հէնց այդ շրջանն է հաջ մոգով ամենալաւ շրջանը և որ Հեղինէն ինքը առհասարակ հաջ իդէալական կենցաղ տիպարն է: Այն ճակատելի չլինէր հեղինակի այդ իտաւորութիւնը, մենք ի հարկէ այլ տեսակէտից կը քննէինք գործը:

Իսկ Սահառունին, որ պիտի ներկայացնէր մի բարձր դարգացած և բարոյական լատկութիւններով զբաղւանց հաջ երիտասարդին, ներկայանում է մեզ որպէս մի հակասական ընաւորութիւն, մի փախտի կտոր. Նա անդադար ինքն իրան հակասում է, շատ քիչ է խօսում, աշն էլ երբ խօսում է շատ անգամ անմիտ է խօսում, իսկ առհասարակ նորա մէջ ոչինչ աշխարհի բան չկայ, որ կարելի լինէր վերագրել նորա բարձրագոյն «կատարելագործութեանը», որովհետեւ նորա բոլոր խօսածները, արած նկատողութիւնները կարելի է սպասել և մեր լրագիրներին վաւառական թղթակիցներից, քանի որ ով չգիտէ, թէ մեզ դպրոցներ են հարկաւոր, անկախ գաղափարներ ծառայութիւնից լաւ է և ալին: Գալով բարոյականին, կարող ենք ասել, որ Սահառունու ընաւորութեան մէջ նույնպէս մենք որ և է փալ չենք տեսնում, ինչպէս ձգտում է ներկայացնել հեղինակը: Անցնենք օրինակներին:

Խօսելով Ամիրանովի հետ Միհրանովալի մասին Սահառունին բացականչում է գալրացած, թէ «նորա

երեսին ամօթի նշուլ չկալ): Եւ շատ ճիշտ է նկատում: Փոքր քետու Հեղինէն հարցնում է Սահառունուն նոր Միհրանովալի մասին, ցատնելով որ ամուսինը կամենում է իրան էլ ծանօթացնել նորա հետ: Եւ ահա Սահառունին, «վախենալով կուսպատճառ» դառնալուց, խօսքը կտուրը գցեց: Եւ շատ նամուղուլ արեց, կաւելացնենք մենք: Ուրեմն կուսպատճառ դառնալուց վախենալով Սահառունին թագցրեց ճշմարտութիւնը, աւելորդ համարեց Հեղինէին զգուշացնել ալդ իսարդախ, զգուշի կընտջից, որը «բան ու գործ էր դարձրել աջ ու ձախ գրպարտել, հաշտել հալերին»: Ասէք խնդրեմ, եթէ ալս դէպքում լուծ է Սահառունին, որտեղ ոչ միայն Հեղինէին բարոյակախութեան վտանգ է սպառնում, ալ և «աղղի պատին» է ոտնատակ լինում, ապա էլ որտեղ է նա խօսելու, որտեղ է գործելու... Չէ որ խսկական հասարակական խօսքը և գործը ուրիշ մի բան չէ, բայց եթէ անվախ բողոք, անխնայ քննադատութիւն ամեն մի կեղտոտութեան, խարդախութեան և անարդարութեան դէմ: Բայց միթէ երբ և իցէ կարելի է բողոքել, հնարաւոր է քննադատել առանց «կուսպատճառ դառնալու», առանց քանդելու գոյութիւն ունեցող անբարոյական լարաբերութիւնները: «Նա չեմ եկել խաղաղութիւն քցելու, ալ սուր», ասում էր արդարութեան աներկիւղ քարոզիչը, իսկ Սահառունին վախենում է կուսպատճառ դառնալուց, և տ. Մարիուսանը հիացած է նորանից:

Չերկարացնելու համար մենք մի

կողմն ենք թողնում բաղմաթիւ օրինակները որ կարող էինք բերել: Բաւականանաք լիջելով, որ առհասարակ Սահառունու «քաղաքականութիւնը» թուլ էր, անվախ էր ճշմարիտ զարդացած երկտառադին: Նա համուզած է Ամիրանովի խարդախամտութեան և ստոր սիրտ ունենալու մէջ, բայց փոխանակ Հեղինէի աչքերը բացելու, փոխանակ նորա իրաւացի բողոքին ընկերանալու, չարունակ աշխատում է փակել նորա աչքերը, գոնեալ իրան հեռու պահել, իբր թէ չը կաւենալով մարդ ու կնոջ մէջ անհամաձայնութիւն ծագեցնել:

Նախենք մեր հերոսի վերալ մի ուրիշ տեսակէտից:

Աւարտելով Մոսկւայի համալսարանի բնագիտական բաժինը կանգիտատի աստիճանով, չորս տարի էլ արտասահմանում կատարելագործւելուց քետու, վերադառնում է հայրենիք նահանգական Ն. քաղաքը ու մտածում է գործնական կեանք սկսել: Բայց բնականաբար ոմանք նորան չեն հասկանում ու անհամակրութեամբ են վերաբերում, ինչպէս և իր մայրը ու հօրեղբայրը: Եւ ահա առանց որ և է գործ կատարելու, նա լուսահատում է ու առանց ալիւ. ալլի վճռում է հեռանալ հայրենի քաղաքից, որովհետեւ «մնալ Ն.ում, ուր ոչ մի առողջ գաղափար համակրութիւն չէր կարողանում (?) զլուսնել, նորա կաթիքով (այսինքն և հեղինակի կարծիքով, որին մենք դէմ ենք) նշանակում է ողջ-ողջ զերեղման մտնել, որ միայն խելացնորը կարող է անել»: Նա գնում է Թ. քաղաքը,

որտեղ նույնպէս ոչինչ չէ կարողա-
նում չաջողացնել, և այդ բոլոր ան-
չաջողութիւնները թէ Սահառունին և
թէ հեղինակը ժողովրդի ազխառ-
թեան վրայ են պցում ու ոչ Սահա-
ռունու անընդունակութեան վերա-
յնչ և իցէ, փոքր առ փոքր մեր
«կատարելագործւած» հերոսը չուս-
հառում է, և ապա սկսում է հե-
տեալ ծակ փրկիտփախութիւնը.

«Ճիշդ է, շատ բան էի ասում,
երբ չուս ունէի կրթւած փոքրա-
մանութեան հաստատակամութեան
ու պարտաճանաչութեան վերաբ. իսկ
ալժմ ես համոզւեցի (շատ չը վաղե-
ցիք), որ այդ փոքրամասնութիւնը
վախենում է կուլից, հեշտութեամբ
հաշտում է կեանքի ներկալ պաշ-
մանների հետ ու բողբջելու ա մե-
ն և ինչ ցանկութիւն չունի...» Ինչ-
պէս ընթերցողը տեսնում է, Սահա-
ռունին Նրուսաղէմումը մենակ է
մնացել և չի տեսնում կամ չի ու
զում տեսնել թէ աշխարհում ինչեր
կատարւում են:

Հեղինակը առանձին ախորժա-
կով աւելացնում է թէ, «Սահառու-
նին զարմանալով նկատում էր, որ
ինքը ոչ մի ժամանակ աչնպէս պեր-
ճախօս չէ լինում, ինչպէս տիկին
Ամիրանեանի հետ մէնակ մնացած
ժամանակ»: Ահ, սա ախրմալ ճշմար-
տախօսութիւն է... Միայն տիկին
Ամիրանեանի հետ մէնակ մնացած
ժամանակ մեր հերոսը պերճախօս,
զուցէ և պերճագործ է: Բալց, ըստ
ժողովրդական առածին, պեղեցիկ տի-
կինների մօտքեւլիս էլ է պերճախօս
դառնում...

Սահառունու բարձր զղացման

մասին ճիշդ դադափար տալու հա-
մար մի փոքրիկ նկատողութիւն էլ
կ'աւելացնենք: Նրկրորդ անգամ ար-
տասահմանում կատարելագործւելուց
վետու, երբ արդէն նորա աշխարհա-
լեցողութեան մէջ կատարեալ տրա-
մաքանութիւն պիտի ախրապետէր,
մեր հերոսի դատողութիւնը թուլ է,
սովիստական է: «Հասարակութեանը
օգուտ բերել ցանկացող ու եռանդոտ
ուսումնաւարտ երիտասարդը—ասում
է նա—չը պէտք է իւր գործունէու-
թիւնը Թ.-ում (պսինքն Թիֆլիսում)
սկսի, եթէ որ չի ուզում կորցնել իւր
ուժերի վրալ ունեցած վստահութիւնը:
Աւելի պարզ ասեմ, իւր գործունէու-
թիւնը նոր սկսող երիտասարդը Թ.-
ում անպատճառ բոլորովին կախ-
ւած կը լինի (?) աչնտեղի հասարա-
կութիւնից և այդ հասարակութիւնը
նրան վստահութեամբ չի վերաբեր-
ւիլ (իսկ դաւառում վզով կը փա-
թաթւեն) և կամ նրան իւր ազդե-
ցութեան տակ կը գցէ կամ թէ չէ՝
կը հալածի նորան ու ալլախով կեան-
քից զզւած, բոլորի գէմ զաւրացած
անհատ կը դարձնի նորան: Իսկ եթէ
նոյն երիտասարդը առաջ գաւա-
ռում գործի (բալց չը մոռանանք, որ
մեր փրկիտփախ ինքը իւր հօրեղբօր
ձեռքից գաւառից փախաւ Թիֆլիզ)
և աչնտեղ ն իւր թ ա պ է ս ի ր ա ն
ա պ ա հ ո վ ա ց ն ե լ ու ց ու օգուա-
կար գործիչի անուն ձեռք բերելուց
վետու (լաւ երազ է) գնալ Թ., աչն
ժամանակ նրան նոյն հասարակու-
թիւնը վստահութեամբ կը վերաբեր-
ւի և նա կը կարողանալ ալլեցու-
թիւն ձեռք բերել հասարակական
գործերի վերաբ. Այս բոլորը թուլ է

ու ապացուցանելու անհնար ձշմարիտն ան է, որ ալստեղ սկսել գործը, թէ անտեղ, դա կախած է նախ գործի էությունից (տեսակից) և երկրորդ գործ սկսողի ընդունակությունների որակությունից և, վերջապես, զանազան պատահական հանգամանքներից: Իսկ Սահառունին սիրում է ֆրազաբանություն անել:

Այս օրովհետև հեղինակը ձգտել է Սահառունուց համակրելի հերոս ըստեղծել, ուստի և նորա տիպը դուրս է եկել խիստ հակասական:

Միևնույն տիպն է կազմում և համալսարանական Վրթանեսանը, որը ոչնչով չի զանազանում Սահառունուց: Բերենք մի կտոր նորա փրկիստիպություններից. «Ճիշդ է, ներկալ ժամանակը աղքատ է (?) նշանաւոր տաղանդների կողմից... Ձեր մէջ, կանանց մէջ, սիրելի Հեղինէ, մի ինչ-որ դժուարութիւն ընադդումն կալ (անդեօք ինչ բնազդում է. ահա ձեզ նոր գիւտ հոգաբանութեան համար), որի չնորհիւ դուք զարմանալի հեղտութեամբ մաքրում էք կեղտից ու ցեխից ու լաճախ ձեր հոգու աղնըութեամբ լաղթում էք արտաքին անբարեւաջող հանգամանքները»: Իսկ մենք ասում ենք, որ ալլ բնազդումը հէնց տղամարդկանց մէջ էլ կալ ապացուցէք, որ մենք սխալում ենք:

Մնացեալ տիպերի մէջ աւելի չաջողած են Կատեան, իշխանուհի Շակունին, մասամբ էլ Սփիւնիան: Իսկ աչնայիսի տիպեր ինչպէս օրինակ թօմսեպ, Ասունի, Սննա Գուրգէնեան և ալլն ոչ մի բանի նման չեն: Սոցա պատահում ենք դէս ու դէն գնալուց, երբեմն էլ խօսելուց,

բալց չենք հասկանում թէ դժբանիչ արարածներ են:

3) Վէպը օրգանական թերությունները ունի: Հեղինակը չէ թողնում, որ վէպը իւր բնական ընթացքի համեմատ աչ ու աչն ուղղությունով արծարծել, ալ կամաւոր կերպով փոխում է նորա ընթացքը զանազան արհեստական միջոցներ գործադրելով: Օրինակ, ով կը սպասէր, որ Կատեան, ալլ վառվառն, ուրախ, զարթ ջահլ կիներ, վէպի կէսումը պիտի մեռնէր: Բալց հեղինակին հարկաւոր է, որ Սահառունին ալրիանալ, որպէս զի վետոյ նա սբաղէ նորա և Հեղինէի բոմանով և ահա Կատեալին սպանելու համար միջոց է որոնում:

«Վերադառնալիս Սահառունիններին անբաղդութիւն պատահեց:

Կառքի ձիերը, ինչպէս երևում է, խամ էին, դուլմները տարան... Բալց ահա կառքը դիպաւ ինչ որ մի սուր բանի ու կոտորեց, ձիերը ականջները խլշտացրին ու տեղն ու տեղը դիք կանգնեցին... Սահառունիները փրկեցին: Բալց Կատարինէն սաստիկ վախեցել էր: Նորան վախից մերձ իմա՜ տուն բերեցին: Նոյն գիշերը նա ժամանակից առաջ սաստիկ դժուար երկունքով աղատւեց ու ծանր հիւանդացաւ: Օրէցօր նորա հիւանդութիւնը սաստկանում էր:

Ընթերցողի գուլսը չը ցաւացնենք. մի քանի օրից վետոյ Կատեան մեռնում է և հէնց հեղինակն էլ ալլ նստաւորով էր կառքին խամ ձիեր լծեցրել: Բալց մեղ հետաքրքիր է աչն, թէ, անդեօք վէպը ինչ

ընթացք պիտի տօսանար, եթէ ձիերը խամ չլինէին...

Առհասարակ վէպի ընթացքում սրտահում են դէպքեր, որոնց մէջ է բերում հեղինակը «կապելու» համար: Հեղինէն ծննդից չաճողութեամբ ազատուց, բանը լաւ էր գնում: Բայց հեղինակը հարկաւոր է համարում հիւանդացիները նորան և ինչ ինքնուրոյն միջոց է գտնում:

«Միւս օրը ճաշից լետով Հեղինէն ննջից վեր թռաւ ինչ-որ մի թրըխ կոցից, կարծես մի բան վալը ընկաւ, երեսիս վալը էր ընկել գալեակի գրկից: Հեղինէն կարծելով թէ երեսիս մեռաւ, լեղապատառ ճշաց և ցնորածի պէս դուրս թռաւ անկողնից և բարձրացրեց երեսիս: Բայց չը կարողացաւ ալլ անգին բեռը մահճակալին հասցնել, սաստիկ երկիւղից ուժատուաւ լինելով՝ կիսաճանապարհին վալը ընկաւ գետին՝ պինդ սեղմած գրկումը իւր սիրելի երեսիս: Նոյն գիշերը Հեղինէն սկսեց սաստիկ անհողել:

Հիւանդութիւնը օրից օր վտանգաւոր է դառնում, բայց ճգնաժամը անցնում է և Հեղինէն սկսում է առողջանալ: Բայց առողջանալուց չետով բժիշկները խորհուրդ են տալիս Ամիրանովին կնոջը հանքալին ջրեր տանել: Հէնց հեղինակին էլ ալդ էր հարկաւոր, և հէնց ալդ նպատակով էր տախում գալեակին երեսիս վալը գցել:

4) Վէպի մէջ անդադար հանդիպում են ու միջնադէպեր, որոնց և թէ գէն գցելիք, վէպը չէր փնտրել: Կը բերենք միայն մի փոքրիկ օրինակ:

— Յո՛, ժամի երկուսին քիչ է

մնացել, չուտով վերջացրէք Ձեր նամակը, հաղիր ես էլ փոստն եմ գնալու:

Մինչդեռ Հեղինէն դրում էր, Սահառունին լրագիր էր կարդում և երբեմն աչքը գցում էր նորա աւագաշարի գրչին:

— Ահա վերջացրեցի, տապ նա, գրելով հասցէն:

— Այսօր էլ չէք գալ գնանք Սուրբալի սարը, հարցրեց Սահառունին, վերցնելով նորանից նամակը:

— Ուրախութեամբ, ես շատ եմ սիրում աչտեղ դրօնել: Ի հարկէ կատեան էլ մեղ հետ կը գալ:

— Նա տանը չէ, չեմ իմանում մինչև աչն ժամանակ կը վերադառնալ, թէ չէ:

— Հրէս Միքայէլն էլ եկաւ: Հը, կը դաս երթանք սարը դրօնելու:

— Ե՛, բան չունէք, մարդ էլ աննպատակ ման կը դալ, ես որ ալդ պիտի բանի գլուխ չունեմ, քեզ էլ խորհուրդ կը տամ աչսօր չը գնալ, մեղ մօտ գուցէ հիւրեր գան:

Սահառունուն խնդրեցին մնալ ճաշի: Բայց նա չը մնաց:

Ուրեմն սարը գնալը մի կողմ մնաց, հապա ալդ մասլահաթը ինչի համար է.

Դարձեալ մի վաքրիկ նկատ-զու-թիւն ընդհանրապէս վէպի մասին: Վէպի մէջ բազմակողմանի կեանք չկալ, մենք տեսնում ենք հերոսներին անպատճառ կամ ճաշի վերայ, կամ թէ խմելու կամ երեկոյթում պարելիս, կարծես թէ սրանից դուրս կեանք չըկալ, թէ հասարակութիւնը գործնից աւելի բան չունի ներկալացնելու, հասեալէս և վէպը իբր

ռէտական վէպ, ճշգրիտ պատկեր է
հասարակական ալիք շրջանի? Այդ
պաշմանով «Հեղինէն» մի առանձին

գիրն է ստանում իբր մի որոշ շրջա-
նի հաւատարիմ պատկեր:

Ս. Թ.

ZOLA, Emile.—Le Docteur Pascal. Charpentier,
Paris.

Զուլան վերջացնում է «Դոկտոր
Պասկալ» վէպով մի շարք վէպերի,
որոնց մէջ հեղինակը իրան նպատակ
էր դրել ուսումնասիրել Ռուգոն-Մա-
քար անւանած ենթադրական ընտա-
նիքի «բնական և հասարակական
պատմութիւնը Փրանսիական երկ-
րորդ կայսրութեան ժամանակ»: Ու
որ էմիլ Զուլաի նախկին վէպերը լըր
Ջորէն կարգացել է, սպասում էր տնո-
ղակն կերպով ալս վերջին վէպի և-
րեալուն, որը, ինչպէս հեղինակը ա-
սում է, լրացնում է իւր ալն գործը,
որ նա սկսել էր սրանից քսան տա-
րի առաջ: Արդարեւ Զուլաի հոկաւա-
կան գրական գործը կազմում է ան-
կասկած մի դարեւրջան եւրոպական
վիպագրութեան համար: Զուլաի գրա-
կան գործը դարուս համար ալն նո-
րութիւնն ունէր, որ նա փորձեց ա-
պացուցել, որ վէպով էլ կարելի է
բացատրել հասարակական ցաւերը
չալոնի գիտնական հիմունքների վրայ:
Յենւելով գիտութիւնների վրայ, Զու-
լան աշխատում է մեզ բացատրել հա-
սարակական բարք ու վարքի սկզբ-
նապատճառները, որոնց հետեանք-
ները՝ արտափալում են մարդկանց
գործունէութեան զանազան ճիւղե-
րում: Յալոնի է, որ գլխաւորապէս

Դարւինի և ապա ալ գիտնականնե-
րի հետազոտութիւնները չաջողու-
թեամբ ապացուցին, որ մարդկանց
ներկալ ֆիզիկական և բարոյական
չառկութիւնները ժառանգած են
նախկին սերունդներից: Իսկ ժա-
ռանգած չառկութիւնները միշտ հնչ-
տութեամբ երևան են դալիս, երբոր
հասարակական պաշմանները սոցա-
մի կերպ նպաստում են:

Օգտւելով գիտութեան ալս հաս-
տատ զրութիւններից, Զուլան վերջ-
նում է իր վէպերի համար մի ընտա-
նիք և պատմում է սորա անդամների
բարոյական և ֆիզիկական պակա-
սութիւնները, որոնք երևան են դա-
լիս իրանց գործունէութեան զանա-
զան ասպարէզներում: Նոյն ալս ըն-
տանիքը ժամանակի ընթացքում ա-
ճում և ճիւղաւորում է, ալնպէս
որ ալդ նախկին ընտանիքի անդամները
և պակասութիւնները կտակւում են
չաջորդ սերունդին. բաղմաթիւ ալս ըն-
տանիքների, հարկաւ, նմանապէս շատ
ցաւեր պէտք է թողնէին եկող սե-
րունդներին: Ըստ ալն հասարակու-
թիւնը բաղկացած լինելով ալս ըն-
տանիքներից՝ պէտք է որ մի տեսակ
հիւանդոտ զրութեան մէջ դտնւէր
չնորհիւ ժառանգած անտերին:

Գրախօսական բաժինը մեղ չէ թուլ տալիս Զուլալի մասին մանրամասնութիւնները մէջ մտնել: Գորա համար մենք չլուծ ենք «Մուրճ»-ում լուս տեսնող մի շարք չօղւածների վրայ Ֆելիքսի ստորագրութեամբ: Այժմս դառնանք Գոկտոր Պասկալ վէպին, որ ինչպէս ասացինք, Զուլալի քսան տարեալ աշխատանքի եղբակացութիւնն է կազմում: Այս վէպի մէջ Ռուզոն-Մաքար ընտանիքի վերջին աչքի ընկնող և գործող ժառանգը ներկայանում է գոկտոր Պասկալը: Ռուզոն-Մաքար ընտանիքը տեղ էր հասարակութեանը զանազան գործող անձեր, որոնց մէջ Պասկալը միակն է, որ գիտութեանն է ծառայում: Ուրիշները ապականւել են իրանց արատներով և ոչինչ օգտաւէտ հետք չեն թողել: Գոկտոր Պասկալը, թէև բոլորովին ղերծ չէ ընտանեկան նոյնպէս ապականող ախտից, բայց և աչնպէս իր գիտնական աշխատանքներով մեծամեծ օգուտներ է տալիս հասարակութեանը: Բժիշկ Պասկալը ապրում է առանձնացած իր կալքի մէջ, որ նա իր աշխատանքով էր ձեռք բերել: Պասկալը տանից դուրս ունի հիւանդաներ, որոնց նա կանոնաւորապէս այցելում և բժշկում է իր չօրինած եղանակով: Միևնույն ժամանակ նա զբաղւած է մի խոշոր գիտնական խնդրով, որի համար նա նիւթեր է հաւաքում և իր զբաղարանի մէջ պահում: Այն խնդիրը, որ նրան զբաղեցնում է, դա ժառանգականութեան խնդիրն է: Այս վերաբերութեամբ գոկտոր Պասկալը ջանում է օրէնքներ գտնել, որոնց հիման վրայ մարդկանց

չալտնի լատկութիւնները ժառանգաբար անցնում են սերնդէ սերունդ: Պասկալը վերցնում է այդ նպատակի համար իբրև նիւթ զլիսաւորապէս իր հարազատ ընտանիքի նախկին և ներկայ պատմութիւնը և իր հարազատ ընտանիքի ուսումնասիրութիւնը տալիս է Պասկալին բաւականին պաշար իր չատուկ նպատակների համար: Բժիշկ Պասկալը մինակ չէ ապրում իր տան մէջ: Սրա տանը ապրում է մի օրիորդ, որ Պասկալի եղբոր աղջիկն է և որին աղգականները տեղ էին Պասկալին մի չալտնի ժամանակ խնամելու և կրթելու համար: Այս աղջիկը, որ Ալոտիլդ է կոչւում, մեծ չարգանքով և ակնարկութեամբ լսում է Պասկալին: Օրիորդը ըմբռնում է Պասկալի տւած բոլոր դասերը և կատարում տորա հրամանները: Բժիշկ Պասկալը Ալոտիլդին լիովին հաւատում էր և խնամում էր նրան իր հաւաքած նիւթերը գրադարանում կարգի բերելու և զասաւորելու համար: Ալոտիլդը երբեմնակի արտագրում էր իր ուսուցչու թղթերը: Ժամանակի ընթացքում նա շատ ընտելանում է իր ուսուցչի Պասկալին, աչնպէս որ մեծանալով հանդերձ աղջիկը իրան զգում է իբր գոկտորի մի անբաժան ընկերուհի որ համարեա թէ այս աղջկալ կատարեալ տէրն էր դառել: Պասկալն էլ իր կողմից չափազանց մոերմանում է այս աղջկալ հետ: Այսպիսի հանգամանքների մէջ օրիորդ Ալոտիլդը սկսում է բաւականին ղերկատարել Պասկալի տան մէջ և իր ձեռքումն են գտնում գոքտորի գիտնական նիւթերի գաղտնիքները: Բայց

նիւթերի աչն մասը, որ վերաբերում է Ռուզոն-Մաքար ընտանիքի պատմութեանը, չէ մնում գաղտնիք շատ ժամանակ: Նամանաւանդ այդ բանի մասին լաւ տեղեկանում է դստորդ Պասկալի մայրը, որ շատ վրդովւած և վիրաւորւած է այդ վերաբերմամբ և անընդհատ բողոքում է իր որդու նպատակներին դէմ: Մայրը կարծում է, որ անկարելի և ամօթ է հրապարակ հանել իրանց ընտանիքի այդ տեսակ պատմութիւնը: Դա իրանց վերին ատօնականի կը խաղաղասկէր: Առանց այդ պատմութեան էլ Ռուզոն-Մաքար ընտանիքի անդամները իրանց շատ են խաղաղասկել հասարակութեան մէջ: Ի հարկէ աւելի վատ կը լինէր իրանց անան համար, երբոր մի պատմութիւն կը գրէին Պասկալի մայրը շատ փառասէր և ինքնահաւան է և իրան նպատակ է դնում Պասկալի նիւթերը իրանց ընտանիքի վերաբերմամբ ոչնչացնելու: Այս զխաւարութիւնը իրազործելու համար, նա սկսում է անսովոր կերպով չաճախել իր որդու սունը և մտերմանում է օրիորդ Ալտիլիի հետ: Մի քիչ ժամանակից լետոյ Պասկալի մայրը համոզում է Ալտիլիին, որ պէտք է աչն չալոնի թերթերը և բնագիրները դողանալ և ալրել: Ալտիլիը հնչողութեամբ համաձայնում է և վճռում է այդ բանը կատարելու: Մի գիշեր, երբ որ Պասկալը քնած է լինում, օրիորդ Ալտիլիը ծածուկ մտնում է Պասկալի գրադարանը և սկսում է այդ մտադրութիւնը իրօգործել: Հէնց բժշկի բնագիրները և թերթերը դողանալիս, Պասկալը խմանում է և, վերկենալով

քնից, լանկարծ բռնում է Ալտիլիին լանցոնք դործելու մէջ: Այդ միջոցին Պասկալը սաստիկ գրկում և սեղմում է իր կրծքին օրիորդին: Այնուհետեւ բացատրելով օրիորդին այդ քալերի լանցաւորութիւնը և անարդարութիւնը, Պասկալը պատմում է նրան մանրամասնօրէն իւր նիւթերի նշանակութիւնը և Ռուզոն-Մաքար ընտանիքի պատմութեան գիտական հետաքրքրութիւնը: Այս դէպքից լետոյ արտաշնչւում է Ալտիլիի և Պասկալի մէջ աչն փոխադարձ սէրը, որ սոցա մէջ ծագել էր, բայց որ մինչև այդ ժամանակ առիթ չէր ունեցել երևան գալու: Ալտիլիը սիրում է իւր ուսուցչուն մաքուր և անկեղծ սիրով: Նա սիրում է Պասկալին անձնփրաբար: Նորա սէրը աչնքան վառ է, որ նա մինչև անգամ անդիտակցաբար մոռացութեան է տալիս Պասկալի հետ ունեցած ազգականութիւնը: Խօսք չկայ, որ այս սէրը պէտք է լանցաւոր համարել, քանի որ դա քաջքալում է ազգականութեան սուրբ կապերը, սակաչն Ալտիլիի սէրը աչնքան սուրբ է, սա աչնքան մաքուր և աղատ է որ և է արտաքին ազդեցութիւնից, որ մարդս սրբացնում է այդ սէրը, աչքի առջ ունենալով Ալտիլիի ներքին աշխարհը, որ շատ խորհրդաւոր է: Մինեռն զխոռոչութիւնը չի կարելի անել Պասկալի սիրոյ մասին, որովհետեւ Պասկալի մէջ սէրը երևում է վեհաւած աւելի կրքի վրայ, որ նրան չափաւորակ է: Ահա աչն ախտերից մինը, որ բժշկ Պասկալը ժառանգել էր, թէև ինքը Պասկալը իրան

Ղերծ էր կարծում աղղպիսի մի բարոյական պակասութիւնից: Բժիշկ Պասկալը ապրում է Կլոտիլդի հետ հրապարակապէս, առանց ծածկելու: Երբոր Պասկալի մայրը իմանում է իր որդու չարաբերութիւնները Կլոտիլդի հետ, նա աշխատում է սիրահարներին միմեանցից բաժանել, գտնելով որ դա մի մեծ խաղաղապետութիւն է: Վերջապէս Կլոտիլդին հեռացնում են Պասկալից և աղբ ժամանակ սորա մօրը չաջողւում է Պասկալի աչն չալտնի նիւթերը և թըղթերը գողանալ և ալրել: Հէնց աղբ միջոցին դոքսորը հիւանդ լինելուց մեռնում է և թողնում է իր գլխահան աշխատանքները և նիւթերը իր նախկին աշակերտ բժիշկ Ռամօին, որ պիտի շարունակէր Պասկալի սկսած հետազոտութիւնները: Պասկալի մահից ցտո՛ղ՝ Կլոտիլդը ծնում է մի երեխա՛ և այս երեխայի մասին Զոլան հարց է դնում թէ՛ նա ի՞նչ կը լինի:

Վէպի ֆաբուլան շատ պարզ և հասարակ է, բայց նրա նպատակը մեծ է: Վէպի նպատակն է ապացուցանել, որ չնայած միջնադարի (milieu) նպատատւոր պայմաններին, որ պիտի մարդկանց բարոյական ամբողջեան մէջ պահէին, ժառանգականութեան օրէնքները շարունակում են դարձեալ անխնայ կերպով և լողկական չարատեսութեամբ իւրանց գործը: Հարկաւ, աղբ օրէնքները, որ գլխութիւնը գտել է, ունին մեծ նշանակութիւն հասարակական կեանքի համար: Աղղպիսով գլխութիւնը վերափոխեց մարդկային աշխարհագրութիւնը, որ պիտի հա-

մարել դարուս ամենամեծ չառաջադէմ գործերից մինը: Սակայն միակողմանի կը լինէր, եթէ մենք չեկտարէինք միայն վիշած օրէնքներով մարդկանց բարոյական աշխարհի մասին դատելու: Զոլայի վերջին վէպի մէջն էլ տիրապետում է աղբ միակողմանիութիւնը և աչքաթող է անւում այն անհրաժեշտ տեսակետը, որ ցնւում է հասարակական պաշտօնների վրա՝ մարդկային բարոյական երևութիւնները բացատրելու համար: Ուրեմն այս նպատակի համար անհրաժեշտ է հասարակական կեանքի պայմանների ճանաչողութիւնը և ղիտողութիւնը, որովհետև սոքա որոշ գոյն են տալիս մարդկանց սովորութիւններին, հալեացքներին, պակասութիւններին և բոլոր աչն չառկութիւններին, որոնք բնորոշում են հասարակութեան բարոյական էութիւնը: Եթէ հասարակական կեանքի պայմանները փոխւում են դէպի լաւը կամ վատը, մարդկանց բարոյական չառկութիւններն էլ փոխւում են աղբ ուղղութեամբ: Ուրեմն խնդիրը այստեղ վերաբերում է հասարակական կեանքի փոփոխութեանը, որի ազդեցութիւնը մարդկանց բարք ու վարքի վրա՛ նշանաւոր է, այնպէս որ նոյն իսկ ժառանգւած պակասութիւնների և արտերի չար բնատրութիւնը չէզոքանում և մինչև անգամ վերանում է: Ըստ այնմ մարդկանց բարոյական պակասութիւնները ոչ միայն ժառանգւում են, ինչպէս Զոլան կարծում է, այլ նոքա մասամբ և ուղղակի բղխում են աչն հասարակական պայմաններից, որոնց մէջ մար-

դիկ գտնուում են:

Խբրև եզրակացութիւն իր նախ-
կին աշխատանքների, Զոլան ալս
վերջին վէպի մէջ արտապատում է
ամենապարզ կերպով իր ամբողջ հա-
շտացքը, որ նա անց էր կացնում իր
բոլոր քսան վէպերի մէջ: Այս վէպը
ալնքան պարզ և ամբողջ գրածք է,
որ ընթերցողը պէտք չունի սրան
հասկանալու համար ծանօթանալու

Զոլայի նախկին գրածքների հետ:
Միայն վերջին վէպով ընթերցողը
լաւ ծանօթանում է Զոլայի աշխար-
հակցողութեան հետ, որ խոկապէս
մի նորութիւն չէ, բայց հետաքրքիր
է, որովհետև դա վէպի ձևով է երևան
գալիս չնորհիւ Զոլայի հանճարեղ
գրչի:

Գ. Վ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Մեր ընթերցողներին մանրամասնօրէն չալօնի են այն մեքենայականութիւնները, որոնց միջոցով անցեալ 1892 թւականին թատրոնական կոմիտէի անդամները, միացած իշխան Նապ. Ամատունու հետ, իրանց ձեռքում պահելու համար թատրոնի գործը՝ փոխեցին կոմիտէի լայն հասարակական բնաւորութիւնը և դարձրին մի նեղ և ամեն տեղ իւր անընդունակութիւնը, և փաստարարութիւնը ապացուցած quasi-կուսակցութեան գործ: Բաւական է ասելը, որ այդ մարդկանց իդէալը իշխան Ամատունին էր: Ի չարը գործ զննելով այն հաւատը, որով 1891 թւականին իրանք մի տարի ժամանակով թատրոնի կոմիտէի անդամ ընտրեցին, նոքա իրանց սկսեցին երեւակայել հայոց թատրոնի տնօրէն առհասարակ և 1892 թւականին, ինքնագլուխ կերպով նոր պաշտօններ զննելով ընդհանուր ժողովների անդամ գրելու համար՝ իրանց համախոհների միջոցով նորից ընտրեցին, իրանց ընկերացնելով իրանց պէս մտածողներին 1892/3 թւականի թատրոնը կառավարելու համար: Հասարակական գործին այդպիսի տգեղ կերպարանք տալու դէմ հեղած նախազգուշացումները ոչինչ չօգնեցին: Դորա հետեանքը այն եղաւ, որ նորընտիր կոմիտէը իւր դէմ լարեց հասարակութեան մի մասի ատելութիւնը և զրկեց նորա թէ նիւթական, թէ բարոյական և թէ մտաւոր աջակցութիւնից: Դորա հետեանքը եղաւ այն, որ թատրոնը 1892/3 թ. սեզոնի սկզբից արդէն սկսեց կաղալ և դեֆիցիտ տալ: Սկսեցին տարաձայնութիւններ կոմիտէի անդամների մէջ, որոնց վերջ տուողը պէտք է լինէր իրանց ընտրած ընդհանուր ժողովը: Բայց որովհետեւ այն ընդհանուր ժողովը, որը նոցա ընտրել էր, ինքը մի մախինացիայի ծնունդ էր, ուստի կոմիտէը հարկ չհամարեց նորան զիմել, այլ ինքը իւր մէջ լուծեց: Կոմիտէի

անդամներից մէկը, որ նիւթական կարողութիւն ունէր, խաչտառակութիւնը կատարեալ չդարձնելու համար, իւր վրայ վերցրեց գործի շարունակութիւնը մինչև սեզոնի վերջանալը, բայց գործին երկդիմի կերպարանք տալով. ոչ ոք չէր հասկանում թէ նա իբր մասնաւոր անարարընեօր է գործը շարունակում թէ յանուն կոմիտէի կամ յանուն իրան ընտրած ընդհանուր ժողովի, հետեւապէս անորոշ էր թէ նա պարտական է հաշիւ ներկայացնել թէ ոչ: Սեզոնը վերջացաւ, բայց ոչ լուծւած կոմիտէար և ոչ էլ թատրոնի կառավարութիւնը շարունակող պ. Ննիկովիեանը հարկ դատեցին ընդհանուր ժողովին հաշիւ ու համար ներկայացնել: Եւ ահա այսպիսով 1891 թւականին այնքան լաւ սկսւած գործը վերջացաւ կատարեալ բարոյական մասնակութիւնով, շնորհիւ ինտրիգանների այն բազմութեան, որով գեռ ևս այնքան հարուստ է մեր հասարակութիւնը: Անցեալ տարւոյ դէպքերից յետոյ այս տարի ընդհանուր ժողով կազմելը ընդհանուրի մասնակցութեամբ, այսինքն այն հիմունքներով, որ դրեցին 1891 թ., անհնարին եղաւ: Անցեալ 1892 թւականի կոմիտէա ընտրող ընդհանուր ժողովը ունեցաւ իրան արժանի մի օրգան, յանձին նախկին կոմիտէի, որը ապացուցեց թէ որքան տաղանդով կարող է խաչտառակել թէ իրան, թէ իրան հաւատ ընծայող հասարակութեանը և թէ միանգամայն հասարակաց գործը ինքը:

Ոչինչ չկայ զարմանալու որ այս ամսանը եղած փորձերը՝ նորից վերականգնել հասարակական բնաւորութիւն կրող թատրոնը— ապարդիւն անցան: Հասարակութեան փոխարէն այս տարի, թատրոնի գործը շարունակելու համար, ասպարէզ են դալիս մի խումբ դրամատիկներ, որոնք իրանց վրայ են վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը:

Յառաջդիմութիւն համարել մենք այդ չենք կարող: 1891 թւականի ձեռով թատրոնի կառավարութիւնը բաւականի նպատաւոր կերպով կարող էր փոխարինել մեզանում գեռ գոյութիւն չունեցող թատերասիրաց մի ընկերութիւն: Այդ ձեռով հասարակութիւնը կապւում էր թատրոնի հետ աւելի սերւա կապերով, միջոց էր տրւում կառավարչական ոյժեր յառաջացնելու, մի բան, որ անհրաժեշտ պոչման է ասպաղաջում թատրոն հասկացող մի մեծ հասարակութիւն ստեղծելու. նա նախադուռն էր ասպաղաջ «թատերասիրաց ըն-

կերութեան»։ Այս տարւոյ թատրոնական կառավարութիւնը իւր ձեռով նոր չէ, այլ կրկնութիւն է այն բանի որ կար 1886/7 թւականին, երբ երեք կապիտալիսներ՝ Գ. Փրիլոնեան, Եսայի Փիթոյեան և Ա. Մանթաշեան մի տարի իրանց ռիսկով վարեցին թատրոնը, բայց զիֆիցիտ ստանալով՝ կամ՝ գուցէ նաև այլ պատճառով, ետ քաշւեցին նոյն իսկ յաջորդ տարում։ Մի-մի տարի գործը տանելու համար այդ ձեւը դեռ կարելի է ընդունել, բայց նա չի ունենալ այն յարատեւ և դաստիարակիչ նշանակութիւնը մեղանում, ինչ յատուկ է գործի հասարակական կառավարութեանը։

Այդ բոլորը, ի հարկէ, չպէտք է խարզարէ որ այս տարւոյ թատրոն կառավարողները իրանց մեծ հոգսը շինեն գործը լաւ տանել, հաւատալով գործի ղեկավարութիւնը վստահելի անձերի։

Լ ՈՒՍԻՆԻ։

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

ՅԱԿՈԲ ԱՆԱԳՉԵԱՆԻ

1861 թ. ապրիլի 26-ն էր: Առաջին դասից լետոլ—մենք օրական միաջն երկու դաս ունէինք, մէկը մինչև ճաշը, միւսը ճաշից լետոլ—ծխական քահանայի առաջնորդութեամբ մի երկրասարդի ու մի պատանու հետ միասին մեր Ներքին-Ազուլեաց ուսումնարանը մտաւ մի վարդապետ Փոքրիկ վեղարը, պարզ հագուստը, զրաւիչ, բնական, ոչ փրուն, խօսակցութիւնը հէնց առաջին րոպէից մեզ, աշակերտներին, նկատել տւին, որ նորեկ վարդապետը մեր տեսածներից չէ:

Ուսուցչին և մեզ ողջունելուց լետոլ հալր-սուրբը մի սրտոյտ արաւ դասատանը, նաեւց դասացուցակին և մի-երկու դասագրքերին, կարդացնել տւեց մի քանի տող ալս ու աչն աշակերտին և խօսեց մի-երկուսի հետ. նրա զէպի մեզ վերաբերումը աջնքան քաղցր, աջնքան հալրական էր, որ մենք հիացած էինք: Մինչև ալդ՝ մենք ուրիշ համոզում ունէինք մեզ ալցելող վարդապետներին և եպիսկոպոսներին մասին: Մենք տեսել էինք, որ մեր ուսումնարանում նրանք պարբերաբար լալտնում էին միաջն նրա համար, որ նախապէս պատրաստած իրանց զէնքով — քերականական վերլուծութեան մի զարտուղի, աչն կանոն կանոնով—լալթեն, ամաչեցնեն մեզ՝ աշակերտներին, չաճախ մեր ծնողաց ներկայութեամբ, և խրոխտատաբար ցոյց տան իրանց քերականական խորին հմտութիւնը:

Մեր ուսումնարանի լուսամուտներին առջև բացւող հեռանկարը ներկաւացնում է մի ընդարձակ դաշտ, որը վերջաւորում է երեղանման ընդգրկող Նրախ գետով:

Ահա ալդ տեսարանի առջև կանգ առաւ մեր ալցելուն, զխօսեց, զմալլեց, գովեց և լետոլ, դառնալով մեր ուսուցչին՝ հարցրեց.

—Աշակերտներդ աղգալին երգ զխօնն:

—Ը.ը.ը... եկեղեցական երգեր զիտեն:

Ուսուցչի բախտիցն էր, որ հալո-սուրբը ցանկութիւն չլաւտնեց եկեղեցական երգեր լսելու, թէ ոչ խեղճը շատ պիտի կարմրէր:

—Մարգար, առաց վարդապետը՝ զիմեով իրան ուղեկցող պատանուն, երգէ «Նորարոյս խալիք»:

Նորարոյս խալիք, մանկունք Հալիպ,

Օ'ն, մատիք չուս վեհ հանդէս.

Զի զւարթուն հոգին հալրենասէր

Ի Մասեաց զիմէ չալս վալր...:

Մենք ամենքս տկանջ դառած՝ բերանբաց լսում էինք:

—Նրգէ «Որդիք Հալիպ»:

Նոյն հիացումով մենք լսեցինք:

«Որդիք Հալիպ, որդիք փառաց,

Զարթիք, կոչէ զձեղ Աստուած.

Տեսէք Մասեաց ի գլուխ ազատ

Զբախտ Հալոց Նորահրատ»...:

Մինչև ալդ ժամանակ մենք բացի մի քանի եկեղեցական «տաղերից», աշուղալին «մուխամազներից» ու թուրքերէն «խաղերից» ոչ մի երգ չէինք լսել:

Հալո-սուրբը չբաւականանալով մեզ աղգալին երգերի ճաշակ տալով՝ մեր ներկայութեամբ Մարգարին—որը մի աշխուժ և վաւելուն պատանի էր—պատուիրեց, որ քանի իրանք մեր գիւղումն են՝ ամեն օր գալ ուսումնարան և ալդ երկու երգը սովորցնէ մեզ:

Մինչ ալդ մեզ հիացնող հիւրերը մեկնում էին ուսումնարանից՝ ուսուցիչը ժամանակ գտաւ առաջնորդող քահանային հարցնելու վարդապետին ով լինելը:

Խրլմեան անունը մեզ անասելի ուրախութիւն պատճառեց: Նա նոր չէր մեզ համար: Մենք ոչ թէ ծանօթ էինք «Արծիւ Վասպուրականի» հետ, ալ և ծալիէ ի ծալր կարդացել էինք «Հրաւիրակ Արարատեանը» և «Հրաւիրակ երկրին աւետեաց»: Բալց միննոն ժամանակ շատ ցաւեցինք, որ վալելուզ կերպով չէինք ընդունել մի ալցելի, որին ի սրտէ պաշտում էինք: «Վալելուզ կերպով» ընդունել նշանակում էր զիմաւորել հիւրին նախապէս պատրաստած ճաշով, ուղերձով և ուրիշ անուներ կրող ոտանաւորներով, որոնք ալք տարիները ամենալն առատութեամբ թիւում էին մեզ մօտ Ագոնց ճարտասանութեան կաղապարների վերաջ ամեն մի՝ նոյն իսկ չնչին զէպքի առիթով:

Հասկանալի է, որ մենք՝ «երեցագոյն» աշակերտներս չէինք կարող հանդատանալ առանց արտապայտելու մեր հիացմունքը և համակրութիւնը մեզ ալնքան ոգևորող «Հրաւիրակ Արարատեանի» հեղինակին: Աւ ահա եր-

կու օրում պատրաստ էր մի ոտանաւոր «Գողթն առ Արծւին վասպու-
րական» որով Գողթն գաւառը ողջունելով («Վասպուրական Արծւոյն» գա-
ւուստը՝ նրա ալցելած հալաքնակ քաղաքների մասին զանազան հարց-
մունքներ էր անում և իւր որդոց մասին խնդրում՝

«Յանո դու սիրոյ, ուսման զօրութիւն
Նւ զաղբիւր բարեաց՝ զմիաբանութիւն,
Նւ ցոյց, թէ սոքօք ինչպէս մեր նախնիք
Ապահովեցին մեր քաղցր հայրենիք»:

Իմանալով որ Խրիմեանը երկրորդ ալցելութիւն չպիտի անէ մեր ու-
սումնարանին՝ աշակերտներու պատգամաւորութեան ձեռքով մատուցինք
նրան մեր «ուղերձը» զիւղական քահանայի տանը, ուր իջնանած էր նա:
Խրիմեանը ամենաչն քաղցրութեամբ ընդունեց մեր «ուղերձը», իսկոյն աչ-
քէ անցուց, շնորհակալ եղաւ, օրհնեց մեզ, հրամայեց սպասաւորին մի մի
բաժակ թէլ բերել մեզ համար և ընծայեց մի գլիրք, որը ի ցաւ մեր սրտին
ուսուցիչը իրան սեփականեց—և լանձնելով մեր «ուղերձը» կողքին կան-
գնած երիտասարդին՝ «Գարեգին, կը պատասխանես» ասաց:

Նրիտասարդ Գարեգինը, որ Գարեգին (կտուղ եպիսկոպոս) Սրուան
ձտեանն էր — ի դիմաց «Վասպուրական Արծւոյն» պատասխանելով Գողթն
գաւառին՝ ի միջի ալոց ասում էր՝

Արծւուն պարտքն է իւր հայրենիք,
Նւ դո՛ւ, ո՞վ Գողթան, դու ևս հայրենիք,
Նա թէ առանց քեզ՝ անցնէր ու գնար
Քո սիրող համար կրկին տի դառնար:
Այո՛, սէր ազգին է նորա վախճան,
Նա ի սէր ազգին է նւիրական,
Նկաւ և քո մէջ նոր եռանդ շնչել,
Նոր հոգի, նոր սէր գիտութեան վառել,
Նոր կապ գիտութեան ոլորել, հիւսել,
Քո որդիք քո ծոց ժողովել, ածել:

Նա քո որդիքներ դովեցի արդէն,
Նոքա քեզ սիրեն, քեզ բարիք կը խնդրեն,
Թէև իրաւ է, դեռ ուսում չկալ,
Բալց նոցա վաստակ մեծ լոյսեր կուտալ:

Գոքա գիտցան, որ էլ ալսուհեան
Անուսումն չունի մարդոց մէջ մի տեղ,
Նւ ջանան լսուաջ վարել օրէ օր
Քո ուսումնարան, քո ջահ լուսաւոր:

‘Կոքա՝ որ հեռու ուրիշ քաղաքներ
Կերթան, կը տեսնեն ուսման բարիքներ,
Տեսած են Կոքա, թէ ինչ երջանիկ
է ուսեալ ազգաց վաստակն ու քրտինք։

Այս դարուս վճիռն է աժխտելի
Ուսումն է լաղթող, սուտերք ժանգոտին,
Աչսպէս սուրբ նախնիք, իմաստութեամբ լիք
Սիրով պահէին իրանց հալոյնիք։

Այս պատասխանը մեր ուսուցչի ձեռքով մեզ կարդացելուց չետող՝
մեր ոտանաւորի հետ միասին ուղարկւեց «Կռունկ»-ին ի հրատարակու-
թիւն (1861 թ. 9.)։

Խրիմեանը մնաց մեզ մօտ մի շաբաթ։ Ա. Ղազարուսի լարութեան չի-
շատակի օրը նրա խօսած քարոզը աչնքան հոգեբնուի, աչնքան ազդու
էր, որ նրա մի քանի կտորները մինչև այսօր բառ առ բառ չիշոււմ են
տեղացիք՝ չնայելով որ աչք ժամանակից անցել են 32 երկար տարիներ։
Մաղկադարդ երեկուեան նորա կատարած դժնարացէքի հանդէսը աչնքան
սրտաշարժ էր, որ ծերունիներից շատերը արտասուում էին։

Խրիմեանի մեկնելու օրը գիւղի մեծագոյն մասը ժողովւել էր նորա
աջը համբուրելու և օրհնութիւն առնելու։ Մենք՝ աշակերտներս ճանա-
պարհ գրինք նրան արտասուքը աչքներին։ Ես՝ որ լաճախ առիթ ունե-
ցած էի հօրս զէպի պանդխտութիւն ճանապարհ գցելու—և ոչ մի անգամ
աչքան զգացւած չէի։

Ալճուհետե ամեն տան, ամեն փողոցում, ամեն աչքիում «Նորարոյս
խաչրիք» և «Որդիք Հաչկալ» երգերն էին՝ որ լսւում էին թոթովող մանուկ-
ներից սկսած մինչ ըռոր պատանիների բերանից. մինչև որ նույն սարին
Խրիմեանի լանճնարարութեամբ նրա հալոյնակից Մեսրոփ քահ. Փափա-
ղեանը ուսուցչութեան հրաւիրւելով՝ եկաւ հարստացնելու մեր երգերի
պաշարը ուրիշ շատ երգերով։

Ահա թէ ո՛վ առաջինը երգել սովորեցրեց Խորենացու «Գողթան եր-
գիչներին» թողներին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Օրէնք վաշխառութեան դէմ:—Առևտրական պալմանները Ռուսաստանի ու ֆրանսիայի մէջ:—Խարկովի ժողովրդական ընթերցարանը:—Ռուս գիւղացու զրութիւնը:—Բնագէտների համաժողովը:—Բանտրական անկարգութիւնները:—Գրքերի հրատարակութիւնը 1892 թիւին:—Նոր լոյս տեսած գրքեր:

Վերջապէս հրատարակեց ալն օրէնքը, որով վաշխառութիւնը ենթարկւում է քրէական պատիժներին: Օրէնքի գլխաւոր կէտերը հետեւեալներն են. —Եթէ մէկը օգտուելով գիւղացու նեղ դրութիւնից փոխ տալ նրան փողով կամ հացով հարստահարիչ պալմաններով, ենթարկւում է բանտարկութեան մինչև երեք ամիս ժամանակով, իսկ երկրորդ անգամ մինչև վեց ամիս: Ով որ կը տալ չափից աւել տոկոսով, կարող է պատժել բանտարկութեամբ մինչև 16 ամիս, և բացի ալ կը վճարէ մինչև 300 ռուբլի տուգանք: Մինչև 12 տոկոսը տարեկան չէ հաշււում չափից աւել:

Այդ օրէնքի նպատակն է սահմանափակել վաշխառութիւնը մանաւանդ գիւղերում, որտեղ ամսական 10—15 տոկոսը արդէն սովորական երևութ է դարձել: Նպատակը համակրելի է: Բայց ալտեղ ծագում են երկու ուշադրութեան արժանի հարցեր, որոնցից ամբողջովին կախւած է նոր օրէնքի օգտակարութիւնը: Նախ հարց է, թէ որքան իրազործելի է նոր օրէնքը. արդեօք վաշխառուները չեն կարող նրանից ազատ մնալու համար «մկան ճանապարհներ» գտնել: Երկրորդ, որքան նպատաւոր կը լինի նոր օրէնքի գործադրութիւնը քաղաքային ու մանաւանդ գիւղական ազգաբնակչութեան համար, արդեօք նա մի կողմից սահմանափակելով վաշխառի դրութիւնը, միւս կողմից ալ ու ալն դէպքում անեւանելի դրութեան մէջ չի դնիլ փողակութիւնը քաղաքացուն կամ գիւղացուն: Այդ երկու հարցերը մեծ կշիռ ունեցող հարցեր են:

Ներթադրենք որ մէկը իւր հարեանից 50 ռուբլի ձեռապարտ է ինդրոս մի անհրաժեշտ դէպքի համար և միւս օրը վերադարձնում մի ռուբլի էլ աւելացրած իւր ազատ կամքով: Ասում ենք «ազատ կամքով», որովհետեւ թէև հարեանը նորա հետ պայման չի դնում, բայց նա լաւ գիտէ հալեանի բնաւորութիւնը, որ եթէ ալ անգամ մանեթանոց չըստանալ,

միւս անգամ առանց ալ և ալլի «չկալ» է պատասխանելու: 50 թուրքին մի օրում մի թուրքի շահ տալը նշանակում է վճարել տարեկան—730 տոկոս: Այսպէս դուք շարունակում էք ժամանակ առ ժամանակ անագին տոկոսներ տալ ձեր հարեանին: Արդեօք ինչպէս գտնել լանցաւորին ալդ դէպքում, կամ գտնելուց չետոյ ինչպէս ապացուցանել: Կամ թէ ով է գտնել մի երկու թուրքու համար իւր գլուխը օգնի մէջ գցել: Իսկ եթէ աւելի հեշտ միջոց է հարկաւոր, ահա էլ վաշխառուն կը գտնէ: Նա խսկի մի կոպէկ էլ տոկոս չի ստանալ ձեզանից, ալ մի անգամ կը մտնէ ձեր խանութը, տաան արշին չիթ կը գնէ ու ձեզ աչքով նշան կանէ... Հիմա թող ապացուցեն, թէ ալդ չիթը ահա փողի տոկոսն էր: Իսկ եթէ փողը ձեռապարտ չէ, ալ մուրհակով է, աչտեղ էլ դժւար չէ 90 թուրքի վճարել ու 100 թուրքի գրել տալ և սորանից չափաւոր տոկոս հաշուել: Բայց ալդ բոլորը ի հարկէ ենթադրութիւններ են, փորձերը աւելի ճիշդ ցոյց կը տան, թէ որքան գործադրելի է վաշխառութեան օրէնքը:

Այժմ նախնաք խնդրի վրաջ երկրորդ տեսակէտից: Շատ անգամ մարդ աջնալիս անհրաժեշտ հարկաւորութիւն է ունենում, որ ուրախութեամբ իւր փափախն էլ գրաւ կը դնէ միայն թէ փող լինի: Գիցուք, դուք աչտօր ուղիղ կէսօրին պիտի բանկին մուրհակ վճարէք ու ձեր փողից մի մասը պակասում է: Ուր դիմում էք, չէք կարողանում պակասը լրացնել: Ի՞նչ անել: Եթէ մուրհակը չվճարէք, ոչ միայն կարողէք բանկի վստահութիւնը կորցնել, ալ ձեռք բռնող գործերը վտանգի ենթարկել: Ահա դուք ճանաչում էք ձեր ծանօթներից մէկին, որի մօտ փող կալ, բայց որի բերանին եթէ իւր չէք քսէք, մի կոպէկ էլ չի տալ: Ի՞նչ անել կուզի, որ դուք քսում ուրախութեամբ ալդ իւղը, մտածելով թէ ջառ-ջահաննամ մի քանի մանէթը, միայն թէ մուրհակը կարողանաք վճարել: Գուք ի հարկէ չուտով կը դիմէք աջնալիս փոխատու աղբիւրներին, որոնք տոկոսը չափաւոր են վերցնում, բայց եթէ միայն աջնալիս աղբիւրները կարողանան միշտ բաւարարութիւն տալ: Ուրեմն նոր օրէնքն աւելի մեծ գործադրութիւն կունենալ, եթէ կանոնաւոր տոկոս վերցնող հիմնարկութիւնները բաւարար զարգացած կը լինին երկրի մէջ:

Արդէն վերջնականապէս հաստատւած է Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ առևտրական պայմանագիրը, որի բովանդակութիւնը հետեւեալն է:— Ֆրանսիան պակասեցնում է մաքսը Ռուսաստանից ներմուծող նաւթալին և ուրիշ հանքալին իւզերի ու նաֆթալին մնացորդների համար: Սրա փոխարէն Ռուսաստանը պակասեցնում է մաքսը մի շարք ֆրանսիական ապրանքների համար, որոնք են՝ գինի, լոմ, օղի, արակ, հանքալին ջրեր, քաղցրահամիք, կարկանդակներ, համեմունք, ձուկը, պատրաստած կաշի,

ձեռնոցներ, ռանամաններ, չրջանակներ ու բաղեթներ, կաւեղէններ (Фабрикс), քիմիական ու դեղագործական նիւթեր, բոսական իւղեր, կոսմետիկներ, ցեմէնտ, ցինկ, չուգուն, պղնձի, երկաթի, պողպատի, ու մետաղաթելի շինածքներ, մեքենաներ, կաղապարներ, արհեստալին ու երաժշտական գործիքներ, թուղթ, հիւսած ու գործած կտորներ, ասեղնագործեր, ու հանդերձագարդեր:

Մաքսը պակասացնում է 10-ից մինչև 15 տոկոս: Միայն մի քանի առարկաների համար պակասեցնելու է 20 — 25 տոկոս, որոնց թւում դառնում են և գլուխաւորապէս մեքենաները:

Խարկովում 1881 թւին բացւեց մի մեծ ժողովրդական ընթերցարան-գրադարան, որի սկզբնապատճառն էր ոմն տիկին Էֆիմովիչ: Սա մի զգալուն զեկուցում ներկայացրեց «Գրագիտութիւն տարածող Ընկերութեան», որի մէջ բացատրեց ժողովրդական ընթերցարանի անհրաժեշտութիւնը: Ընկերութեան ժողովը համաձայնեց զեկուցման դադախարի հետ և պրոֆեսոր Վանիլեւսկիի նախագահութեամբ մէկ մասնաժողով կազմեց այդ միտքը իրագործելու համար: Ընթերցարանի կառավարչուհի նշանակւեց ինքը տիկին Էֆիմովիչ:

Միւս օրից սկսած մասնաժողովը սկսեց ստանալ նւէրներ փողով ու գրքերով: Նւէրների մեծ մասը բաղկացած էր համեստ լուրջիններից, բայց նոյնպէս սպիտակ և սև փողերից: Նոյնպէս ստացւեցին բազմաթիւ խառն իստուհ գրքեր և գրքովներ:

Վերջապէս ընթերցարանը բացւեց և սկսեց աւագութեամբ հարստանալ և օրէցօր զրաւել հաւարակութեան ուշադրութիւնը:

Ընթերցարանը բաց է համարեա ամբողջ օրը: Անցեալ տարի ընթերցողների թիւը հասաւ 3475-ի, որոնք չաճախեցին 28,830 անգամ: Տարւալ ընթացքում վերցւեցան 30 հազար գիրք, 11 հազար պատկերազարդ հրատարակութիւններ և 7 հազար լրագիրներ: Մասնակցողները գլխաւորապէս երեխաներ և պատանիներ են, ստորին քաղաքացիների և գլուխական դասակարգերից, արհեստաւորներ և գործարանների բանւորներ: Ձմեռը գերազանցում են փոքրիկները, — ամառը հասակաւորները:

Հետաքրքրականը այն է, որ Խարկովում վաղուց արդէն գոյութիւն ունի մի հասարակաց պառասկան գրադարան ձրի ընթերցարանով: Բայց այդ ընթերցարանը չաճախում են բացառապէս բարձր ինտելլիգենցիայի ներկայանալ ուսաց բնագէտների և բժիշկների խննդորդ համաժողովը: Համաժողովի նպատակն է նպաստել գիտնական և ուսանողական գործունէութեանը բնական գիտութիւնների ասպարիզում: Ուղղել այդ գործունէութիւնը գլխաւորապէս շէպի Ռուսաստանի ուսումնասիրութիւնը և միջոց տալ ուսանական բնագէտներին ծանօթանալու իրար հետ:

Համաժողովին անդամ կարող է լինել իւրաքանչիւր մարդ, ով որ գիտնականօրէն զբաղւում է ընագիտութեամբ: Իսկ ձախնաւորութեան իրաւունք ունին նոքա, որոնք հրատարակել են որ և է ինքնուրույն աշխատութիւն կամ հետազոտութիւն բնական գիտութիւններին վերաբերեալ և նույնպէս ալի գիտութիւնների միջնակարգ և բարձրագոյն դասատուներ:

Համաժողովի մասնաւոր նիստերում կը հաղորդեն և կը քննեն աֆիսի հետազոտութիւններ, որոնք աւելի մասնաւոր բնութագրութիւն ունին, ալիքնքն վերաբերում են բնագիտութեան որ և է ճիւղին:

Համաժողովը ենթադրում է ունենալ հետեւեալ բաժինները. 1) մաթեմատիկա և աստղաբաշխութիւն, 2) ֆիզիկա, 3) խիմիա, 4) հանքաբանութիւն և երկրաբանութիւն 5) բուսաբանութիւն, 6) կենդանաբանութիւն, 7) մարդակազմութիւն, 8) աշխարհագրութիւն, ժողովրդաբանութիւն և մարդաբանութիւն, 9) երկրագործութիւն, 10) գիտնական բժշկականութիւն և 11) գիտնական առողջապահութիւն:

«Պատմական Համբաւներ»-ի լույսի համարում հաւաքած են թւագիտական տեղեկութիւններ գրքերի հրատարակութեան մասին Ռուսաստանում 1892 թվի ընթացքում: Ֆինլանդիան հաշւելով, կապուցութեան մէջ տպագրել են 9588 զանազան աշխատութիւններ, քանակութեամբ 30,639,530 օրինակ: Սոցանից ռուսաց լեզուով 7,188 աշխատութիւն 24,819,933 հատ, իսկ օտար լեզուներով 2,400 աշխատ. 5,819,597 հատ: Աւստի հաշւած 260 կրօնական գրքեր և նոյա քանակութիւնը: Նոր աշխատութիւններ հրատարակել են 6,140 ռուսերէն և 2,321 օտար լեզուներով: Բացի ռուսաց լեզուից գրքեր տպագրել են 43 օտար լեզուներով: Ռուսաց լեզուով հրատարակածների մէջ ամենից շատ են հոգևոր, ձեռնարկական, բելլետրիստիկական և բժշկական գրքերը, իսկ ամենից քիչ գիտնական ժողովածոներ, քաղաքատնտեսական և լեզագիտական գրքեր: Զուտ գրականական հրատարակութիւններ մէջ նորերը 552 են, ու կրկին հրատարակւածները 92, թարգմանական 140 և ինքնուրույն 504:

Բոլոր գրքերը տպագրել են 720 տպարաններում 163 քաղաքում: Ալի տպարաններից մասնաւոր մարդկանց պատկանում են 610: (Ընդամենը Ռուսաստանում կա 1418 տպարան): Յիշեալ 610 տպարաններից պատկանում են ռուսներին 220, գերմանացիներին 143, հրէաներին 116, լեհերէն, հալերէն և վրացերէն միասին 131: Գիրք տպելով զրադել են Պետերբուրգում 149 տպարան, Մոսկաւում 75, Վարշաւայում 72, Օդեսաւում 30, Թիֆլիսում 22, Կիււում 19, Բիւդաւում 17 և ալի:

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ

Веббъ и Коксъ.—8-ми часовой рабочий день. Перев. Муратова, Москва 1893 г., ц. 1 р. 60 к.

Այս գրքի մէջ բացատրւած են աչն հարցերը, որ վարուցանում են ութժամեալ աշխատութեան հակառակորդները: Նոյնպէս պարզած է թէ ինչ հետեանքներ են ցույց տուել զանազան գործարանատէրերի ութժամեալ սխտեմով արած փորձերը: Վերի գիրքը թարգմանւած է շատ լեզուներով: Ուլ հետեում է Եւրոպայում խիստ ուշադրութեան արժանացած բանտրական խնդրին, անպատճառ պիտի հետաքրքրութեամբ կարդալ այս գիրքը: Իսկ վատ չէր լինիլ նմանապէս եթէ մեր մամուլը քաղւածք անելով ծանօթացնէր հալ ընթերցողին Վերի գրքի հետ:

Веселовскій и Берберьянъ.—Армянскіе беллетристы. Сборникъ. Томъ первый, Москва, 1893 г. цѣна 1 р. 75 к.

Այս ժողովածուի նպատակն է ծանօթացնել ռուս ինտելլիգենցիային և առհասարակ ռուս ընթերցող հասարակութեանը հալոց նոր գրականութեան հետ: Իսկ մեզ հայերիս համար ալոպիսի աշխատութիւնները աչն գինն ունին, որ նոցանից մենք կը տեսնենք, թէ ինչպէս են հասկանում մեզ հայերիս ընդհանրապէս և մեր գրականութիւնը մասնաւորապէս: Յիշեալ ժողովածուն մեծ համակրութեամբ ընդունեց ռուս ինտելլիգենցիայի կողմից, որի բերաններէջ մինը «Ռուսական միտք» ամսագիրը ի միջի ալոց հետեալն է ասում. «Պապուսների և կենտրոնական Աֆրիկայի բնակիչների մասին մենք աւելի բան գիտենք, քան թէ ալո բարձրածիրք ու կուլտուրական ժողովրդի մասին, որի մէկ երրորդ մասը բնակւում Ռուսաստանի սահմաններում, իսկ երկու երրորդը թողւած են մահմեդական աստիճանաւորների և վալրենի քրդական բանակների քմահաճութեանը»:

Пресса. Защита жизни и здоровья рабочихъ на фабрикахъ и заводахъ. Вып. I. Спб. 1891 г. Вып. II. Спб. 1892 г. по 2 руб. за выпускъ.

Ոչ մի կրօն, ոչ մի գիտութիւն և ոչ մի առողջ դատողութիւն չէ կարող հերքել աչն ճշմարտութիւնը, որ եթէ մի մարդ ուրիշներին աշխատեցնում է, նոցա վերաջ որոշ պարտաւորութիւններ է դնում իւր սեփական շահերի համար, անպալման պարտաւոր է նախազուշական միջոցներ ձեռք առնել նոցա կեանքին և առողջութեանը չմեասելու համար: Իւրաքանչիւր գործարանատէր պիտի վերաբերւէ դէպի իւր բանւորները, որպէս իւր հարադատ բարեկամները, պիտի ոչինչ աշխատանք չխնայէ նոցա բարօրութեան համար և հարկաւոր ղէպքում պիտի նոյն իսկ զոհ բերելու պատրաստ լինի:

Բայց ճիշդան բիւրաւոր գործարանատէրեր զեռ չեն հասկանում իրանց պարտաւորութիւնը... Բայց նորանք վերջապէս կը հասկանան:

Պրեսապի գիրքը խօսում է ալն միջոցների մասին, որոնց պիտի ուշ դարձնեն գործարանատէրերը բանւորների կեանքը վտանգից զերծ պահելու համար: Մեր երկրում նոյնպէս գործարանական կեանքը քաղեր է անում: Մեր ինտելլիգենտ գործարանատէրերը շատ սովորելիք ունին Պրեսապի զրքի նման աշխատութիւններից:

Ս. Թ.

ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԻՒՍԻՍԱՅՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳԻՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱ-
ԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ¹⁾:

Անգլիացի Համիլտոն Ալդէն և ամերիկացիք: Բանաստեղծ խնդրի
առիթով: Գաղթականական խնդիրը: Ուղղման գործը Ամերիկայում: Ամե-
րիկական մամուլի բարձրիկ: «Նյուտոտոն» աղգալին պարկը:

IV

Մի քանի ժամանակ սրանից առաջ անգլիական «XIX դար» ամսագրում
տպւեց մի վերին ատոմանի: Հետաքրքրական լոգւած „Social aspects of
American life“ վերնագրով, անգլիացի բանաստեղծ ու վիպասան Համիլ-
տոն Ալդէն (Hamilton Aldé), որը առիթ էր ունեցել ուղեկցելու չափոնի
ճանապարհորդ Ստենլիին — սրա՝ Ամերիկային արած փառաւոր այցելու-
թեան ժամանակ:

Պ. Համիլտոնը լրացնում է ալն տեղեկութիւնները ամերիկացիներին
վերաբերմամբ, որ գրել է Զ. Բրաւըր իւր „American commonwealth“
նշանաւոր գրքում:

Համիլտոնի առաջին նկատողութիւնը ալն է, որ միանգամալն սխալ
է ամերիկացիների մասին խօսելիս աչքի առաջ ունենալ մի ամբողջացած
աղբութիւն: (Նոյնականակը — զանազան աղբութիւնների խառնակումն
Ամերիկայում եղալի մի առիթ է ներկայացնում գիտութեանը ուսումնա-
սիրելու ցեղերի իրար հետ խառնելու ²⁾ հետեանքները: Արեւե-
լեան ու արեւմտեան Ամերիկայի կեանքի պայմանները իրարից ալն-
քան են տարբերում, որ առնչութեան տեղիք չի մնում: Օրինակի հա-
մար, Նիւ-Իօրկի իրլանդացի աղգաբնակութեան ստուարութեան պատճա-
ռով — ձեր հարցին թէ՛ ինչո՞ւ փողոցների զրութիւնը ալքքան ողորմելի է-
դուք կըստանաք ալս պատասխանը:

«Մենք իրլանդացիների ձեռքին ենք» ³⁾:

¹⁾ Տես «Մուրճ» 1893 թ., № 5 և 6:

²⁾ Croisement, скрещивание:

³⁾ իրլանդացիք չափոնի են իրանց անմաքրասիրութեամբ:

Յինցինատի քաղաքում և ուրիշ տեղերում գերազանցում է գերմանական ցեղը և այդ հանգամանքը երևում է հաստատություններից, — լրագրություններից, երաժշտություններից տարածումից և այլն:

Ան-Անտոնիո՝ լուծ կան մոտ 17 ազգություններ:

Նոր-Օրլեանում մեծամասնությունը իտալացիներ են և կրեոլ ֆրանսիացիք:

Չինացիք վուած են ամբողջ Ամերիկայի վրայ, իսկ կալիֆորնիայում կան նաև զուտ չինաբնակ գիւղեր:

Կնալած ալս ամենին մի քանի լատիսություններ ընդհանուր են բոլոր ամերիկացիներին, զոր օինակ, — ձեռնարկող ոգին, չարատեսությունը մի գործի վրայ, մի տեսակ հալարությունը՝ թէ մարդս միայն իրանից կախումն ունի, և ապա ամեն մի հարուստի առատաձեռնությունը գէպի իւր ծննդավայրը: Համաձայնելով ալս կէտում Բրաւսի հետ — Համիլտոնը հակառակ կարծիքի է ամերիկական կեանքի զարթոնքից, որ հաւանություն վերաբերմամբ: Իրաւ է, ծառաւորների, մշակ, ներքի գրությունը անհամեմատ լաւ է Ամերիկայում քան Աւրոպայում, քանի որ առաջինները (թէկուզ աղախինները) ստանում են Ամերիկայում տարեկան լիստոն կամ վաթսուն ֆունտ ստերլինգ, իսկ երկրորդները օրական տասը չլինից պլիւս, ալն չոսը՝ թէ իրանք էլ մի օր գործարանատէրեր են դառնալու: Սակայն ինտիլիգենտների գրությունը անհախանձելի է Ամերիկայում: Նրանց վրայ նկատւում է մի տեսակ չոգնածություն, որը տղամարդկանց մօտ առաջ է գալիս աշխատանքի չափազանցությունից, իսկ կանանց մօտ — չնորհիւ գլխում նստած անդադար մտածմունքի (idee fixe) գէպի փափկասիրությունը և անընդհատ զարճասիրությունը: Ամեն անգամ երբ Համիլտոնը հարցնում էր՝ թէ ինչու մեծ թաղոնները դատարկ են լինում, իսկ փոքրերը լիքը, նրան պատասխանում էին. «մերոնք շատ-շատ են չոգնած լինում օրալ աշխատանքներից որ լետու մտածել կարողանան — ուստի նրանք ուզում են զարճանալ և ալն ինչ որ ծիծաղացնում է — նրանց զոհություն է պատճառում»: Եւ իրաւ, Ամերիկայի մեծ հարստությունները արդիւնք լինելով սպեկուլեացիայի, չահադիսություն — բնական է, որ դրանց տէրերը ենթարկւած են վախի, նեարդալին գրգռմունքի, մի տեսակ չոգնածության ու սպառման:

Մոգալին կինը Ամերիկայում աւելի աշխուժ է քան Աւրոպայում: Համիլտոնը իւր ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում չպատահեց դրանցից և ոչ մէկին մատնոցը կամ ասեղը ձեռին! Ասեղնագործությունը սրանք բաժին են թողել իրանց եւրոպացի քույրերին: Իսկ ամերիկացու կնոջը ինքան են ծառաւոր՝ դասախօսություն, երաժշտություն լսելը, սպիրիտիսմի սեանսներ, աշխարհական քարոզներ ու ճառեր բոլոր երեւակաւելի նիւթերի վրայ: Ամերիկոնին՝ աւարտելով ուսումնարանի դասընթաց-

քը—աւարտած չի համարում իւր ուսումը, ալ կ'պնդէ որ և է բանի ուսումնասիրութեան: Ունենալով մեծ մասամբ քիչ երեխաներ և ոչ շատ ծառաներ—ամերիկոսին շատ շուտ կարգի է բերում տանտիկնոջ պարտաւորութիւնները և, խորշելով պարապութիւնից, ազահութեամբ որոնում է սնունդ մատակարարող մի նիւթ, մի գործ:

Այս երեւոյթները Համիլտոնը կ'պնդէ որ հանգամանքի հետ թէ Ամերիկացում ինչպէս են վերաբերում դէպի երեխայքը:

Միանգամայն հակառակ Ներոպալի ուղղութեան—Ամերիկացում երեխայքը վալելում են կատարեալ աղատութեան հետ նաև անասելի անպատասխանատուութիւն: Վաղ հասակից սկսած արդէն սրանք իրար աջակցութիւններ են անում, կ'ազմում զարձակի ճանապարհորդութիւններ և ալն: Այդ է պատճառը, որ Ամերիկացում չկալ երեխայ՝ բառիս եւրոպական նշանակութեամբ: «Վոկոնը» (պսպէս են անւանում հասարակութեան մէջ երեալ սկսող ջահիլ օրիորդին) ունի հասունացած կնոջ կատարեալ ձևեր, գիտէ ինքն իրան պաշտպանել, ազատ պատասխաններ տալ խօսակցութեան ժամանակ թէ ջահիլ և թէ ծեր տղամարդկանց: Ընդունելութիւնների ժամանակ—սրանց մայրերը վերջին տեղն են բռնում և լաճախ լրագրերում կարելի է կարդալ թէ «օրիորդ X այս ինչ օրը ընդունելութիւն ունէր «աստիտեղ բալ հիս մօտեր»¹⁾:

Ապա Համիլտոնը տալիս է ամերիկական մի քանի քաղաքների կեանքի նկարագրութիւնը, պատմում է ամերիկական հասարակութիւնների մէջ աչքի ընկնող լաւ խօսելու և խօսակցութիւնը պահպանելու ձևերի ու եղանակների մասին, և գովաբանում ամերիկական գրկարաց հիւրասիրութիւնը:

Ամերիկացում ոչ ոք չի քաշում լանպատրաստից ճաշի պահել մի հիւրի առանց գանդատելու և ներողութիւն խնդրելու աղքատ կերակուրներից: Միւս կողմից հրաւերի ճաշկերութիւնները, ասում է Համիլտոնը, աչքի քան էլ պերճ չէին: Ծառաները ստանում են ահագին ռոճիկներ և՛ իրանց տէրերի նման՝ գրգռող են և փափկասէր: Նիւթ տէրը արձակում է միանգամից իւր բոլոր ծառայողներին ճանապարհորդելու կամ մի հիւրանոց տեղափոխելու համար—ծառայողներն էլ լանկարծ թողնում են իրանց տիրոջ—մի հիւրանոց մտնելու և կրկնակի ռոճիկ ստանալու համար: Ամերիկացում հազազիւտ բան է մէկի մօտ հին ծառայ գտնելը. սրանք երբէք երկար չեն մնում որ և տան:

Վերին աստիճանի հետաքրքրական և անհաւատալի են թւում Համիլտոնի հետեւեալ պատմածները ծառաների սովորութիւնների մասին: Շատ

¹⁾ Եւ իրան օգնում էր մայրը:

լաճախ դուք կը պատահէք տեղական լրագրերում որ և է խոհարարուհու չափարարութեանը նոր պաշտօն գտնելուց չեսույ:

«Միտս Սեւլի Դեկտտեր եկել է Դենվերից ալս քաղաքը այցելութեան պարոն X.-ի մօտ . . .»:

Երբէք, ասում է Համիլտոնը, ծառան ձեզ «պարոն» չի ասիլ: Հիւրանոցում երբ մի կերակուր էք պատւիրում—ծառան լուռ գնում է բերում ձեր հրամայածը ու ապա թեքում ձեր աթոռի վրայ ձեր խօսակցութիւնը լսելու: Պիտտսբուրգի մի սրճատանը նստած—Համիլտոնը լանկարծ կարծեց թէ իւր վրայ չարձակում են գործում—մինչդեռ բանից դուրս եկաւ, որ ծառայողը ուզում էր քաղաքավարի կերպով առնել կախ տալու համար այցելւի գլխարկը:

Համիլտոնը գրի է անցնում Կոլորադո-Սպրինգսում և առհասարակ արեւմտեան Ամերիկայի փոքրիկ քաղաքներում եղած աչն սովորութիւնը, որ, երբեմն, եկեղեցիներում տեղի է ունենում կամ մի գրական-երաժշտական ներկայացում, կամ թէ նոյն իսկ մի բեմական ներկայացում: Եւ նոյն Կոլորադո-Սպրինգսում բոլոր խանութներէ լուսամուտներում դրած էր, Համիլտոնի ասելով, հետեւալ տարօրինակ չափարարութիւնը.

«Օլտերա, Օլտերա, Օլտերսին էվէրի ստալլ» ալսինքն՝ Ոստրէներ¹⁾ ամեն տեսակի, բապարտների սուաջին մատուռում, երկուշաբթի երեկոյեան»:

Այնուհետեւ Համիլտոնը խօսում է ամերիկացիների բնակարանների մասին, վերջիններիս ներքին կազմաւորման միակերպութեան և միատեսակութեան մասին, անցնում է թատրոնին, որը շատ ստոր վիճակի մէջ է նկարագրում, գտնելով մեծ մասամբ անխմատ օպերետներ, որոնք իրանց անբովանդակութեամբ հրէշաւոր են եւրոպականների հետ համեմատած և ալլն:

Ապա նա կանգ է առնում նրանց ճառախօսասիրութեան ու ճառախօսութեան մասին: Հետաքրքրական է լսել ամերիկացիների՝ երբեմն ճարտար, երբեմն հումորով սեղանի վրայ ասած ճառերը, որոնք, առհասարակ, սպիչ են կոչւում:

Այցելած լինելով 91 ամերիկական քաղաքներ, Համիլտոնը հնարաւորութիւն ունի մի ճշգրիտ եզրակացութիւն անելու ամերիկական մամուլի մասին: Եւ պէտք է ասել, որ այդ եզրակացութիւնը ամերիկական լրագրութեան պատւին չէ: Մամուլը ուշադրութիւն չի դարձնում իւր տպածի ստութեան կամ ճշտութեան վրայ: Այդ է պատճառը, որ այդ լրագրերը առիթ են տալիս կամ հերքումների, կամ ընդդիմախօսութիւնների: Ընտանեկան ամեն մի գաղտնիք հրապարակ է հանում երբ մէկը հասարակական որ և է պաշտօն է ստանձնում: Սկանդալի և ծաղրի ենթարկւածը

¹⁾ Ոստրէ, huitre, устрица:

կարող է սպանել լրագրի հրատարակչին և երգեալ դատաւորները կարգապահին սպանողին, բայց եթէ դրա փոխարէն զիմեւում լինէր դատարանին—երբէք գոհացում չէր ստանալ: Ամենափոքրիկ քաղաքը ունի իւր լրագիրը, որի գինն է երկու և կէս պէս և որը շատ շատերի համար կազմում է միակ ընթերցանութեան առարկայ:

V

Մշակները, բանւորները—ահա ալն դասակարգը, որը բարձրացնելով իւր գլուխը՝ պահանջներ է անում և աշխատում իրաւունքներ ձեռք բերել:

Եւրոպական շատ երկիրներում մշակները միանում են մի օրգանի մէջ, կազմում իրանց պահանջների ծրագիրը, ունենում իրանց լրագրերը, իրանց պատողամաւորները, իրանց կուլքները և ալն և ալն: Բայց, դրամատէրներին հակակշիռ կազմելու համար, բանւորները ոչ մի տեղ ալնպէս չեն կազմակերպւել, ինչպէս Ամերիկայում:

Եւրոպայի բանւորների գործած աղմուկները, գործադուլները գրեթէ անհետանք են վերջանում և շատ անգամ հէնց ի վնաս մշակների լինում:

Ամերիկացի բանւորները հաճախ տարի է, որ կազմած ունին մի ընկերութիւն, որի հիմնադիրը մի գերձակ էր Ֆիլադելֆիայից:

Ընկերութեան անունն է „Knights of Labor“ ¹⁾, որը նիստ ունի Ֆիլադելֆիայում:

Այժմ նրա անդամների թիւը հասնում է 3 միլիօնի, որոնք ցրած և բաժանւած զանազան քաղաքներում՝ վճարում են չաբաթական մի որոշ դոմար Ընկերութեան գանձարանին:

Ընկերութեան նպատակն է՝ քաջալերել լինելիք ամեն մի գործադուլ՝ նպատու տալով գործադուլ անող իւր անդամներին: Ընկերութեան կառավարիչը պ. Powderly, կրելով մեծ վարպետի կոչում՝ ռոճիկ է ստանում ընկերութիւնից տարեկան 60,000 Ֆր:

Այս ընկերութեան միջոցով գործնական ամերիկացի բանւորները, փոխանակ աղմուկների, փրկիսփաշտութիւնների և զրախօսութիւնների՝ կարողանում են և կարողացել են դէմ դնել դրամատէրերին և զլխաւորապէս գործատէրերին: Այս Ընկերութեան ջանքերով ամերիկացի բանւորները հասան իրանց իղձերից մի քանիսին: Ամենից առաջ նոքա պահանջեցին և ձեռք բերին, որ ամեն մի բանւորի վարձատրութիւնը լինի առնւազն 12 1/2 ֆրանկ օրական: Այս առաջին չաղթանակից չետղ նոքա պահանջեցին բանեւու ժամերի պակասեցնելը և իջեցրին 12—13 ժամաւ աշխա-

¹⁾ «Նպատու օֆ Լաբոր» անգլիերէն նշանակում է աշխատութեան առպէս անելը:

տուրիստները 9 ժամի (չաբաթ օրը 6—7 ժամ) բացի ազատ, կիւրակի և տօն օրերից (սրանց թւում Bank holiday օրը, որը մի ընդհանուր տօն օր է Միացեալ Նահանգների Անգլիայի համար):

Ընկերութիւնը պարտաւորեցուցիչ դարձրեց վարձատրութիւնները վճարել չաբաթ օրերը: Այնուհետև վերացնել տւին կտորով բանէլը: Միւս կողմից ալն «անկախ» բանւորները, որոնք կամք են ունենում և փորձ են փորձում խռատիւն ալս Ընկերութեան պարտաւորութիւններից և պաշտօնի մտնում որ և է գործարան—եթէ դադարնրը խմացում է—ալդ պիտի բանւորը հալածուած (boycotté) է:

Նւ ալսպիտի զօրեղ, կանոնաւորապէս միացած ոչմերով միաջն՝ մշակը կարող է իւր ձաշնը լսելի անել տալ, իւր ուղածը անցկացնել գործարանատիրոջ մօտ.—եւ ալդ անում է ամերիկացի մշակը:

VI

Յուաջ հարցը ամերիկացիների համար՝ է գաղթականների խնդիրը,— գաղթականների՝ որոնք ամեն տարի հարիւր հազարներով թափւում են Նւրոպալից Ամերիկա՝ իրաւ է չինացի մշակների հարցը արդէն վերջացած է և նրանց մօտքը Ամերիկա՝ արգելւած վերջացած է, բաւց և Նւրոպալից եկողները վտանգաւոր են համարւում: Խսկապէս վտանգը կաշանում է նրանում, որ նորեկները էժանացնում են բանւորների վարձը,— մի հանգամանք՝ որը շատ անգուրեմական է լաւ վարձատրութիւններ ստացող և կոմֆորտի ընտելացած ամերիկացի մշակ դասին:

Աոնրոնէ՛ն առաջինն եղաւ, որ հռչակեց՝ Ամերիկայի ամերիկացի ինտերիւս համար, և ահա նորից ալդ հարցը հանդէս է գալիս և ներկայացւում աւելի ևս զօրեղ կերպով:

1891 թւականին Նւրոպալից գաղթել են Ամերիկա մօտ 700,000 հոգի, 1890-ին Ամերիկայի բնակիչների թիւը հասաւ 62 միլիոնի, որից 21,500,000 եւրոպական նորագոյն գաղթականներ են:

Գաղթականութեան խնդիրը դադարել է լոկ քաղաքական բնուորութիւն կրելուց և դառել, եթէ ալսպէս կարելի է ասել, հրապարակախօսական: Նւ իրաւ, մարտ ամսին Ամերիկայի երկու համալսարանները—Հարւարդինը և Իւլինը—հրապարակախօսական վիճաբանութիւններ էին նշանակել իրանց լսարանականների համար՝ նիւթ տալով գաղթականութեան խնդիրը:

Առաջին հրապարակալին վիճաբանութիւնը տեղի էր ունեցել Կեմբրիջում, Նախագահութեամբ Մասսաչուսետսի Նահանգապետ պ. Ռուսսելի, իսկ Էրկորոյը՝ Իելում, Նախագահութեամբ չալտնի ամերիկական կատակարան Chan cey Depew՝ի:

Ալս վերջին համալսարանի ուսանողները ամբիոնից փաստաբանում

էին թէ՛ անհրաժեշտ է արդելք դնել զաղթականութիւններին, մինչդեռ Հաւարդի համալսարանականները հակառակն էին պնդում: Ինչ և իցէ այս խնդիրը մնում է բաց: Բայց մի ուրիշը արդէն օրէնքի ուժ է ստացել: Դա է Oates bill-ը, որի զօրութեամբ դժարութիւններ են դրւում ամերիկական հայտատակութիւն ընդունել ցանկացողներին համար: Այսուհետեւ, փոխանակ հնգամեայ կացութեան Ամերիկայում՝ խնդրամատուց եղողը պիտի հաւրցաքննութեան ենթարկւի՝ դատաւորի կողմից ներկայութեամբ դատախազի:

VII

Ամերիկայի «Արեւմուտքում» արդէն զոլութիւն ունին Արթեզեան ջրհորներ, որոնց միջոցով օգտւում են ստորերկրեայ ջրերից: 13,972 ալգայիսի Արթեզեան ջրհորներ ոռոգում են արեւմտեան Ամերիկայում մօտ 100,000 ակր հող:

„Irrigation Age“ մասնագիտական թերթը վկայում է, որ ալդ ջրհորների ջուրը երբէք չի պակասում, որ Ալաիֆորնիայում ալգայիսի ջրհորներից մի քանիսը տալիս են օրական 3 միլիոն գալլոն ջուր:

Միացեալ Նահանգների կառավարութիւնը շատ թանգ գտնելով արեւստական անձրևի արժէքը՝ նշանակել էր 70,000 դոլլար—գիտնական հետազօտութիւնների համար ստորերկրեայ ջրերից օգտւելու խնդիրը ուսումնասիրելու համար:

Ալդ լանձնաժողովի ղեկուղումից երևում է, որ ստորերկրեայ ջրերը շատ առատ են Դալիտայում, Տեխասում, Ֆլորիդայում, որ ստորերկրեայ ղետեր կան Ինդիանայում, Միսսուրիում, որ ալդ գետերը տեղ-տեղ երևան են գալիս և որ դրանցից օգտւում են գործարանատէրերը չարժող ուժի փոխարէն:

Թէ այսպէս, թէ այնպէս, այս արթեզեան ջրհորները թանգ են նստում, իսկ արեւստական ոռոգումով ջրւում են արդէն Միսսիսսիպիից գէպի արեւմուտք մօտ 3,500,000 ակր հող և բոլոր այս տեսակ ջրանցքների և առուների տարածութիւնը=15,000 մղոնի:

Ամերիկական Ֆերմէրը արդէն սկսել են նախապատուութիւն տալ ոռոգւող հողերին և խուսափել բերրի և առատ անձրևային հողերից (Պենսիլանի, Օհայո, Ինդիանա, Իլլինոյս և ալլն) և հաճ ինչու, արեւստական կերպով ոռոգւող հողերը հնարաւորութիւն են տալիս ջրելու հարկ եղած ժամանակ,—մի առաւելութիւն՝ որ չեն ներկայացնում անձրևային տեղերը և երկրորդ՝ այս վերջին վայրերը չաճախ հեղեղւելու վտանդի են ենթարկւած, մինչդեռ արեւստական կերպով ոռոգւող տեղերը աչս վտանդից միանգամաւն ազատ են: Առաւելութիւնների շարքում կարելի է գտնել նաեւ այն հանգամանքը, որ բնական ոռոգումից զուրկ տեղերում կարելի է

մշակել տեսակ-տեսակ միջեր և տեսակ տեսակ ցանքեր անել, իսկ քաղհանը լարմարեցնել իւր ուղածին:

Ամերիկական Միացեալ Նահանգները, ուր բոլոր հեշտ մշակող և ջուր ունեցող հողերը արդէն բռնւած են ներկայումս, անցեալ տարւանից սկսած, հոգս են քաշում արհեստական միջոցներով ոռոգելու ջրազուրկ և մինչև այժմ անմշակ մնացած հողերը:

Ծանօթացնենք ալն մանրամասնութիւնների հետ, որ ձեռք է բերել լատկապէս ալս խնդիրը ուսումնասիրելու համար Միացեալ Նահանգների կառավարութեան կողմից սենատորներից կազմած լանձնաժողովը:

Ինչ խօսք, որ խնդիրը վերաբերում է սարոտ երկիրներին, քանի որ սարերի ոտորոտներում գտնուող հողերը հեշտութեամբ ոռոգւում են քիչ թէ շատ հեռւից անցնող գետերի ջրերով:

Նոյն իսկ ալսպիտի հողեր, որոնք փոքր հեռու էին գտնուում գետերի հարեանութիւնից և որոնք մի քանի տարի է ինչ որ ոռոգւում են արհեստական ջրանցքների օգնութեամբ—հէնց այդ հողերի ալժմեան արդիւնաբերութիւնը պարզ կերպով ապացուցանում է արհեստական ոռոգման ահադին օգտակարութիւնը:

Գնենք այստեղ մի աղիւսակ կալիֆորնիայի Նահանգի մի քանի կաւածների գնահատութիւններ. — վճարելիք աուրքի համաձայն

1879 թ. — 1889 թ.

Ամբողջ կալիֆորնիան գնահատւած էր 1,156 միլ. ո. 2,185 միլ. ո.

7 դքսութիւններ Ս. Ֆրանցիսկոյի շուրջը 666 " " 900 " "

13 դքսութիւններ—սաստիկ ոռոգւած 205 " " 702 " "

Այս թւերից երեւում է, որ հողերի արժողութիւնը աւելացել է 10 տարւալ ընթացքում առաջին բաժանմունքում 91 %/o, երկրորդում 35 %/o, իսկ երրորդում 244 %/o. և ալս երեւթի պատճառը գլխաւորապէս վերագրելու է նոր ընդունւած արհեստական ոռոգումներին: Բայց կան օրինակներ՝ որ հողի արժողութիւնը ալդ իսկ ժամանակամիջոցում աւելացել է 800—840 %/o. ասել է թէ 1879 թւին 100 ուրբլի գնահատւած հողը— 1889 թ. գնատուում էր 840 ուրբլի: Սրանք զատ-զատ դէպքեր են, իսկ ընդհանրապէս վերցրած՝ կալիֆորնիայի հողերը 79 թ.—89 թ. աւելացել են իրանց արժողութեամբ մօտ 123 %/o (91+35+244 : 3):

Բայց ինչպէս ջրել, ինչպէս ոռոգել սարոտ հողերը, քանի որ գետերը գտնուում են փոս ընկած ձորերում, — քանի որ սենատորների լանձնաժողովը զանազան ընկերութիւնների և մասնաւոր անձերի զեկուցումները լսելուց և ստուգելուց չետոյ դառաւ որ սարոտ և անջուր հողերի տարածութիւնը հաւասար է մօտ 40 միլիոն ¹⁾ զեսեւատին:

¹⁾ = 100 միլ. ալր (անգլիացիները և ամերիկացիները արտասանում են ալրը—էկր):

Սենատորների մասնաժողովը եկաւ ան եղրակացութեան, որ ազդ սարոտ հողերը կարելի կը լինի ջրել, եթէ սարերում արհեստական լճակներ կամ նոյն իսկ լճեր ստեղծեն:

Յիշեալ սենատորներին օգնող երկրագէտ Պաուէլլիի հետազոտութիւնների համաձայն՝ շատ չոր երկիրներում ցանքերի համար հարկատու է մօտ մի ֆուտ ջուր. այս ասելով նա հասկանում է ջրի այն քանակութիւնը, որ հարկաւոր է մի ակր հող ջրելու համար¹⁾:

Հաշւած է, որ շնորհիւ Քիօ-Գրանդէի ջրարգելարանին, որոնց արժողութիւնն է 1,100 դոլլար, կարելի է ստանալ 537,000 ակր ֆուտ ջուր: Սակայն ջրարգելքների (запруды) արժէքը ամեն տեղ չի կարող մի լինել—այնպէս որ մի ակրի փարմար տեղում նա կարող է ակրի պակաս տրօնալ:

Եւ այս եղանակը—սարերում լճեր կազմել և սարոտ հողեր ջրելը—նոր է:

Արեւելքում, այն է Հնդկաստանում և Յէլոն կղզու վրայ այսպիսի արհեստական լճակներ կղել են ամենաշին ժամանակներում և լեռոց լարձի թողի արւել նոր տիրապետողների օրերով: Հնդկաստանում կղած այսպիսի արհեստական լճերից մի քանիսը տարածութեամբ աւելի մեծ էին քան Ժընեւան լիճը:

Ամերիկացիների ագիտան մտադրութիւնը ունեցել է և ֆրանսիացի կոմս Օւլիստ Գասպարենը 60-ական թւականներին, որը առաջարկում էր ջրարգելներ կազմել ֆրանսիական Ալպերի ծործորներում. «այսպիսով, ասում էր նա, մենք կըստեղծենք մեզանում նոր հէյցարկա և նոր լոմ բարդիւ—փոխանակ մարդիկ և գլամ ծախսելու օտար երկիրներ գրաւելու համար»: Եւ ազդ մշակութիւնները կարելի էր գլուխ բերել հէնց զօրքի օգնութեամբ, նման հռովմայական զօրքին, որը ձանապարհներ և քաղաքներ էր կռուցանում...»

Ռուսաստանում, նոյն իսկ ներկայումս, այսպիսի արհեստական ջրարգելքներ գոյութիւն ունին Ուսալեան սարերում, որոնցից օգտւում են հանքագործարանատէրերը:

Վովկասում կոմս Նւդոկիմովի արչաւանքներին ուղեկցող կովկասագէտ Իոգելը քանիցս է ակնարկել նաև Վովկասում այդ տեսակ ջրարգելներ ստեղծելու «կարեւորութիւնը և էփան զլուխ բերելու հնարաւորութիւնը»: Նա մատնացուց էր ածում Վուբայի և Վուր գետի մեծ վտակները և մասնաւորապէս հռչակաւոր Զաաղդանի ձորը:

Իրաւի, վերոյիշեալ ամերիկական ձեռնարկութիւնները մեծ փողեր

¹⁾ Ակրը=0,37 դեկատարին, իսկ ֆուտ-ակրը=127 խորանարդ սա-
ժէն=1,233 խորանարդ մետր ջրի:

կը պահանջեն, բայց անկասկած է որ զրական և գործնական ամերիկացիները ամբողջապէս գլուխ կը բերեն իրանց մտադրութիւնները, մանաւանդ որ բռնած հողի գները գնալով բարձրանում են: Այսպէս անմարդաբնակ, բայց երկաթուղու գծերի վրայ գտնուող, մի գետնատին արգաւանդ հողի արժէքը հասնում է 42 — 54 ուսերու: Այն տեղերում, օրինակի համար, Հարաւային Կալիֆորնիայում, ուր կարողանում են աղատօրէն աճել կիտրոնը և ապելսինը, հողի գինը շատ է բարձրանում և առանց ծառերի, միմիայն ջուր ունենալու պատճառով գնահատւում է 1,100 ուսերուց 2,800 ու մի գետնատինը:

VIII

Երկու-երեք տարի սրանից առաջ, հեռու Ամերիկ. Արևմուտքում, սկսեց հրատարակել մի լրագիր „New Rome Advertiser“: Ամբողջ տարին նա ուղարկւում էր ցանկացողներին ձրիաբար: Այդ լրագրի էջերի վրայ հրաշքներ էին պատմում աճումի մասին աչն նորաստեղծ նոր Հռոմ քաղաքի, որի նմանները կոչւում են Ամերիկայում «սունկ» անունով: Լրագրի ասելով լաչն դաշտերը ծածկւում էին գործարաններով, առեկի գործիքներով և էլեքտրական լույսով: Լրագրի առաջին համարում տպւած էր տեղի տեսքը և քաղաքի դիրքը, — քաղաքի՝ ուր արդէն հաստատւել էին լրագրապետը, փոստապետը, երկու ջրաղացպան, մի վարժապետ և 20 գերտաստան: Լրագրի 10-րդ համարում հաղորդւում էր, որ արդէն մի քանի հազար գերդաստան տեղ էին գտել այդ պողաքի հողի վրայ: Շինութիւնները բուսնում էին ոչ թէ օրերով, այլ ժամերով: Լրագրի բաժանորդների թիւը հասել էր 1,500-ի: Աչնուհետև հաղորդւում էր, որ քաղաքի շրջակայ հողերը վաճառւում էին շատ արագ: Մի տարուց լետու՝ Նոր-Հռոմի բնակիչների թիւը հասել էր 50,000-ի: Յիշեալ լրագիրը խմբագրւում էր շատ տաղանդաւոր կերպով, նա ունէր բոլոր բաժինները՝ — քրոնիքի, տեղական հարցերի մշակման, տեղական կուսակցութիւնների կռիւների, դատաստանականի և այլն: Նաև Նիւ-Իօրկում ուշադրութիւն դարձրին նորաստեղծ քաղաքի վրայ:

Նիւ-Իօրկի „World“ («Տիեզերք») լրագիրը վճեցիւր մի թիկթակցին ուղարկել այդ նոր քաղաքը: Թիկթակիցը դժբախտաբար չգտաւ երկաթուղակին ճիւղը երկաթուղակին քարտէզի վրայ, որ նրան ուղղակի Նոր-Հռոմ տանէր. նշանակւած էր միմիայն փոստակին հաղորդակցութիւն մինչև Տիւսսում գտնուող Վորդ Բուրգը: Թիկթակիցը հառաւ մինչև վիշեալ Բուրգը, բայց այստեղ տեղեկութիւն չունէին Նոր-Հռոմ քաղաքի մասին: Թիկթակիցը ահուամենայնիւ ճանապարհ ընկաւ ամերիկացուն խտուկ լա՞ մառութեամբ «50,000 բնակիչ» ունեցող քաղաքը գտնելու համար: Անտպասներում երեք օր թափառելուց լետու՝ նա գտաւ վերջ ի վերջոյ

ալդ Նոր-Հոմը: Գա առանձնացած մի շինութիւն էր, ուր տեղ էին գտել խմբագրութիւնը, փոստատունը և Նոր-Հոմի ամբողջ վարչութիւնը, իսկ ինքը քաղաքը գոյութիւն ունէր առ ժամանակ ւարդելի խմբագրութեան երեակալութեան մէջ:

Բանից դուրս եկաւ, որ ալդ հողերը ձեռք բերող ընկերութիւնը ձեռք էր բերել նաև փշեալ թերթը, որի միջոցով և օգնութեամբ չուս ունէր զանազան գաղթականների ուշադրութիւնը գրաւել ալդ հողերի վրայ:

IX

Հիւսիսային Ամերիկայում, Wyomin'ցի հիւսիս-հարաւային անկիւնում, բարձր սարերի գրկում, կալ մի տարածութիւն՝ շատ մեծ մեղ համար—շատ փոքր ամերիկացու աչքում, որը կազմում է Ապառաժ Սարերի (Les Rocheuses) գոհարը,—դա է Նլլոուստոնի ¹⁾ Ազգային Պարկը: Եռացող աղբիւրներ, տաք ջրերի հրաբուխներ, ցեխի հրաբուխներ գտնուում են այստեղ այնպիսի առատութեամբ, որ երկրի այս մասը դարձնում են հրաբխային եզակի մի գործանոց, մի լարօրատորիա: Ամերիկացիք կոչում են սրան մի բառով՝ Դեյքերլանդ, այսինքն հրաշքների աշխարհ:

Ամեն տարի 5—8,000 ճանապարհորդ այցելում են այս վայրը մի քանի օրով:

Բնական և ուշագրաւ երևոյթները երկու կարգի են, և գտնուում են իրարից զատ-զատ տեղերում: Գալցերները ²⁾ և տաք աղբիւրները առանձին են, և լիճը, ձորը ու Նլլոուստոնի սարերը առանձին:

Պարկը գտնուում է սրանց մէջ տեղում. առաջին և երկրորդ կարգի երևոյթները գտնում են զուգընթաց հեռաւորութեամբ. Գալատին սարերի երկարութեամբ դէպի արեւմուտք—ձգւում են գալցերները, իսկ Աբսարոկա սարերի տակով, դէպի արեւելք, ձգւում է Նլլոուստոնի ձորը:

Ոնդերլանդ Պարկը է մեծ սարոտ, անտառոտ և թերատական (ՅԱ. ЛИПЕЪ) ձևի սարահարթ մի տեղ, որը ունի իւր հիւսիսում ձիւնապատ սարեր, հարաւում՝ Տետոն և Քամոտ սարերը, արեւելքում՝ Աբսարոկա սարերը և Արեւմուտքում Գալատին սարերը:

Այս խորտուբորտ սարահարթը գտնուում է ծովի մակերևութից մօտ 24000 մետր բարձր, և կտրուած է հարիւրաւոր մետր ունեցող խոր ձորերի՝ զառիվեր լանջերով: Ամբողջ պարկը ծածկւած է սոճիների և եղևնիների անտառով: Ձորերի լաչն տեղերում, տափարակ տեղերում, գտնուում են փոքրիկ, չեկին տուղ ճահիճներ: Եւ ամբողջ պարկի շուրջը չլթալած

¹⁾ Yellowstone բառը կազմւած է երկու բառից. yellow=դեղին, stone=քար:

²⁾ Դէպի վեր խփող տաք աղբիւր:

սարերի գաղաթները, որոնք երբեմն հասնում են 3,000 մետրի։ Ոչ մի գիւղ և ոչ մի աւան, չորս կողմը անտառ և միմիայն անտառ տեղ-տեղ բարձր խոտով։

Եւ այս հողը չի մշակւելու, ալդպէս է տնօրինել ամերիկացիների օրէնքը, միայն հետաքրքրական տեղերում կառուցւած են հիւրանոցներ։ Միմիայն վեց հիւրանոց կալ 14,560 քառակուսի կիլոմետրի վրա։ Եւ այն ու նեղ ուղիները շինւած են կառավարութեան խիստ հսկողութեան ներքո՝ բնական ղեղեցիութիւնը խնամելու համար։ Որսի կենդանիները լիքն են ալդ անտառները։

Մեծ եղջերուներ, որոնց թիւը 25,000 է համարւում, չըջում են ալստեղ հօտերով։ Նշան բիզոնը—վայրենի եղը—ապաստան է գտել այս անմասնելի խորքերում։ Մօտ հազար buffalos ապրում են ալստեղ՝ վալելելով կատարեալ ազատութիւն։ շատ շուտով սա լինելու է սրանց միակ ապաստարանը։ Grizely արջը շատ սովորական է ալստեղ։ Ալստեղ կան նաեւ պումա—Ամերիկայի առիւծը,—մեծ-մեծ գայլեր, բազմաթիւ աղւեսներ և վերջապէս Նիլոտատոնի լճի մօտ մի քանի պելիկաններ։ Փոքրիկ թռչունները սակաւաթիւ են. սակայն Ջրային սարեակները (les merles d'eau) չաճախ են պատահում։ Ամենից շատ ճանապարհորդին դարձացնողը սկիւռն է, ըստ ամերիկացիների «չիպ մեօնկ»-ը, որը շատ շատ է պատահում։

Եւ սօքա ամենքը ապրում են օրէնքի պաշտպանութեան ներքոյ։ Պարկի ամեն կողմերում փաթեալ տախտակների վրայ գրւած է ամերիկացիներին չատուկ լակոնական ոճով—«Նօ շուտին»¹⁾։ Կան նաեւ երկու ուրիշ գրութիւններով տախտակներ։ Մէկը ասում է. «արգելւում է այցելւոններին օրինակներ, նմուշներ ձեռք բերել»։ Երկրորդը խտրարարում է՝ բանակներ, փոխադրող վրաններ չչինել ու չբնակւել»։ 400 պաշտօնեաներ փռւած են պարկի չորս կողմը՝ պաշտպանելով սրան օրէնքների համաձայն։

Պարկի անտառներում կան շատ ալրւած մասեր—և լալտնի չէ թէ արդեօք դրա պատճառը արեւստական է եղած թէ բնական. ալնուամենայնիւ ճիւղերից և տերեւներից զրկւած ու մասամբ միայն ալրւած ծառերի կանգնուած բուռները աւելի ևս վայրենի բնաւորութիւն են տալիս այս պարկին։

Տաք աղբիւրները, թուով 75, բոլորում են Mamouth-Hot-Springs-ում մի սարի լանջի վրայ։ Ալդ աղբիւրները խոլում են 15—30 մետր բարձրութեամբ և սարի լանջը դարձրել են գոլացոծ փխրաքարից (taf) ութը տափարակ լալնածաւալ տերրասներ։ Արտավիժող ջրի քանակութիւնը համարւում է ամեն մի ժամում հարիւր հազար լիտրներով։ Ջրի տաքութեան աստիճանները տարբերում են 27° սկսած մինչև 74°։

¹⁾ Նօ շուտին անգլիերէն նշանակում է—հրացան չ'արձակել։

Վերին աստիճանի հետաքրքրական են աղբիւրները: Ջրերից գոյացած տեսակ-տեսակ փխրաքարերը, որոնք բռնած ունին 6 քառակուսի կիլոմետրի տարածութիւն: Այդ փխրաքարերի կոյտերը տեղ-տեղ համուռ են առ առաւելն 75 մետր հաստութեան: Ամբողջ փխրաքարի քանակութիւնը ընդունւում է հաւասար 165 միլիոն խորանարդ մետրի:

Յիշեալ ութ տերրասները կրում են մեծ-մեծ անուններ՝—Իւպիտերի տերրասը, Ալեոպատրալինը, Մինեւրալինը և այլն:

Աղբիւրների աւազաններում հանգստացող ջուրը իւր գոյնով վիշցնում է թափանցիկ երկնաւիշ կապուտը:

Աւազանի տակից բղխող տաք ջուրը ցրւում է դէպի աւազանի ծալքերը, ուր փխրաքարի ստեղծագործութիւնը աւելի է զարդացած: Աւազանի կողքերից ցած թափւող ջուրը կազմում է խողովակաձև ստալակտիտներ:

Այս հրաշալիքների ստեղծողները բուսական մանր օրգանիսմներ են —ջրի մամուռ (les algues), որ պատկանում է բակտերիաների և միկրոբների դասակարգերին: Կենդանի ժելատինի կամ պրոտոպլասմի մի պարզ կոտ, որ դառնում է իւր շուրջը կրալին մի խեցի, որի հիւթը նա վերցնում է իրան պատող ջրից: Այս մամուռը նեարդի կամ թիթեղի ձևեր է ընդունում:

Խաղաղ ջրում ալդ մամուռը լողում է ջրի երեսին և երբ կիսով ծանրանում է՝ դէպի լատակն է գնում: Աւազանի եղերքները և ստալակտիտները նմանապէս ծածկւած են այս մամուռով: Զարմանալին ալն է, որ ալդ մամուռները նաև տեսակ-տեսակ գոյների են՝ նախ՛ ջրի տաքութեան: Ստորիկ տաք և վաղող ջրում նոքա սպիտակ գոյն ունին. հակառակ դէպքերում նոքա անցնում են դեղինից կարմրի՝ և կարմրից մթնագոյնին և այս ամենի կիսագոյներն:

Բացի բղխող կենդանի աղբիւրներից կան նաև մեռածները, ալսինքն ալնպիսիները, որոնք պաղարեւ են գործեւելոց:

Փոքրիկ լճակներից նշանաւորն է գեղեցիկ «Արապի լիճը», որի մօտ գտնւում են «Ապակու սարերը», որոնք ալժմ կոչւում են Osidiar Cliff: Սա մի բլուր է մթնագոյն ապակու ժալուից բաղկացած:

Ապակու այս սարերը եղակի են ամբողջ աշխարհքում իրանց տարածութեամբ:

Ապակու այս սարի ետևում գտնւում է „Beaver Lake“ լիճը, ուր հաստատուել են բազմաթիւ կուզբեր (castor, бобръ):

Գաղչերները բաժանւած են չորս գլխաւոր աւազանի:

Այս գաղչերները կազմում են մեծ ճահճալին լճակներ և գտնւում են ձորերի հարթ տափարակի վրայ: Այս գաղչերները —տաք ջուրը դէպի վեր են բարձրացնում ընդհատելով և լիշեցնելով հրաբուխներ: Սոցա կարելի է ջրի հրաբուխներ համարել:

Ամեն մի գաղեր միանգամայն անկախ է գտնուում միւսներէր: Կան նաև շոգիի ցարտումներ առանց ջրի և տնոդական: Կան նաև ցիխի աղբիւրներ:

Նւ որովհետև ալս գաղերները ընդհատուելով են բղիտում,—ուստի շատ հեշտութեամբ կարելի է մէկի կողքով անցնել առանց նրան նկատելու:

Բալց ամենից հրաշալին է «ձենադակեալ աւաղանը», որը ունի $\frac{3}{4}$ մետր տրամագիծ, որի մէջ կան բազմաթիւ անփաղ—սպիտակ տնոդ-տնոդ բաց-կտրմրագոյն, կամ սևագոյն բծերով մանր աւաղաններ:

Գաղերներէ երկրորդ կարգը կազմում է Gibbon Meadows'ը—ճահ-ճալին, խոտաւէտ լճերը: Այստեղ «հրարուղիները» ջուր չեն արտալիծում, ալլ ցիխ, ոչ ցարտումներ կան և ոչ էլ բղիտում: Կրատերի բերանից ան-ընդհատ դուրս է գալիս մի թանձր խմոր, կառլին, որը մակերեսովի վրա կոկոնի, կոճակի ձևեր ստանալով՝ իսկոյն տրաքւում և ցալ-տում է: Այս ցիխը, զանազան գոյնի է՝ կամ սպիտակ, կամ կարմիր, կամ սևաւուն և սոցա կիսագոյնները: Ամեն ոք թղթի վրալ ներդաշնակութիւններ է կազմում ալս ցիխերից և հէնց ալս է պատճառը, որ ալս աղբիւրները կոչւում են «Artists—Paint—Pot»¹⁾

Անշուշտ ալս ցիխերը կազմում են սարերի միջին տաք ջրերի աղ-դեցութեան ներքոյ:

«Firehole» գետի եզրին գտնուում է աշխարհիս ամենամեծ գաղերը—«L'Excelsior'ը»: Սա նման է մի կատարեալ բլրի՝ ունենալով 20 մետր բարձրութիւն: Կրատերի բերանը է 64 մետր զառիվեր արտալծով, ան-հարթ եզրներով: Ալս կաթսալի մէջ դժբախտաբար ընկնողը կ'եփւէր մի ակնթարթում: Նրեք մետր խորութեան մէջ կապուտ ջուրը եփ է գալիս ծխւելով: Ալս գաղերը երկու տարի է, որ չի բանում, բալց առաջներում ալս հսկան անկանոն ընդմիջումներով ջուրը խփում էր 40 մետր բարձ-րութեամբ: Սորա կողքին գտնուում է ամենամեծ տաք աղբիւրը, որի կա-պուտ ջրերին վերույնեալ մամուռները զանազան գոյներ են տալիս և ապրում մինչ 80° տաք ջրի մէջ:

Գործող գաղերներից ամենամեծերն են՝ «Հոկան», որը գործում է ամեն 6 օրը մի անգամ և խփում 50 մետր, և «Հին-Հաւատարիմը», ամեն մի 65 րոպէս 50 մետր բարձրութեան հասցնողը: Սրա տնոդութիւնը միշտ 4 րոպէ է լինում:

Այստեղ 8 քառակուսի կիլոմետրի վրալ փռւած են հարիւրաւոր պարզ

¹⁾ Զմրուխտ

²⁾ Նկարչի վրձն:

և ցելսի տաք աղբիւրներ. խաղաղ գետերի տաքութիւնը 65° է, ալս տաքութեան մէջ ասլրում և գործում է մամուռը:

Առ հառարակ ալս տաք ջրերի տաքութիւնը տարբերում է 15° — 94° Յելսիի ջերմաչափով: Բռնականութիւնը ճոխ է 60° ում և գոլութիւն ունի մինչև 85° :

«Հին-Հաւատարիմ» կրատերի կազմութեան համար մասնագէտների հաշուով անհրաժեշտ է եղել անընդհատ մի գործունէութիւն 25,000 տարիների:

Նլլտուստոնի հովտում կալ մի հիանալի լիճ 363 քառակուսի կելոմետր մեծութեամբ, ծովի մակերևութից 2,359 մետր բարձրութեան վրայ:

Ձ.

(ԿԸ շարունակելի)

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Արևեստական աղամանդ: Pecce'ի գիտը: Բոլսերն էլ կարող են ջերմել: Դիֆտերիաի բժշկութեան նոր միջոցը: Ջերմագիր և օդագիր օդապարիկներ: Ջիւնի խնամքով պահպանելը Սեմիրէշլինսկի շրջանում: Պողաւոր կենդանիներին պոզերից զրկելը: Դոնաւոր լուսանկարչութիւն: Էլէքտրական փոստ: Էլէքտրական ձեռնափայտ: Աշխարհի շուրջը 64 օրում:

Վաղուց չափնի է քիմիկոսներին, որ աղամանդը բիւրեղացած ածուխ է. բայց թէ ինչ պալմաններում է ածուխը ընդունակ բիւրեղանալ և թանգազին աղամանդ դառնալ:—Քիմիկոսները երկու միջոցի են դիմում առ հասարակ, երբ մի որ և իցէ մարմնից ուզում են բիւրեղներ ստանալ. կամ հալում են ալդ մարմինը և աստիճանաբար ցրտացնում (ալդպէս օրիւրինակ կարելի է ստանալ ծծումբի բիւրեղներ) և կամ լուծում են ալդ մարմինը մի որ և է հեղուկի մէջ և ալդ լուծածքից ստանում բիւրեղներ (օրինակ պաղլեղի շատ լաւ բիւրեղներ ստացւում են ջրի լուծածքից): Ածուխի վրայ առաջին միջոցը մինչև ալմամ անկարելի է գործադրել, որովհետև գիտնականներին մատչելի ջերմութեան աստիճանը բաւական չէ ածուխը հալելու համար: Ինչ վերաբերում է երկրորդ միջոցին—ալդ, ածուխը լուծւում է, օրինակ, հալած երկաթի մէջ, բայց ալդ լուծածքից սովորական պալմաններում երբէք չէ բիւրեղոնում իբրև աղամանդ, ալ գրաֆիտաձև անկատար բիւրեղների կերպարանք է ստանում, ինչպէս օրինակ դորշ չուգունի մէջ: Ալդ պատճառով սաստիկ հետաքրքրեց մասնագէտներին 1891 թվականին Ամերիկայում տեղի ունեցած մի գիւտ. այնտեղ գտել էին երկաթի կտորներ, որոնց մէջ աղամանդի բիւրեղներ կալին... Ուրեմն, աղամանդ պատրաստելու բանալիքը գտնւած կարելի էր համարել, մնում էր միայն ուսումնասիրել, թէ արդեօք ինչ պալմաններում են առաջացել ալդ երկաթի կտորները... Բայց հետազոտութիւնները ցոյց տւին, որ ալդ երկաթի կտորները երկրալին ծագումից չեն,—մէտէօրական են, ալմանքն երկնքից են վալը ընկել:

Ալդ հետաքրքրական գիւտից ուղարկել էին նաև ֆրանսիացի քիմիկոս Մուսսանին, որ նույնպէս ստուգեց, որ ալդ երկաթի կտորները մէջ աղամանդի հատիկներ կան: Ալդ դէպքը Մուսսանի մէջ առաջացնում է

հետեւեալ հարցը, թէ արդեօք ինչո՞ւ համար չուզունի մէջ ածուիսը գրաֆի-
տի կերպարանք է ստանում, իսկ այս մէտէօրական երկաթի մէջ իբրեւ
աղամանդ է բիրաղացել: Նա ենթադրեց թէ երևի չուզունի մէջ էլ
ածուիսը կարող է բիրեղանալ, եթէ հալած չուզունի մէջ ածուիս լուծել
և այդ լուծածքը սաստիկ ճնշման ենթարկել: Այս իսկապէս արդարացաւ
նրա ենթադրութիւնը: Փորձը հետեւեալ կերպով է անում նա:

Էլէքտրական հնոցի մէջ հալեցնում է մօտ $1/2$ գրւան. (150—200 գրամմ)
չուզուն (այդ գործողութիւնը կատարում է մի քանի բողբոջում): Ապա
այդ հալած չուզունի մէջ կոխում է ամենամաքուր ածուխի մի փոքրիկ
գլանակ (ածուիսը մաքուր չաքարից է պատրաստում), որ լուծում է հա-
լած չուզունի մէջ: Զետե՞ հալոցը հանում է հնոցից և կոխում մի աման
ջրի մէջ, սառեցնելով երկաթի արտաքին շերտը, դոպցնում է մի կեղև,
որի միջի չուզունը դեռ հալած դրութեան մէջ է: Այդ դեռ ևս մուգ կար
մրազօն (տաքութիւնից) զունգը հանում է ջրից և թաղում, որ ինչո՞ն
իրան հովանալ: Զանկարծակի ցրտացնելուց գոյացած արտաքին պինդ
կեղևը սաստիկ հուպ է տալիս իւր միջի դեռ ևս չառած հեղուկը և այդ-
պիսով ուղեցած ճնշումը առաջացնում: Այսպիսով Մուսսօնը արհեստա-
կան կերպով աղամանդ պատրաստեց և ապացուցեց որ իւր ենթադրու-
թիւնը ուղիղ է:

Ինչ ասել կուզի, որ Մուսսօնի այդ գիտը առ ալժմ դեռ նշանա-
կութիւն չունի վաճառականութեան և արդիւնադրութեան համար, քա-
նի որ իւր դատձ ձևով աղամանդի պատրաստելը շատ թանգ է նստում,—
սակալն այդ գիտը կարևորութիւն ունի գիտութեան համար: Խնդիրը տե-
սականի մէջ է և ալժմ միանգամա՞ն լուծած կարելի է համարել ա՞ն
հարցը թէ բնութեան մէջ ի՞նչ ձևով է գոյացել աղամանդը:

*
* *

Գրեթէ միաժամանակ այս գիւտի հետ երկու ուրիշ գիտնականներ՝
Հուտտուն՝ը և Ջեմս-Հոլ՝ը՝ ցաջողեցին այհեստական կերպով կաւիճից մա-
մա ր պատրաստել: Փորձը ստուգեց և ուրիշները ձեռքով, սակալն եղած
ձևերով մարմարի պատրաստութիւնը առ ալժմ նույնպէս չափազանց թանգ
է նստում:

*
* *

Վաղուց չափոնի է, որ բուսական և կենդանական թագաւորութեանց
մէջ խիստ սահման չկալ, որ այդ երկու թագաւորութիւնները—բուսականը
և կենդանականը—չեն բաժանւած իրարից անդունդով: Փիզիօլոգիական
օրէնքները նույնն են թէ կենդանիները և թէ բուսերը համար, և ալ՞ն:
Օրէցօր այդ ճշմարտութիւնը աւելի և աւելի է հաստատուում և պարզա-

բանում նոր և նոր ֆակտերով: Յալանի է, որ տենդը (malaria) ամենասովորական հիւանդութիւններից մէկն է, որ առաջանում է միկրոբներից: Արդ Վլիննայի մի գիտնական—Մակա Հէրց—փորձով ապացուցում է, որ ոչ միայն կենդանիներն են կարող վարակել չաղ հիւանդութիւնով, այլ և բոյսերը—նոյն իսկ ամենաստոր բոյսերը: Հէրցը իւր փորձերը արել է սովորական խմորման տունիկի վրայ ¹⁾: Նա առաջուց որոշում է խմորող (бродящая) հեղուկի մի որոշ ժամանակամիջոցում արտադրած ածխաթթւի չափը և ապա աւելացնում հեղուկի վրայ մի քիչ վարակած հեղուկ (ալ սինքն ալնպիսի հեղուկ, որ տենդի միկրոբներ է պարունակում): Շուտով հետեւեալ երևութներն են տեղի ունենում. հեղուկի ջերմութեան աստիճանը բարձրանում է, արտադրող ածխաթթւի քանակութիւնը—աւելանում: Ակնհերե է որ հեղուկի միջի սուռնկերը վարակել են տենդով, որովհետեւ նոյն նշաններով է արտապատում տենդը և կենդանիների մէջ: Այսպիսով բոյսերի տենդով վարակման ֆակտը հաստատելուց չեսու, Հէրցը, տենդի դէմ գործ դրող վանազան դեղերով, փորձել է բժշկել տենդով վարակած բոյսը (խմորման տունկը): Փորձը ցույց տւեց որ ամենալորեղ ներգործող դեղը—մէնթոլն է, որի նոյն իսկ ամենաանշան քանակութիւնը բաւական է լինում բոյսի տենդը կտրելու համար, իսկ անտիպիրինը, օրինակ, բոլորովին չէ ազդում: Այսպիսի փորձերը Հէրցը արել է և ուրիշ բոյսերի վրայ և միշտ նոյն հետեւանքն է առաջացել: Նման փորձեր արել է և ֆրանսիացի գիտնական Շարրէնը ուրիշ բոյսերի և ուրիշ հիւանդութիւնների վրայ և նոյն հետեւանքներ է ստացել որ ակնհերե կերպով ապացուցանում են որ ոչ միայն ֆիզիոլոգիական, այլ նոյն իսկ պատոլոգիական երևութները ահագին նմանութիւն ունին կենդանիների և բոյսերի մէջ:

*
* *

Journal de la Santé-ի տնելով, Լիլ քաղաքի Կլինիկայի բժիշկ Դիւմոնը հաստատում է դեռ 1891 թականին եղած բժիշկ Ֆլազոի գիւտի ճշդութիւնը: Հարցը զիֆտերիտ կոչւած սարսափելի հիւանդութեան բժշկելու մէջն է: Ինչպէս լատնի է, զիֆտերիտի դէմ բժիշկների գործածած սովորական միջոցները մինչև այժմ չստ էլ չաջող չեն եղել: Ֆլազոն 1891 թականին բաղմաթիւ փորձերից չեսու լատնեց որ պետրոլը (керосинъ) շատ լաւ օգնում է զիֆտերիտի դէմ. նա փորձեր էր արել ամենապոստհատ հիւանդների վրայ և մեծ չաջողութեամբ: Այժմ Դիւմոնը դալիս է հաստատելու Ֆլազո-ի ասածը: Դիւմոնը հետեւեալ կերպով է գործադրում նոր գիւտը որ մենք աւելորդ չենք համարում ալստեղ առաջ բերել: Նա զուտ պէտրոլ չէ գործադրում, այլ հետեւեալ խառնուրդը. Պէտրոլ—20 գրամ,

¹⁾ Бродильный грибокъ.

էթէր—4 գրամմ, հողոֆորմ— $1/2$ գրամմ և անանուխի էսէնց—20 կաթիլ։ Այդ խառնուրդի մէջ թաթախում է մի փաշտի ծալքի կապած բամբակի կտոր և ժամը մէկ անգամ քսում դիֆտերիտով վարակած տեղին։ Ծանր դէպքերում կարելի է աւելի լաճախ էլ կրկնել։

*
* *

Ֆիզիկայի աշխարհում տեղի է ունեցել մի նոր գիւտ շնորհիւ պ. Մ. Ի. Pécce'ի։ Մենք առաջ բերինք գործադրութիւնը, որպէս զի լաւ հասկացի թէ բանը ինչու՞ն է։

Պատ-Հովմ լճի եզերքի երկայնութեամբ ցիցերի վրայ ձգւած է երկու կիլոմետրանոց մի թել։ Զուգահեռաբար այդ գերանների, 4 կիլոմետր անջրպետի վրայ առաջին թելից, ձգւած է նոյն ձևով մի երկրորդ թել, որը ոչ մի բանով հաղորդութիւն չունի առաջին թելի հետ, եթէ չհաշւենք հողը և օդը։ Արդ, եթէ այդ թելերից մինի միջով բաց թողնել էլեքրական հոսանք և եթէ միւս թելի ծալքին գրւի մի տեղեֆոն, կարելի կըլինի խօսել առաջին թելի ծալքին գտնուղի հետ։ Այսպիսով հնարութիւն կալ խօսել մի մղոնի վրայ առանց հաղորդութեան։

*
* *

Միայն մեր օրերումն է որ սկսել են ուշադրութիւն դարձնել մետեօրոլոգիայի վրայ, աշխատելով զուտ գիտնական հիմունքների վրայ դնել նրան, որովհետեւ այդ գիտութիւնից մեծամեծ գործնական օգուտներ են ստանում, նա մանաւանդ երկրագործութեան համար։ Օդերևութաբանական ճիշդ տեղութիւններ ունենալու համար, այս րոպէիս շատերն են զբաղւած աւտոմատ օդապարիկների խնդրով, այսինքն ալիպիսի օդապարիկներին, որ իրանք իրանք, առանց ղեկավարի բարձրանում են դէպի երկինքը և ապա վաղ իջնելով, օդի բարձր խաւերի թանձրութեան (ճնշման) և քերմութեան մասին—տեղեկութիւններ են բերում։ Գիււ շատ վաղուց լսւոյն էր որ հեռանալով երկրի մակերևութից դէպի վեր, մարդ օդի ճութութիւնից արիւնաքամ է լինում և կարող է, ուրեմն, մեռնել։ Այդ պատճառով ալժմ հնարել են ալիպիսի գործիքների, որ իրանք իրանք (աւտոմատաբար) արձանագրում են մարդու ուղած անդեկութիւնները, օրինակ՝ կան արձանագրող քերմաչափներ, օդաչափներ ¹⁾։ Այս տեսակ գործիքներով օժտւած փոքրիկ օդապարիկներ է չինել (4-ից մինչև 15 խորան. մէտր ծաւալով և մի շարք փորձեր է կատարել Գոտտաւ շէրմիտը։ Նա բաց էր թողել այդ օդապարիկները Պարիզում, որոնք բարձրանալուց և հարկաւոր տեղեկութիւնները արձագրելուց լեռու, ցած էին իջել Պարիզի շրջակայ։

¹⁾ Thermographe, barographe — թերմա—քերմագիր և օդապիր։

քում: Վերսիլիշեալ արձանագրութիւնների չնորհիւ նա խմայաւ, որ ալդ օդապարիկներէից մէկը բարձրացել էր հողի մակերևութից 8,700 մէտր բարձր, միւսը—մինչև 15,500 մէտր, ուր արդէն ջերմաչափը ցուց է տուել 51° զրօյց ցած: Ներկայումս ուրիշ գիտնականներ աշխատում են աւելի մեծ ալդ տեսակի օդապարիկներ շինել, որ սրանք կարողանան աւելի բարձրանալ:—մինչև 20,000 մէտր: Նա ալս ամենը անուում է օդի զանազան խաւերի ջերմութիւնը, թանձրութիւնը և ալլ հանգամանքները ուսումնասիրելու համար, դրանցից կախումն ունի եղանակի ալս կամ աչն ղրութիւնը և ուրեմն ալդ տեղեկութիւններից կարելի է օգտուել երկրագործութեան մէջ:

*
* *

Սիբիրի Սեմիրեչենսկի չրջանում ձմեռը խիստ է լինում, իսկ ամառը տաք ու չոր: Թէպէտ ձմեռը ձիւն չաւտ է դալիս—ամառը գետերը չորացած են լինում և դաշտերը լըմնալին անջուր, եթէ տեղացիները չօգտւէին ձմեռաւ ձիւնից ամառը ըստ հարկին ջուր դարձնելու համար: Ահա թէ բանը ինչուսն է: տեղացիները հաւաքում են ձիւնը մի խոր ու երկար ձորի մէջ ու աղբով լաւ ծածկում, որ նա չուտ չհալի: Ամեն նոր ձիւն գալով, տեղացիները տանում ածում են հնի վրա և կազմում մի տեսակ սառցատեղի: Զմեռաւ վերջում խնամք են տանում, որ ձիւնի ալդ պաշարը չուտ չհալի: Ալդ նպատակով ձիւնի երեսը ծածկում են ճիւղերով, դարմանով, աղբով կամ նոցն իսկ հող ու աւազով 60 սանտիմետր հաստութեամբ: Բալց որպէս զի ամառը չոգերի ժամանակ հալած ջուրը չգնալ կորչի, ալդ հաւաքած ձիւնի առաջը փորում են մի մեծ փոս ուր հաւաքւում է հալող ջուրը և արդէն պատրաստած առուներով բաժանւում ըստ հարկին:

*
* *

Ներկայումս, գլխաւորապէս Ամերիկայում, ընդհանուր ուշադրութիւն է գրաւում մի նորութիւն—անպող եղներ ու կովեր ունենալը: Գրանով աչքի առաջ ունեն մի կողմից—պակասացնել պողերից առաջանող դրժբաղդ դէպքերը, միւս կողմից,—հնարաւորութիւն տալ անասուններին, պողերի վրա ի զուր տեղից միսւով հիւթը գործադրել պէտքական անդամները դարգացնելու և կաթը աւելացնելու վրա: Ալդ նպատակին հասնելու համար, պոտասոմ (ПОТАШЬ) դաղում են ջահիլ հորթերի գլխի աչն պտուկները, որոնցից ապագայում պողեր պէտք է բոնեն: Սովորաբար մի անգամ դաղելը հերիք է լինում:

*
* *

Նրկու տարի առաջ պրոֆ. Ալպմանի հնարած «գոչնաւոր լուռանկարչութիւնը» բոլորի ուշադրութիւնը գրաւեց, բալց չուտով էլի մոռա-

ցութեան տրեւց, որովհետեւ խալմանի գոտած միջոցով գոյնաւոր լուսանկարներ ստանալու համար մի քանի ժամով, մինչեւ անդամ օրով էր հարկաւոր նկարելի առարկան լուսանկարչական գործիքի առաջը պահել: Պարզ բան է, որ աչքովիս մի գիւտ չէր կարող գործնական նշանակութիւն ունենալ: Այժմ Ֆրանսիացի լուսանկարիչ խումբեր եղբայրներ շնորհիւ, գունաւոր լուսանկարչութիւնը արդէն աչքքան կատարելագործել է, որ եթէ ոչ այսօր,—վաղը նա ընդունակ է դառնալու մրցել հասարակ, մինչև օրս գործածւող լուսանկարչութեան հետ: Խումբեր եղբայրները լուսանկարչի առարկաները գործիքի առաջ պահում են աչքով ոչ թէ ժամերով (Խալմանի նման) այլ միաջն մի քանի րոպէ (2-ից մինչև 30): Ի հարկէ նոքա էլ դեռ աչքքան շուտ չեն կարողանում լուսանկարել, որ կարելի լինէր կենդանի առարկաների պատկերներն էլ հանել, օրինակ մարդու պատկերը, որովհետեւ մարդ չէ կարող մի քառորդ ժամ, կամ մինչև անգամ 2—3 րոպէ արձանացած մնալ, առանց շարժւելու: Շատ լաւ լաջողութեամբ է նրանց ծաղիկների, խոտի, ծառերի, շինութիւնների, կապուտակ երկնքի-նկարները ստանալ: Շատ լաջող է դուրս գալիս և սպիտակ գոյնը, որ բնականի սպաւորութիւն է թողնում:

*
* *

Ամերիկայում աչքով արդէն իրագործւել է էլէքտրական փոստը և բանում է Նիւ-Յօրկից մինչև Բրուկլին: Նամակները և թեթեւ ապրանքի ծրարները դարսում են փոքրիկ վագոններում, որոնցից ամեն մէկը էլէքտրական շարժիչ մեքենայ ունի: Այդ վագոնները անց ու դարձ են անում Նիւ-Յօրկից Բուրկլին ջրանցքի խողովակների նման, բաւականին լաւ, (1 արշին տրամագիծ) խողովակներով: Ընդ ամենը 5 րոպ. է հարկաւորւում մի քաղաքից միւս քաղաքը նամակ հասցնելու համար:.

*
* *

Նորերս էլէքտրականութիւնը մի գործադրութիւն էլ է դտել: Մի ոմն Խորաստ հնարել է էլէքտրական... ձեռնափաշտ: Ձեռնափաշտը արտաքուստ ոչնչով չէ զանազանւում հասարակ ձեռնափաշտից, բայց հենց որ գլուխը կռացնում էք, իսկոյն լոյս է տալիս: Ահա թէ ինչուոմն է բանը: Ձեռնափաշտի կոթում մի փոքրիկ էլէքտրական լապտեր կալ, որի երեսը ծածկւած թրաշած հաստ ապակով: Փաշտի ներքին մասն էլ նոյնպէս դատարկ է: Այդ դատարկութեան մէջ վերելից մի ցինկեայ բարակ զլանակ է կախւած, իսկ նորա տակում գտնւում է էլէքտրականութիւն զարթեցնող հեղուկ: Նրբ որ ուղիղ էք բռնում փաշտը, հեղուկի մակերևութիւնը բաւականին հեռու է ցինկի զլանիկից, իսկ երբ որ փաշտի գլուխը կռացնում էք, հեղուկ գալիս է ծածկում ցինկը, առաջանում է էլէքտրական հոսանք և

լազուերը լոյս է առնում: Հէնց որ նորից դրսուում էք փաշար, ցինկը դուրս է մնում հեղուկից, հոսանքը բնագոտում է և լոյսը մարում: Երբ որ հեղուկ հնանում է, կարելի է փաշտի ծալը բռնալ, հին հեղուկը թափել, և նորը ածել:

*
* *

Աշխարհքի շուրջը կարելի է ներկայումս պատել 64 օրում—3,125 ֆրակնով:

Ահա և ուզին. Պէտք է մեկնել անգլիական Սոֆհամտոնից (Southampton) Նիւ-Եօրկ: Ալստեղից երկաթուղով Մոնրէալ: Ալստեղից չոգենաւով Վանկուվեր: Ալստեղից տասը և կէս օրում Ամերիկայից Խոկոնաման: Ալստեղից էլի նաւով Հոնկոնգ, որտեղից նույն միջոցով մինչև Բրինտեղի: Ալստեղից արդէն երկաթուղին և վերջապէս Կալէ'ից Դուվր: Ընդ ամենը 21,273 ծովալին մղոն. ալսինքն քիչ պակաս քան երկրագնդի շուրջը հասարակածի վրայով:

Մ. Տ.-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

VIII

Օրիորդ Նաղեժդա Պապալեանը, որը նորերումս երեսց Թիֆլիսի երա-
ժշտական հորիզոնի վրա ու տեց արքունական թատրոնում մի քանի կոն-
ցերտ, — պատկանում է աչքի ընկնող երգչուհիների թվին թէ իւր ձայնի գեղե-
ցիկ տեմբրով և թէ իւր երաժշտական բնատրույթեամբ: Հասարակութիւնը
սիրով էր չաճախում նրա կոնցերտները (բացի առաջինից, ուր քիչ ժո-
ղովուրդ կար) և ստանում էր երաժշտական իսկական վալեւջութիւն: Իբրև
հալուհու՝ նրան պատկանում է, անկասկած, ամենաառաջին տեղը երգչու-
հիների շարքում:

Օրիորդ Պապալեանը ծնւել է Աստրախանում ուր և փնացել է մինչև
գիմնազիալի ուսման ընթացքի աւարտելը: Ութ տարեկանից սկսած ար-
դէն նա սովորում էր դաշնամուր նւագել, — մի հանգամանք, որը ոչ միայն
նպաստել է պահպանելու օրիորդի երաժշտական հակումները, այլ նաեւ
իսկ զրանց զարգացնելուն: Այնուհետեւ, 17—18 տարեկան հասակում
նա ինքը գիւտ է անում իւր ունեցած ձայնի զոլութեան մասին և
ճանապարհ ընկնում դէպի Պետերբուրգ — ատկին Ռասար'ի մօտ սովորե-
լու համար: Օրիորդի մօտիկ ազգականները, որոնց թում և իւր մալը
ունին համեմատաբար դուրեկան ձայներ, և, թէև սրանք ոչ մի տեղ չեն
կատարելագործւել — ինչ խօսք որ չաճախ երգել են նրա մօտ, որով
աւելի ևս ամրապնդւել են սրա հակումները:

Աւալիսով՝ մի կողմից նրա դաշնամուր նւագել գիտենալը, միւս կող-
մից նրան շրջապատող միջավայրը, — զարգացրին մանկութունից օրիորդ
Պապալեանի մէջ սէր դէպի երաժշտութիւնը, և ահա թէ ինչու 18 տարե-
կան Պետերբուրգ դնալիս նրա, ալուպէս առած, երաժշտական ոտնատուրը
արդէն պատրաստ էր չափնի չափով: Եւ հէնց այս պատճառով նա
կարող էր այնուհետեւ ինքն իրան նւիրել իւր ձայնի մշակութեան գործին,

ալսինքն լոկ տեխնիկականին, առանց վախ կրելու իւր սենեցած երաժշտականութիւնը թուլացնելու:

Ահա ալստեղ մենք դէմ առ դէմ ենք լինում մի ահագին անջրպետի որ կալ օրիորդ Պապապեանի մէջ մի կողմից և միւս կողմից երգիչների ու երգչուհիների մեծամասնութեան մէջ: Գծադրաբար ալս վերջիններս առաջ քան իրանց անձի մէջ նշմարում է ձայնի գոյութիւնը—ամենեւին պատրաստած չեն լինում երաժշտական ասպարէզի համար: Նրա կողմնակի մարդիկ աղպլիսիների մէջ ձայներ են նշմարում, սրանք մի ինչ որ 2—3 տարում մշակում են ալդ ձայները (СТАВИТЬ ГОЛОСЬ), ալսինքն վերաբերում դէպի երգեցողութիւնը լոկ մեխանիկականի կողմից և ապա նոյն իսկ ըսակ էլ անում կոնցերտի կամ բեմի վրա երգելու: Կարելի է արդեօք մի կարգին բան սպասել աղպլիսի մի վերաբերմունքից դէպի երգեցողութիւնը և ընդհանրապէս դէպի երաժշտութիւնը:

Ճաշակով, հասկացողութեամբ և կարգին երգելու համար բաւական չէ, ինչպէս որ կարծում են ոմանք, լոկ ձայն ունենալ, ալ դրա համար պէտք են գլխաւորապէս՝ երաժշտական բնութեան և երաժշտական կրթութիւն: Եւ չեմ պահանջում, որ բոլոր երգիչները ու երգչուհիները—նման հռչակաւոր երգչուհի Մարչելլա Ջեմբրիսին և Ալիս Բառբիլին, լինէին միաժամանակ և առաջնակարգ դաշնահարներ և ջութակահարներ, —բաւ լիցի. դրա համար պէտք է տաղանդ ծնւել: Սակալն անհրաժեշտ է, որ նոքա, որոնք իրանց նւիրում են երգեցողութեան գործին,—լինէին զարգացած երաժշտապէս և իմանալին դաշնամուր ածել և եթէ ոչ Հալսնի ու Մոցարտի թեթև սոնատները նւագելու, գոնէ ալնքանը իմանալին, որ իրանք իրանց դաշնակցել կարողանալին:

Օրիորդ Պապապեանը ունի հիմնալի լի բիկական կողորոտում որ սուպրանո, բաւականին մեծ դիապազոնի (չափի), որը միապաղաղ է բոլոր բեգիստրներում, ալն է՝ թէ միջինի, թէ բարձրի և թէ ցածրի մէջ—մի երևութ, որը ներկայումս, համեմատաբար առած, հազապիւտ է: Նրա ձայնը թարմ է, ջահլի և բաւականին կանոնաւոր հաստատած. սա շատ է նշմարում չնչառութեան միջոցին: Օրիորդի մինիստիւր կազմւածքին նախելիս չէր կարելի սպասել նրանից աղպլիսի երկար միապաղաղ շնչառութիւն, և սակալն երգեցողութեան ամբողջ ժամանակը դուք մի հատ անգամ էլ չէք նկատիլ անտեղի դադարում որ և է նոտալի—չունչ քաշելու, օդ ներշնչելու. համար: Նրա երգեցողութիւնը սահուն ու գուրգուրող է. ձայները նրա կրծքից հոսում են հանգիստ, հաստատ. երգած գրեթէ բոլոր կտորները օրիորդը կատարեց նուրբ հասկացողութեամբ, սրտալի և եւանդուն: Բալց ամենից չաջող նա երգեց «Գիւղական պատիկ» մի արիտ: Լա բարձր նոտալի մէջ, որը նրան պատահում է վերջին երկու անգամ,—նա մոցնում է ալնքան երաժշտական եռանդ, ալնքան կիրք, ալնքան վիշտ ու անսահման լուսա-

հատութիւն—որ դրանից աւելի լաւ կատարելը չի պահանջում նոյն իսկ առաջնակարգ երգչուհիներէից: Մարդ ակամաջ նկատում է, որ երգչուհին անտարբեր կերպով չէ նոտա վերցնում, ինչպէս որ այդ չաճախ պատահում է շատ երգչուհիներին, որոնք տէր են լինում լաւ ձայնի առանց բանաստեղծական հոգու ներկայութեան: Իսկ այստեղ ընդհակառակը երևում է որ նոտաները առաջ են գալիս իսկ իբրեւ միջոց հոգեկան դրութիւնը արտադրելու: այստեղ դուք պարզ կերպով տեսնում էք. ապերջանիկ աղջկան (Սանտուցցի), որը ձեզ պատմում է իւր խաբւած սիրու մեծ վիշտը...

Ապա անգանդիմանելի կերպով չաջողեց և Ռուբինշտայնի «Պիշեր» բանաստեղծութիւնը օրիորդը վերցնում է հանդարտ աւելի օ, նոյն իսկ աւելի հանդարտ, քան զրեւ և կատարում է ինքը Ռուբինշտայնը. բաց չեւոյ, բոմանսի երկրորդ մասում, արդէն չափաւորած, նա արագացնում է տեմպոն և չափաւորութեամբ վերցնում բարձր sol նոտան, որի վրա ուրիշ երգիչները, թէև լաւ ձայներ ունեցող, բաց զուրկ երաժշտական հոտասութիւնից, կանգ են առնում առհասարակ շատ երկար, որով խախտում են բոմանսի ներդաշնակութիւնը: Իսկ օրիորդ Պապալեանը երբէք չի կորցնում հաւասարակշռութիւնը և չի տալիս առաւելութիւն մի որ և է նոտայի ի վնաս երաժշտականութեան:

«Տրախիտա» օպերայից արիան նա կատարեց ոչ բաւականաչափ չաջող: Առաջին—նկատելի էր, որ չնայած իւր մշակած ձայնին ու շնչառութեան—նա չէր կարողանում երգել երկար կտորներ առանց լոգնելու,—և սա նկատելի էր երգի վերջում, երկրորդ որ չնայելով իւր ձայնի կոյրատուր լինելուն, նա շատ քիչ է զարգացրել դալալիկները և ստակատօները, և հէնց այս պատճառով պէսպէս ֆիորիտուրները (զարգեր երգի մէջ), որոնցով լիքն է վիշեալ արիան, դժւարացնում և անհնարին են դարձնում օրիորդի համար աղալիսի եղանակների կատարելը դոնէ առժամանակ մինչև իւր ձայնի կատարեալ մշակելումը: Այս կողմից պէտք է օրիորդ Պապալեանին չհամարել կատարեալ երգչուհի:

Ինչ վերաբերում է „Adieux de l'hôtesse arabe“ Բիդէի բոմանսին, ցաւելով պիտի ասեմ, որ օրիորդ Պապալեանը նրան վատ երգեց: Ո՛րքան լաւ արած կը լինէր նա եթէ այդ մէկը իսկի երգած չլինէր: Այստեղ նա ցոյց տւեց, որ ընդունակ է հանդէս գալ հասարակութեան առաջ ու երգել աջալիսի կտորներ, որ շատ թույլ է պատրաստել և թեթև ըմբռնել, մինչդեռ այս երգը իւր մեկամաղձոտ աւաշականութեամբ (Пѣснь оубѣ) ամենալաւն էր ամբողջ պրոդրամում: Ես ակամաջ լիչեցի Ալիս Բաուբիլին, որը այդ երգը երգեց Ռիֆլիսում մօտ 5 տարի առաջ խոր տալաուրութիւն թողնելով ունկնդիրներին վրայ:

Ներկայումս օր. Պապալեանը հրաւիրւած է Խտալիա: Փոքրիկ բե-

մերի վրա նա կարող է միշտ հաւաստի լինել կատարեալ լաջողութեանը: Նա ասում եմ («իւրօրիկ բեմերի»), որովհետեւ մեծ բեմերի համար օրիորդի ձախը թող կերեալ և ոչ էլ հնչուն:

Պր. Բ. Ամիրջանեանը, որը մասնակցում էր վերոյիշեալ կոնցերտներին, լաւ ծանօթ է թիֆլիսի հասարակութեանը: Սօս երկու տարի մնալուց փետոյ խոալիպում, նա վերադարձաւ մեզ մօտ բաւականին մշակած ձախով: Սակաջն նա պահպանել է երգելու իւր նախկին ձեւը, աչսինքս՝ նա շարունակում է երգել առաջալէս պէս առանց, հաղորդակից լինելու իւր երգած երգին: Նւ ալս պատճառով նրա երգելը չի թողնում ոչ մի տպաւորութիւն: Նա լանձն չեմ առնում վճռել թէ՛ ալս բանում մեղը ումն է՝ լեղւինը (ուռականին և խտականին) թէ՛ մի ալս բանի. բալց թէ հալ երէն երգերը նրան աւելի էին լաջողում:

Պր. Ամիրջանեանի շնչառութիւնը շատ կարճ է և կարւող: Յաճախ նրա ձախը կտրւում է երգի ամենահետաքրքրական տեղում, որով և փչացւում է սպասելի տպաւորութիւնը: Նրա բարիտոն ձախը լաւ տեմբր ունի: Սակաջն թիւ արժէք ունի միայն ձախը առանց երգչի երաժշտականութեան:

Պր. Կեաները բարեխղճաբար և փորձեալ էր նազակցում, թէ՛ և աչքի էր ընկնում նրա առանձին ջանքը օրիորդ Պապալեանին նազակցելիս և անդիութութիւնը պ. Ամիրջանեանի վերաբերմամբ: Սակաջն սրանով պ. Կեաները թերեւ չա՛հ ունեցաւ ցոլց տալու իւր երաժշտականութիւնը!

Յուլիս 25:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ-
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Ռուս-գերմանական մաքսաշին կռիւը: Ռուսիան և Գերմանիան Միջերկ-
րական ծովում: Իրլանդական ինքնավարութեան օրինագիծը համաձայնքների
ու լորդերի ժողովներում:

Մեր անցեալ անգամայ յօդաձուժ հաղորդել էինք որ նոր
տոմարով օգոստոսի 20-ին նշանակւած էին Ֆրանսիացի պարլամէն-
տական ընտրութիւնները, որ, ինչպէս յայտնի է, կրկնուժ են ամեն
չորս տարին մի անգամ, սովորական կարգով: Այս վերջին քսան ու
երեք տարիներում Ֆրանսիայում կատարւած պարլամէնտական բո-
լոր ընտրութիւնները ունէին միմիայն մի հետաքրքրութիւն, որ
պայմանաւորւած էին հանրապետականների ու միապետականների
փոխադարձ մրցումով: Ինչպէս յայտնի է, 1870 թւականի Ֆրանս-
գերմանական պատերազմի ընթացքում, ղեռ ևս 1870 թ. սեպ-
տեմբերի 4-ին Ֆրանսիայում հանրապետութիւնը փոխարինեց Նա-
պոլէոն III-ի կայսերութեան: Դա՛ թւով երրորդ հանրապետու-
թիւնն է որ հաստատուել է Ֆրանսիայում: Առաջին հանրապետութիւնը
հաստատուեց այդ երկրում 1792 թւականի ն. տ. սեպտ. 25-ին,
որը փոփոխակի սահմանադրութիւններով և այլ և այլ անուաներով,
բայց յեղափոխական հոսանքով տեւեց մինչ ղեկտեմբերի վերջը 1799 թ.,
իսկ կոնսուլատի կառավարութեան հետ միասին մինչև Նապոլէոն
առաջնի կայսերութեան հաստատուելը 1804 թ. 18-ն մայիսի: Երկ-
րորդ հանրապետութիւնը հաստատուեց 1848 թ. ն. տ. մայիսի 4-ին,
որ տեւեց սակայն միայն մինչ պետական հարւածը 2-ն ղեկտեմբերի
1851 թ. կամ արդէն իսպառ միապետական բնաւորութեամբ մինչև

1852 թ. ն. տ. 7-ն նույեմբերի, տեղ տալով երկրորդ, այն է նույն ժամանակների կայսերութեան, մինչև որ վերջինս 1870 թ. ն. տ. սեպտեմբերի 4-ին վերացեց և տեղը հաստատեց ներկայ հանրապետութիւնը:

Այսպիսով Ֆրանսիայում, 1789 թվականի մեծ յեղափոխութեան տարւանից սկսած, հանրապետական կառավարութեան ձևը մրցել է միապետականի հետ: Բայց նոյն իսկ միապետութիւնը Ֆրանսիայում այս արդէն աւելի քան հարիւր տարիներում չի ունեցել միատեսակ կերպարանք. հին միահեծան թագաւորութիւնը տեղի տւեց սահմանադրականին, վերջինս հանրապետութեան, սա էլ կայսերութեան՝ սահմանադրական պարագաներով, կայսերութիւնը՝ կրկին սահմանադրական թագաւորութեան միահեծանութեան տեսչկնյիւաներով, ապա ազատամիտ բւժւոյական հիմունքներով. կրկին հանրապետութիւն, ապա պետական հարած ու կայսերութիւն և ապա նորից հանրապետութիւն:

Շատ բնական բան է, որ ամեն մի հին կարգ, տեղ տալով նոր կարգի, որը ձեռք է բերում ոչ խաղաղ այլ յանկարծակի կերպով, այդ նախկին կարգը ունենում է ազդի մէջ իւր կուսակիցները և նորութեան կատաղի թշնամիները: Եւ բնական է նաև այն, որ երբ մի որ և է հարիւր տարում իրար յաջորդում են այլ և այլ կառավարութիւններ շատ արագ կերպով, հաւատը դէպի նոր կարգի ամբողջութիւնը թուլանում է, հետևապէս ամեն մի կառավարչական ձևի կուսակիցները տրամադիր են յուսալու թէ կուեցիվ նորի դէմ՝ նոքա կը յաջողեցնեն իրանց գերադասած կառավարութեան ձևը յաղթող դուրս բերել:

Դորանով պէտք է մեկնել այն յամառ ընդդիմութիւնը, որ ցոյց տւեցին միապետութեան կողմնակիցները ներկայ երրորդ հանրապետութեանը: Այդ ընդդիմութիւնը այնքան յամառ էր և այնքան ուժեղ, որ այս վերջին քսան ու երեք տարիներում բոլոր ընտրութիւնների զլսաւոր հետաքրքրութիւնը Ֆրանսիայում կայանում էր զրեթէ լոկ այն բանի մէջ, թէ որքան թւով կ'ընտրւեն հանրապետականներ, և որքան՝ միապետականներ, սոցա թւում թէ թագաւորականներ և թէ կայսերականներ կամ բոնապարտիստներ: Եւ եթէ երբեք պատահէր, որ միապետականները յաղթէին, ամբողջ

երկիրը տալն ու վրայ կը լինէր, — այդ պատճառով պարզ է թէ ինչ մեծ շահեր կան կապուած հանրապետականների յաղթութեան հետ ամբողջ լուսաւոր մարդկութեան համար, քանի որ Ֆրանսիան նոր դարերի քաղաքակրթութեան ամենակարեւոր ֆակտորներից մէկն է: Իսկ չափից դուրս յաճախ յեղափոխութիւնները ազգի ոյժերը քայքայում են և վերջ ի վերջոյ հասցնում այդ ազգը ընդհանուրի համաձայնութեամբ կառավարելու անկարողութեան: Ինքնապաշտպանութեան հոգսը ոչ միայն արտաքին այլ ներքին բազմաթիւ թշնամիներից՝ ստեղծում է մի դրութիւն, ուր այլ հոգսերը երկրորդական են դառնում և այդպիսով մատնում այդ երկիրը նոյն իսկ յետադիմութեան:

Բարեբաղդաբար Ֆրանսիան կարողացաւ դիմանալ ցայժմ կատարուած բոլոր ներքին հարածներին, շարունակելով մնալ առաջնակարգ ազգ և առաջնորդողներից մէկը ամբողջ մարդկութեան: Այդ պէտք է վերագրել այդ ազգի մեծ կենսական ոյժերի պաշարին առհասարակ, բայց մասնաւորապէս Ֆրանսիացոց անհուն հայրենասիրութեանը: Հայրենասիրութիւնը որ արմատացած է Ֆրանսիացոց մէջ, իւր պահանջներն ունի, որոնց ձեռ հաշիւ տեսնելու պարտաւոր է զգում ամեն մի Ֆրանսիական կուսակցութիւն: Հայրենասիրութիւնն է որ որոշում է այն սահմանները, որոնցից դէնն անդնող կուսակցութիւնը զրկւում է հաստատ հողից ժողովրդի մէջ և կորցնում իւր քաղաքական կարեւորութիւնը ազգի առաջ: Քաղաքական մոլորութիւնների մէջ հայրենասիրութիւնը գլխաւոր ղեկավարն է հանդիսանում: Իսկ հայրենասիրութիւնը, ընդհանսւր առմամբ, Ֆրանսիացոց մեծ առաքինութիւնն է:

Ներկայ հանրապետութիւնը ամենաերկարատե կառավարութիւնն է որ ունեցել է Ֆրանսիան 1789 թւականի մեծ յեղափոխութիւնից սկսած: Եւ այդ կառավարութիւնը շարունակել է առանց յեղափոխութիւնների և համաձայն այն սահմանադրութեան որ ընդունւեց 1875 թւականին, հետևապէս հանրապետութիւնը արդէն հինգ տարի գոյութիւն ունենալուց յետոյ: Բայց միապետական կուսակցութիւնները — միշտ ձգտել են տապալել հանրապետութիւնը, և այդ վտահուլութիւնը բղխում էր նրանից որ երկրի եթէ ոչ մեծամասնութիւնը, գէթ մի մեծ մասը միապետական հակում

ներ է ցոյց տուել: Բայց հանրապետութիւնը այս անգամ արդէն այնքան հաստատ հիմունքների վրայ էր հիմնուած, և այդ հանրապետութիւնը այնքան գործունեաց եղաւ, այնքան նա կարողացաւ իւր այդ գործունէութիւնով յարգանք ներշնչել թէ Վրաստիական ժողովրդին և թէ ամբողջ Եւրոպային, որ դիմացաւ իւր բոլոր թըշնամիներին և ի դերե հանեց նոցա բոլոր յոյսերը:

Եւրջ փորձեր ներկայ հանրապետութիւնը տապալելու համար, 1875 թւականի սահմանադրութիւնից յետոյ, եղան երկու անգամ, մէկը 1871 թւականին, Մակ-Մահոնի նախադահութեան ժամանակ, և միւս անգամ 1889 թւականին, նրբ գեներալ Բուլանժէի շուրջը դաւադրական դաշնակցութիւն կապեցին հանրապետականների մի մասի հետ նաև միապետականները: Բուլանժէան շարժումը դեռ ևս թարմ կը լինի մնացած մեր ընթերցողների յիշողութեան մէջ. բայց մենք ուզում ենք յիշեցնել որ չորս տարի առաջ կատարուած պարլամենտական ընտրութիւնների ժամանակ՝ Բուլանժէականութիւնը կազմում էր հետաքրքրութեան կենտրոնը. այդ 1889 թւականին ազգային ընտրութիւններով պէտք է վճռէր Բուլանժէականութեան ապագան մի կողմից, հանրապետութեան ու դորա հետ նաև Ֆրանսիայի կառավարչական ապագան՝ միւս կողմից: Ընդհանուր ընտրութիւններից, սակայն, հանրապետական կուսակցութիւնները ողջ դուրս եկան, և ընտրեցին 365 հանրապետականներ ու 210 հոգի հանրապետութեան ամեն կարգի հակառակորդներ: Այդպիսով թէ հանրապետականները և թէ սոցա թշնամիները ունեցան զրեթէ նոյն թւով ներկայացուցիչներ պատգամաւորների ժողովում, որքան առաջ: Այդ մասին ընթերցողներին յղում ենք չորս տարի առաջ մեր յօդաճների վրայ, «Մուրճ» 1889 № 9 և մանաւանդ 10:

Հանրապետական կառավարութիւնը այդպիսով ազատուեց մի ծանր փորձանքից: Դորանից յետոյ Բուլանժէական շարժումը սկսեց արագ կերպով նւազել: Բուլանժէի ատողի անկման հետ միասին փոփոխութիւններ տեղի ունեցան միապետականների մէջ առհասարակ: Դորա չէին քաշուել իրանց բաղդը կապել Բուլանժէի պէս մի բաղդախնդրի հետ. երբ վերջինս խաչտառակեց, երբ դատարանը մերկացրեց Բուլանժէական շարժումների բոլոր գաղտնիքները և երբ դորանով ամբողջ ազգը համոզուեց որ Բուլանժէականութիւնը մի

դաւադրութիւն էր և ոչ թէ մի կանոնաւոր քաղաքական կուսակցութիւն, երբ ամենքը համոզեցին որ Բուլանժէականութիւնը մի քաղաքական խաբեբայութիւն էր, — նորա պարտութիւնը ամօթանքով էփռուեց նաև բոլոր միապետականների վերայ: Զուտ Բուլանժեան կուսակցութիւնը սկսեց անհետանալ և նորա վերջին կայծը մարեց ներկայ թւականին մի քանի ամիս առաջ, որի մասին հաղորդեցինք մեր նախընթաց յօդաւածում:

Այս չորս տարիների ընթացքում, այն է 1889 թ. ընտրութիւններից մինչև ներկայ օգոստոսի ընտրութիւնները, կուսակցական կարևոր փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնք պէտք է արտայայտէին այս տարւայ ընտրութիւնների վերայ: Այդ փոփոխութիւնների մասին մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսելու. յիշեցնում ենք, սակայն, զրութիւնը իւր ամբողջութեամբ ըմբռնելու համար, որ Հռովմայ պապը, համոզւելով որմիապետականները այլ ևս անկարող են հանրապետութեանը հարւած տալ, փոխեց իւր ցայտմ բռնած զիրքը դէպի Ֆրանսիական հանրապետութիւնը: Պապը այլ ևս իւր համար վտանգաւոր համարեց իւր քաղաքականութիւնը կապել միապետական կուսակցութիւնների հետ և թշնամական զիրքի մէջ պահել հանրապետութիւնը: Պապը աւելի լաւ համարեց հաշուել հանրապետութեան հետ և հրապարակապէս յորդորներ կարգաց կղերական քաղաքականութեանը հաւատարիմ մնացած միապետականներին, որ սոքա ընդգրկեն հանրապետութիւնը և երկրի օրինաւոր սահմանադրութիւնը ճանաչեն:

Պապի այդ յորդորները, որոնք իրանց վերայ ընդհանուր ուշադրութիւն դարձրին, ազդեցութիւն ունեցան զլիսաւորապէս թաղաւորականների, թէև ոչ բոլոր միապետականների վերայ: Հանրապետական սահմանադրութիւնն ընդունողները այդպիսով կազմեցին մի նոր կուսակցութիւն, այսպէս ասած՝ սահմանադրական պահպանողականների կամ «միացածների» կուսակցութիւնը, որ ի հարկէ գոյութիւն չունէր 1889 թւականի ընտրութիւնների ժամանակ:

Նորերս կառարւած պարլամէնտական ընտրութիւնները տւեցին հանրապետականներին մի առաւելութիւն, որ նոքա երբէք առաջ ունեցած չէին: Ընտրւած են 409 հանրապետականներ, 79 ծայրայեղ արմատականներ և սոցիալիստներ, 29 հոգի վերը յիշած

սահմանադրական պահպանողականներ և 64 հոգի միապետականներ:

Յիշատակելու արժանի է այն, որ նաև այս անգամ, որպէս և 1880 թւականին, արմատական կուսակցութիւնը մեծ պարտութիւն կրեց և նոյն իսկ նոցա պարագլուխ Ալեմանսօն չընտրեց պատգամաւոր:

Այդ թւերից պարզ երևում է որ միապետական կուսակցութիւնները սաստիկ փլատել են և հանրապետութիւնը արդէն դառել է գրեթէ բոլորովին անվիճելի կառավարչական մի ձև: Ուրեմն նաև պանամեան սկանդալները ոչինչ չօգնեցին հանրապետութեանը և յատկապէս ներկայ կառավարութեանը փլատելու համար: Պառախալի է:

Շ.

Գերմանիայի և Ռուսիայի մէջ ծագած մաքսային կռիւ սաստկութիւնը և միւս կողմից Ռուսիայի ու Ֆրանսիայի միջև կայանան մաքսային համաձայնութիւնը որպէս նաև ռուսաց նաւախմբի այցելութիւնը Ֆրանսիային բնորոշում են նաև քաղաքական փոխադարձ յարաբերութիւնները այդ պետութիւնների:

Աւելացնենք, որ Ռուսիան ձեռք է բերել Ֆրանսիայի համաձայնութիւնը, որ վերջինս Միջերկրական ծովի համար ռուսաց նաւատորմին մի կայարան տայ Ֆրանսիական որ և է նաւահանգստում: Երևի հաստատ է նաև այն լուրը թէ նաև Գերմանիան կամենում է Միջերկրականում նաւատորմիդ ունենալ և որ դորա համար նա դիմել է Իտալիային, որ վերջինս մի կայարան տայ իւր նաւահանգիստներից մէկում:

Անգլիայում իրլանդական ինքնավարութեան օրինագիծը կրիտիկական դրութեան մէջ է ընկել: Համայնքների ժողովը, հին տոմարով օգոստոսի 26-ին երրորդ ընթերցումից յետոյ, ուրեմն վերջնականապէս ընդունեց իրլանդական ինքնավարութեան օրինագիծը 301 ձայնով ընդդէմ 267 ձայնի: Օրինագծի կողմնակիցները, այն է

ազգայնականները և արմատականները բարձրագոյ արտայայտեցին իրանց գոհունակութիւնը, իրանց տեղերից վերկացան և զլխարկներն ու թաշկինակները ծածանեցին երկար ժամանակ: Երբ Գլադստոնը իւր կնոջ հետ թողեց ժողովը, ժողովրդից ահագին ամբոխ շրջապատեց Գլադստոնի կառքը և ոգևորութեամբ ողջունեց նորան:

Բայց յայտնի է որ օրինագիծը, օրէնք դառնալու համար, թագուհու ստորագրելուց առաջ, դեռ պէտք է լորդերի պալատի կողմից ընդունէի: Արդ, հեռագիրը հաղորդեց, որ լորդերի ժողովը ընդունեց օրինագիծը առաջին ընթերցումի ժամանակ, մինչդեռ երկրորդ ընթերցումին՝ ահագին մեծամասնութեամբ մերժեց իրլանդական ինքնավարութեան օրինագիծը: Պորա անմիջական հետեանքը պէտք է լինէ օրինագծի նորից ներկայացնելը համայնքների ժողովին, որ կարելի է անել միայն մի տարուց յետոյ: Խնդիրը այժմ այն է, կ'ուզենա՞յ կառավարութիւնը համայնքների ժողովը լուծել, նորից ազգի ընտրութիւններին դիմել ու նորից մեծամասնութիւն վաստակելո՞ւ՝ լորդերի կամակորութիւնը կոտրել, թէ Գլադստոնը կը գերադասի մի տարի սպասել ու այժմեան պարլամէնտին օրինագիծը նորից ներկայացնել: Մեզ թւում է թէ նոր ընտրութիւններ կատարելը աւելի նպատակաշարմար միջոց է խնդիրը լուծելու համար:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ I Կաթողիկոս Ամենայն Հա-
լոց ժամանեց Թիֆլիս օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամ 10-
ին երկաթուղու լատով գնացքով և ընդունեց կալարանի
կալերական օթեանում, ուր սպասում էին Վեհափառին տե-
ղական կոնսիստորի ներկայացուցիչները, Թիֆլիսի քաղաքա-
գլխի պաշտօնակատարը խորհրդարանի հալ անդամներով, պար-
սից հիւպատոսը, մամուլի ներկայացուցիչները, Վեհափառի
հետ էին Տէր Տեղակալից ուղարկած պատւիրակները՝ Արխտա-
կէս եպ. Սեդրակեան և Սարգիս եպ. Գասպարեան, Մեսրոպ
և Նփրեմ արեղաներով, որպէս նաև Խորէն վարդապետ Ստե-
փանէ: Քաղաքացիի պաշտօնակատար պ. Պ. Իզմայլեան ռու-
բէն բաւականի երկար ճառով ողջունեց Վեհափառին և հալ-
ցեց Նորա օրհնութիւնը քաղաքի համար: Խորէն վարդապետ
թարգմանեց աղ ճառը հալերէն, որին լաջորդեց Վեհափառի
պատասխանը և օրհնութիւնը: Ամբողջ կալարանը թնդում էր
«կեցցէ Հալրիկ» գոչումներով: Վեհափառը, ուղեկցութեամբ
պահապան կողակ ձիաւորների և հարկւրաւոր կառքերի ու
խուռն բազմութեան՝ քառաձի կառքով դիմեց դէպի Վանքի
Մալր եկեղեցին: Ճանապարհին ամեն տեղ ժողովուրդը ողջու-
նում էր: Ալէքսանդրեան ալդու մօտից սկսեց հանդիսաւոր
ընթացքը հոգեորականների, երգեցիկ խմբի, աշակերտուհիների
ուղեկցութեամբ, Վեհափառը ամպհովանու տակ: Վանքի
եկեղեցում Վեհափառը աղօթեց և քարոզեց ու ապա ահագին
բազմութեան ոգևորած գոչումներով ուղեկցած՝ դիմեց Առաջ-
նորդական պալատը: Սկսեցին ընդունելութիւնները, որ շա-
րունակւեցին լաջորդ օրերը, մինչև Վեհափառի մէկնումը Թիֆ-
լիսից սեպտ. 7-ը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ, որով Թագաւոր Կալսը հաստատել է Խրի-
մեան Հալրիկին Կաթողիկոս Ամենայն Հալոց, ընդունեց Վե-
հափառը Կովկասի պ. Կառավարչապետից, սորա պալատում,

սեպտ. 3-ին, ժամը 1-ին, ներկայութեամբ բարձր աստիճանաւորների, քաղաքի ականաւոր բնակիչների և տեղական թերթերի խմբագիրների: Նոյն ալդ հանդիսին մատուցեց Նորին Վեհափառութեանը կայսեր շնորհած ագամանդեալ խաչը վեղարի վրայ կրելու և Ալէքսանդր Նեոկու շքանշանը կրծքին կրելու համար:

ՁՈՀԵՐ: Քաղաքական գործերի համար հինգ դատապարտաճները, որոնք գիշերով կախեցին Անդորայում (Թիւրքիա) հետեւեալներն են. Թորոս Ծառուղեան Գիւրինցի, Յովհաննէս Արզումանեան Կեսարացի, Կիւլպէնկ Համալեան, Միրիջան Խանաբախեան ու Փանոս Եաղուբեան Տալասեցի: Թիւրքերը հաւատացնում են թէ այս նահատակները, կախաղան բարձրանալու միջոցին, գոչել են՝ Եաշատուն Էրմենիստան (Կեցցէ Հայաստան): Անդորայի՝ բանդում դեռ կան 34 հոգի, որոնք մի քանի տարով բանտարկւելու են դատապարտած և 24 մեղադրւածներ:

Պ. ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ ղեկեղել է «Journal of the Royal Asiatic Society» (Թագաւորական Ասիական Բնկերութեան Ժուրնալ) թերթում իւր մի դասախօսութիւնը աշուղ Սալադ Նովալի մասին:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՎԵՍԼՆԵՐԻՆ: Ս: Էջմիածինը, որպէս վիշում կը լինեն մեր ընթերցողները (Մուրճ № 3, Լուրեր) իւր միջոցներով օգնութեան հասնելով սովեալներին, «Արարատի» միջոցով ղիմունն էր արել հասարակութեանը նւէրների համար: «Արարատ» ամսագրի № 6-ից իմանում ենք, որ մինչ լունիսի վերջը ալդ նպատակով նւէրներ ուղարկել են՝ բժիշկ Յովհաննէս Գասպարեանց (Թիֆլիսից) 200 ռուբլի, հալո Բէգ-Նազարեանց (Թիֆլիսից) 20 ռուբլի և պ. Գ. Մ. Առափելեանց (Բագուց) 100 ռուբլի: Նոյն «Արարատից» իմանում ենք, որ Մալր Աթուր իւր միջոցներից օժանդակութիւն է տւել գիւղացիներին 1,200 խալարից աւելի, ալսինքն մինչ 36,000 պուդ հացահատիկ: Ալդքան հացահատիկ, որ կազմում է եղել վանքի ունեցած գրեթէ ամբողջ պաշարը, ոմանց տրւած է ձրի, ոմանց ընթացիկից պակաս գնով, ոմանց փոխարինաբար բալց առանց վերադրի:

ՇՈՒՇԻԱՑ ԹԱՏՐՈՆԻ 25-ԱՄՆԱԿԸ: Շուշի քաղաքում առաջին անգամ հալ թատրոնական ներկայացում տրւել է 29 տարի առաջ, եթէ չենք սխալւում պ. Գէորգ Չմկեանի և ալլոց նախաձեռնութեամբ: Չորս տարի անցած ալդ քաղաքում շինւեց թատրոնական բեմ, որի վրայ ամեն տարի մէկ կամ մի քանի անգամ ներկայացումներ են տրւել: Ներկալ օգոստոս ամսին լրացաւ

ալդ բեմի շինութեան քսանուհինդ ամեակը, որ և սօնեց տեղական հասարակութեան կողմից, նախաձեռնութեամբ տիկին Մարգարիտ Մելիք-Շահնազարեանի և պ. Տիգրան Նաղարեանի:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ լուսանկար բաղմաթիւ պատկերները չեն տարտալստում Վհափառ. կաթողիկոսի գէմքի գծագրութիւնները բացի աչն մէկ լուսանկարից որ պատրաստւած է Երուսաղէմում և ի ցոյց գրւած Լնֆիանճեանց-Տէր-Յովսէփեանցի ծխախոտի խանութում: Աղտեղ Նորին Վհափառութիւնը հանւած և պրոֆիլով, բազկաթուի վրայ նստած և գրութեամբ զբաղւած: Յանկալի է որ ալդ լուսանկարի օրինակները տարածեն ամենուրեք: Կրկնում ենք, որ բոլոր մեր տեսածներից ալդ մէկը միայն իսկապէս չաջողւած է: Լուսանկարչի անունը մեզ չալունի չէ:

ԽՈՒՆՐԱՆ, որ անցեալ տարւալ համաճարակումից չիտոյ Անգրիովկասում խալառ անլալտացի էր, բալց ոչ Եւրոպական Ռուսաստանում, օգոստոս ամսալ սկզբից Նորից սկսեց երեալ մեղանում, բալց առանց աչն ոգիի և աչն ծաւալի, որ նա ունէր անցեալ տարի: Թիֆլիսում, սկսած լուլիսի 29-ից մինչ օգոստոսի վերջը, խուբրալով հիւանդացածների թիւը հասել էր շուրջ 80 հոգու, որոնցից վախճանւել են մինչ մօտ 50 հոգի:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՅ նշանակւած է Էջմիածնի տպարանի և ձուլարանի կառավարիչ: Դա մէկն է լաւագոյն նշանակումներից, որ եղել է սրբ. Երեմիայի տեղակալութեան ժամանակ: Յուս ունենք որ պ. Ղ. Աղալեանի կառավարչութեան օրերով Էջմիածնի տպարանը կը ստանալ ցալժով եղածից աւելի բարձր գիրք, կառավարիչը կը մտցնի կատարեալ կարգ ու կանոն, կը կրթի իւր ստորադրեալ պերտնալը օրինակելի տպարանին վալել ուղղութեամբ: Աւելացնենք նաև որ լանձին պ. Աղալեանի Էջմիածինը ձեռք է բերում մի պաշտօնեալ, որը, իբր վաթսուհակսն թւականների սերնդի միակ լաւալալիմական ներկալացուցիչը մեղանում, ընդունակ է բարերար աղղեցութիւն գործել իւր շրջապատի վրալ առհասարակ:

ԲԺ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆԻ լօղածի վերաբերմամբ, «Մուրճի» ալս տեսրում, աչն տեղի համար, ուր հեղինակը խօսում է զինւորականութեան վնասակարութեան մասին, մենք ունենք նկատողութիւններ անելու, որ և վերապահում ենք աւելի լարմար ժամանակին:

† ԲԺ. ԳԱՆԻԷԼ ԼԻՍԻՅԵԱՆ, հնաղոյնը Թիֆլիսի բժիշկներից, վախճանեց ներկալ օգոստոսի վերջերքում: Հանգուցեալը ալս տարի

կրում էր «Աղբիւր-Տարաղի» փոխ-խմբագրի կոչումը, բայց առանց որ և է աշխատակցութեան:

«ՀԱՅՐԵՆԻՔ» Լրագիրը, որի անպայման ղաղարկեցնելու մասին հաղորդել էինք անցեալ ամիս, կարճ ժամանակից լետող նորից թուլտու-թիւն ստացաւ հրատարակելու: Մեր կողմից մի թիւրիմացու-թիւն էր, որ կարծել էինք թէ չիչեալ Լրագիրը իբր առմիշտ ղաղարկեցրած էր:

† ՏԻՌԱՆ ԷՖ. ԿԻՒՄԻՇԿԵՐՏԱՆ. Պոլսում նորերս վախճանեց Տիգ-րան էֆ. Կիւմիւշկերտան, որ կաթողիկոսական ընտրութիւն-ների համար Պոլսի ներկայացուցիչն էր: «Հալքենիք» Լրագիրը իւր յոգում առ 9 օգոստոսի հանգուցեալի շնորհակալութեամբ է մի առաջնորդող, որից քաղում ենք հետեւեալ տողերը վե-րաբերեալ հանգուցեալի անձին և գործունէութեան: Այդ Լրա-գիրը վկայում է Կիւմիւշկերտանի մասին իբր «պատուաւոր աշ-խատողի, պարտք ճանչցող ազնիւ սրտի տէր մէկը»:

«Ժողովներու, խորհուրդներու, հոգաբարձուներու մէջ եր-բէք ի գերեւ չհանեց իր վրա զրւած վստահութիւնը»:

«Իր աշխատութիւնը ամենէն աւելի նւիրեց Ազգային Հի-ւանդանոցին, որուն Հոգաբարձութեանը մասնակցեց տասը տարի»:

«Աղքատ ընտանիքի մը զաւակներէն մին էր, 1834-ին ծնած, նախնական թեթեւ կրթութենէ մը լետող արեւստի կը մտնէ, դերձակութիւն կը սովորի, լետող փոքրիկ առեւտուրի մէջ կը մտնէ, Խրիմի պատերազմին ատեն Խրիմ կերթալ ուր ամե-նաժանր ներդրութիւններ, տառապանքներ կը կրէ, անօթութեան ու ծարաւի դիմանալով: Աւ լետող իր աչքաբացութեամբը, խելքովը ու բազդին աջակցութեամբը բաւականին հարստու-թեան մը տէր կ'ըլլալ»:

«Սակայն ալ միջոցին ինքնակրթութիւնը առաջ կը տա-նի, միշտ կարդալով, միշտ հետաքրքրելով ոչ միայն ներկային ալ անցեալին զոր ջերմագէտ կը սիրէ: Աւ ահա ալ սէրը ցե-ղական ժառանգած լատիւթիւններու միացած կը մղէ զինքը իր եկեղեցիին, իր ազգին հաւատարիմ ու բարեկամ աշխատողն ըլլալու»:

«Հանգուցեալը շատ կանուխէն ձեռք կառկաւեց սպա-գալ խոստացող պատանիներու, զորս զրկեց Գերմանիոյ և Ֆրան-սայի համալսարանները, նպատուց ուրիշներու կրթութեանը, հոգալով անոնց ծախքերը Լիւէի մէջ»:

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԻՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Արտասահմանեան մի

թերթի գրում են Մուշի կողմերից՝ «Պուլանըխի Համդաշիխ գիւղի բոլոր տները (30 տուն) խլամուծիւն կգնդունին, չուսալով հարստահարութենէ զերծ մնալ: Կառավարութիւնը զանազան պարգեներով կը քաջալերէ նոցա, որք կ'ուզէ օրինակ ըլլան հաջ ժողովրդեան: Նոյնպէս կ'խլամանան Ալաշկերտի Եօն ջալու գիւղացիները (մօտ 70 տուն):

ՆԵՐՔԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Նոյն աղբւրից տեղեկանում ենք. Ալաշկերտի զանազան գիւղերէն 35 տուն խմբովին քիւրդերու առաջնորդութեամբ ուստատաճկական սահմանը կ'անցնեն և կը ղիմեն Ղարսի նահանգապետին՝ տեղ և հող ուզելով: Նոյն կողմիւնէն դարձեալ 60 տուն կ'ուզեն գաղթել Կովկաս և կը հասնեն մինչև Ապաղ-Կէօլ կոչած տեղը. բայց թուրք կառավարութիւնը խանալով՝ նոցա ետ կը դարձնէ:

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ: «Մուրճի» խմբագրի խնդրանքով Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց չատուկ ունկնդրութեան հրաւիրել իւր մօտ «Մուրճի» խմբագրութիւնը աշխատակիցներով հանդերձ օգոստոսի 31-ին առաւօտեան ժամ 10 և 1/2-ին: «Մուրճի» խմբագրութիւնը ներկայացաւ Վեհափառին հետեւեալ կազմով՝ խմբագիր պ. Ա. Արասխանեանց, հրատարակիչ պ. Փ. Վարդաղարեանց, աշխատակիցներ՝ պ. պ. Գրիգոր Վարդանեանց, Յովհաննէս Թումանեանց, Արշակ Բարխուդարեանց, Յովհաննէս Բարխուդարեանց, Սամէլ Բալազեան, Յակոբ Անագչեան, Մկրտիչ Նաստարեան, Մխիթար Տէր-Անդրէասեան, Պետրոս Մեղքումեան, Գէորգ Ղաբաշեան: Խմբի հետ միանալու ցանկութիւն չապոնած էր նաև պ. Սեդրակ Փառապեան, որին, սակաւն, տկարութիւնը չներեց սանից դուրս գալու:

Նորին Վեհափառութիւնը ընդունեց «Մուրճի» խմբագրութիւնը շատ սիրալիւր կերպով: Խորէն Ժ. Վ. Ստեփանէն ներկայացրեց Վեհափառին ամսագրի խմբագրին, որը Վեհափառի աջը համբուրելուց լետու, ըստ իւր հերթին ներկայացրեց Նորան հրատարակչին ու աշխատակիցներին, որոնք ամենքը Նորա աջի առանձն իւր անունից ու գիմաց խմբի ամսագրիս խմբագիրը շնորհաւորեց Վեհափառին իւր ծախագուն պաշտօնին ընտրած ու հաստատած լինելու համար ու հաջեց Հայրապետական օրհնութիւնը «Մուրճի» բոլոր աշխատակիցներին համար: Վեհափառ Հայրապետը օրհնեց ամենքին ու հարց ու փորձ արաւ «Մուրճի» մասին, որին Նա ծանօթ չապոնեց. խօսեց գիտութիւնների չառաջադիմութեան ու մամուլի մասին:

խմբագրի խօսքին թէ՛ մենք չարունակում ենք Ձերդ Վեհափառութեան երեսուն տարի առաջ սկսած գործը, երբ «Արժ-ւի Վասպուրականն» էիք հրատարակում, Նորին Վեհափառութիւնը պատասխանեց ժպտալով՝ թէ՛ նա մի զուգնաքեալ գործ էր, և ինձնից չետող ալլ շատ խմբագիրներ ելան: Գորան պատասխան տուեց՝ թէ՛ նորա ողին չկորաւ, ալլ անցաւ իւր վտնորդներին և կարող ենք փոփոխանել Ձերդ Վեհափառութիւնը, որ «Մուրճը» ալլ ողուց ժառանգութեան մաս ունի: Ապա ամապրիս խմբագիրը խմբի անունից դիմեց Վեհափառին մի առաջարկութեամբ, որ կաշանում էր հետեւեալում. նա ասաց թէ՛ ցանկալի է որ նախքան վերջնական կարգադրութիւններ անելը Նորին Վեհափառութեան կառավարութեան կողմից, մտնուլը կարողանալ մասնակցել ենթադրած կարգադրութիւնների քննադատութեանը. իսկ ալլ կարելի է միաձն աջն ժամանակ, երբ, վերջնական վճիռներ տալուց առաջ, Հոգեոր կառավարութեան զիտաւորութիւնների մասին առաջուց ծանուցել: Նորին Վեհափառութիւնը պատասխանեց՝ թէ՛ կան բաներ, որոնց մասին առաջուց չաւտարարելը անգարմար է, բաւց կան և աջնալիսիք, որոնց ծանուցանելը կարելի է, որ Նա դէմ չէ ալլալէս վարուլ վերջիններիս նկատմամբ: Երբ Վեհափառը կանգ առնելով ալլ նիւթի վրալ, ասաց թէ՛ ինքը սովորութիւն ունի իւր մտադրութիւնները մասին խօսել, ամապրիս խմբագիրը զարձրեց Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը աջն բանի վրալ, որ ցանկալի կըլինէր եթէ ալլ կատարէր «Արարատ» ամապրի միջոցով: Ապա Վեհափառը, օգտուելով «Արարատ» ամապրի չիշատակումից, չալտնեց, որ «Արարատը» դալ տարալ լուեւարից սկսած՝ հիմնովին սլաի կերպարանափոխէ:

Նորին Վեհափառութիւնը ի վերջոլ չալտնեց, որ Նա կարօտ է գործերի և անձերի ծանօթութեան և որ վեց ամիս Նա մտաղիւր է ուսումնասիրել ալլ ամենը: Եւ իրան չատուկ հուամորով վերջացրեց խօսքը՝ ասելով թէ՛ ալլ վարդապետներից ու եպիսկոպոսներից ոչ ոքին դեռ չէ ճանաչում, ու ալլ վեց ամսում պէտք է նոցա ևս ուսումնասիրէ:

Ունկնդրութիւնը տեեց մօտ կէս ժամ:

«Մուրճի» պատգամաւորութիւնը առթից օգտուց ողջուեկու նաև Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին, որը սիրալիւր ընդունելութիւն արաւ իւր ընդունարանում:

ՊԱՏԳԱՄԱՌՈՐ ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ ԿՈՂՄԻՑ ընտրւած է ամապրիս խմբ-

թերթի գրում են Մուշի կողմերից՝ «Պուլանըի շամզաշխ գիւղի բոլոր տները (30 տուն) խլամութիւն կղնդունին, չուսալով հարստահարութենէ զերծ մնալ: Կառավարութիւնը զանազան պարզենքով կը քաջալերէ նոցա, որք կ'ուզէ օրինակ ըլլան հաջ ժողովրդեան: Նոյնպէս կ'խալամանան Ալաշկերտի 60 ջալու գիւղացիները (մօտ 70 տուն):

ՆԵՐՔԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Նոյն աղբիւրից տեղեկանում ենք. Ալաշկերտի զանազան գիւղերէն 35 տուն խմբովին քարոզերու առաջնորդութեամբ ռուսատաճկական սահմանը կ'անցնեն և կը զիմեն Ղարսի նահանգապետին՝ տեղ և հող ուզելով: Նոյն կողմերէն զարձեալ 60 տուն կ'ուզեն զաղթել Կովկաս և կը հասնեն մինչև Ապաղ-Կէօլ կոչած տեղը. բայց թուրք կառավարութիւնը խմանալով՝ նոցա ետ կը դարձնէ:

ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՃԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ: «Մուրճի» խմբագրի խնդրանք վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց չատուկ ունկնդրութիւն չնորհել Իւր մօտ «Մուրճի» խմբագրութեանը աշխատակիցներով հանդերձ օգոստոսի 31-ին, առաւօտեան ժամ 10 և 1/2-ին: Խումբը ներկայացաւ վեհափառին հետեւեալ կազմով՝ խմբագիր պ. Ա. Արափանեանց, հրատարակիչ պ. Փ. Վարդապետեանց, աշխատակիցներ՝ պ. պ. Գրիգոր Վարդանեանց, Յովհաննէս Թումանեանց, Արշակ Բարխուդարեանց, Յովհաննէս Բարխուդարեանց, Սամէլ Բալազեան, Յուկոբ Անադչեան, Մկրտիչ Նաւասարդեան, Մխիթար Տէր-Անդրէասեան, Պետրոս Մեղքումեան, Գէորգ Ղարաջեան: Խմբի հետ միանալու ցանկութիւն չափանած էր նաև պ. Սեդրակ Թառապեան, որին, սակայն, տկարութիւնը չներկեց տանից դուրս գալու:

Նորին վեհափառութիւնը ընդունեց «Մուրճի» խմբագրութիւնը շատ սիրալիր կերպով: Խորէն ծ. վ. Ստեփանէն ներկայացրեց վեհափառին ամսագրիս խմբագրին, որը վեհափառի աջը համբուրելուց վետոյ ըստ իւր հերթին ներկայացրեց Նորան հրատարակչին ու աշխատակիցներին, որոնք ամենքը Նորա աջն առան: Իւր և խմբի կողմից խմբագիրը չնորհաւորեց վեհափառի բարի գալուստը ու հաջեց Հալլապետական օրհնութիւնը «Մուրճի» բոլոր աշխատակիցների համար: Վեհափառ Հալլապետը օրհնեց ամենքին ու հարց ու փորձ արաւ «Մուրճի» հանգամանքների մասին, չափանելով որ ինքը երուսաղէմում առիթ է ունեցած ծանօթանալու մեր ամսագրի հետ. խօսեց զիստութիւնների չառաջադիմութեան ու մամուլի մասին: Խմբագրի

խօսքին թէ՛ մենք չարունակում ենք Զերդ Վեհափառութեան երեսուն տարի առաջ սկսած դործը, երբ «Արծւի Վասպուրականն» էիք հրատարակում, Նորին Վեհափառութիւնը պատասխանեց ժպտալով՝ թէ նա մի դուզնաքեալ դործ էր, և ինձնից բնույ ալ շատ խմբադիրներ ելան: Խմբադիրը ալդ առիթով՝ չալտնեց՝ թէ «Վասպուրական Արծւի» ողին չկորաւ, նա չարատեց և անցաւ իւր լեւոնորդներին և որ կարող ենք վստահացնել Նորին Վեհափառութեանը, որ «Մուրճը» ևս ալդ ոգուց ժառանգութեան մաս ունի: Ապա ամսագրիս խմբագիրը իւր անունից և ամբողջ խմբի կողմից գլխեց Վեհափառին հետեւալ առաջարկութեամբ, — թէ ցանկալի է որ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը, վերջնական կարգադրութիւններ անելուց առաջ, մամուլին մասնակից տնի ենթադրած կարգադրութիւնների քննադատութեանը, իսկ ալդ կարելի է միայն ալն ժամանակ, երբ, վերջնական վճիռներ տալուց առաջ, Հոգևոր կառավարութեան ղիտաւորութիւնների մասին կանխօրէն ծանուցւի: Նորին Վեհափառութիւնը պատասխանեց՝ թէ կան բաներ, որոնց մասին առաջուց չալտարարելը անչարմար է, բալց կան և ալնպիսիք, որոնց ծանուցանելը կարելի է, և որ Նա զէմ չէ վերջիններիս նկատմամբ ալդպէս վարելու: Երբ Վեհափառը, կանոյ առնելով ալդ նիւթի վրալ, ասաց թէ Հալրիլը սոյլորութիւն ունի իւր մտադրութիւնների մասին խօսել, ամսագրիս խմբագիրը դարձրեց Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը ալն բանի վրալ, որ ցանկալի կըլինէր եթէ ալդ կատարէր «Արարատ» ամսագրի միջոցով: Ապա Վեհափառը, օգտուելով «Արարատ» ամսագրի լիշատակումից, չալտնեց, որ «Արարատը» գալ տարաւ լուծարից սկսած՝ հիմնովին պիտի բարեփոխէ:

Նորին Վեհափառութիւնը ի վերջոյ չալտնեց, որ Նա կարօտ է գործերի և անձերի ծանօթութեան և որ վեց ամիս Նա մտադիր է ուսումնասիրել ալդ ամենը: Եւ իրան չատուկ հումորով վերջացրեց խօսքը՝ ասելով թէ ալս վարդապետներից ու եպիսկոպոսներից ոչ ոքին զեռ չէ ճանաչում, ու ալս վեց ամսում պէտք է նոցա ևս ուսումնասիրէ:

Ունկնդրութիւնը տեւց կէս ժամ:

«Մուրճի» պատգամաւորութիւնը առթից օգտուց ողջունելու նաև Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին, որը սիրալիւր ընդունելութիւն արաւ իւր ընդունարանում:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԳՈՂԹԱՆ ԳԱԽԱՌԻ ԿՈՂՄԻՅ ընտրւած է ամսագրիս իւր

բազիր Ա. Արասխանեանց, որը կը ներկայանայ Նորին Վեհափառութեանը Օծման հանդէսին և կը ներկայացնի Նրան Գողթնեցոց ուղերձը:

ՆԵՐՍԷՍ ՇԱՀԱՍՄԵԱՆ, լաւտնի տենոր, թուլտութիւն է ստացել Վեհափառ Կաթողիկոսից Օծման հանդիսին երգել ս. Էջմիածնում: Պ. Շահլամեանը դուրս համար Պալմայի թատրոնի վարչութիւնից խնդրել է մի ամսուալ արձակուրդ:

ԱՐՀԵՍՏԱՆՈՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, Թիֆլիսի մի խումբ կրթած արհեստաւորներ ձևով միտք է չղացել արհեստաւորներ ընկերութիւն հիմնել:

ՇԱՐԿՈ, Ներկայ օգոստոսի 5/17 Մորան ամառանոցում վախճանեց բրժշկութեան դոքտոր-պրոֆեսոր Շարկօ: Հանդուցեալը վաղուց արդէն գիտութեան մէջ փալտւած էր որպէս առաջնակարգ աստղ: Իրիւս գործնական բժիշկ—Շարկօն համալսարանին անուն էր վաղելում: Բայց նա նշանաւոր դիտնական էլ էր: Նա սահղծեց նեարդալին պաթոլոգիան, որին վերաբերում է նորա աշխատութիւնների մեծ մասը: Նա զբաղեց նաեւ հիպոթոթիսով և զարկ տւեց նորադոն հոգեբանութեան: Շարկօն կրթել է գիտնականների մի ամբողջ սերունդ, և իւր աշակերտների թւում ներկայումս կան բազմաթիւ գիտնականներ, որոնք ծագող աստղերն են և անուն են ստեղծել իրանց մասնագիտութեան մէջ: Շարկօի հետ Ֆրանսիան կորցրեց իւր ներկալիս փառքերից մէկը:

ՍԵՆԿԵԻԻՉԻ «ԱՌԱՆՑ ԳԱՌԱՆԱՆՔԻ» վէպի երրորդ և վերջին մասը սկսում ենք տպագրել ներկայ համարից: Վէպի աչդ երրորդ մասի թարգմանողն է պ. Երւանդ Թադիանոսեան:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ անակնկալ պատճառներով չկարողացանք տպել:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՄ ԳՐՔԵՐ

1) ԳԱԼԷՄՔԱՐԵԱՆ Հ. Գրիգորիս վ., Միսի թարեան ուխտէն.— Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը: Հատոր Ա.—Բ. Շրջան ի սկզբանէ հայ լրագրութեան (1794) մինչև 1840.—Բ. Շրջան. 1840-էն մինչև 1860 թ. (մէկ լուսատիպ պատկերով): Վիէննա, Միսիթարեան տպարան, 1893 թ. զինն է 2 ֆրանկ 50 սանտիմ (1 ու.):

2) ԿԱՐԻԷՐ, Ա.—Նորադոն աղբիւրը Մովսիսի Խորենացու: Քննադատական ուսումնասիրութիւնք: Թարգմ. Փրանսերէնից: Վիէննա, Միսիթ, տպարան, 1893, գինն է 1 ֆրանկ:

- 3) ԳՐԻԳՈՐԵԱՆ, Լևոն.— Չար Հրեշտակ (կեանքի գծեր) Հրատարակութիւն Վ. Կարապետեանի.— Թիֆլիս, տպ. Մելիք-Շահնազարեանցի, 1893, գինն է 15 կոպ.
- 4) TEZA, Emilio.— Dell „Essaemero“ di Giorgio Pisije. secondo. La antica versione armena. Roma, Tipogr. d. R. Accademia dei Lincei, 1893.
- 5) ԼԷՕ.— Ախտահանութիւն (վէպ).— Հրատարակութիւն «Արօր» տպարանի № 1.— Բագու, տպ. Արօր, 1993, գինն է 40 կոպ.
- 6) ՖԻԼՊՍԻՆ, Եղիս. Ստիւարտ.— Գլխութեան քույր Թարգմ. Հակոբ Գիւլմսիրեան: Հրատարակ. Արօր տպարանի № 2.— Բագու, տպ. Արօր, 1893, գինն է 15 կոպ.
- 7) ՄԿՐՏՈՒՄԵԱՆ, Գ. քահ.— Ղալթմազենց Միքէլը, պատմածք Ղազիր Մուլլի արչաւանքներով: Ա.— Մոսկւա, տպ. Բ. Բարխուդարեանի, 1893, գինն է 8 կոպ.
- 8) АСТВАЦАТРЯНЪ, В.— Долина блаженства (горская легенда).— Тифлисъ, тип. груз. Изд. Товарищества, 1893. գինն է 10 կ.
- 9) ՍԱԳԻՍԵԱՆ, Հ. Բարսեղ վարդապետ, լուսնային Միլիթարայ.— Տեսութիւն Աղբիւստրայի Պատմութեան և Մուսէս Խորենացու աղբիւստրայ: Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 1893. գինն է ?
- 10) ГР.— Патриархъ-Католикосъ Мкртичъ I.
- 11) ДІЕВЪ, Гр. А.— Армянскій вопросъ въ Турціи (изъ переписки съ стамбульскимъ публицистомъ). Съ двумя библиотечными карточками.— Москва, тип. Д. Иноземцова. 1893, գինն է 40 կոպ.
- 12) ՎԱՆ-ԴԷՅԿ.— Չորրորդ մօղը: Հրատարակ. Հ. Հրատ. Բնկեր.— Թիֆլիս, տպ. Վրաց Հրատ. Բնկ. 1893 թ. գինն է 5 կոպ.
- 13) ՂԱԶԱՐԵԱՆՅ, Յակ.— Խոն-խոր: Տաճկահայերի կեանքից: Հրատ. Թիֆլ. Հ. Հրատ. Բնկ.— Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1893 թ. գինն է 60 կոպ.
- 14) ՐԱՅՖԻ.— Արծիւ վառարարականի (Խրիմեան Հայրիկ):— Հրատարակեց աւրի տիկին Բաֆֆի: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 70 կոպ.

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱԶԱՐԵԱՆՅ

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեամբեմաների բոլոր ցուցանանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵԻՆԵՐԻ

կարճոր ընկերներ առն տիկիներին և աղջիկ ոգնականներ
բոլոր արհեստագործներին համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թեփլաում. Զենդերի ընկերութեան կենդանական պահեստում, Գո-
սթինսկի պրոսպեկտի վերայ, Սերիմանովի տան և նրա բաժանմունք-
ներէ մէջ:


Բաղում. Մեքայէլեան փողոցում,
Մերզա Աւագեանի տ.
Քաթայիսում. Բուրլարի գէմ
Չերեկովի տ.
Բաթումում. Լոթիս Մեղքեան փո.

զոցում, Կուզեօրի տ.
Առաքաղում. Գոտիների վար №
2, Տ. Սֆանասեի:
Երևանում. Իմ Ճամբորդ-
կայանի մօտ:

և նրանց շանապարհորդող Գործակալներէ Տօր

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՍԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ



արտանուծիչն ստացած



առևտրական գրոշմը.

Գնողները կարող են, եթէ կամենում են, գրառել հետադարձ վճարել սակառ քանակութեամբ, ապա է՝ չարաթով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց տառնալ գրառականով գրառել վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս և
ասեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:



THE
LIBRARY OF THE
MUSEUM OF
ART AND HISTORY
OF THE CITY OF
NEW YORK

1000 5th Avenue, New York 17, N.Y.



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

և

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

Յովհաննէս Թումանեանցի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԵԿ

Դիմել: Թիֆլիս, Центральная книжная торговля, կամ հեղինակին՝
Норашенская ул. № 28. կամ «Մուրճ»-ի խմբագրատանը:

ВЫШЛА И ПРОДАЕТСЯ

ИСТОРИЯ АРМЕНИИ

Моисея Хоренского

НОВЫЙ ПЕРЕВОДЪ

Н. О. Эмина

(с примѣчаніями и приложеніями)

Цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп.

МОЖНО ПОЛУЧАТЬ

въ Канцеляріи Лазаревского Института восточныхъ языковъ. Москва.



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1893 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ } Тифлисѣ. Въ редакціи журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրախճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

» պ. Յովհ. Թումանյանցի մօտ, Հրատ. Ընկ. գրասենեակում,
Բարձրակայա փողոց:

ԲԱԲՈՒ. — պ. Աւետիս Սուլիանեանց, ագենտ „Надежда“ Ընկ.:

ԵՐԵՒԱՆ. — պ. Աւետիս Աղամիրզեանց:

ԷՋՄԻԱՇԻՆ. — Արսէն արեղայ Գլաճեան:

ԱԼԵԲՍԱՆԴՐԱՊՈԼ. — Ս. Սեփ. Ս. Վ. Կարապետեան:

ԲԱԹՈՒՄ. — պ. Ս. Ս. Ս. Կեանց (գրատ. եղբ. Ծովհաննէսի):

ԹԱԻՐԻՉ. — պ. Ա. Ս. Ս. Միքայէլեանց:

ՌՈՍՏՈՎ. — Լ. ՆՈՐՅԱՆ. — Եղբ. Պ. Լ. Դ. Ուսանեաններ:

ՄՈՍԿՎԱ. — պ. Վալ. Ս. Ս. Կեանց (Чистые Пруды, д. Туницкая):

» պ. Ստեփ. Ս. Ս. Կեանց (Юшковъ переул., д. Адлеръ):

ՕՒԵՍԱ. — պ. Միքայ. Ս. Ս. Կեանց (գրատ. եղբ. Ծովհաննէսի):

ՉՄԻԻՐՆԻԱ. — պ. Յ. Ս. Ս. Միքայէլեանց (Մեարապ. վարժարան):

ՄԱՐՍԷՅԼ. — պ. Ս. Ս. Ս. Միքայէլեանց Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ — Կամ Է. Թիֆլիս, Կենտրոնական փողոց, տուն № 8